Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

OL
43569
1

Joannes Mantacunensis. Homilies.
Venice. 1860.

Digitized by Google

OL 43569.1

Harvard College
Library

FROM THE BEQUEST OF
JOHN HARVEY TREAT
OF LAWRENCE, MASS.
CLASS OF 1862

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Bind

Digitized by Google

Digitized by Google

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԳՈՒԿՈՒՆԻ

Digitized by Google

Digitized by Google

ՏԵԱՌՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԱՊԵՏԻ

ՃԱՌՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1860 ՌՅԹ

Digitized by Google

OL 43569.1

~~OL 43137.5~~

HARVARD COLLEGE
AUG 26 1920
LIBRARY

Treat fund

Joannis I. Mantacunensis

Digitized by Google

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընդհանրապէս որդւոց գովելի բարք են արդեաք արձան անմոռաց յիշատակի հաստատել զկնեացն առհասարակ արժանաւոր փառաց գնացելոցն եւ սիրոյ մնացելոցն։ Այրախտապարտ որդիքս ցանկացեալ դարուց ժամանակաց թողուլ անմոռաց զյիշատակ անուան զմեծի հօրս Յովհաննու մանգակունւոյ, քան զամենայն ինչ պատշաճական անուանն նորա եւ հայրադարձով սիրոյս դատեցաք ածել 'ի լոյս 'ի բազմաժամանակեայ փոշեաց ըզքաղցր եւ զհոգեբուխ բանից նորա զշարս, որով նշուլազարդ փայլեն յաչս ամենեցուն փառքն նորա եւ անստգիւտ վարք։ Հայր կացեալ սորա եկեղեցւոյս Հայաստանեայց զկնի սրբոցն Սահակեանց եւ Մեսրովպեանց Հոխացոյց զեկեղեցի ածային պաշտամամբք, օրհնութիւնաբեր կարգաք եւ կանոնական սահմանաք, եւ ըստ այ տնտեսութեամբ առաջնորդելովն հօտին իւրոյ. խնդակից եւ պարագլուխ նոցա գտեալ առ Աստուած ցնծութեան յամենայն փառաւորութիւնս առաքինացելոցն, եւ անաչառ կշտամբիչ թերացելոցն յանատերիւր վարուց, որպէս զայլ ոմն Իսկեբերան երեւեցաւ 'ի Հայաստան աշխարհիս, քարոզ բանին Աշմարտութեան սքանչելի պերճախօսութեամբն։

Ի քան եւ վեց Հառից աստի Հայրապետիս առաջինքն մեծաւ մասամբ յանուն Այրեմի մակագրեալ են 'ի Հառնտրի ուրեք. որպէս եւ 'ի փարիզացւոց քաղաքին կայ այլ օրինակ մի ամբողջ բոլորագիր անթուական նովին մակագրով։ Այլ առ մեզ նոյն Հառք 'ի նո-

Digitized by Google

բագիր մատենի միոջ ամենայնն յանուն Ա՝անդակունւոյ մակագրին։ Իսկ 'ի հնագոյն պատուական օրինակին երկաթագիր զոր ունիմք եւ զոր կալաք մեզ առաջնորդ 'ի տպագրութեան, խանգարեալ էր անուն մատենագրին առ հնութեանն։ Այն 'ի ձառից աստի եւ ոմանք յայլ եւ այլ գրչագիրս միոյն անուամբ վարեցեալ եւ այլոց յայլում. յորմէ եւ ոչ վայրապար երկբայեցի հնախոյզ ուսումնասէրն եթէ զոր 'ի նոցանէ որոյ մատենագրի սեփականեալ արժան իցէ. զայս եւեթ յայտնի գիտեմք, զի 'ի յոյն և յասորի բնագիրս մատենագրութեանց Եփրեմի չիք և ոչ մի 'ի ձառից աստի։ Այլ թէ նորին Ա՝անդակունւոյ իցեն թարգմանութիւնք Եփրեմայ որոց բնագիրն կորուսեալ իցէ, կամ թէ 'ի բանից նորին Եփրեմի եւ Սկեբերանի ծաղկաքաղ արարեալ եւ յանձնէ յայլ կերպարան ածեալ իցէ զնոսին ըստ ժամանն պիտոյից 'ի բեմբասացութիւն ժողովրդեան, յորմէ յոմանս 'ի նոցանէ երեւի անուն Եփրեմի եւ ուրեք եւս Սկեբերանի, չիշխեմք առ ժամն դատաստան առնել համարձակ։ Այլ եթէ այսպէս եւ եթէ այն, կարծեմք եթէ չիցեմք վրիպակ ինչ գործեալ եթէ Ա՝անդակունւոյ զնոսին ընծայեցաք ցորչափ օրինակ յանուն նորին 'ի ձեռին ունիմք, եւ 'ի հակառակէն ոչ զբաւոր ինչ հաւաստիք։ Այն զի ոչ ինչ երկբայիմք եթէ ընթերցասիրացն ջան եւ փոյթ 'ի լուսաւոր եւ յանստերիւր վարդապետութեանց աստի ոչ սակաւ հրահանգեսցի 'ի կիրթս առաքինութեանց. որով եւ մատենագրին, ո՞ոք եւ իցէ, եւ աշխատողացս լի կատարեալ պսակին իղձք։

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Յամենայն վիրաւորեալ մարմնով..[1] որ ..... անեն զվէրս ցաւոցն ..... և հնարագէտ ..... ըստ ցաւացուածին և ըստ վէրին չարութեանն գեղ յօրինեն այնմ անդամոց ուր վէրն կայցէ. և ոչ եթէ վէր յտկանն և գեղ յունկանն ոք առնիցէ: Նոյնպէս և յորժամ մեղաց հիւանդութիւն ոք ունիցի, և առ բժիշկին ոք հոգւոց մերձենայցէ, զոր ինչ վէրս մեղաց ցուցանիցէ վիրաւորն, մասն է բժշկին զնոյն չարութիւնն ծանուցանել, և վասն նորին խրատել և յանդիմանել և մխիթարութիւն կատարել զնորատ բանի վարդապետութեանն. զի թանձրագունիցն ըստլիք դիւրալուր բանիցն հանդիպել կարասցեն, և զչարութիւն վիրին ծանուցանել, և զդեղոցն հանգամանսն: Այսն և բանից թղթոյս շարագրութիւն ոչ խառն 'ի խուռն զամենայն անօրէնութիւն առաջի արկեալ ցուցանեն, և կամ զայլ և այլ յանցանաց ինչ պատմեն, այլ ըստ խնդրոյ խնդրողին զնորին անօրէնութիւն չարութեանն ծանուցանեն, զի ըստլիքն օգտել կարասցեն. ոչ ... չ բանից և կամ ..... ց փոյթ արարա ..... դիւրալուր ցուց .... նչ պատմել, որ 'ի ..... ին, դիւրաւ և քաջ 'ի միտ ասն առնուլ. զի ոչ եթէ ճարտարասանութիւն բանից 'ի խնդիր է վիրաւորն, այլ որ դիւրալուր բանիւ զհանդամանս առողջացուցիչս դեղոցն ոգոյն վիրացն ցուցանիցէ, և զախտս մեղացն փարատիցէ ճշմարտին վարդապետութեամբն. ոչ ինչ աւելի ձևացուցանել քան որ հոգւոյն սրբոյ են հրամանք: Զի թէպէտ և գիրք բազում գրեցան, սակայն մի և նոյն են պատգամք: Այսպիսի ինչ է զոր ասէն: Ընկալաւ Մովսէս տասնպատգամեան օրէնս 'ի հոգւոյն, որ ունէր զամենայն կամս Աստուծոյ. նոքին վկայ և մարգարէքն գրեցին, և զնոյն գիւրապատում արարին. նոքին հոգւով զնոյն և առաքեալքն գրեցին, և ևս առաւել յայտնագոյնս ծանուցին. նոքին հոգւով զնոյն վարդապետքն թարգմանեցին. և մի ըստ միոջէ գիւրալուր ևս արարին 'ի լուսն..[2] Ջերմեռանդն արտասուօք պարտ է կալ առաջի Աստուծոյ. և որպիսի աղօթք են անընդունելի և զինչ վարձք նորա, և կամ որ ընդունելիք և որպիսի..նորա. և թէ որպիսի մ.... ւք ջանայ ստանայ խափանել զաղօթս աղօթականին: Ծանուցանէ և զդառն դատաւորն ծուլացեալցն և զանմահ կենացն վայելչութիւնս:

Ե. Վասն ողորմութեան և անողորմութեան, և թէ որպէս շահաւոր է քան զամենայն առաքինութիւնս. և թէ որ օգուտ հզօրին է և

1 Յօրինակին խանգարեալ է. որպէս և զկնի:

2 Թուղթ մի անկեալ է յօրինակէն:

որպիսի ինչ աղքատին 'ի տրոցն ողորմութենէ : Ուսուցանէ և զանազան կարգս ողորմութեան հանգամանս և զկեղծաւորացն պատիժս : Պատմէ և զնեղելոցն նեղութիւնս և զանողորմիցն զթշնամանս : Ցիշեցուցանէ և զանողորմիցն դատաստանն անողորմ, և զողորմածացն ողորմութիւնս յահեղ աւուրն յետնումն :

Զ. Վասն պաղոց և պատարագաց և ողորմութեան աղքատաց. և եթէ կերպարանօք բարւոյ դործ անօրէն կատարէ սատանայ. և եթէ պարտ է զոր ինչ ոգւոցն սերմանես՝ երկիւղիւն ՅՍ կատարել և ոչ 'ի ցոյցս մարդկան, զի մի զխոտանն մատուցանելով յանդիմանեսցուք իբրև զԿայէն : Եւ ապա 'ի խրատ մատուցեալ յայանէ զչարութիւն հնարիցս սատանայի, և ցուցանէ թէ որպէս պարտ է զերծանել 'ի նմանէ :

Է. Վասն փոխոց և վաշխիցն չարաց. և թէ որպէս անօրինագոյն են քան զամենայն անօրէնութիւնս փոխոցն տոկոսիքն, և անթիւ հոյլս ամբարշտութեան ծնանի. և թէ պիղծ են պատարագք և ողորմութիւնք զոր 'ի վաշխիցն ոք առնիցէ : Սպառնայ և ահիւ գեհենին թէ յայնմ աւուր չարչ զնովաւ տեսանելոց է զչարեացն զպատկերս ըզզրկեալս և զկոտրեալսն :

Ը. Վասն յանդիմանութեան տրանջողացն և մխիթարութեան աղքատացն գոհացողացն. և թէ որչափ չար է տրտունջ, և հաւասար հայհոյութեան. և որպիսի շահք են յաղքատացն գոհութենէ, որք և ըզպակս իսկ զմարտիրոսութեան ստանան : Եւ ուսուցանէ թէ ո՞ր են պտուղք և պատարագք և ողորմութիւն աղքատին, որ առանց ոսկւոյ և արծաթոյ է բաշխումն : Պատմէ և զհոյլս տրամութեան մեծատանցն և զաղքատացն անհոգութիւնս. յիշէ և զտանջանացն արհաւիրս, և ապա 'ի խրատ խոնարհի :

Թ. Վասն քահանայիցն տեսչութեան 'ի վերայ ժողովրդեանն. և թէ որպէս ահիւ և գողութեամբ պարտ է առաջնորդել զի և անգ... ժողովրդեանն. զի բաղում քննութ.....նէն. և եթէ ահեղա.....ին ոչ զգուշացուցանեն բանիւ վարդապետութեամբ :

Ժ. Վասն բամբասողաց և չդատելոյ զվարդապետս. և թէ մեծ անօրէնութիւն է բամբասողաց չարութիւն, և ընդ պոռնիկս և ընդ յափշտակողս դատապարտին. և առաւել ևս որք զքահանայն և զվարդապետն և զառաջնորդս բամբասիցեն. և թէ որչափ ապաշխարութիւն է քահանայիցն վասն հօտին տեսչութեան : Պատմէ և զահեղ տանջանացն, և ցուցանէ զճանապարհ կենացն յաւիտենից :

ԺԱ. Վասն սիրոյ և յանդիմանութեան և մխանաց և նախանձու. և եթէ ո՞ր է սէրն ՅՍԾակամ, և կամ որ ըստ մարմնոյ. և եթէ որպիսի անօրէնութիւն է նախանձն և ատելութիւնն զոր զունելիսն սատանայի նմանեցուցանէ և նորուն տանջանացն տանջանակից : Ապա 'ի խրատ խոնարհի, և ապեղանիս 'ի վերայ հրամայէ ըստ ախտին չարութեան :

ԺԲ. Վասն բարկացողաց բարուց և անհաշտ թշնամութեան մտաց. և թէ որչափ անհամբոյրք են և վայրենաբարոյք, և զթոյնս թշնամութեան..... են հանապազ..... ցուցանէ զհաշտեալն ընկեր-

րին . . . . . ի ահեղ խորհրդոյ . . . յիշեցուցանէ զԹշնամանս Քրիստոսի զոր առ 'ի մէնջ և համբեր . և զպահս համբերողացն և զանհնազանդիցն զոտանջանս :

ԺԳ . Վասն ոխապահաց և քինահանաց . որ ծանուցանէ եթէ քանի չարութիւնք նախանձոտացն ոխութիւնք , որ իբրև զհուր բորբոքեալ այրեր զնոսին . և եթէ ոչ է պարտ զայնպիսիսն մարդ անուանել , այլ օձս և խժս դառնաթոյնս՝ որ հանապազորդս 'ի տուէ և 'ի գիշերի ապանութիւնս գործեն : Ապա և զպատիժս դատաստանին յիշեցուցանէ , և 'ի խրատս յորդորէ հանգերձելոց բարեացն ցանկութեամբ :

ԺԴ . Վասն սակաւ ինչ գողութեանց որ ոչն ապաշխարեն . և այն է զոր ասէն՝ եթէ " Ամենայն անօրէնութիւնք մեղք են . և են մեղք՝ որ մահուանչափ են ,, : Ցայտնէ և զպատրանս սատանայի թէ որպէս փոքր կարծեցուցանէ զմեծամեծ անօրէնութիւնսն . զի ոչ եթէ ըստ չափոյ ընչիցն գաթի , այլ զվրէժ պատուիրանահատութեանն պահանջէ : Ցիշէ և զահ ահեղ դատաստանին , և զանմահ կենացն . . . ենս :

ԺԵ . Վասն չար սովորութեան երդմանցն . . . օրինագոյնք են քան զ . . . . . արդեալ է ամենեին 'ի պատուիրանաց զերդմունս սատանայական . զի անհաւատից են երդմունք և ոչ հաւատացելոց : Ապա խրատ և զշնմարտութիւն ուսուցանէ . և յիշեցուցանէ զանքաւ բարութեանն զվայելչութիւնս :

ԺԶ . Վասն արբեցողացն անօրէնութեան , և թէ ընդ պոռնիկս և ընդ յափշտակողս դատապարտին . պատմէ և զզանազան չարեացն որ անտի են ոգւոց և մարմնոց . եղկելի զյիմարութիւնս արբեցողացն լինի , որ 'ի միոյ արբոյն երկնչին և նմանեալն սատակին . 'ի հնոցէ պոռնկութեանն սարսին և բոցով արբեցութեանն այրին և խորտին . որոց պարտ էր յերկոցունցն հեռանալ : Ապա խրատ և յիշեցուցանէ զարբեցողացն տանջանսն և զպատուիրանացն պարգևսն :

ԺԷ . Վասն անօրէնութեան Թատերացն դիւականաց՝ եթէ սատանայական է ժողովն և մայր ամենայն մեղաց . յորմէ ծնանին անթիւ ախտիցն բազմութիւնք , և առաւել ևս 'ի կատականացն և 'ի գուսանացն ելանիցեն հայհոյութիւնք և զաղբալի հոյլք անօրէնութեանն : Եւ եթէ հայհոյիչք են պատուիրանաց որ 'ի Թատերս մտանեն , և 'ի շնորհաց հոգւոյն մերկանան : Ապա խրատ հեռանալ 'ի բազմաչար ախտից և առ ետծ մերձենալ :

ԺԸ . Վասն կնաթողաց , որ վասն անպատշաճ ինչ բանից եթէ լուսաւ , օխս բազմօրեայս ունիցի . և գործ մահու գործեաց որ զկինն իւր եթող . այնպիսին անձնասպան է որ հեռացաւ յայ , և անհերելի տանջանացն մատնիցի : Այլ վասն չքաւորութեան զք որդւոց առնիցէ զատելութիւն ընդ ամուսնոյ , չար է առաջի այ՝ որ սպասնայ ահիւ գեհենին : Ապա 'ի խրատ խնամարհի և զգուշացուցանէ վարդապետութեամբ :

ԺԹ . Վասն անասնամոլացն և իգացելոցն և անօրէն արուագիտացն՝ եթէ յորսիսի անդունդս անօրէնութեան իջուցանէ զմարդիկ սատա-

Digitized by Google

նայ • որ քան զհեթանոսութիւնս ևս պղծագոյն է, և չէ խակ 'ի մարդ-կան համարի։ Զարմանամ և ընդ ներողութիւնն ոյ, թէ կենդանոյն խակ փայլատակմամբ 'ի յերկնից պարտ էր սատակել զայնպիսին։ Ցայսմանէ և զամենայն պղծութիւնսն • և ապա 'ի խրատ խոնարհի և յոյս ապաշխարութեան ցուցանէ։

Ի • Վասն չունելոյ սէր բարեկամութեան ընդ թշնամիս ոյ • և փոխ-չէլ յագահաց և յափշտակողաց և յարբեցողաց սեղանոյ, զի պիղծ են ագահացն և յափշտակողացն կերակուրք, և պղծեն զայնսոսիկ որ մերձենան 'ի նոսա, և նոքին բարեկամութիւնս առնեն ընդ թշնամիս ոյ։ Եւ եթէ պարտ է 'ի սուրբս յարիլ և զոծասէրս սիրել, զի և յերա-նութիւնս երանեսցին։

ԻԱ • Վասն մխիթարութեան կարիսին հարուածոց, եթէ վասն որ-պիսի ինչ իրաց նեղեն զմարդիկ ցասմունք ազգի ազգի • և եթէ զոր ոծն գործէ, զամենայն 'ի բարի մատակարարել մեզ։ Ցայսմանէ և այլ գլուխս բազում անօրէնութեանց • և ապա մխիթարէ և գոհանալ հրա-մայէ զողորմութենէն ոյ, որ անցաւորքս խրատէ և ոչ յաւիտենա-կան տանջանաց։

ԻԲ • Վասն զգուշութեամբ 'ի սուրբ խորհուրդն մերձենալոյ • և թէ որպէս պարտ է ահիւ և դողութեամբ և բազում երկիւղիւ ընդու-նել 'ի մարմնոյ և յարենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի • և եթէ յոյժ աննեարելի դատապարտի քահանայն՝ որ զխիղճ մեղաց ուրուք գի-տիցէ, և 'ի սուրբ խորհուրդն մերձենայ, և ոչ սատարիցէ նմա • և եթէ որպիսի սրբութեամբ արժանացին 'ի սուրբ մարմնոյն և յարիւնն տէ-րունական մերձենալ։

ԻԳ • Վասն սգաւորաց մխիթարութեան 'ի վերայ վախճանելոց • և թէ հեթանոսական և սատանայական է սուգ մեռելոց • և լինին • • • վանք չար դիւին խորհրդոց։ Եւ եթէ լաւ է մահ և օգտակար, թէպէտ և մեղքք ոք իցէ վախճանեալ, սակայն յառաջակայիցն դադարեաց։ Պատ-մէ և զանառակութիւնս կոծողացն և փեռողացն և զմերկասիկ արիւ-նահանացն, և զշէջողսն և զկառանջողսն յանդիմանէ, և առ սգաւորսն 'ի մխիթարութիւն խոնարհի։

ԻԴ • Եւ ապա ողբքն, և նորին աղօթքն։

ԻԵ • Եւ խրատ հարցն յաղագս առաքինութեանց երիտասարդի • և վասն ամբարտաւանութեան, որ յետ ելանելոյն Ադամայ նախահօրն մեր 'ի դրախտէն 'ի վերայ ծննդոց նորա հաստատեցան։

ԻԶ • Վասն հմայից և անօրէն դիւականաց որք թիւրեցան յաշխարհի 'ի Հշմարիտ և յուղիղ պատուիրանաց, և գնացին զվնի սատանայի առ կա-խարդս և առ թովիչս և առ վհուկս և առ ձեռնածուս • և թողու զկաթո-ղիկէ եկեղեցի և զխաչն աստուածընկալ, զնոսա յանդիմանէ և լուծանէ 'ի քրիստոնէական հաւատոց • և առ Հշմարիտ պատուիրանապահսն 'ի խրատ խոնարհի և յաւիտենից բարութեանցն ժառանգորդս կացուցանէ։

Եւ արդ զայս ամենայն փոքր 'ի շատէ ծաղկաքաղ արարաք • բայց են և այլ անթիւ հոյլք խորհրդոց և բազում օրինակք չարեաց և առաքի-

նութեանց, և որք կարևոր են աւաջնորդաց եկեղեցւոյ 'ի խրատ և 'ի յանդիմանութիւն և յերկիւղ և 'ի զգուշութիւն ամենայն ժողովրդոց. զի որ ինչ միանգամ պակասութիւն է մեղաց, և յանցանք վարուց ե-գեալ են 'ի սմա, և ամենայն խրատք վարդապետութեան որ պիտոյ են եկեղեցւոյ, 'ի սմա գտանին յայտնապէս և ոչ ծածկաբար։ Յայտնէ և զմեղացն չարութիւնս և զբժշկութեանն զհանգամանս. որով պահէ անարատս և առանց գայթագղութեան զոգիսագունիցն զլեզուս, որք փոյթ են յուսանել վասն երկիւղին այ և պակասին բանիւ և կամ գի-տութեամբ։ Անաշխատ խրատէ զեկեղեցին թղթոյս վարդապետու-թեամբ։ Յուցանէ և զանազան մեղացն չարութիւնս և զահեղ տանջա-նացն զարհուրիւն։ Ցանուցանէ և զխոստովանութեան հանգամանս և զապաշխարութեան զքնութիւն. զյորդորումն ողորմութեան և զփոյթ աղօթից և զպնդութիւն պահոց։ Ուսուցանէ և զնոնարհութիւն մե-ծամեծաց և զհնազանդութիւն նուաստագունիցն. ասէ և զփոյթ խրա-տու քահանայից և զգուշութիւն պատուիրանապահութեան ժողո-վրդոց, զպզծութիւն գործոց, զանպարկեշտութիւն մարմնոյ և ըզ-գայթագղութիւն լեզուաց և զխորամանկութեանցն անկրկնոյթ ինա-սուցն, և զամենայն հոյլս ազգի ազգի անօրէնութեան յայտնէ և յան-դիմանէ, և ուսուցանէ զզանազանութիւն վարուցն առաքինութեան ըստ հաճոյից կամացն այ. և ամենայն իսկ չարաչար սխտից և վիրացն և մեղաց բժշկութեան՝ որում ցանկայ և խնդրէ անձն ապաշխարողի զհնարս գեղոց բժշկութեան՝ 'ի սմա գտանէ, որ են այսոքիկ։

Digitized by Google

Digitized by Google

ՏԵԱՌՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա.

ԹՈՒՂԹ ՎԱՄՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒՑ ՅԱՆՑԱՆԱՑ

Ողբ սուրբ Հոգւոյն են ցանկացողք, և ՅԾային սիրոյն են բաղձացեալք, գալստեան որդւոյն Այ սպասեն, և անմահ փառացն փափագեն. միշտ 'ի վերինն խորհին, և հանապազ անդուրախութիւնսն փափագեն. զառօրեայս արհամարհեն ուրանան, և օր ըստ օրէ 'ի վեր ելանեն՝ ոչ միայն հաւատոցն ճշմարտութեամբ, այլ և վարուցն առաքինութեամբք. միշտ սկեն սրտին սրբութեամբ, և հանապազ պատրաստ են ոգւոցն անապրատութեան. վարին և կեան յաշխարհի և ոչ ըստ աշխարհիս հաճոյից, այլ իբրև զօտարս և զթափառականս և զմանկունս այլոց աշխարհի նեղին և մաշին 'ի բազում պիտոյից. յուսովն զօրանան այնու՝ եթէ "Ուր են եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի,,: Այս պիսի են հոգևորացն պատիւք և ՅԾասիրացն պարգևք:

Այլ ես 'ի բազում նեռից չարին վիրաւորեցայ, և յաղթեալ պարտաւորեցայ. զպարտութիւն խոստովա-

Digitized by Google

նիմ, և զամբարշտութիւնս իմ ծանուցանեմ. զանթիւ զմեղս իմ պատմեմ, և զահեղ անօրէնութիւնս իմ պաղատիմ։ Օ՛ի ցաւք վիրաց իմոց բռնադատեն զիս պատմել, և վարանք աղէտից իմոց հարկեցուցանեն զիս պաղատել, դեղ վիրիս իմոյ որոնել, և վտակս արտասուաց խնդրել հանապազ. որով զմեղս իմ լացից, և զվէրս իմ բժշկեցից։ Օ՛ որ բազում բաղձանօք ցանկամ հանապազ, և ըղձալի տենչանօք հայցեմ յարաժամ զմարգարէականն զայն ողբալ. զի ընդ նմա ձայնակցելով ողբայի, և արտասուելով զաղերսալի զձայն գորովոյ բարբառէի միշտ՝ ասելով թէ առնէր ոք զգլուխս իմ շտեմարանս ջուրց բազմաց, և զաչս իմ յորդ աղբիւր արտասուաց, և միշտ 'ի տուէ և 'ի գիշերի լայի անդադար՝ դառնապէս զամբարշտութիւնս իմ արտասուել, և զչարիս իմ վարանել, զբազմութիւն անօրէնութեանց իմոց լալ, և միշտ զմեղս իմ ողբալ, և զանբաւ զյանցանս իմ հեծել, և զանթիւ զպղծութիւնս իմ հառաչեցից, և զահեղ զկործանումն իմ կոծել, և վասն աղէտիցն տանջանաց ողբալ դառնապէս։ Օ՛ի խիղճ յանցանաց իմոց հեղձուցանէ զիս հանապազ, և չարիք իմ չարչարեն զիս յարաժամ; հայելով յանթիւ մեղաց իմոց բազմութիւն, և յահեղ ախտից իմոց անօրէնութիւն. որ միշտ զմարմինս իմ մաշէ, և զոսկերս իմ խարշատէ, և զսիրտ իմ գելու, և զորովայն իմ գալարէ, և անձն իմ դողայ երկիւղիւ, և զամենայն անդամս իմ հալէ հանապազ։ Օ՛ի առ ցաւս վիրաց իմոց վարանիմ, և միտք իմ ափշեալ յամառին, զի գիտեմ զբարին, և առնեմ զչար. իմանամ զարդարութիւն, և գործեմ զանօրէնութիւն. խօսիմ զուղղութիւն, և խորհիմ զանիրաւութիւն. երևիմ սրբութիւն, և մերձենամ յաղտեղութիւն. ճանաչեմ զճշմարտութիւն, և յարիմ 'ի մոլորութիւն. տեսանեմ զլոյսն, և խաւարին փափագեմ։

Այլ արդ ո՞վ զիս լացցէ, և կամ ո՞վ զիս ողբասցէ զմեռեալս մեղօք և զկործանեալս անօրէնութեամբ, զանկեալս 'ի խորս խաւարի և յանդունդս ամբարշտութեան. զի չարիք իմ չարչարեն զիս, և պղծութիւնք իմ սպանանեն։ Այլ արդ որպիսի՞ ինչ լացից, և կամ որպիսի՞ ողբացից զանթիւ մեղաց իմոց զբազմութիւն, որ 'ի յան-

Digitized by Google

ցանացս եմ հիւանդացեալ, և ծուլութեամբ իմով ցաւագնեալ։ Օ՛ի անմահութիւն ինձ խոստացաւ, և ես մնամ 'ի մահուս. 'ի վերս յերկինս հրաւիրեաց, և ես յանդունդս դժոխոց ինջանեմ. զփափագելի զդրախտն պատրաստեաց, և ես զփուշս խոցոտիչս ընտրեցի. և կեանս և փառս մշանջենաւորս, և զիս մեղաք իմովք ըստանի։ Այլ արդ այսր ամենայնի որ սուգ բաւական ի՞նչ է, կամ որ ողբ ողբալոյ. որպիսի՞ լալումն արտասուաց, կամ որպիսի՞ հառաչանք պաղատանաց. որ ինչ աշխատութիւնք, և կամ որ վաստակք առաքինութեան զվերս իմ բժշկեսցեն, զի անթիւք են և անհամարք։ Այլ անձն իմ հեղգայ ծուլութեամբ, յահեղ մեղայ բազմութենէ լքեալ թուլանայ, և յանշէջ հրոյն գեհենին սարսեալ սարսափէ. զի յիշելով զմեծ օր ահեղ դատաստանին և զսոսկալի բեմբին արհաւիրս՝ անձն իմ դողայ երկիւղիւ, և միտք իմ ահիւ հիանայ. սիրտ իմ ողբալ պահանջէ, և աչք իմ բաղձան արտասուաց. ահ ահեղ ատենին փութացուցանէ զիս յապաշխարութիւն, և պատրանք չարին ծուլացուցանեն զիս հանապազ։ Այլ ահա նեղեալ եմ յերկոյուսց և տագնապեալ եմ ամենայնիւ, զի միշտ 'ի մեղս զաւուրս իմ անցուցի, և յանօրէնութեան զկեանս իմ ծախեցի, և ումեք զբարիս չարարի, և զարդարութիւն երբեք ոչ ստացայ. այլ զամենայն անդամս իմ ապականեալ կորուսի 'ի յանցանս բազմադիմիս։ Օ՛ գերան իմ բամբասանօք պրղծեցի, և զլեզու իմ դատարկ բանիւք աղտեղացուցի. զունկն իմ 'ի լուր չարութեան, և զակն իմ 'ի տեսս աղտեղիս. զսիրտ իմ զգիր խորհրդովք, և զանձն իմ անպարկեշտ գնացիւք վարեցի հանապազ. և ամենևին ոչ պահեցի զմարմին իմ առողջ և զսիրտ իմ ՀՀմարիտ. զի մեղաք 'ի ցաւս, և յանցանօք 'ի հիւանդութիւնս։ Կամիմ զղջանալ խոստովանել, և թշնամին յապաղեցուցանէ. կամիմ մտանել 'ի վարս ապաշխարութեան, և թշնամին ծուլացուցանէ. կամիմ անկանել առաջի ՀՀ, և թշնամին հեռացուցանէ. կամիմ պաղատել և մաղթել և աղաչել, և թշնամին կարծրացուցանէ. կամիմ ողբալ և լալ արտասուօք, և թշնամին ցամաքեցուցանէ. կամիմ ողորմել աղքատին, և թշնամին զաղքատութիւնս իմ յիշեցուցանէ. կամիմ պահօք զիս մաշել, և թշնա-

Digitized by Google

մին զտկարանալս մարմնով ինձ յիշեցուցանէ. կամիմ խոնարհել և եղբօրն հնազանդել, և սիրտ իմ պնդի ամբարհաւաճումեամբ. զի որով մարթիմ զմեղս իմ քաւել, զչարութեան որոգայթ թշնամւոյն առաջի եղեալ գտանեմ։

Յս արդ նեղեալ եմ ամենայնիւ, և անձն իմ հեծէ հանապազ. յիշելով զմեղաց իմոց զբազմութիւն դողամ երկիւղիւ, և ընդ վաղրութիւն խորհրդոց իմոց վարանիմ. զանսրբութիւնս իմ հայելով ողբամ հանապազ, և զանօրէնութիւնս զմտաւ ածելով արհաւիրք տարակուսանաց 'ի վերայ իմ անկանին, և ցաւք երկանց ինձ հարկանեն։ Օ՜ի միշտ զահ ահեղ ատեանին տեսանեմ, և զարհաւիրս մեծի բեմբի և ահաւորի, և զահեղ հնչիւն փողոյն, և զահագին բարբառ հրեշտակապետին. զծովածաւալ հրոյն բորբոքումնն, և ընդ ամենայն երկիր ծաւալումն. զվերանալն արդարոցն, և զմընալն մեղաւորացն. զդումարելն ամենայն մեղաւորաց, և տալ համարս բանից և գործոց. զսոսկալի դէմն դատաւորին, և զաններելի օր դատաստանին. զչար ամենեն մեղաւորաց, և զդաւն [1] անմահ տանջանն յաւիտենականս։ Յս վասն այսր ամենայնի հեծեմ և լամ դառնապէս՝ անդադար զմեղս իմ ողբալով, զի յոյժ ահեղ տեսանեմ զարհաւիրս գեհենին, և զսոսկալի աղէտիցն զտեսչութիւնն. ուր ոչ ինչք և ոչ աղաչանք ինչ օգնեն. ոչ լալումն և ոչ արտասուք են օգուտ. ոչ հեծութիւնք և ոչ հառաչանք են պիտոյ. ոչ արդարքն մաղթեն, և սուրբքն բարեխօսեն ընդ գնացեալսն մեղաւք։ Ազատեաց ես 'ի ծանօթից, և հեռաւոր 'ի մերձաւորաց. ատելի ես սիրելեաց, և թշնամի բարեկամաց. ամայի ես ամենեւին, և օտար ես յամենեցունց։ Չէ զոք կարես աղաչել, և ոչ զոք զքեզ ճանաչէ. ողբաս և լաս ողորմով, և ոչ ոք 'ի քեզ խոնարհի. պասքեալ ծարաւով տապակիս, և ոչ գթայ ոք 'ի քեզ. այրիս հանապազ, և հրնարս խորովմանն ոչ գտանես ամենեւին. միգապատեալ կաս 'ի հուր հնոցացն, և աղջամղջիւ յաննշոյլ գեհենին, 'ի գուբս խաւարային և 'ի տարտարոս ներքինս 'ի ժահահոտս և յորդնեռացս. հուր բորբոքեալ 'ի ներ-

1 Մի օր. դատանամակ։

քոյ, և հրահրանք ահեղ 'ի վերուստ՝ որ յորդեալ ի-
ջանեն յորդահոս գետոցն հրեղինաց, ուր խաւարին է
շոշափելի։ Այս ամենևին զոք ոչ կարես տեսանել, զի
սեւաթոյր միգո

զօթից. մի դադարեր 'ի զղջանալոյ, և մի յապաղեր 'ի խոստովանութենէ, և մի վհատիր յապաշխարութենէ, և մի վաստակիր յողորմութենէ. մի դադարիր 'ի լալոյ, և մի հանգչիր յողբալոյ. մի մնար վախճանին, և մի յուսար 'ի վաստակ ծերութեան, և մի համարիր զքեզ ամն բազում յաշխարհիս, և մի կարծեր եթէ յապաստինչ ապաշխարեմ. գող է թշնամին և խաբող, խաբէ ըզքեզ և կորուսանէ յապաղեցուցանելով այսպէս։ Զ. յժամ գործեցիցս ասես, ապա ապաշխարեցիցս. 'ի մանկութենս հանգեայց ասես, և 'ի ծերութեանն ապաշխարեցիցս. կեցիցս այսօր վայելեցիցս ասես, և 'ի վաղիւն պահեցիցս. այժմ փափկացայց ասես, և ապա պարկեշտացայց. այժմ ժողովեցիցս ասես, ապա սփռեցիցս աղքատաց...[1]։ Զ. յապիսիք են պատրանք թշնամոյն, որովք խաբէ և կորուսանէ զմեզ՝ ամ յամ առնելով, և ժամ 'ի ժամ սահմանելով գործել զբարին։

Զ. արդ մի խաբեսցուք յայսպիսի պատրանաց. անյայտ է օր վախճանին, աներևոյթք են ելք յաշխարհէս. իբրև երկունք 'ի վերայ անկանին, և ոչ ժամանես զղջանալ և ապաշխարել. իբրև գող 'ի գիշերի հասանել, և ոչ տայ կոծել և ապաշխարել. իբրև վարմ հաւորսաց վաղվաղակի ըմբռնէ, և ոչ տայ լալ և հեծել և ողորմութիւնս թողուլ. իբրև զառիւծ յարձակի, գոչէ և յափշտակէ, և ամենևին ոչ ժամանես։ Զ. արդ անձն իմ զինչ արասցես, և կամ զինչ գործեսցես, որ խորհիսդ զբարին, և ոչ առնես. կամիս ողորմել, և յապաղես. ասես զղջանալ, և ոչ որպէս Դաւիթ արտասուօք զմահիճս թանայս. այլ և զմոխիր, ասէ, որպէս հաց կերայ, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի. և զամենայն գիշերս հեծեծեր և լայր դառնապէս անդադար։ Յօժար ես 'ի պահել, և ոչ որպէս ըզնինուէացիսն 'ի խորդ և 'ի մոխիր ինքանես. այլ և դարձան ևս, ասէ, յիւրաքանչիւր ճանապարհաց և յանօրէն գնացից, զոր և առնէին։ Զ. խորժես արտասուել և լալ, և ոչ որպէս պոռնիկն խանդաղատագին ողբաս. կամիս ողորմել նեղելոց, և ոչ որպէս կինն այրի՝ որ զամենայնն ծախեաց։

1 Բառ մի եղծեալ է յօրինակին. որ և յայլս պակասէ։

Այդ այսպիսի է ապաշխարութեան ջերմութիւն՝ որ ոչ 'ի յինչս և ոչ 'ի մարմնոյ աշխատութիւն խնայէ. այլ նեղէ և մնջէ և տառապեցուցանէ, և խնդրէ միայն զմեղացն թողութիւն, և զախտից ոգւոցն զբժշկութիւն. որով և մեք զմեղս մեր քաւեսցուք, և զվերս ոգւոց մերոց բժշկեսցուք։ Օրէ և պահօք և ծոմաՁան տքնութեամբ զմեղս քաւել. է և աղօթիւք և խրնդրուածովք և գորովագին պաղատանօք զմեղս քաւել. է խորգով և մոխրով և գետնախշտի անկողնօք զմեղս քաւել. է և լալով և ողբալով և գթով տնանկաց ըզմեղս քաւել. է և հաչելով և հառաչելով և անդադար հեծեծանօք զմեղս քաւել. է և հեզութեամբ և խոնարհութեամբ և հնազանդութեամբ զմեղս քաւել. է և աղքատութեամբ և անընչութեամբ և մերկութեամբ զմեղս քաւել. է և բարի բարիւք[1] և ամենեցունց բարերարութեամբ զմեղս քաւել. է և եղբայրսիրութեամբ և երկիւղիւն Աստուծոյ զմեղս քաւել. է և ուղիղ խրատու և վարդապետութեամբ զմեղս քաւել, ըստ այնմ եթէ "Որ դարձուցանէ 'ի չար Ճանապարհէն, ապրեցուցանէ զոգի իւր 'ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց իւրոց"։ Այլ[2] և Ճշմարիտ դարձն միայն և ուղիղ խոստովանութիւնն բաւական են 'ի փրկութիւն և յարդարութիւն, ըստ այնմ եթէ "Այս դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարացիս"։

Այլ արդ դու զինչ ունիս ասել, ով անձն իմ բազմամեղ, եթէ այսքան դեղօք ոչ բժշկիս. այլ փութա մի յապաղեր, զարթիր 'ի դառնանիրհ 'ի քնոյդ, դարձիր 'ի կորստական 'ի Ճանապարհէդ. փարատեա զխաւարն անգիտութեան. սթափեցիր յանզգայ մոլորութենէդ, և եկ 'ի քեզ. ընկեա 'ի քէն զմեղացդ սաստկութիւն. թեթևացո զծանրութիւն բեռանցդ անօրէնութեան. քաւեա զանթիւ յանցանացդ բազմութիւն. բժշկեա զչարաչար վիրացդ զխոցոտումն, և լուա զժահահոտութիւն տղմոյդ ամբարշտութեան. զի սրբեալ և մաքրեալ ոգւով, լուսազարդեալ և մեծապայծառ մարմնով՝ հա-

1 Այսպէս յօրինակին։

2 Առատնօր թերատթուի բանն յօրինակին, որ 'ունէր այսպէս. Նաև զՁշմարիտ դարձն միայն և ուղիղ խոստովանութիւն. ըստ այնմ. յարմարեցաւ ըստ այլ օրինակաց։

մարձակագէմ և զուարթերես անցանիցես ընդ բարեբանութիւն սիրելիական ահեղ և անթիւ բանակացն, քանզի յանդիման ահաւորի և մեծի բեմին՝ այլ, և ըստ՝ ի հրամանէ զքաղցրալուր բարբառն երանութեան և աշխարհաստեղ հրապարակին՝ եթէ եկայք, օրհնեալք հօր իմոյ, և մուտք ժառանգեցէք զերկնից բարութեանցն ընդ վայելչութիւն ընդ հօր և ընդ որդւոյ և ընդ հոգւոյն սրբոյ. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Բ

ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Արմատք դեղոց բժշկաց զցաւս մարմնոյն առողջացուցանեն, և հոսումն արտասուաց ապաշխարութեան զմեղացն զվերսն ոգոյն բժշկեն. և մանաւանդ որ հանդերձ ողորմութեամբ և գթով տնանկացն ապաշխարիցեն։ Վասնզի բազում արմատք են ախտիցն որ դադարեցուցանեն, ալք խառն են 'ի դեղս բժշկաց. բայց է որ առաւել ևս ազդոյ է առ 'ի ցաւոցն փարատումն։ Այսպէս և 'ի դեղս սորա բազում ճգնութիւնք ապաշխարութեան են 'ի մաքրումն մեղաց. բայց ողորմութիւնն է կարևոր և ազդոյ քան զամենայն առաքինութիւնս առ 'ի զմեղս քաւելոյ և զվերսն բժշկելոյ հանդերձ ողբովք և հառաչանօք և գթագին արտասուօք. յորմէ մի յապաղեսցուք և վաղուենէ 'ի վաղիւ արասցուք զդարձն մեղացն ապաշխարութեան, և մի աւուր վախճանին մնասցուք՝ առնել զընչիցն ողորմութիւն։ Օ՛ի գոլ է օրն այն, յափշտակող է օր վախճանին. ահերևոյթք են եկք յաշխարհէս, յանկարծահաս է և ստիպող, և ոչ թողացուցանէ աղաչել և մաղթել, լալ և ողբալ, ողորմել և ապաշխարել։ Մնռնէ իբրև զոլորոգայթ, յափշտակէ իբրև զառիւծ. և իբրև զգերի գերիվարաց վարեալ անողորմ, հառաչես արտասուել և հեծես ողբալով, և օգուտ ինչ ոչ գտանես։ Օ՛ի ժամէ 'ի ժամ առնելով՝ զժամանակ ապաշխարութեն կորուսեր. որով կարող էիր զբեռինս մեղաց թեթևացուցանել, և զտիրամ անօրէնութեանցն մաքրել. լինել արդարոցն երամակից, որդի հօրն երկնաւորի, և ժառանգորդ անանց բարութեանցն։

Այս արդ կամ փափագանօք ըղձափափկութեանցն և կամ ապառնալեաց ահեղ տանջանացն փութասցուք յապաշխարութիւն, և մի բեռն 'ի վերայ բեռին կա-

Digitized by Google

պեսցուք, և ցաւ 'ի ցաւս յաւելուսցուք։ Զու մի խաբեսցէ սատանայ՝ թէ բազմաժամանակեայ են կեանքս, և մի պատրեսցէ զմեզ մանկութեամբս՝ եթէ 'ի ծերութեանն ապաշխարեմք։ Մի՝ մնասցուք աններելի վախճանին և անողորմ պահանջողացն. մի անվաստակ ծուլասցուք, և անվարձ գնասցուք։ Զյլ զյանդգնս քաւեսցուք և զմեղսն ապաշխարեսցուք, և նախանձաւորելերուք քաջացն քաջութեան և առաքինութեան առաքինեացն. որոց սիրտքն սրբեալք և միտքն լուսաւորեալք, անմեղ 'ի մեղաց և անարատք յանօրէնութեանց. որ միշտ զվերինն խորհին, և 'ի վերինսն հոգան հանապազ. որք զմարմինս ունին հողեղէնս և հրեշտակակրօնս. որք ոչ են կարօտ գրոց վարդապետութեան և տարացոյց օրինակաց. զի առաւել քան զգիրն երևեցուցին զմտացն ուղղութիւն և զվարուցն առաքինութիւնս [1]։ Հեռի եմք յուղիղ գնացից, և օտար 'ի վա-

[1] Ի նօտրագիր օրինակին գտանի առաջիկայս յաւելուած համանման այնմ որ ընթերցեալ լինի 'ի Սարգսի մեկն. Կաթողիկեայց. և սկսանի. "Եւ արդ համեմատեսցուք ընդ միմեանս զայժմու գործս մեր և զնախնի երանելեացն. և տեսանեմք զվատթարութիւնս մեր, և զառաջին սրբոցն զքաջութիւնսն։ Նոքա զանձինս մատնեցին վասն սիրոյն Քրիստոսի. նոքա զինչս և զհայրենիս արհամարհեցին։ Նոքա զծնողս և զկին և զորդիս թողին վասն աստուածպաշտութեան, միայն զի յոյժ մի զսիրեսցին։ Իսկ մեք որք թուիմքս թէ եմք ինչ, ոչ այսպէս. այլ զամենայն հնարս վասն հանգրստեան մարմնոյ հնարիմք, և զընչիւք գամք, և զսիրելիս մեծարու համարիմք քան զպատուիրանս այ։ Եւ զինչ սաեմք զսիրելիս. ուր զոլթ այգւոյ և զպարտէզ բանջարոյ և ծառս դրախտի և զկարաս գինւոյ և զանօթս չնչինս յարգոյ և պատուական համարիմք քան զսէրն այ։ Նոքա վասն Քրիստոսի հալածէին և քարշէին և նախատէին. 'ի բանտս և 'ի կապանս մատնէին։ Իսկ մեք վասն Քրիստոսի ոչ նախատանաց անգամ տանիմք, և ոչ թշնամանաց բանից համբերեմք, և ոչ զզայրացումն եղբօրն քաղցրութիւն չիջուցանեմք. այլ ևս առաւել գազանանամք ընդդէմ նորա։ Դարձեալ և մեք վասն Քրիստոսի մի ինչ 'ի մարմնական ցանկութեանց ոչ կապեմք 'ի մեզ ժուժկալութեանն կապանաք, և ոչ բանտաքգել լինիմք 'ի տունս մեր զոր մի ողջոյն վասն Քրիստոսի, և ոչ արտասուաք զբոց մեղացն չիջուցանեմք, և ոչ ժուժկալութեամբն իբրև երկաթի եղնգամբք քերեմք 'ի մէնջ զթարախն անօրէնութեան։ Նոքա զթշնամին սիրէին, մեք և զբարեկամն ատեմք. նոքա զզրկահալածիչսն օրհնէին, և մեք զքարերարսն մեր բամբասեմք. նոքա զինչսն զոր 'ի հայրենեացն անսի ունէին՝ ցրուէին, իսկ մեք զոր ոչն ունիմք՝ սատանալ ջանամք։ Նոքա յերկրաւորացս յերկինս փոխեցան հրեշտակական կրօնաւորութիւնքս զաքաւարեալք. իսկ մեք յերկնաւոր քաղաքականութէ յերկիր կոր ծանեցեալք, և սանդարամետական եղեալք։ Նոքա զնոր յինքեանս բնակեցուցին՝ զպատուիրանս Քրիս-

րուց առաքինութեան. շեղեալք յորոգայթից թշնամոյն և շաղախեալ տղմով յանցանաց. կարօտք եմք խրատուց և վարդապետութեան և տարացոյց ինչ օրինակաց. և թերևս ահից սաստիցն յահեղ հրոյն երկիցուք, և տարացոյց օրինակացն աղէտիցն խմացուք։ Պարմանովն զոգոյն ծանիցուք, և երևելեաւս զաներեւոյթն գիտասցուք. ահիւ ահեղ տանջանացն զղջացուք, և փափագանօք անանց[1] բարութեանցն։ Պաշխարութիւն պարտ է առնուլ զօրինակս վիրաց ոգոյն ցաւոցն զցաւ ախտիցն մարմնոյ, թէ որպէս միշտ ողբայ անձն ցաւագին զվարանս ցաւոցն մարմնոյ, և հանապազ լայ դառնապէս զառժամանակեայ ախտիցն զայրացումն, և 'ի տարակուսանաց ահեղ աղէտիցն հառաչէ և հեծէ անդադար, և ձայնք պաղատանաց և վայից և զանազորման խանդաղատանն։ Օ՛ի 'ի սաստկութենէ աշխատիցն[2] ցաւոց ոչ 'ի սէր սիրելեացն քերկրի, և ոչ 'ի թշնամանս ատելեացն զայրանայ. ոչ զփափկութիւն կենացն յիշէ, և ոչ զվայելչութիւն գեղոյն ածէ զմտաւ. և զամենայն իսկ զպատիւս և զպայծառութիւն աշխարհիս անիրաւոյթ արարեալ ուրանայ 'ի տարակուսանաց ցաւոյն։ Այլ կայ միշտ սգով և արտասուօք և ողբագին խանդաղատանօք. զվիշտս վտանգին միայն պաղատի, ընդ որ բազումք 'ի մերձաւորաց արտասուեն ողորմելով, և փութան լինել 'ի խնդիր բժշկաց և դեղոց առ զառժամանակեայ զցաւսն փարատելով, և վարձս ևս բժշկացն խոստանան և գինս դեղոց վասն տագնապի ցաւոց փարատելոյ։

Այլ այս ամենայն վասն ապականացու մարմնոյս լինին նեղութիւն. որ թէպէտ և բժշկի, սակայն մեռանելումն։ Իսկ զինչ արասցուք զմշտնջենաւոր ցաւս ահեղ հրոյ դեհենին՝ որ պատրաստեալ պահի բազմավէր ոգոց մերոց, որ միշտ 'ի մեղս է ախտացեալ, և 'ի մահիճս

տոսի կատարելով, իսկ մեք անցանելով ընդ պատուիրանս նորա՝ տեղի եղաք բանսարկուին սատանայի։ Քանզի ամենեին սանձակոտորք եղաք 'ի դաշտի, և զքաղցր լուծն 'ի բաց ընկեցաք 'ի պարանոցաց մերոց, և զփոքրագի բեռն սասանեցուցաք 'ի թիկանց մերոց, և ամենահաբար յերկրի շաջեմք։ Ո՛վ մեծի աղէտիս, և վշտալի տարակուսիս։ Վասն զի ,,։

1 Անլ օրինակ այսպէս ունի. զանանց Բարուխիանն ծառանգեցուցուք ապաշխարութեամբ։ Եւ արդ պարտ է մեղ առնուլ օրինակ։

2 Յայլում՝ օրինակի ախտիցն։

յանցանաց անկեալ դնի անբժշկապէս. և հանապազ խոցոտեն, և միշտ վիրաւորեն մեղացն անօրէնութիւնք, և առաւել չարաչար չարչարեն զքեզ վարանք աղէտիցն ցաւաց։ Եւ ոչ հառաչեմք և հեծեմք և հանապազ պաղատիմք առ նոա. ոչ ողբամք զցաւս մեղաց, և ոչ զվերս յանցանաց մերոց լուանամք. ոչ անգադար լալով արտասուեմք զանօրէնութիւնս մեր, և զմշնջենաւոր տանջանացն արհաւիրան. այլ վերս՝ի վերայ յաւելումք հանապազ, և ապիղանեաք ապաշխարութեան ոչ դարմանեմք. ոչ բժիշկս խնդրեմք, և ոչ դեղս որոնեմք. ոչ ինչս ծախեմք, և ոչ վարձս խոստանամք ընդ կարևոր վիրացս բժշկութեան, և ընդ անհնարին ախտիցս անբուժնութեան. որ ոչ միայն աղեաք և որովայնիւք եմք՝ի ցաւս, այլ ամենայն մարմնովս եմք՝ի վերս մեղաց։ Քանզի աչք մեր յածողք յարատ հայեցուածովք են՝ի վերս. ականջք մեր առ՝ի զանդէպն ախորժելոյ են՝ի ցաւս. լեզուք մեր բամբասանաքք և երդմանքք են՝ի ցաւս. սիրտք մեր չար ցանկութեամբ և պիղծ խորհրդովք են՝ի ցաւս. ձեռք մեր յափշտակութեամբ և՝ի զգկանաց են՝ի ցաւս. ոտք մեր՝ի թատերացն խաղուց և յանպարկեշտ գնացիւց են՝ի ցաւս. և ամենայն մարմինք մեր ջրգոլեալք մեղաք, և այտուցեալ անօրէնութեամբ։ Եւ այսպէս ամենայն անդամաք եմք՝ի ցաւս և՝ի վիշտս մեղաց. և առ բժիշկս ուրոյն ոչ մերձենամք, և դեղոյ ապաշխարութեան չեմք՝ի խնդիր. ախտիւ մեղացն չարչարիմք, և արտասուաք ապաշխարութեան ոչ բժշկիմք։ Եւ ողբովք սրբեմք զդառն թարսխն մեղաց, և ոչ արտասուաք լուանամք զչար նեխութեանցն փտութիւն. զոր եթէ ասա՝ ոք ոչ բժշկէ աղօթիւք, պահաք և ողորմութեամբ, անդ ահեղ հուրն առաջի կայ, և բորբոքումն անշէջ բոցոյ գեհենին. պատրաստ են և սպասեն հրահրանաք[1] գետոցն հրեղինաց և տարտարոսքն աղջամղջինք լի խաւարաւ. դառն դահիճք և անողորմ ջարչարանք. քաղուտ վարանք աղէտից, և ահագին արհաւիրք անհներելի տանջանաց, որ մնան և պահին յօր մեծի ահեղ դատաստանին։

Եւ որդ ոչ ոչ ամենայն առաջի կայ, և մեք զբզիմք և

1 Ցորին. հրահրանաք. եղբք ըստ այլ օր։

փարիկանամք և մեղանչեմք ամենակիւղ, և ամենևին յերկրաւորս յորդեալք[1] զամենայն ինչ անհոգաբար կա-տարեմք. ուտեմք և ըմպեմք, և 'ի քուն լինիմք անհոգա-բար, և բազում աւելատացուածութիւն մթերս ժողո-վեմք իբրև զանմահս և զմշտնջենաւորս. և զօրն երբեք չածեմք զմտաւ[2], ոչ զարհաւիրս դատաստանին, և ըզ-դառն ամենն յաւիտենական։ Այլ ոչ յիշեմք իսկ ա-մենևին եթէ զինչ ունիցիմք կրել յետ մահու, և ոչ զամենահնար պատերազմն սատանայի ածեմք զմտաւ բազում զգուշութեամբ և երկիւղիւ հանապազ, որ միշտ 'ի գաղտնիս մարանչի անդադար, և աներևոյթ վի-րաւորէ յարաժամ. և չզգամք և չզգուշանամք 'ի չար նետից նորա, և խստավէր հարուածոցն. այլ յամե-նայն 'ի ցանկութիւնս վայելեմք անհոգաբար, և հանգ-չիմք անակնածելի։ Այս այնպէս ծուլութեամբ և ան-հոգութեամբ վարիմք, որպէս թէ չիցեն իսկ տանջանք, և ոչ գեհենն, և ոչ դատաւոր ահաւոր, և ոչ դատաս-տանք անողորմ. ոչ քննութիւնք գործոց, և ոչ խրն-դիրք խորհրդոց. ոչ վարուց հատուցք, և ոչ դատարկ բանից պահանջումն։

Այս այս ամենայն ծուլութիւնք 'ի չար հնարից սա-տանայի են որ յամենայն վարս մեր ընթանայ, և զնոսա զորոգայթն մահու. քանզի ոչ եթէ չարեօքն միայն չարչարէ սատանայ, այլ զուղիղ վարսն 'ի չարութիւն դարձուցանէ. և բարի արուեստիցն զոր 'ի մարդ տեսա-նէ, զնոսա նմին որոգայթ մահու։ Օ որ սակաւն համա-ցիս, և ոչ փութաս ապաշխարել, նովին կորուստնէ. քանզի կորուստանէ զպահոցն կեղծաւորութեամբ և 'ի ցոյցս ձգնելով. զաղօթականն արհամարհանաք կալ ա-ռաջի ՝այ, և զմիտսն յածէցուցանելով արտաքոյ. զողոր-մածն 'ի տեսս հիւանդաց ոչ գնալ։ Կորուստանէ և ըզ-վարդապետսն կեղծաւորութեամբ ուսուցանելովն, որ ոչ բազում երկիւղիւ զկամսն ՝այ ուսուցանիցէ։ Կորու-ստանէ և զսաղմոսերգողն սատանայ, եթէ ոչ զգուշա-նայցէ չար սխտիւ մնափառութեամբ, այլ 'ի ցոյց և 'ի գով ընելեացն ասիցեն, և ոչ զպատգամն ՝այ պատմեսցէ

1 Յայլում օրին. յորդորեալ։ Ե. գլորալոր էլ յաշխարհէս։
2 Այլ օրինակունի յաւելուած.

ցեն, և զօրհնութիւնս կորա երգեսցեն, որք ոչ իբրև զփառաւորիչս պատուեն։ Որուսանէ և զլսողսն սատանայ վասն ծուլութեամբ և արհամարհանօք լսելոյ պատգամացն այ և բանին վարգապետութեան։ Որուսանէ և զվաստակս վաստակաւորաց սատանայ տրտնջելոցն, և մեծ 'ի վերայ հեղգագունիցն երևելով, և 'ի հաշիւ և 'ի հանար զգործ սպասաւորութեան իւրոց բերելով, և յայտնելով ամենեցուն զքան վաստակոյն իւրոյ. որ ոչ իբրև զվաստակաւորսն հանգիստ գտանէ, այլ իբրև զտրտնջողսն և զդատապարտեալսն յանդիմանի։ Որուսանէ և զընչաւորս սատանայ որք 'ի ժողովելն միայն են ժրացեալք, և ոչ 'ի բաշխելն տնանկաց. որ և ոչ ընչիւքն ապրել մարթացեն, այլ իբրև զանողորմն և զագահս դատապարտեսցին։ Որուսանէ և զազքատս սատանայ հեծեծանօք և տրտնջելոցն, և ոչ գոհանալով այ որ կամի 'ի մշտնջենաւորսն մեծացուցանել զնոսա։ Որուսանէ և զսրբութեստաւորսն սատանայ, եթէ վարձ աւելի առնուցուն քան զգործն, և կամ նախանձու և չարակնութեամբ զտաղանգ արուեստին արգելուցուն յայնցանէ՝ որ ուսանելն խնդրեն, որ իբրև զտաղանդապարտս պարտաւորեսցին։ Որուսանէ և զիշխանս սատանայ՝ որ ծանր իշխանութեանն լինիցի, և գաղանացեալ սրտիւ զռամիկսն ահաբեկիցէ, և կամ վասն շքեղ երեսաց ինչ և կաշառուց՝ զիրաւունսն արդարոցն գողանայցէ։ Որուսանէ և զայնոսիկ որ ընդ իշխանութեամբն են, եթէ ոչ իբրև սպասաւորի այ հնազանդեն և երկիւղիւ զպատիւն հատուցանիցեն։ Որուսանէ և զհարկապահանսն հարկահանաց, եթէ աւելի քան զհրամանս արքունի պահանջիցեն և զնեղեալսն նեղիցեն...[1] և զբոց գեհենին վառիցեն։

Այս արդ այսպէս ամենեցուն կազմէ սատանայ որոգայթս մանու, և յուղիղ կարգաց և 'ի վարուցն այ հանէ. պտուղ չար և վարձ անօրէն՝ որով կարծեսն զարքայութիւնն ընդունել, նովին զտանջանսն ունին ժառանգել։ Այս յայնչափ յափշտակութիւն յիմարեցոյց սատանայ, մինչև յաղօթելն և 'ի պահելն և յողորմութիւնս առնելն տայ մեղանչել։ Այս ոչ ջանամք թափել

1 Յօրինակին տող մ անընթեռնլի է. որ և յայլս չիք։

'ի մէնջ զԹմբիւ սատանայի, և պաղատանօք ապաշխարութեամբ զտէր հաշտեցուցանեմք. զի կարող է ապաշխարութիւնն զսևացեալս մեղօք սպիտակացուցանել, և զգեռաԹաԹախան մաքրել, զխաւարեալսն մեղօք լուսաւորել, և զմԹերս անօրէնութեանցն փարատել։ Այլ զայս գիտելով սատանայի մտի առ այն՝ որ ապաշխարելն կամիցի, և ծանրացուցանէ զմիտս նոցա չյօժարել 'ի սկիզբն ապաշխարութեանն։ Բանզի գիտէ՝ եԹէ սկիզբն ուղղիցի, ապա և վաստակ ապաշխարութեանն քաղցրանայ. և վասն այնորիկ ամենայն հնարիւք յսկիզբն ապաշխարութեանն զդուշանայ ծուլացուցանելոյն, և օր 'ի յօր առնելով։

Այլ մեր զայս գիտելով փութով փութացուք սկիզբն առնելով ապաշխարութեան. զի միայն յսկսանելն Թուի եԹէ ծանր իցէ, և անդէն գործն հեշտանայ, և երԹայ քաղցր և ցանկալի։ Որպէս և ալիափետացն զառաջինն և դպրոյն զանուանս անգամ գրոյն չհամարձակի երկրարդել որ ուսանելն կամիցի. այլ խեցխեղեփոք կիսանուն և բեկբեկելով, և ապա գիր զգրոյ կախելով անաշխատ բերելով զհեգենայն։ Նոյնպէս և ապաշխարութիւնն եԹէ յսկզբանն միայն համբերիցէ, խոստովանութեամբն ընդունին, և ընդհանրն միաքն լուսաւորին. զերկիւղ տանջանացն իմանան, և երկիւղիւն արտասուս և սուգ ստանայ. սուգն պահս ուսուցանէ, և պահքն աղօթս բերեն. աղօթքն յողորմութիւնս յօժարեցուցանեն, և սակաւ սակաւ յաստիճանէ յաստիճան ելանէ, և դիւրաւ յերկինս վերանաս։ Այլ և կարող ես միով միով 'ի սոցանէ արդարանալ եԹէ կամիցիս. զի բազումք ուղիղ խոստովանութեամբ միայն ապրեցան. ոմանք սգով և տրտմութեամբ փրկեցան. ոմանք խորգով և մոխրով միայն ապաշխարեցին. ոմանք լալով և արտասուօք զտէրն հաշտեցուցին. ոմանք պահօք և աղօթիւք ապաշխարեցին. ոմանք ողորմութիւն զողորմութիւնն ՈՒ ընկալան. ոմանք մարդասիրութիւն և տկարագունիցն ծառայելով գտին ապաշխարութիւն. ոմանք խոնարհութեամբ և հնազանդութեամբ թողութիւն մեղաց ընկալան։ Օ՛ի որպէս ազգի ազգի են մեղացն Ճանապարհք, նոյնպէս և զանազան են դեղք ապաշխարութեանն, որով կարող ես բժշկել զամենայն

հիւանդութիւնս մեղաց, ոչ թուովք ամաց և բազում ինչ ժամանակաւ, այլ միայն ուղիղ դարձիւ և սրտիւ 'ի չարեացն հեռանալով կարող ես արդարանալ։

Եւ արդ զայս ամենայն գիտելով ապաշխարութեամբ զմեղս մեր քաւեսցուք. քանզի պղծութիւնք մեղաց ոչ միայն յահեղ աւուրն դատապարտեն, այլ և աստէն իսկ չարեաւքն չարչարեն մտացն խղճիւ, և գաղտագողին շարժելով ակնածութեամբք 'ի մարդկանէ, կատկածանաւք 'ի ծանօթից, ամօթով 'ի սիրելեաց, նախատանաւք 'ի թշնամեաց, սպառնալեաւք դատաւորաց, երկիւղիւ բանդիից և պատուհասից, յանդիմանութեամբ պատուիրանացն Ցայ, և ահիւ ահեղ տանջանացն։ Եւ անդր երթեալ ոչ կարասցէ պատմել զմշտնջենաւոր անմերելի աղէտիցն նեղութիւնս, ուր այրինն և մաշին ամօթով և նախատանաւք։ Իսկ զապաշխարութեան պտուղս ոչ միայն յերկինս վայելես, այլ և աստէն իսկ հարիւրապատիկ ընդունիս խնդութիւն, անհոգութեամբն, գովութեամբ պատուիրանաց, անխիզձ մտացն ուրախութեամբ, անակնածելի 'ի մարդկանէ, անկասկած 'ի ծանօթից, անպարսաւ 'ի թշնամեաց, առանց ամօթոյ առ սիրելիսն, համարձակ 'ի հրապարակս, աներկիւղ առ դատաւորացն, ազատ 'ի պատուհասից, կեանք խաղաղականք, մահ հեշտական, ակնկալութիւն մշտնջենաւոր և փափագելի փափկութեամբն։ Իսկ անդուրախութեանցն ո՞ր բերան բաւական իցէ պատմել զանբաւ բարութեանցն զվայելչութիւնսն։

Արդ այս է վարձ արդարութեանն, այս պտուղ ապաշխարութեանն։ Զայն որոյ մի երկնչիր 'ի մեղաց բազմութենէ մտանել յապաշխարութիւն. միայն անկիր առ ՀԱՅ. չէ դատաւոր, այլ բժիշկ. չէ դահիճ սպանող, այլ հայր գորովագին։ Զնդ առաջ քո ելանէ որպէս անառակ որդւոյն. զպարանոցաւ քո անկանի որ դարձարդ յապաշխարութիւն. յաչս առ բերան համբուրէ զքեզ հայրն երկնաւոր. զպատմուճան առաջինն անմեղութեան հրամայէ զգեցուցանել քեզ. կօշկաւն 'ի միսանգամ թիւնիցն թշնամւոյն ամրացուցանէ ըզքեզ։ Զպատարագաւն 'ի մարմնոյ որդւոյն ՀԱՅ կերակրիս. ընդ քեզ վայելեն ընտիր ծառայքն 'ի պատարագէն, և սուրբք ամենայն երգեն և պարեն 'ի դառնալ յանա-

Digitized by Google

ռակուԹենէդ քումմէ։ Ի՝նդ որ հիացեալ նախանձի փոքր մի առաջին ժողովուրդն ԹլփատուԹեամբ՝ ոչ մըտանել յուրախուԹիւն զենման որդւոյն ՀՅ. առ որս ել և եկն էական ՀԱԾ մարմնով՝ աղաչել զհրեայն հաւատացեալ 'ի հայր՝ կոչել 'ի հաւատս հեԹանոսին ապաշխարողի, և ուրախ լինել 'ի դարձի եղբօրն իւրոյ անառակի, և 'ի միասին վայելել 'ի զենմանէ որդւոյն ՀՅ, և ժառանգել զանանց բարուԹեանցն զվայելչուԹիւնն ընդ հօր և ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյն. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից։

Գ.

ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ՊԱՀՈՑ ՊՆԴՈՒԹԵԱՆ

Ազգդ եւ օգտակար եւ կարեւոր են պահոց պնդութիւնք եւ յորկորստութեանց ժուժկալութիւնք. եւ մանաւանդ որ ընտրողական գիտութեամբն մերձենան առնա, եւ ճշմարտիւ ճանաչեն թէ որպէս շահաւոր է պահոցն պնդութիւն։ Իսկ որք ոչ զգուշանայցեն այնմ, աստէն իսկ յերեւելեացս պարտ է իմանալ զպարկեշտութեանն մաքրութիւն, եւ զփնասակար լցումն զորովայնին։ Եւ գիտեն՝ թէ որպէս տեղիք երաշտացեալք բանջարս ազգի ազգի ոչ բուսուցանեն, նոյնպէս եւ որովայնք ցամաքեալք խորհուրդս պղծութեան ոչ ծնանին։ Եւ որպէս երկիր աղբուտ բանջարս խառնամանս բուսուցանեն եւ աճեցուցանեն, նոյնպէս եւ որովայնք աղբով կերակրոցն փափկացեալք՝ խորհուրդս աղտեղիս բերեն 'ի վեր հանապազ. զի զորդունս գէջ երկիր պարարէ, եւ զախտս պղծութեան գիջացեալ որովայն։ Զանազի որ համահամք[1] փափկանան, նա եւ զխորհուրդ ազգի ազգի իմանան. եւ որ սուղ ինչ կերակրովն շատանայ, նա զտագնապ քաղցին ածէ զմտաւ. զի որովայնք թանձրացեալք խորհուրդս սուրբս ոչ ծնանին, այլ պահել պատեն ընդ պատրուակաւ զգայութիւնս մարմնոյն։ Եւ որք որովայնին ծառայեն, անհնար է լինել հաւատարիմ ծառայ ՅԻ։ Օ՛ի որ պահօք նրբին եւ սրբին, ոչ միայն զպղծութիւն անօրէնութեանցն սրբեն, այլ եւ զաւրքն ՅԻԾ յինքեանս բնակեցուցանեն։

Եւ արդ այսպէս մեծ է պահոցն պնդութիւն եւ պարկեշտութեան առաքինութիւն, որ պարաւանդեալ դադարեցուցանէ զամենայն անդամս մարմնոյն յանդէպ ցանկութեանց եւ յաղտեղի խորհրդոց, եւ ստէպ ստէպ

1 Յայտնի օրինակի համանդամօք։

հալածէ 'ի մեռացն խորհրդոց զյարձակումն դիւաց՝ ոչք կամին պղտորել և պղծել զսիրտս մաքրեցելոցն։ Օ՛ի պահոցն պնդութիւն իբրև ջղոք երկաթեաք[1] պնդեալ պահէ զամենայն վարուցն առաքինութիւնս, և զհաւատոցն հաստատութիւնս. քանզի աշտարակ հզօր է ընդդէմ թշնամոյն, և պարիսպ ամրութեան յամենայն նետից սատանայի։ Այլ քանզի կարի կարևոր է պահոցն առաքինութիւն բնութեանս մերոյ, և բազում թերութիւնք 'ի խոնարհութենէ պահոցն յարդարին, անդէն իսկ ընդ ստեղծանել մարդոյն՝ պահոցն պնդութեամբ պարսպեաց զբնութիւնս մեր, և եդ առաջին մարդոյն առաջին պատուիրան զպահոցն պնդութիւն՝ չՀաշակել 'ի ծառոյն։ Օ՛ի թէ էր պահեալ զպահոցն պատուիրանն, անապատ և անմահ և անմեղ կեանս էր ժառանգեալ, և յերկինս զերկնից բարութիւնսն. զի բազումք ոչք պահէցին զպահոցն պնդութիւնս, 'ի բազում վրշտաց ապրեցան։

Սովին պահոցն պնդութեամբ և մեծն Դանիէլ 'ի ժանեաց առիւծուցն ապրեցաւ, զի և գազանական բնութիւնն պատկառէր մերձենալ 'ի սուրբ մարմինն պահողին. և քանզի արգել զինքն չմերձենալ 'ի սեղան թագաւորին որ 'ի պիղծ զոհիցն էր աղտեղեալ, արգելան և գազանքն չմերձենալ 'ի սուրբ մարմին պահողին։ Սովին պահոցն պնդութեամբ և երեք մանկունքն ապրեցան 'ի բորբոքեալ բոցոյն, և շինուցին զմոլութիւն կերակրոցն ցանկութեանց, և սակաւ ինչ ոսպամբ շատացան. շինուցին զբարձրացեալ ահեղ հուր հնոցին. զի անդ 'ի ներքս ցօղ զովացուցիչ զպահողն միհիթարէր, և արտաքոյ բոցն բորբոքեալ զզեղխեցելոքն սատակնայր, և քառասուն և ինն կանգուն տարածեալ զամենեսեան սատակէր։ Սովին պահոց պնդութեամբ և բազմամթոմ քաղաքն Նինուէացւոց ապրեցան, զի դարձան յամենայն անօրէնութենէ և 'ի գնացից չարեաց. խորգով և մխիթարով դարձուցին զիստացեալ բարկութիւնն ՚այ. և զի ոչ խնայեցին նեղել զանձինս իւրեանց պահօք և պաղատանօք, ողբալ և լալ հեծեծանօք, խնայեաց ՚ած յոգիս և 'ի մարմինս նոցա։ Սովին պահոց

1 Յօր. Երակոց. եդաք ըստ այլոց։

պնդութեամբ և Յաւելեալ ընկալաւ զօրէնսն ուղղագիր, զի քառասնօրեայ պահոց մաքրութեամբ ազատասցաւ 'ի մաքուրն մերձենալ, և բերան 'ի բերան խօսէր ընդ նմա իբրև ընդ բարեկամի։ Յովին պահոց պնդութեամբ արբեցաւ Յոգեալ Թեսբացի, և բանիւ բերանոյ իւրոյ զերկինս բանայր և փակէր, հուր 'ի յերկիր իջուցանէր։

Յա զինչ և առացից զպահոցն զպնդութիւն, որ և տեբունական և մարմնոյն պէտք եղեն պահոցն պնդութիւնք՝ անմեղին և անապատին վասն մերոյ օրինակի. որով և հարքն առաջինք առաքինացան, և զվարս ամենամարմնոցն հրեշտակաց 'ի մարմին մարդկան երևեցուցին. մեռուցին յերկրի զերկրաւոր զցանկութիւնս, և զոգիս 'ի յերկինս կենդանացուցին. մերժեցան 'ի յանցաւոր հեշտութեանցս, զի ընկալցին զանանց բարութիւնսն. հեռացեալք 'ի տանց և 'ի ստացուածոց, չարչարեցան բազում փորձանաւք, և նեզեալ ամենևին մերուցին զանձինս քաղցիս և ծարաւով և գՀոգ հանդերձիս։ Զի ամենք 'ի նոցանէ խոտաբուտ Հարակաքն ևեթ շատացան, և ոմանք Հաշակաք մրգոց միայն վարեցան։ Յամենք զծայրս ծառոցն և զարմատս խոտոց միայն ուտէին. ոմանք սակաւ ինչ ընդուվք ժուժկալէին. ոմանք երեք նուկի հացիւ ժամէ 'ի ժամ. ոմանք զչորրորդ մասն նկանակի, և այլք զվեցերորդն. ոմանք զթեփ ցորենոյ աբարին կերակուր. ոմանք խոզաբաւտ[1] եղջերաւն միայն զտաղնապ քաղցին դադարեցուցանէին։ Յոմանք զչազուգաւթիւնն հոգևոր կերակրոյն աւուրն բաւական համարէին 'ի պէտս մարմնոյն. բայց այլ փափկութիւն ինչ կերակրոց ամենևին մեռեալ էր 'ի նոցանէ։ Զի ոմանք ժամէ 'ի ժամ Հաշակէին. ոմանք յետ երկուց աւուրց. ոմանք յետ երից. ոմանք յետ եօթն աւուր՝ և որ և աւելի՝ յիշէին զպէտս կերակրոյն, և զայն կշռով Հաշակէին, և ջուր չափով ըմպէին, և անդադար հեծութեամբ յաղօթս և 'ի պաշտօնն պարապէին, և զգիշերն ամենայն յարտասուս և յողբս անցուցանէին, և աղերսալի մաղթանաւք և հառաչանաւք զանձ հաշտեցուցանէին։ Յոմանք զլարիւք անկեալ ընկէին. ոմանք ոտանաւոր տքնութեամբ զգիշերն անցուցանէին.

1 Ցորին. Խոպաբոպ. եղաք ըստ այլում։

ոմանք սակաւ ինչ նստելով. ոմանք մինչև ցառաւօտն զձեռս 'ի վեր ամբարձեալ ունէին. ոմանց զպարանոցն խոնարհեցուցեալ մինչև 'ի լուսանալն ժուժկալէին. ոմանք աղօթս հարիւրաւորս նկարէին: Իսկ ոմանք անխօսք լինէին, միայն խօսէին զաղմոս. ոմանք առանց հարցմանց ուրուք ոչ բարբառէին. ոմանք ընտրութեամբ յօգուտ ընկերին միայն խօսէին, և մշտաջան վաստակօք և պաղատանօք զօրն ունցուցանէին, և վասն հոգևոր ինչ խրատու 'ի տար աշխարհս անցանէին, և զթշնամին իբրև զգարեկամն սիրէին, և խոնարհութեամբ զընկերն լաւ քան զանձինս համարէին, և վասն հնազանդութեան 'ի հօր ևս մատնէին, և 'ի գազանս դիմէին, և զանձինս 'ի ծառայութիւն ընկերին մատուցանէին, և յարդար վաստակոց զանկն և զտնանկն և զհիւանդն կերակրէին: Ցափօք զմարմինս իւրեանց վարէին, և սանձս խորհրդոց արկանէին. և այնպէս զանազան և բազում ներզութեամբ զպնդութիւն պահոցն յօրինէին: Օ՛ի այս ամենայն է դուռն նեղ և անձուկ ճանապարհ՝ որ տանի 'ի կեանսն յաւիտենից. որով և բազում նշանս և աբանչելիս առնէին, զդևս հանէին, ըզհիւանդս բժշկէին, զմեռեալս յարուցանէին, 'ի վերայ ջուրց գնային, և զընթացս արեգականն դադարեցուցանէին ուղիղ պահոցն մաքրութեամբ. և քան զայս և սաստեալս զօրութիւն գործէին պահոցն պնդութիւնք: Օ՛ի սուրբքն առաջինք յորժամ կամէին մերձենալ առ ՅԾ, յառաջ պահօքն մաքրէին, և ապա առ մաքուրն մերձենային և ՅԾատեաք լինէին. իսկ որք հեռացան 'ի պահոցն, հեռացան 'ի շնորհայն ՅՅ, և բազում չարեաք չարչարեցան: Ի՞նչ ի՞նչ բազմ հեռացաւ 'ի պահոցն պընդութենէ, և եկ 'ի գրախտն յերկիր փշաբեր: Ինչունդք նոյական ազգին հեռացան 'ի պահոցն պնդութենէ, և համանման ջրհեղեղաւն սատակեցան և հեղձան: Յողովուրդն եբրայեցւոց հեռացան 'ի պահոցն պնդութենէ, և ընտիր ընտիրքն սատակեցան: Ինամկիչքն սոդոմայեցւոցն հեռացան 'ի պահոցն, և հրացան անձրևաք կայծականց տեղեաց 'ի նոսա: Իբ ամենայն որք արհամարհեցին զպահս, արհամարհեցան յՅՅ, և յոգորմութենէ նորա հեռացան:

Ոչոյց պահողքն պարտին լինել ընտրողական գիտու-

թեամբ. քանզի կորուսանէ սատանայ զպահողն և զպահս պահողին՝ եթէ զանպարկեշտադոյնսն բամբասիցէ, և կամ զինքն գեր 'ի վերոյ այլոցն ցուցանիցէ, և կամ պիղծ զկերակուրսն համարեսցի. և կամ եթէ կեղծաւորութեամբ պահիցէ, որպէս եթէ ինքն յաչս այլոցն ծածկեսցէ զպահոցն պնդութիւնս՝ զի մի՛ մնասարծ և կեղծաւոր երևեսցի, բայց կամի թէ յայլոցն հաչակէր ժուժկալութիւն նորա. և եթէ ոչ ոք իմասցի, ապա և ինքն կամի կարծրացուցանել ընդ պատրուակաւ զպահոցն պնդութիւն, զի իմասցին և զարմասցին ընդ համբերութեան նորա։ Օ՛ի այսպիսի պահքն ոչ սրբեն և արդարացուցանեն, այլ պղծեն և կորուսանեն։ Բայց եթէ կերակրովք իսկ պարկեշտանայցէ, և այլովք անդամօքն ոչ պահիցէ, 'ի զուր և ընդվայր ջանայ։ Այս է զոր ասեմ. եթէ զլեզուն ոչ պարկեշտացուցանիցէ, և ական և ունկան և խորհրդոց և մտաց ոչ զգուշանայցէ, և ոխութիւն ընդ ընկերին պահիցէ, և ատելութիւն ընդ եղբօրն ունիցի, և կամ սէր կեղծաւորութեամբ ումեք ցուցանիցէ, և կամ խոնարհութեամբ ընկերին ոչ ծառայիցէ, և պատուի և իշխանութեան ցանկանայցէ, և զանձն 'ի պահս կարծիցէ, յոյժ ափշութեան իցէ այնպիսին 'ի սատանայական խորհրդոց։ Օ՛ի այն ոչ են պահք խոնարհութեան, այլ խաբէութեան և կեղծաւորութեան, զրաջան և անվաստակ՝ որ 'ի հուր այրի, և 'ի ջուր աղայ հանապազ. զոր ցեղն ապականեաց, և գողք հատին և տարան, և ոչ ինչ օգտեցաւ յայնպիսի պահոց մրցանաց, այլ յոյժ պատժի և պատուհասի։ Զանզի աստ կեղծաւորական պահօքն պատժի, և անդ յարդար դատաստանէն դատապարտեալ 'ի հուր հնոցացն չարչարի, և քան զորկրեայսն և զարբեցողսն առաւել և պարտաւորի. զի զամենագէտն ՅԾ անգէտ համարեցաւ չարաչար կրօնիցն կեղծաւորութեամբ։

Այլ և են ոմանք որ յորժամ կամին մտանել 'ի պահս, փութան 'ի լուանալ և յօծանել, և խՃողեն զպորտ և զորովայնս, և բազում որկորստութեամբ և արբեցութեամբք շուայտանան, ապա մտանեն 'ի պահոցն պընդութիւնս։ Եւ արդ զինչ կոչեսցուք զայնպիսին, պահո՞ղս եթէ արբեցողս, պարկեշտս եթէ որկորեայս,

Digitized by Google

ՀԳՆաւորս եթէ զեղխեցեալս. զի անհնար է պղծութեամբ արքութիւն գտանել, և մեղօք յարդարութիւս ելանել. և ոչ ոք պոռնկութեամբ կուսութիւն ստանայ, և ոչ զեղխութեամբ և արբեցութեամբ զսրբութիւն պահոց ընդունել։ Զի անհնար է այսմ լինել՝ եթէ նախ պոռնկիմ, ապա կուսանամ. և կամ զեղխիմ և շուայտիմ արբեցութեամբ, և ապա մնանեմ 'ի սրբութիւնս պահոցն. զի անմարթ է պոռնկին կուսանալ, զեղխելոյն արբեցութեամբ՝ պահող և Հգնող։ Զի կուսանն կուսութեամբ ստանայ զկուսութեանն պսակ, և ոչ պոռնկութեամբ. և պահողն ժուժկալութեամբ ընդունի զվարձս պահոցն, և ոչ արբեցութեամբ, զեղխութեամբ և որկորստութեանն շուայտանօք։

Այլ են ոմանք որ զպահս քառասնորդաց ապաղաս ասեն, զկէս ինչ 'ի շաբաթուցն կարևոր անուանեն, և պնդին և Հգնին սրբութեամբ, և զայլսն ապաղաս անուանեն, և թուլացուցանեն զսնդութիւն պահոցն, և անակնուանելի ինն Հաշակեն 'ի փափուկ կերակրոց, և որկորստութեամբ զսուրբ և զերևելի պահս քառասներորդացն լուծանեն։ Զի զայս կարևոր պահս քառասներորդաց և որդին Այ՝ վասն մեր պահեաց 'ի մեր օրինակի. և անդ ոչ անուաներ ապաղաս։ Զնոյն քառասունս և Մովսէս 'ի լերինն պահեաց. և անդ ոչ անուաներ ապաղաս։ Զնոյն քառասունս յանապատին պահեաց 'ի լերինն Հորէբ. և անդ ոչ անուանեաց ապաղաս։ Զնոյն քառասունս և մեք մերով տկարութեամբս օր ըստ օրէ պահօք կատարեմք. և ոչ վայել է մեզ քառասնօրեայ պահոցն անուանել ապաղաս, և լուծանել զսուրբ պահոցն պնդութիւնն. զի 'ի սկսանիլ պահոցն մինչև ցկատարումն նորուն՝ պահք են 'ի փափկութենէ, եթէ կամիցիս Հգնել և պահել. ապա եթէ որկորստութեամբ լուծանել կամիցիս, ոչ եթէ զԹեթև ապաղաս լուծեր, այլ պահս կարևորս։ Զի ապաղաս 'ի ծուլից և յանկատարից անուանի, և ոչ 'ի պարկեշտից և 'ի պահողաց։

Այլ պահք ոչ եթէ 'ի կերակրոցն միայն անուանի, այլ և կարՀել յամենայն մեղաց. զի պահք են և լուութիւնք բերանոյ, և ոչ առանց հարկի և հարցանելոյ ուրուք խօսել։ Պահք են և անրնչութիւն և աղքատու-

թիւնք, և ոչ զաւելորդացն հոգալ. այլ զպէտս աւուրցն ոչոնել, և զնոցին խնդրել յայ։ Պահք են և 'ի տեղւոջն նատել ցածութեամբ, և ոչ վայրապար ուրուք շրջել ցոփութեամբ 'ի զբօսանս և 'ի զշաքաղութիւնս։ Պահք են և գրգռաղելն և գձձելն առանց լուանալոյ և օծանելոյ. պահք են և խարազն ինչ հանդերձիւք զպէտս մերկութեան և ցրտոյն միայն վճարել։ Պահք են և ցածուցանել զաչս յարատութենէ, և զլսելիսն յանզգէպ լսելոյ, և զխրատն 'ի սիրտ խորհրդոց։ Պահք են չհանգանակելն պատուի և իշխանութեանց, չբարկանալն, չաղաղակելն, չնախանձելն, չինդրել վրէժ անձինն, և ոչ ինչ զանձն առ ընկերին արդարացուցանել։ Պահք են չագահելն, և չանդգամանալն, և ոչ հանդերձիւք ինչ մտադրծել։ Պահք են խոնարհութիւն և հնազանդութիւն, և տուրբ սրտիւ զամենայնսն սիրել։ Պահք են և յորժամ զգէտս քնոյ բնութենն ևեթ վճարիցէ, և քուն ցանկութեան ոչ ունիցի. այլ զառաջինն միայն, և տպա յարուցեալ գործիցէ և կամ աղօթիցէ։

Եւ արդ այս ամենայն են պահք ճշմարիտք, և առաւել քան զկերակրոցն կարձումնն. և զայս և որ տոգինն նմանն են՝ պարտ է կարձել 'ի ժամ պահոցն, և ապա լինի ընդունելի և կերակրոցն կարձումնն։ Այլ և կերակրոցն կարձումնն ոչ միապէս, այլ ըստ իւրաքանչիւր կարողութեան. ոմանք միօրէ. ոմանք երկպահք. ոմանք երեքօրեայ, և ոմանք եօթներորդ պարկեշտութեամբ կատարեն ըստ իւրաքանչիւր անձանց զօրութեան։ Ոմանք լոկով բանջարով, ոմանք ընդով միայն շատացան. ոմանք տակաւ ինչ հացիւ, ոմանք յորովայնօքն, և զանպատճառ թանձիկն և սաւերլուն. և ոմանք գինեհատոք միայն, և ոմանք թանահատոք, այլ և ոմանք հացահատոք լինին, և զմրափուկ ինչ կերակուրս և զհամանհամ քացէ 'ի բաց հալածեն և ուրանան. բայց միով ինչ կերակրոքն և ազգեպահոքն և ևեթ շատանան, որ միայն զկենդանութիւնն պահէ, և ոչ 'ի մարմինն և 'ի յարմունս յաւելու որ ըղձանկութիւն ախտիցն յուզեն. և զայն տակաւ ուտել, տակաւ ըմպել, տակաւ 'ի քուն լինել, և աղօթք անդադար։ Այլ պարտ է մանաւանդ յաւուրս պահոցն զոր յորովայնէդ ազգելուս, աղքատաց ընձեռել զայն, զի

դու քաղցիցես, և քաղցեալն յագեսցի, և մեղք քո քաւեսցի։ Այս են պահք սուրբք և ածականք, և տ-քօք լինին ընդունելի ամենայն վշտամբերութեանցն Հգնութիւնք, որ բժշկեն զվիրաւորեալս մեղօք, փրկեն զգերեալսն 'ի սատանայէ, կանգնեն զկործանեալսն անօրէնութեամբք, յարուցանեն զհիւանդացեալսն ամբարշտութիւնք, սրբեն զաղտեղեալսն պղծութեամբք, լուսաւորեն զխաւարեալսն մոլորութեամբ, և մաքրեն և արդարացուցանեն զպահողսն յամենայն յանցանաց, և կացուցանեն մեծապայծառ լուսով առաջի ահաւորի և լուսաւոր բեմքին Աստ. և ընդ նմին ժառանգեն զանանց բարութեանցն զվայելչութիւնսն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս։

Դ

ՎԱՄՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԱՂՕԹԻՑ

Ամփոփեալ զմիտս մեր իմացուք զբանս Ճառիս, և երևելեաւս զաներևոյթն ծանիցուք, և գիտացուք թէ որսլիսի դողումն և ահեղ արհաւիրք են յանցաւորացն յորժամ առաջի դատաւորին կայցեն ամօթով մերկացն. զիարդ վատնին և այլագունին դէմք նոցա. զիարդ սոսկան և սարսափեն. և զի զդողիւ հարկանին երկիւղիւ յահեղ դիմաց դատաւորին, և զլխակորեալք և ակն 'ի խոնարհ լեզուակապք կան առաջի։ Այս եթէ աղաչել և մաղթել ինչ յանդգնիցին, երկիւղիւ սրտիւ, և անհամարձակ լեզուաւ հիւանդաձայնս բարբառին. և բազում աղերսանօք ցաւագին պաղատանս մատուցանեն. արտասուեն, աղաչեն, մաղթեն, զի 'ի գութ և յողորմ զդատաւորն ածիցեն՝ ապրել յանցանաց պատուհասից. ոչ այլ ուրեք զբօսանին միտք նոցա, և ոչ այլուր աչք նոցա, և այլուր լսելիք։ Այս յորժամ դատաւորն առ նոսա բարբառի, ոչ իշխեն զերեսս դարձուցանել, կամ խօսել ընդ ումեք 'ի ծառայակցացն, այլ միայն 'ի դատաւորն նային բազում պատկառանօք աղաչել և հայցել զյանցաւոր տանջանացն զթողութիւն։ Իսկ ո՞րչափ ևս առաւել կարի կարևոր է մեզ բազում պատկառանօք կալ առաջի ահաւորի մեծի դատաւորին, ահեղ ահիւ և սոսկալի դողութեամբ մտանել և կալ յանդիման երեսացն ՅԻ, և ցաւագին ողբովք և յորդահոս արտասուօք ժտել և խնդրել զթողութիւն։ Ոչ այլուր զմիտս, և այլուր զխորհուրդն պարտիմք առաքել. այլուր զլսելիս, և այլուր զտեսանելիս յածեցուցանել, յորժամ վասն յանցանացն մերոց կամիցի ոք աղաչել և մաղթել ՅԻՅ. զի հեծեծանօք և հառաչանօք զտէրն հաշտեցուսցուք, և 'ի գութ պաղատանաց խոնարհեցուք. որով զմեղս մեր քաւեսցէ, և զանօրէնութիւնս մեր սրբ-

Digitized by Google

բեսցէ, և փրկեսցէ յահեղ աղէտիցն տանջանաց և յա-
ւիտենական ամենեցուն 'ի ձեռն աղօթիցն մաղթանաց և
գթասցին սրտին ջերմութեան։ Զանազի բազումք բա-
զում բարութիւնս 'ի ձեռն աղօթիցն ընկալան և եղեն
հաճոյք ՚ՍՍ, որով գտին մեղաց թողութիւն և ոգւոց
փրկութիւն. և մանաւանդ որք հանդերձ արտասուօք և
գթով տնանկաց աղօթեցին, ոչ եթէ միայն զմեղաց
թողութիւն գտանեն, այլ և զինչիրս մարմնոյ ընդու-
նին, և զերկնից բարութիւնսն։ Օ՛ի ձեռք են աղօթք
աղօթականին, և բուռն հարեալ ունի զոտիցն ՚ՍՍ, և
վաղվաղակի խոնարհեցուցանեն յաղաչանս մաղթողին.
քանզի յոյժ կամի և ախորժէ ՚ՍՍ զժտել աղաչողին.
"Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք"։

Լ՚ս արդ պարտ է ամենայն ծանրացելոց մեղօք և նե-
ղելոցն վշտօք և վտանգելոցն 'ի թշնամեաց և աշխատե-
լոցն ցաւօք միշտ աղաչել և ժտել և խնդրել հանապազ
անդադար 'ի ձեռն աղօթից և պաղատանաց. զի որք
միամիտ մտօք և անսենդ հաւատովք աղօթեն առ ՚ՍՍ,
և խնդրեն զբարին, ընդունին զինչիրս ամենայն, որ-
պէս ընկալան հարքն մեր առաջինք։ Իսկ եթէ ասիցէ
որ՝ եթէ խնդրեցի և ոչ առի, աղօթեցի և ոչ ընկա-
լայ, չև ևս ժտութեամբ խնդրեցեր, որպէս կլինն այրի
յանիրաւ դատաւորէն, և իբրև զբարեկամն որ 'ի մէջ
փիշերին հայցէր զնկամակացն խնդիրն. զոր ոչ վասն
բարեկամութեանն, այլ վասն ժտութեանն ընկալաւ.
նոյնպէս և Լ՚նինա ցաւագին անձամբ արտասուօքն և
աղօթիցն ժտութեամբն ընկալաւ զՍամուէլ. սոյնպէս
և ժողովուրդն 'ի հովիտս տրտմութեան լային առ ՚ՍՍ,
և վասն ջերմագութ աղօթիցն և պաղատանացն յա-
ղոյց նոցա զԼեդէոնն, և փրկեաց զՆարայէլ. և վասն
արտասուագին աղօթիցն Լզեկիայի այլ ևս հնգետա-
սան ամ յաւելաւ 'ի կեանսն։ Լ՚ս դու եթէ այսոփսի
արտասուօք և բոլորով սրտիւ աղօթես առ ՚ՍՍ և ոչ
երկմտիցես, ընդունի զինդրուածս քո։

Ոչ ինչ պիտոյ յօդումն բազում բանից աղօթակա-
նին. մաքսաւորն մի բարբառ արձակեաց, և ընդունելի
եղեն աղօթք նորա, և զազամաքանքար բեռինս մեղացն
թեթևացոյց. և Պ՚ովսէս անչշունչ բերանով իսկ ա-
ղաղակեր, և զծովն յատակաբար բարժանէր։ Լ՚ս դու

եթէ բոլորով սրտիւ մաղթես՝ զծով մեղաց միայն ցամաքեցուցանես, և զալիս բարկութեանն դադարեցուցանես։ Օ՛ի չառնուլն յայ՝ի չժառութենէ է, և՝ի չաղաչելոյ բոլորով որտիւ, և կամ եթէ մխասակարագոյն ինչ խնդրիցէք. իսկ եթէ անդադար աղօթիւք զօգտակարն հոգւոց խնդրիցէք, անհնար է չառնուլ յայ։ Զ՚հա աղօթք Նղիայի զերկինս փակեցին և բացին. աղօթքն Դաւթի զսուր հրեշտակին դադարեցուցին. աղօթքն Յունանու զնա՝ի փորոյ կիտին հանին կենդանի. աղօթք քանանացւոյն զդևն՝ի դստերէն հալածեցին. աղօթք զպոնտիկս սրբեցին, զհիւանդս բժշկեցին, զբորոտս մաքրեցին, զկոյրս լուսաւորեցին, զմեղաւորս արդարացուցին։

Եւ արդ այս ամենայն օրինակք ընդունելի աղօթից առաջի կան. որում եթէ կամիս՝ կարող ես նմանել, և հանել զքեզ՝ի բանտէն մեղաց, և՝ի սատանայական կապանացն արձակիլ։ Զ՚իսկն արտասուալից պաղատանօք աղօթեա առ ՅԾ, և յախտից ամբարշտութեանն թեթևանալոյս, զցաւս անօրէնութեանն առողջացուցանես, և զհիւանդութիւն յանցանացն բժշկես։ Զ՚իսկն բոլորով սրտիւ աղօթեա առ ՅԾ, և յորոգայթից սատանայի ազատիս, ՝ի չարաժանի վիշապէն փրկիս, և՝ի թիւնաւոր թշնամոյն ապրիս ողջանդամ։ Զ՚իսկն անդադար աղօթիւք ժտեա առ ՅԾ, և զիսաւար մոլորութեանն լուսաւորէ. զաղտեղութիւն պղծութեանն մեղաց և զտիղմ ցանկութեանն ցամաքեցուցանէ։ Օ՛ի յորժամ աննեղկ հաւատով յամենայն սրտէ աղօթեա առ ՅԾ, ընդունիս մեղաց թողութիւն և յանցանաց քաւութիւն. ընդունիս զերկնից զարքայութիւնն և զանբաւ բարութիւնսն. ընդունիս մարմնոյ առողջութիւն և հոգւոյ փրկութիւն. ընդունիս աւուրս բարիս և կեանս խաղաղականս յամենայն զրպարտողաց։ Զ՚այլ և զալիս բարկութեան բռնաւորաց աղօթքն դադարեցուցանէն. զցասումն արտմտութեանն ՅՅ դարձուցանեն. աղօթք զաղքատս մեծացուցանեն, և զտկարս զօրացուցանեն. աղօթք զհիւանդացեալսն բժշկեն, և զախտս մոլեկանս հալածեն. աղօթք զանուն ծննդականս առնեն, զանորդին բազմորդի. ՝ի ծփանաց ծովու զերծուցանեն, ՝ի յորձանաց գետոց ապրեցուցանեն,

Digitized by Google

զքաղցեալս կերակրեն, զմերկս զգեցուցանեն, զմահս տարաժամն տրգելուն, զամենայն խնդրուածս հաւատով ժառանգն լցուցանեն։

Այս է զօրութիւն ճշմարիտ աղօթիս որ կամին մերձենալ առ Նա. այս է պատարագ բանաւոր անարիւն. զի իւրաքանչիւր ուրուք աղօթքն են պատարագ ՝ի՝. և եթէ ոչ հաճեսցիս սիրով ընդ ընկերին, աղօթքն քո ոչ են ընդունելի պատարագ, զի առ ՝ի՝ ոչ ելանէ. զի որ քէն ընդ ընկերին ունիցի, անհնար է աղօթից նոքա ելանել առ ՝ի՝. իսկ եթէ սիրով սրտիւ աղօթեաց Նա առ Նա, մինչ չեւ քո աղաղակեալ ի՝ցէ, ասացից՝ թէ ահա հասեալ եմ։ Օ՜ի աղօթք անարատք արտասուօք և ողորմութեամբ ընդ աղօթելն աղօթականին բանան դրունք երկնից և 'ի լսելիս ՝ի՝ ելանեն. և եթէ միայն անթերանալի կարդայցեն առ Նա։

Այս զայս ամենայն գիտենալով սատանայի՝ թէ մեծամեծ զօրութիւնք և անքաւ բարութիւնք յաղօթից գործին, երթեալ մերձենայ առ այն՝ որ աղօթելն կամիցի. և նախ առաջի 'ի մահիճն պատերազմիցի ընդ նմա, զանկողինն հեշտացուցանելով, զքունն քաղցրացուցանելով, զմարմինն ծանրացուցանելով. այսր այնր յեղյեղու, և քոշքոտեցուցանէ։ Այս ուր ուրեմն յարուցեալ գնայ յեկեղեցին բեկբեկելով, և մտեալ 'ի ներքս՝ լինի յանդիման ՝ի՝. և անդ ևս զմիտն պատրուակէ սատանայ առ 'ի չգիշել զաղաղութիւն յանցանացիւրոց. և ոչ իմանայ եթէ ՝ի՝ կայ առաջի. ոչ զօրհնութիւնն լսէ, և ոչ զփառաբանութիւնն իմանայ, և ոչ 'ի սիրտս նորա մտանեն ընթերցուածոցն վարդապետութիւնք։ Ոչ հեծէ և ոչ հառաչէ զմեղացն անօրէնութիւնն. ոչ լայ և ոչ ողբայ զհոգւոյն վիրաւորութիւնն. ոչ աղաչէ և ոչ մնաղթէ յ՝ի՝, և ոչ աստուածային պաշտամանաց զտէրն հաշտեցուցանէ. ոչ խոստովանեալ զչարեացն զբազմութիւնս, և յայտնելով զծածկեալ մթերս անօրէնութեան, զի ապրեսցի յահեղ տանջանացն, և յանդիմանեալ խաւարէն։ Այլ փոխանակ լալոյ և պաղատանաց բազում աներկիւղութեամբ և արհամարհանօք կամք առաջի ՝ի՝. և ոչ պատկառանօք ահիւ և դողութեամբ իբրև զդատապարտեալս առաջի դատաւորացն, և կամ իբրև զծառայս մեղու-

ցեալս՝ որք առ ուտս տերանց աղաչիցեն, և բազում երկիւղիւ և պաղատանօք աղաչիցեն և պաղատիցին։ Եւ ոչ հեծեծանօք և հառաչանօք և ողորմագին ողբովք արտասուեմք իբրև զմահապարտսն՝ զոր ձգեալ տանիցին 'ի տեղի չարչարանաց. և ոչ խորգով և մեխրով և մեծաւ սգով անկանիցիմք առաջի ՆՈՅ, զի փրկեսցէ զմեզ 'ի բորբոքեալ գեհենոյն և 'ի սաստիկ տանջանացն, յորդանցն չարաթիւնից և յանմշալ խաւարէն։

Եւ արդ ոչ ահիւ և խանդաղատագին մաղթանօք կամք առաջի ՆՈՅ՝ աղաչել և մաղթել զվիրացն բժշկութիւն. այլ 'ի ժամ աղօթիցն և պաղատանացն և թողութիւն մեղացն խնդրելով՝ լուանամք և օծանիմք և զհանդերձսն պաճուճեմք, որպէս թէ 'ի բոզանոցս կազմիցիմք, կամ 'ի թատերս խաղուց. և մոեալ յեկեղեցին մնափառ պերճանօք և մոլեկան հպարտանօք կա նայք բոզից կերպարանօք կան առաջի ՆՈՅ, և արք բոզա հոմանեաց, և ցոփոգի մեղկութեամբն իգանան պիղծ ցանկութեամբն, և յափրացեալ վաւաշոտին նման այծիոյ քաղաց և ձիոց մատակախաղից. և անդէն իսկ յեկեղեցւոջն և յանդիման սրբութեանցն գործեն զպոռնկութիւնս և զպոռնկութիւնս և զշնութիւնս կատարեն. թէպէտ և մարմնով ոչ գործեն, սակայն մտօք ըղձնոյս կատարեն ակնարկելովն և յարատ հայեցուածովքն և կնձաձայն բարբառովն, որպէս և տէրն իսկ ասէ՝ թէ որ ցանկութեամբ նայի, շնացող է կատարեալ։ Արք արժանի են փայլատականց և կայծականց և շանթից հրոյ 'ի վերուստ իջանելոյ, և այրելոյ և սատակելոյ զնոսա անդէն. և յետ այնորիկ յաւիտենական հրոյն, ահեղ խաւարի և աններելի տանջանացն. փոխանակ զի 'ի ժամ աղօթիցն ցանկութիւն պղծութեանցն 'ի սիրտ արկանիցէ։

Զի եկիր, ով թշուառական, հեծել և պաղատել առ ՆՈՅ, արտասուս արկանել և ողբալ մաղթանօք, հայցել հառաչել և խնդրել թողութիւն, և արդ այդ են կերպարանք խնդրուածոց, պաճուճելդ և օծանելդ և լուանալդ 'ի տեսս տեսողաց. այդ են կերպարանք հայցելոյ և թողութիւն մեղաց խնդրելոյ, սյրատանալդ և շոգմոգելդ և պիղծ ցանկութեամբ ակնարկելդ. այդ են կերպարանք 'ի վերայ չարեաց քոց զտէրն հաշտեցուցա-

Digitized by Google

նելոյ՝ ախտիւ ցանկութեամբ գնանել զդեղդ և զհասակդ բողոքմանեաց։ Օ՛ քեզ ինքնին սատանայացուցանես, և 'ի սատանայէ ապրել աղաչես. դու կամքդ դիւահարիս, և խնդրես փրկիլ 'ի դիւաց։ Օ՛ խաղդ կարես հեծել առաջի ՝այ այդպիսի կերպարանօք, և կամ ոչպէս հառաչել այդպիսի խորհրդովք. այլ և իշխեցեր ևս առաջի ՝այ զազգալի մտօք և սատանայական կերպարանօք մտանել և առնել պոռնկոց զեկեղեցի ՝այ. և ոչ սոսկաս և դողաս 'ի սրբոյն սրբութեանց և յահեղ դիմացն ՝այ։ Ո՞չ գիտես եթէ արտագէտն քննէ զխորհուրդս քո և գիտէ զամենայն. ոչ լուար եթէ մտածութեանց է դատումն, և յարատ աչաց պահանջումն։

Այս արդ եկ 'ի քեզ, և զկեղծաւորական զխաբէութիւն մտաց և պաճուճանաց ընկեա 'ի քէն. ապա մուտ առաջի ՝այ և լսեայ։ Ո՝ահապարտքն յորժամ մտանեն առաջի թագաւորաց՝ չառնեն ինչ պաճուճանս, այլ մաղթանս և պաղատանս. վիրաւորքն յորժամ 'ի բժշկանոցս մտանեն, չեն պէտք այլ և այլ խորհրդոց, բայց միայն դեղ վիրին որոնել, և զցաւն բժշկել։ Այսպէս և վիրաւորին մեղօք և ցաւագնելոյն անօրէնութեամբք չեն ինչ պէտք պաճուճանաց և պիղծ խորհրդոց յորժամ յեկեղեցին մտանէ, և ոչ օծանելոյ և հերսն հիւսելոյ 'ի ժամ աղօթիցն պաղատելոյ առաջի ՝այ. այլ զմարմինն նեղել, և զխորհուրդն մաքրել. և գձուձ ձևով, թեկեալ սրտիւ, խոնարհ անձամբ մտանել կալ առաջի ՝այ, և բազում պաղատանօք ողբալ և լալ դառնապէս. աղաչել և մաղթել անդադար հեծութեամբ. զկուրծս բախել, զձեռս տարածել, զարտասուս հոսեցուցանել, զբարին խոստովանել նեղեալ սրտիւ, անհամարձակ լեզուաւ, ամօթալից երեսօք, ողբալի ձայնիւ, և խանդաղատելի բարբառով հաշտեցուցանել զՈՒՇ, և առնուլ թողութիւն մեղաց։

Այս են կերպարանք աղօթից և խնդրուածոց՝ յոր տերն խոնարհի և լսէ. որով զյանցանսն շնորհէ, և զանօրէնութիւնսն քաւէ. որով մաքրիմք և սրբիմք 'ի չար ախտից պղծութեանց և 'ի սատանայական խորհրդոց. որով ընդունիմք զարքայութիւնն և զանմահ կենացն զպատիկութիւնս։ Այսպէս մեր զայս ամենայն յիշելով բաղում ողորմութեանօք մտանեմք առ ՝ած, և կամք ընդ

սատանայի՝ որ շփոթեալ խառնակէ զմիտս մեր ազգի ազգի մտածութեամբ, և ցրուեալ հոսէ զմտորհուրդս մեր 'ի հոգս և 'ի զբօսանս աշխարհիս. և գերեալք յօգնութենէ աղօթիցն շահից՝ գրաւիմք 'ի չար խորհուրդս չարին. 'ի ներքս ծուռը խոնարհեցուցեալ յաղօթսն, և միտքն արտաքոյ բազում բանդագուշանաց յածեալ շրջին։ Վանդի յաղօթսն խորհիմք զհոգս տանց և զանդաստանացն. յաղօթսն հանարեալք զարդիւնս անդոցն և զպտուղս այգեացն, եթէ քանի կապիտ հաց լինիցի իմ, և կամ քանի մաղ գինի. և զխաշինսն և զանդեայսն յաղօթսն ածեալք զմտաւ՝ եթէ քանի արջառ իցէ, կամ քանի ոչխար. անդէն և զգործն և զվարձս վարձկանացն յիշեալք, թէ վայ որ եղանէ այս 'ի տանէ իմմէ։ Այլ և զդաստաստանս և զընկերին յիշեալք յաղօթսն, և անդէն դատիմք առաջի ՅՍ. և մինչ դեռ յաղօթսն կայցեալք, տակաւին խորհիմք և սամբաստանութիւն զեղծօրէն. և չև յեկեղեցւոյն արձակեալ՝ անդէն սկսանիմք ամբաստանել զոսոխէն, և որպէս լեղեաւ զքաղցրութիւն աղօթիցն դառնացուցանեալք։ Եւ այնպէս յափշտակէ զմիտս մեր սատանայ, մինչև զմտորհուրդս և աղտեղիս յաղօթսն յիշեցուցանէ. և զվաշխս փոխոցն և տոկոսեացն յաղօթսն հանարեալք. յաղօթսն յիշեալք զնախանձն և զթշնամանս ընկերին։ Եւ ոչ միայն այսպիսի չար խորհրդովք դատապարտիմք, այլ ընդվայրած լեզուօք և շատախօսութեամբ մեսասեալ յաղօթսն վիրաւորիմք. զի բազմաց ոգւոցն մեսասեալք, զորոց զմիտսն գերեալք, և մերժեալ հանեալք յաղօթիցն և 'ի փառատրութենէն. դարձուցանեալք 'ի խօսս խաւարինս և 'ի խորխորատս կորստեան իջուցանեալք։ Եւ այս ամենայն չիցէ՞ ահեղ բարկութեանցն սրժանի և բորբոքեալ բոցոյն գեհենոյ, բազում տանջանաց և աննշոյլ խաւարին. որ այսչափ անօրինիմք առաջի ՅՍ, և պատուհասեալք դատապարտութեամբ եղանեմք յաղօթիցն. և ոչ իբրև զաղօթականս պատուիմք, այլ իբրև զհայհոյիչս և զարհամարհողս պարտաւորիմք և պատժիմք։

Սակ եթէ յաղօթսն և 'ի բարեգործելն մեղանչեմք, ոչչափ ևս 'ի չար գործելն պարտաւորիմք. որ 'ի ներքս 'ի նաւահանգստիս ընկղմիմք 'ի խորս չարեաց, զինչ

գործեացուք յարժամ արտաքս ելեալ 'ի ծով մեղայն մնանիցեմք, 'ի հրապարակս, 'ի վաճառս, յերդմունս, 'ի հայհոյութիւնս, 'ի զրկանս, 'ի մնափաառութիւնս, 'ի բամբասանս, 'ի նախանձ, 'ի բարկութիւնս, 'ի զօշաքաղութիւնս, յապրեցութիւնս, յորկորտութիւնս, 'ի հպարտութիւնս, 'ի յամենայն ախտից բազմութիւնս. որ առաւել քան զծովածուփ ալէկոծութիւնս հեղձուցեալ ընկղմէ, և խորասուզեալ ստակէ բազմահոյլ յանցանօք։ Այլ արդ թէ կամ որոմ մարթասցուք ապրել յանթիւ և 'ի չարաչար գործոց մերոց և 'ի բազում հնարից սատանայի. որ ոչ միայն դառն չարեօքն չարչարէ և սպանանէ, այլ հնարի և զքաղցրութիւն սուրբ աղօթիցն դարձուցանել 'ի դժոդակ լեղւոյն դառնութեան. չկարեմք և ոչ այլ իւիք զերծանել 'ի չար իժէն և 'ի դառն քարբէն, բայց եթէ հանապազ պատրաստիցիմք 'ի մեքենայից սատանայի, և զգուշանայցեմք յանեւրևոյթ նետից նորա։

Այլ եթէ զօրն վախճանին մերոյ միշտ զմտաւ ածիցեմք երկիւղիւ վտանգին այնորիկ, կարող եմք ապրել յորժամ զոգիսն անմերելի տագնապին 'ի մարմնոյն 'ի բաց պահանջիցիմք, և բնաւվարեալ տանիցի խաւարային միգոն մթապատեալ. և ցանկ զսոսկալի մեծի բեմբին զարհաւիրան յիշեմք, և զահագին օր դատաստանին. եթէ յարաժամ զամենն զայն հոգայցեմք որ լինելոց է առաջի տիեզերական հրապարակին, զբազմութիւն տանջանացն, զդառնութիւն որդանցն թիւնաւորաց, զշօշափելի խաւարն աղջամղին, զժահահոտ տարտարոսաց զխորութիւնսն, զբորբոքումն կայծականց հրոյ գեհենին, զգոչումն բարձրաձայն հնոցացն, զարհաւիրս յորդահոս գետոցն հրեղինաց, զհանապազորդ այրումն և զխորովումն մեղաւորաց, և զանհնարին կրակիծս աղէտիցն և ցաւոցն։

Եթէ զայս ամենայն միշտ զմտաւ ածիցես, կարող ես զերծանել յորոգայթից սատանայի. կարող ես երկիւղիւ կալ յանդիման երեսացն ՅՍ. կարող ես սուրբ աղօթս մատուցանել. կարող ես սգալ, լալ և ողբալ դառնապէս. կարող ես և զդէմն դատաւորին քաղցրացուցանել, յողորմ և 'ի գութ խոնարհեցուցանել, և ընդունել թողութիւն մեղաց և քաւութիւն յանցա-

նաց, ժառանգութիւն լուսեղէն խորհանացն, և զփառաւոր գեղի դրախտին փափկութիւնն, և զյաւիտենական ուրախութեանցն զհեշտութիւնն, զանմահ կենացն ցանկութիւնն, և զանբաւ բարութեանցն վայելչութիւնն ընդ հոր և ընդ որդւոյ և ընդ սուրբ հոգւոյն. որում փառք պատիւ և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Ե

ԹՈՒՂԹ ՑԱՂԱԳՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՏՆԱՆԿԱՑ

Մի ոք տղայաբար բարուք և անընտրողական ինչ մտօք ժպրհիցի 'ի մատակարարութիւն բանին ՝այ. այլ միշտ 'ի միտս լսողացն նայել, և բազում զգուշութեամբ սերմանել զանն վարդապետութեան 'ի խոպանացեալ լսելիս. և մի յսկզբանն միանգամայն զծանրալուր և ըզ դժուարակիր վարուցն 'ի վերայ ամայելոցն[1] հատուցանել։ Այ ի ոչք կամիցին զտրմուղ յաւանակն հնազանդեցուցանել, եթէ զառաջինն բեռիս ծանուցս և դըժուարակիրս կախիցեն, կամ ինքեանք բեկանին, կամ զհակս բեռինն բացէ 'ի բաց ընկենուն. այլ թեթևօք ընտանեցուցանեն, և 'ի կատարեալն հատուցանեն։ Նոյնպէս և հմուտք 'ի միակաց ոչք զանդս երկրի գործեն, ոչ վայրապար 'ի խուսանն և յանտառացեալս փըշօք սերմանս պատուականս սերմանիցեն, որ կամ 'ի խուսանէն կորնչի, կամ թռչունք յափշտակեն. այլ նախ զփուշն կտրեն, և զերկիրն կակղեն, և ապա ցանեն ըզ սերմանին պատուականս և զշահաւէտս։ Այստ նմին օրինակի և ոչք զանաւոր անդս գործել կամիցին, պարտէ յառաջ խոստովանութեամբ զփուշ մեղացն խլել, և պահօք և աղօթիւք զխոպանացեալն և զխոտացեալն[2] կակղել վասն կուսութեան և անընչութեան և ողորմութեան և մահուչափ չարչարանաց։ Այ ի թէպէտ և մահուչափ ծանրագոյն են ընչասիրացն ողորմութեանն հրամանք, այլ առաւել շահաւոր են և օգտակար քան զամենայն վարձուց առաքինութիւնս. և այնչափ 'ի վեր է քան զամենայն ճգնութիւնս պարկեշտութեանց, որ-

1 Երկու օր. ոմն հելոյն։ 2 Երկուս նստոր. օրին. պարսատելոյն։

պէս թէ չերևեալ իսկ ամենայն վարձուց առաքինութիւն առաւել լուսաւորութեամբ ողորմութեանցն պտղոց։

Այլ զինչ ասացիցէ զայլ առաքինութեանցն, որ և սրբոյ բութիւն կուսութեան 'ի հնումն և 'ի նորումն է պատուեալ. այլ առանց ողորմութեան գտաւ արհամարհեալ, և արտաքոյ առագաստին արգելաւ։ Այլ ոչ եթէ չարարին ողորմութիւն, այլ սակաւ և ոչ բաւական. զի 'ի մէջ գիշերին պակասեալ շիջաւ նոցայն։ Զինպէս և որ ունիցին ինչս բազումս, և սուղ ինչ ողորմութիւն առնիցեն, ոչ կարէ բաւական լինել փրկութեան նոցա. զի ողորմութիւնն ըստ գոյին է ընդունելի։ Որք ինչս բազումս ունին, 'ի նոցանէ ողորմութիւն բազում պահանջէ. և որոյ ինչքն սակաւք են, ընդունելի են և ողորմութիւնք սակաւք։ Որպէս և 'ի նիւթ խաղանին ախոյ էր ոսկի, պիտոյ էր և մաղ. որք ոսկի ունէին և մաղ բերէին, անընդունելի էր և պիղծ։ Իսկ որ անփինչք էին և մաղ միայն մատուցանէին, ընդունելի էր և հաճոյ ամ, և արհնութիւն ընդունէին։ Զի ոչ եթէ 'ի չափս ընչիցն, այլ 'ի կամն տալեացն նայի ած. ընդունի 'ի մեծէն զմեծն իբրև զմեծ. ընդունի և 'ի սակաւէն զսակաւն իբրև զմեծ. զի որ ունիցի տասն դահեկան, և դահեկան մի ողորմութիւն ծախիցէ, և ազքատն տասն լումայ միայն ունիցի, և զմինն ազքատագունին և տացէ, ընդ նմին համարեալ է առաջի ամ։ Այլ չքաւորին առաւել ևս զարմանալի է, զի 'ի չքաւորութենէն զընչեղեացն չափ ծախեաց։ Ինդ այս և Յիսուս զարմացաւ, յորժամ այրին որ զերկուս լումայսն միայն ունէր և զնոսին յողորմութիւնս ծախեաց, ասէ Յիսուս. մեծամեծքն զաւելորդս ընչիցն բերին, քանզի այրին տատապեալ զամենայն ինչս իւր բաշխեաց ազքատաց. զի երկու լումայքն միայն էին ինչք նորա։ Այս արդ այսու խարէ սատանայ զընչեղն և զմեծատունն յորժամ ոչ տացին ըստ մեծութեանն, և զողորմութիւնս մեծամեծս բաշխեացէ. այլ սաղ ինչ և սակաւ իբրև զսակաւաւորսն, կարծեցուցանելով եթէ այն բաւական իցէ փրկութեան։ Իսկ ունայք զամենայն ինչս բաշխեցին ազքատաց, և զանձինս ազքատացուցին, քանզի անանց մեծութեանցն փափագեցին. և ոմանք զկէս ընչիցն ետուն անանկաց, և զհաստատակ ազատցին և մարմնոցն բարժանեցին իբրև եղբարց։

Լակ առաջինքն հանէին տաճանդրդս, տային և պը-տուզս, մնատուցանէին պատարագս, տանէին և զողջա-կէզս, և տային զվան մեղայն՝ զանդրանիկս մարդոյ և անասնոյ, և զառաջաւորս կալոյ և հնձանի և զամե-նայն պտղոց։ Այլ և տօնս բազումն ոչ կատարէին տա-բեկանս, և շաբաթս և ամնագլուխս նուիրէին հան-դերձ ընծայիւք. յայսր վերայ և զաղքատս կարօտեալս ցուցանէին, զանթիւ զորբս և զայրիս կերակրէին, ըզ-հոյլս կուսանացն տեսանէին, զհիւանդս դարմանէին, զհիւրս ընդունէին, զնեղեալսն մխիթարէին, և զամե-նայն կարօտութիւնս ոկարացն բաւանային։ Լակ արդ եթէ 'ի թերակատար հնումն ինդրէր ոչ զայս ամե-նայն բարեգործութիւնս արդարութեան, այլ զսաստ առա-ւել ևս 'ի նորումն և 'ի կատարելումն առաւել ևս արդ-արութիւնս և ողորմութիւնս պահանջիցէ քան զայս ամենայն. զի "Եթէ ոչ առաւելացու արդարութիւն ձեր քան զդպրաց և զփարիսեցւոց, ոչ մտանիք յարքայու-թիւնն երկնից։" Այլ զմի ներեալ թոզութեան ունիցիմք, եթէ ոչ աւելի ողորմութիւնս առնիցեմք քան զթերա-կատարս հնոցն և հրէին ողորմութիւնս մեք քրիստո-նեայքս որ 'ի նորոյն և 'ի կատարելոյս, որ 'ի Քրիստո-սէ վարդապետեալքս։ Զի թէ զհրէին արդարութիւն միայն կատարիցեմք, ապա ընդունայն է մեզ գալուստն Քրիստոսի, եթէ ոչ առաւել քան զհրեայն առաւել-լուցումբ արքութեամբ, պտղոք և պատարագք, և սի-րոյն պատուիրանաւն։ Քանզի 'ի նորումն աղքատք և մեծատունք ամենեքեան մի մարմին եմք 'ի Քրիստոս, և անդամք միմեանց։ Եթէ ծառայ ես Քրիստոսի և պահես զպատուիրանս նորա, պարտ է իբրև քոյոյ ան-դամոյ խնամ ունել ընկերին. զի եթէ վշտանայ ինչ մի անդամն, ասէ, վշտանան ամենայն անդամք ընդ նմա։

Եւ արդ եթէ գլուխ է Քրիստոս, և մեք մարմին եմք Քրիստոսի և անդամք յանդամոց նորա, պարտ է հաստատակամ անդամոցս համարել զամենայն ինչ Քրիս-տոսի՝ զոր ետ 'ի ձեռս մեծատանցն, և կացոյց հաստա-տապետս և մատակարարս, զի գիտութեամբ մատակա-բարեսցին՝ գիտել թէ որում շատ, և որում սակաւ պիտոյ իցէ. որպէս և առաքելոցն հասարակաց էին ինչք, և ամենայն հաւատացելոցն իբրև միոյ անձին անդամոց.

և ոչ ոք իշխեր ասել զընչից թէ իւր իցէ. այլ բերէին և բաշխէին, և տային զայն ինչսն որով կարօտն էր անձն խնդրողին։ Այն էր սրտիւ ողորմութիւն, այն էր ուրախ-պաշտութիւն և կատարեալ մարդասիրութիւն, որք այնպիսի գթովքն բաշխէին՝ որ մինչև կկարօտութիւնն և-ս հարցանէին։ Այս այնչափ կարի կարևոր էր տեսութիւնն աղքատաց առ առաքելովքն, մինչև ընդ քարոզութեանն Քրիստոսի հանգոյն զողորմութիւնն ուսուցանէին. բերէին և կուտէին առ ոտս նոցա զընչից բազմութեանն, յորոց վերայ զստեփաննոսեանսն կացուցին մատակարարս։ Այս որք ոչ գթով տնանկացն բերէին զողորմութիւն, այլ իբրև 'ի հարկէ իմն, սատակեցան՝ Անանիայն և Սափիրայն։ Այս Տաբիթայն՝ որ գթով և խընամովն կերակրէր և զգեցուցանէր զորբս և զայրիս, յաղօթից նոցունց յարեաւ 'ի մեռելոց։ Այս Պաւղոս ասէ՝ թէ այս հրամայեցաւ մեզ՝ զի զայն աղքատաց յիշեսցուք, զոր և ես փութացայ զնոյն առնել. զի այս պատուիրան է կատարումն ամենայն գրոց ՅՍ, որպէս ցմեծատունն ասաց Քրիստոս. "Այթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զամենայն ինչս քո, և տուր աղքատաց, և գտցես գանձս յերկինս"։ և ապահոյն ասէ. "Դիւրին է մանչիոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատանն յարքայութիւնն ՅՍ մտանել"։ Օ՛յ որք աստ ինչս բազումն ժողովեն, և զողորմութիւնս ոչ ներմանեն, տակ և ունայն գնան յաշխարհէս, և յանողորմ և յանողորմելի հուրն առաքին։ Այս զայն ծանուցեալ տեառն՝ ասէ. "Արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան, որ ընկալցի զձեզ 'ի յարկսն յաւիտենից"։ Օ այս և Պաւղոս ասէ՝ եթէ "Օ՛հետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք աղքատացն ողորմութեան, զի և դուք ողորմութիւն ընկալջիք 'ի Քրիստոսէ"։ Այս մեծատանն ասելով. "Ձեր ընչիցդ առաւելութիւն եղիցի աղքատացն կարօտութեանն, և յաղքատացն աղօթիցն առաւելութիւն արասցէ ձերոց մեղաց թողութիւն"։ Օ՛ի ոչ ինչ թեթևացուցանէ զմեղացն ծան-

րութիւն իբրև զողորմութիւն և զգութ տնանկաց. որ պէս և սուրբն Գրանիէլ Աբուգոդոնոսորայ ուսուցանէր, յորժամ հիւանդացեալ էր 'ի մեղաց. հարցանէր ցմարգարէն՝ թէ զինչ հնարք իցեն ցաւոյս այսորիկ. և մնատուցեալ Գրանիէլ որպէս բժիշկ՝ արքայ, ասէ, ոչ պահք և ոչ հսկումն և ոչ քուրձ և ոչ միայնութիւն քեզ օգնել կարեն. բայց երթ զմեղս քո ողորմութեամբ քաւեա, և զանօրէնութիւնս քո գթով տնանկաց. և այն կաշառ է՝ որ արդարացուցանէ զքեզ, և Հանապարհ՝ որ տանի 'ի կեանսն յաւիտենից։

Տեսանես որպիսի զօրութիւն է ողորմութեան, և ոչչափ հանմարձակ երեսաք զողորմածն կացուցանէ առաջի այ. և մանաւանդ որ սրտի մտաք զքաղցեալսն կերակրէն, որպէս և Յայի ասէ. "Գրդեա քաղցելոց սրտի մտաք, և զաղքատս անյուրկս տար 'ի տուն քո. և եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջիր, և 'ի տառապելոյ ազգի քո զերեսս մի դարձուցաներ. յայնժամ կարդայցես, և ասծ լսէ քեզ. և մինչ չև քո աղաղակեալ իցէ՝ ասէ, հասեալ եմ"։ Յայսպիսի արագաթև ողորմութիւնն և սա ելանէ 'ի լսելիս այ, և փութապէս խոնարհեցուցանէ յօգնականութիւն ողորմածին։ Յայ ոչ եթէ ատտ միայն օգնէ և փրկէ ասծ զողորմածն, այլ և յորժամ պակասիցէ ոյս, և 'ի հանդերձեալսն փոխիցիմք, բազմապատիկ առատութեամբ դարձուցանէ ողորմածին զողորմութիւնս նորա։ Գանգի ինքն տէրն ասէ՝ եթէ ընդ ողորմութեան աղքատացն ես եմ պարտական, և ընդ փոխոցն նոցա ես եմ փոխատու։ Զի որ ողորմի աղքատացն, փոխ տայ այ, և զմինն հարիւրապատիկ դարձուցանէ անանց բարութեամբ. այլ և զմեղս քաւէ, և փրկէ յահեղ տանջանացն։ "Գրանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարին փրկէ զնա տէր"։

Յայ զինչ իցէ խորհելն զաղքատն և զտնանկն։ Խորհելն այն է, յորժամ զտառապանս նորա զմտաւ ածիցես՝ եթէ եղբայր իմ է, և անդամ և մարմին, և պէտս ունի որպէս զիս, և կարօտ է ամենայնիւ՝ ընչիւք և յարկաւ, և առ վտանգս քաղցոյն բռնութեան յածի և շրջի անհանգիստ. 'ի տօթոյ տապանայ, 'ի ցրտոյ դողայ, որովայնն սին, և մարմինն մերկանդամ, հերքն թաղ-

կեալք, դէմքն դեղնեալ և թաշուռեալք, և ամենայն մարմինքն գգուաղեալք և երիթացեալք. թափառի, վաբանի, և 'ի դուրս դուրս երերեալ և դագարեալ կառանչէ, և խանդաղատելի ողորմելիս արկանէ առ աղէտս վշտին. և զանազորոյն զմիտս մեր գիտելով զնեզ անգամն ամենայ անակնածելի ցուցանէ, զի զանողորմութիւնս մեր 'ի գութ խոնարհեցուցանէ. յանդգնի, լրբի, և սուգ ինչ կերակուր բազում աշխատութեամբ գտանէ. երկիւղիւ 'ի դրունս, երկիւղիւ 'ի գաւիթս, երկիւղիւ 'ի տունսն մտանէ. զի 'ի տունսն ամենայն 'ի շանցն դողայ, յանսանոցն երկնչի. զի ձիքն կիցք հանեն, եզինքն եղջիւր ածեն, շունքն վիրաւորեն, և մարդք չարք և անողորմք բամբասեն և թշնամանեն, և իբրև նետիւ խոցոտեն, և մանաւանդ եթէ խեղք և կոյրք իցեն և ցաւագնոտք. և վասն քաղցոյն վարանի, և յայնպիսի աղէկածութիւնս դիմէ, յերեսս անողորմիցն իբրև 'ի դէմս գազանաց դիմեալ երթայ հասանէ. յոլոց յառաջ թշնամանին, ապա եթէ կարիցեն ինչ առնուլ բազում բամբասանօք։ Լրդ այս է խորհել զաղքատն և զանանկն, յորժամ զայս ամենայն զմտաւ ածիցէ, և քաղցրաբարբառ բանիւք և գթագին ողորմով զկարօտեալսն միխիթարեսցէ, և հեծեծիցէ և յոգւոց հանիցէ 'ի վերայ նորա։ Լ՚նչպիսեացն եւս երանութիւն մարգարէն, որք այնպիսի գթով և ողորմով զաղքատս ընդունին, և յաւուրն չարէն փրկին։

Լակ օրն չար ոչ իցէ անողորմիցն և մեղաւորացն։ Զ՚ահեղ դատաստանին է յորժամ երկինք սասանին, և երկիր դղրդի. յորժամ արեգակն խաւարի, լուսին և աստեղք կորնչին. յորժամ արհաւիրքն հարկանիցին, և ահագին սոսկումն սաստկանայցէ. յորժամ հնչումն փողոյն սաստկանայցէ և զարհուրեցուցանիցէ, և բարբառք հրեշտակայն հիացուցանիցեն. յորժամ զօրութիւնք և իշխանութիւնք և պետութիւնք շարժեսցին, և գունդք հրեշտակաց յերկիր ծաւալեսցին. յորժամ աթոռք անկանին, և զարքայն Լ՚րիստոս ինքեալ տեսանիցեմք. յորժամ յահէ փառաց դատաւորին սերովբէքն և քերովբէքն սարսափեն. յորժամ վեմքն պատառին, և գերեզմանք բանայցեն, և բազմահոյլ ինքնեցեալք յարիցեն, և անթիւ կենդանիքն նորոգեսցին.

դասք սրբոցն ցնծասցեն, և ժողովք արդարոցն պայծառասցին. աշխարհս ամենայն գումարեալ կայցէ, և հուրն ընդհանուր ընթանայցէ և ընդ տիեզերս տարածեսցի. յայնժամ զկապեալսն մեղաց զմեղաւորսն և զպարտականդեալսն անօրէնութեամբ ածիցեն, և խաւարային միգով մթապատեալ յաշխարհատեսս հրապարակին ցուցանիցեն առակ և ծանակ անտանելի ամենեցուն, և առաջի սոսկալի բեմին կացուցանիցեն յանգիման դատաւորին մեծի և ահաւորի, որոյ հուրն վառեալ տոչորիցէ և բոլբոքեալ բարձրանայցէ, և հնոցն կայծականց և հրահոսանք գետոցն հրեղինաց. ուր հուրն վառեալ 'ի վայր ի ջանիցէ, և հրաւոլիկք վառեալ 'ի ներքս տարածիցեն. ուր գուբք խաւարայինք, և տարտարոսք աղջամղջինք. գեհենն չարատանջ, և որդունք դառնաթոյնք, որք սպասնան և պատրաստեալ են ամենայն մեղաւորաց՝ առնուալ վրէժս յահեղ աւուրն յետնում։

Արդ այս է չար օրն մեղաւորաց, յորմէ փրկէ զողորմածն ողորմութիւն աղքատաց և գթութիւն տնանկաց. զոր և ինքն խակ փրկիչն երանէ ասելով թէ "Երանի ողորմածացն, զի նոքա ողորմութիւն գտցեն,,. և "Յոյժ բարձր 'ի գլուխ պարծի ողորմութիւնն առ դատաստանաւ,,. և "Չար և անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ արարին ողորմութիւն,,։ Անողորմ դատախազք են նորա, և անողորմ տանջանարանք. անողորմ այրումն հրոյն հնոցին, անողորմ խորովումն տապոյն. և ամենևին անանց և անհներելի են ահեղ աղէտիցն չարչարանք։ Այս է անողորմիցն անողորմ դատաստան և տանջանք անհներելիք, զոր և անողորմ մեծատունն ընկալաւ՝ զահեղ հրոյն զխորովումն, և զանհներելի տապակին. վասն զի ոչ արար ողորմութիւն քաղցելոց և մերկոց և հիւանդաց, ընդ որոց և հատուցումն անողորմ ընկալաւ։

Եւ արդ զայս ամենայն լսելով մի յապաղեսցուք ողորմել աղքատաց նեղելոց, և առաւել ևս խեղանդամեցեալ և հիւանդացելոց, որքոց և այրեաց և վշտացելոց, օտարաց, հիւրոց և ծերոց, և ամենայն կարօտելոց 'ի կարեւոր պիտոյիցն, որով նոցա յաջողին վաստակքն և կեանք աշխարհիս։ Եթէ իցես ունայնապաշտ, նոցա լեր հոգեբարձող և վերակացու. եթէ կամիս զմեզս քո փա-

բատել, նոցա լեր կերակրիչ և զգեցուցիչ. եթէ կամիս համարձակ երեսօք զՔրիստոս տեսանել, զերեսս նեղելոցն և կարօտելոցն մի տրտմեցուցաներ. եթէ կամիս 'ի խորանս և յօթեվանս սրբոցն մտանել, և զանբաւ բարութիւնսն ժառանգել, օթեվանն և սապնջակսն լեր օտարաց, կարօտելոց, հիւանդաց և վշտացելոց. զնոսա հանգո և մխիթարեա երկրաւոր պիտոյիւքս, զի և դու հանգիցես և վայելեսցես հոգեւոր կերակրո

փրկէ և յորոգայթից թշնամոյն, և 'ի ձեռաց դժոխոցն սպրեցուցանէ զողորմածն։ Օ՛ի թէպէտ և մեծ սըրբութիւն է կուսութիւնն, այլ առաւել և պատուական է ողորմածն. թէպէտ և մեծ է պահոց պնդութիւն, և առաքինութիւնք բազումք և մեծամեծք, այլ ևս մեծագոյն է ողորմութիւն, և կարևոր և ընդունելի ՝՝։ "Մեծ է և պատուական այր ողորմած ,,։ Այլ որ ոչ առնէ ողորմութիւն, զայնպիսին և մարդ ոչ անուանեն զիրք ՝՝ծաշունչք, այլ շունս և խոզս, և գազանս միայնակերս կոչէ։ Օ՛ի այնպիսիքն Ճրագ են առանց լուսոյ և աչք առանց տեսանելոյ, աղբիւր առանց ջրոց և ծառք գօսացեալք՝ որք զանուանակոչութիւնն միայն ունին, և ոչ զօգտակարութիւնն։

Այլ արդ ի՞նչ գիտասցուք զանողորմն թէ մարդ իցէ. քանզի աղբիւր 'ի ջրոյ անուանի աղբիւր, և Ճրագ 'ի լուսոյ ասի Ճրագ. նոյնպէս և մարդ յողորմութենէն Ճանաչի թէ մարդ իցէ, որ հանապազ զսիրտն 'ի սէր և 'ի գութ աղքատին խոնարհեցուցանէ, և զձեռս յողորմութիւն կարօտելոցն դիցէ, և 'ի ձեռն աղքատացն քաղցելոցն զՔրիստոս կերակրէ. քանզի և Քրիստոս իւր իսկ հոմանրի զաղքատաց ընդունելութիւնն. "Քաղցեալ էի, ասէ, և կերակրեցէք զիս. ծարաւի էի, և արբուցէք զիս. օտար էի, և ընկալայք զիս. հիւանդ էի և 'ի բանտի, և ինձ այց արարէք ,,։ Այլ արդ եթէ հաւատաս անսուտ բանին ՝՝, 'ի միտ առ Ճշմարտապէս, զի յորժամ զքաղցեալն կերակրես, զՔրիստոս կերակրես. եթէ զջուր ծարաւոյն արբուցանես, զՔրիստոս արբուցանես. եթէ զհիւրս ընդունիս, զՔրիստոս ընդունիս. և թէ օտարին լինիս վանատու, Քրիստոսի ես ասպնջական. եթէ 'ի տեսս երթաս հիւանդին, առ Քրիստոս երթաս տեսանել. եթէ զնեղեալն սփոփիցես, զՔրիստոս մխիթարես. եթէ անօգնականին օգնեսցես, Քրիստոսի լինիս օգնական. եթէ տկարացն սպասաւորեսցես, Քրիստոսի ես սպասաւոր. և զամենայն զոր քաղցելոցն մատուցանես, տաս 'ի ձեռս Քրիստոսի, և բազմապատիկ հատուցանէ յաւուրն յետնում. ուր ոչ ինչք կան համբարեալք, և ոչ սիրելիք և ծանօթք. ուր ոչ սուրբք կարեն օգնել, և ոչ արդարքն կարեն փրկել. ուր ոչ հարք գթան, և ոչ եղբարք ողոր-

Digitized by Google

մին, բայց միայն օգնեն ողորմութիւնք աղքատաց և վարք բարիք։

Որդ մի մեռասցուք վախճանին, և մի ինչ ագահեսցուք, մի զաղքատս կարօտեցուսցուք, մի զԲրիատոս տրտմեցուսցուք. այլ զորբս սնուսցուք, զայրիս յանձանձեսցուք, զպանդուխտս ժողովեսցուք, զքաղցեալս կերակրեսցուք, զԲրիատոս մխիթարեսցուք. յերկրիս առատատուր մարդասիրութիւն սերմանեսցուք, և յերկինս զողորմութիւնս հնձեսցուք. 'ի վերնախորանն վերասցուք, և յանանց ուրախութիւնն վայելեսցուք մեծապայծառ խնդութեամբ 'ի Բրիատոս Յիսուս 'ի առջի մեր. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Զ

ՎԱՍՆ ՊՏՂՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՑ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

Բազում գաղտաձիգ[1] նետիւք վիրաւորէ զմեզ սատանայ, և զվէրն չերևեցուցանէ. զսկիզբն իրացն երևեցուցանէ որպէս թէ առաքինի ինչ վարուք, և կատարէ յահեղ անօրէնութիւնս. և փոխանակ վարձուցն վաստակոցն արկանէ ընդ մեղօք անօրէնութեամբ. և որպէս ընծայիւք Կայենի և ընծայիւքն Յեփթայեայ, որ կերպարանօք բարւոյ զգործս անօրէնութեան կատարէր։ Զոր և այժմ առ բազումս կատարէ սատանայ, և առնէ զրաջան և մնաւաստակ յեկեղեցական 'ի պտղոց և պատարագաց ընծայից։ Եւ ոչ միայն զրաւաստակ և զրաջան 'ի վաստակոցն տեսանեմք, այլ և թշնամանօք 'ի յանդիմանութիւն. և անէծս պատուհասից յայ ընդունին, որպէս և Պաղաքիա մարգարէն ասէ թէ "Զնի ծեալ լիցի մարդ որ կարող իցէ, և կայցէ 'ի հօտի նորա որձ, և մատուցանիցէ տեառն զանօգուտն և զարատաւորն և զվտիտն պատարագ"։ Այլ և զքահանայս ևս որք և զխոտանս 'ի ժողովրդոյն ընդունիցին, պատուհասէ և ասէ. "Դուք քահանայք էք՝ որ բամբասէք զանուն իմ՝, և մատուցանէք 'ի սեղան իմ հաց պղծութեան, զխոտանն և զյափշտակեալն և զանօգուտն, այսինքն զնիհարն, և թէ ընկալայց զայն 'ի ձեռաց ձերոց. այլ աւաքեցից 'ի վերայ ձեր անէծս, և նզովեցից զօրհնութիւնս ձեր, և բարձից զձեզ հանդերձ նոքօք. փոխանակ զի դուք ոչ եդիք 'ի սիրտս ձեր երկնչել յինէն"։

Այլդ եթէ որք 'ի հնումն զխոտանն մատուցին, այսպիսի պատուհասիւք պատժեցան, զինչ գործեսցեն որք 'ի նորումն զխոտանն կալցէ և հնձանի՝ այ նուիրեսցեն,

[1] Մի օրին. գաղտանէգիտ։

և զվտիտն և զանօգուտն 'ի հօտիցն՝ կոչնոց աղքատացն մատուցցեն, որով և Այեն կորեաւ խոտան և անընդունելի պատարագաւն. քանզի ոչ ուղիղ բարժանեցեր, ասէ, և այդ ևս առ քեզ դարձցի։ Զ՚արդ պարտ է մեզ երկնչել 'ի բանէս յայսմանէ. զի եթէ որք առանց օրինացն մեղան՝ այնպէս պատժեցան, որչափ ևս առաւել մեք եթէ հանդերձ օրինօքն մեղիցուք. զի որ 'ի շնորհացն որ 'ի հնումն էին՝ ոչ էին վայելեալք, և այնպիսի ուղղութիւնք խնդրէին, որչափ ևս առաւել բազում հաւատեաւ ուղղութիւն 'ի նորումս պահանջիցէ, թէ և սակաւ ինչ գթիցեմք. որք յօրինաց խրատեցաք, և 'ի շնորհացն վայելեցաք, և զօրինական տեսաք։ Զ՚ս արդ եթէ զխոտանն այ նուիրիցեմք, մեզ որ ներեալ թողութեան կայցէ. զի ասէ՝ թէ զառաջաւորս կալոյ քո և զհնձանի, և զընտիր ընտիրս խաշանց՝ այ քում մատուցանիջիր. և պատուեա զտէր 'ի քոց արդար վաստակոց, և հանն նմա պտուղ 'ի քոց արդարութիւն արմտեաց։ Զ՚այս է ընդունելի առաջի այ։ Զ՚այլ 'ի յափշտակութենէ, կամ 'ի գողութենէ, կամ 'ի զրպարտութենէ, կամ 'ի վաշխից ինչ տոկոսեաց, կամ 'ի բռնութենէ վաճառաց, կամ 'ի տառապելոց զրկանաց եթէ մատուցանիցէ ինչ պատարագ՝ եղն կամ ոչխար կամ քօշ, պիղծ է ինձ որպէս թէ զայն՝ որ շուն ոք մորթիցէ, և կամ եթէ հարկանիցէ ոք զկառափն մարդոյ, և կամ հեղուցու ոք զարիւն խոզի։

Զ՚ս արդ ընդէր ոք ժտիցի զայսպիսի պատարագս զազբալիս մատուցանել՝ որ գեհենին առիթ է, և կամ զընդունելութիւն աղքատացն կոչնոց՝ կարողքն և անկարօտիցն պատուօքն կորուսանել. զոր և Փրկիչն ասելով, եթէ "Յորժամ առնիցես ճաշ կամ ընդունելութիւն աղքատաց, մի կոչեր զեղբայրս քո և մի զդրացիս քո և մի զսիրելիս քո և մի զմեծատունս, զի մի և նոքա զքեզ կոչեսցեն, և այն լիցի քեզ փոխարէն. այլ յորժամ առնիցես ընդունելութիւն յաղագս ողորմի քոյ փրկութեան, կոչեա զաղքատս և զխեղս և զկոյրս և զկաղս, և երանի է քեզ՝ զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ. և լիցի քեզ փոխարէն յարքայութենն արդարոց"։ Զ՚այս են խօսքս և հրամանքս. ոչ ապաքէն Յիսուսի որդւոյն այ։ Զ՚ս արդ ընդէր արհամարհես զհրամանն Փրիս-

տոսի։ Եթէ կամիս զմեծամեծս քո պատուել՝ պատուեա. ունիս աւուրս երեք հարիւր վաթսուն և հինգ տալ մարմնոյդ, և զմի օր 'ի նոցանէ հոգւոյդ նուիրեա։ Որդ ահա զմի օրն չարկանես տալ հոգևորացն և հոգւոյդ կոչունս։ Եթէ բժիշկ վիրաւորեալ ոգւոյ քոյ զաղքատսն ապարեր, և ժողովեցեր զնոսա բարեխօս և ապաչորս առեալ, և մեղաց քոց քաւարան զնոսա կոչեցեր 'ի տուն քո, ապա յայնմ աւուր ընդունելութեան աղքատաց և ոգւոյ քոյ, յորում աւուր քաւին մեղք, դադարեցո ըզխորհուրդս քոյ զմարմնաւորս, ընդ նմին և զսիրելիս քո զմարմնաւորս. և մի զոք 'ի կարողաց և կամ 'ի մարմնաւոր սիրելեաց քոց մուծանիցես 'ի տուն քո, զի մի 'ի թողութենէ մեղաց քոց վրիպիցիս՝ նոցա սպասաւորելով, նայն աչառելովն զնոսա, զնոքօք շրջելովն, զնոսա 'ի վեր մատուցանելովն, և կերակուր և գինի ոչ վերանայ 'ի նոցանէ։ Եւ քո քաւարան մեղաց՝ աղքատացն ժողովք 'ի ներքուստ 'ի վեր նային, և սեղանք նոցա դատարկ՝ յոգոց հանիցին. և ումանք 'ի նոցանէն արտաքս իսկ մնան իբրև զարհամարհեալս, և միայն զձայնն լեն զբազմականացն, և 'ի սիրտս իւրեանց զարհամարհանն իւրեանց վարանին, զոգեալք և ակնկորեալք նստին։ Որդ մի ինչ այսպիսի կոչունս յաւուր պատարագին ընդունելութեան արասցես, յորոյ ծախիցն անվարձ լինիցիս։

Եւ եթէ կամիցիս մեղաց քոց թողութիւն խնդրել, կոչեա զորբս և զայրիս, զնեղեալս և զտառապեալս, ըզխեղս և զկոյրս և զկաղս, զկարօտեալսն և զգերիսն, և զամենայն քաղցեալս և զանմիսիթարսն. զնոսա մխիթարեա, զնոսա սփոփեա, զնոսա կերակրեա, նոցա միայն սպասաւորեա, զնոքօք շրջեա, զնոսա յարմարեա, և քաղցր բանիւք պաշտեա, զի թողութիւն մեղաց և փրկութիւն տան քո եղիցի։ Եւ այդ այսպէս յօրինեա զընդունելութեան կոչունս զպատարագացն, և մի ըզգոյաւորս և զմեծամեծս յընդունելութիւն թշուառացելոցն և աղքատացն մուծաներ. այլ նոքա եղիցին գաւ հերէցք, և նոքին բարձրագլուխք. նոքա 'ի վերոյ, և նոքին 'ի ներքուստ. զնոսա միայն մոյծ աղաչանօք, և զնոսա միայն յղարկէ՛ աղերսանօք։ Եւ եթէ այսպէս ընդունիցիս, ոչ եթէ ետուր, այլ առեր. ոչ եթէ ծախեա-

ցեր, այլ մեծամեծ շահս ժողովեցեր, և թողութիւն ընկալար։ Եվ ասն այսր ամենայնի ասէր։ Դրիատոս՝ եթէ յարժամ առնիցես ընդունելութիւն, մի կոչեր զմեծամեծս, զի մի զգաղմանքք նոցա աղքատքն արհամարհիցին. և դու վասն աչառանաց իբրև զօրինաւանց դատիցիս, ըստ այնմ որ ասէ՝ եթէ որ զհանդերձս պայծառս ունիցի, ասիցէք եթէ դու նիստ առ պատուով. և ցաղքատն ասիցէք եթէ երթ նիստ առ պատուանդանին. և զայս առնելով, ասէ, ոչ խղճիցէք յանձինս ձեր, և լինիցիք դատաւորք չարեացն խորհրդոց. զի 'ի մեծամեծացն աչառելով մեղս գործէք՝ յանդիմանեալք յօրինաւանն իբրև օրինաւանցք։

Եւ արդ մի ինչ այսպիսի դատապարտութիւնք 'ի կոչունս աղքատացն ունիցիս, զաղքատն և զմեծամեծն 'ի միասին ժողովելով. զի մեծամեծքն մտեալ՝ բարձ և պատիւ խնդրեն և գահերիցութիւնս և անափառութիւնս և յարգանս և սուտակասպասութիւնս 'ի քէն պահանջեն. և աղքատքն նստին 'ի ներքս զողեալք և խոնարհեալք լռութեամբ։ Եվ է բարւոք կոչ ընդունելի. ոչ ոք որոմն ընդ ցորենոյն սերմանէ, և փուշ ընդ որթով տնկեն. և ոչ քեզ պարտ է սուտակասպասութիւն և անափառութիւն ընդ խոնարհութիւն և ընդ ապաշխարութիւն մեղայ քոց խառնել. խափանիչք են միմեանց և ապականիչք. անհնար է քեզ միով ակամբ յերկինս հայել, և միովդ յերկիր. և յայնմ աւուր միանգամայն մարմնաւորացն և հոգևորացն հաճոյանալ։ Հոգևորքն աղաչեն և մաղթեն զքեզ յերկինս տանել, և մարմնաւորքն սուտակասպասութեամբ և անափառութեամբ և բաղում ստաբանութեամբ և սուտ յարգանօք յանդունդս քարշեն. հոգևորքն 'ի լոյս հրաւիրեն, և մարմնաւորքն 'ի խաւարն առաքեն։ Եվ այսպիսի խափանիչք քեզ վնասակարք են յաւուր ընդունելութեան աղքատաց զմեծամեծսն կոչելով։ Եվ զայլ զաղքատս սիրելիս, զաղքատն հանգուցանել, զաղքատն աղաչել, հաց քաղցելոցն բրդել, զմերկսն զգեցուցանել, զանյարկսն ընդ յարկաւ մուծանել։ Եւ յայնժամ կարդասցես, և ասա լուիցէ քեզ. և մինչ չև խօսեալ իցես, ասասցէ եթէ ահաւասիկ հասեալ եմ։

Եվ այսպիսի շահաւոր են ընդունելութիւնք աղքատաց,

և մերձ առ ՚ի՚ աղօթք նոցա, զոր և մարգարէն ասէ. “Լրանի որ խարհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարչ փրկէ զնա տէր. երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց”։ Զոգ այս են երանութիւնք վասն կերակրելոյ կարօտելոյն, զոր և Քրիստոս իւր համարի։ Իսկ ընդ անկարօտիցն կոչնոց զմինչ շահիցիս, և կամ՞ որ օգուտ գործիցի, զի ընդունելութիւն քաղցելոցն է շահաւոր, և ոչ յագելոյն. և Քրիստոս ոչ ասէ՝ եթէ զյագեալն կերակրեցէք, և ոչ ասաց եթէ զարբեալն արբուցէք. այլ զծարաւեալն տեսէք և արբուցէք, զմերկն տեսէք և զգեցուցէք, և օտարատեսութիւն արարէք։ Այսպիսիքն են վարձուց և երանութեան արժանի, և ոչ յագելոց և անկարօտից զմխլութիւնք. զի որ զաղքատն և զկարօտեալն կերակրէ, զօտարն և զհիւանդն, ոչ զմարդ՝ այլ զՔրիստոս ընդունի, զՔրիստոս կերակրէ, զՔրիստոս զգեցուցանէ, զՔրիստոս ափոփէ, զՔրիստոս մխիթարէ, զՔրիստոս հանգուցանէ, և Քրիստոսի սպասաւորէ. զի անտուտ է բանն տէրունական։

Եթէ Քրիստոս է զոր ընդունիս, ոչ է քեզ պարտ և արժան ՚ի Քրիստոսի ընդունելութենն զժողովս զեղեսեցելոցն ժողովել, զնոսա ՚ի ներքս մուծանել, և զՔրիստոս թողուլ արտաքոյ գաւթին։ Ոչ դրան մեծարանաց ՚ի վերոյ, և Քրիստոս արհամարհանաց ՚ի խանարհ. նոքա պատուով ՚ի բաղմականի, և Քրիստոս արհամարհանաց առ պատուանդանի. նոքա անդ ՚ի վերս սփոփանաց սպասաւորին, և Քրիստոս աստ ՚ի վայր նստի գլխարկեալ։ Ոչ է պարտ այսպիսի արհամարհանաց ընդունել զՔրիստոս, զի ՚ի պատմութենէ և ՚ի բարկութիւն զարթուցանես, և ոչ յողորմութիւն և ՚ի թողութիւն մեղաց։ Զի եթէ ողորմութեան է ընդունելութիւնդ, զի կոչես տեսուղս բազում, և հատուցումն ՚ի մարդկանէ ընդունիս։ Ահա ուսուցանէ զքեզ Քրիստոս. “Զգոյշ լեր, ասէ, ողորմութեան՝ մի՛ առնել առաջի մարդկանն. զի ոչ յայլ մարդկան լինի, և հատուցումն ՚ի մարդկանէ ընդունի. այլ եղիցի ողորմութիւնն քո ՚ի ծածուկ. և հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս”։

Զոգ մի՛ զրկիք յայգպիսի վարձուց, և մի՛ տեսուղս ո-

զորմութեան քում ժողովել. այլ զգուշութեամբ մա-
տակարարեա 'ի ծածուկ, զի 'ի մեծ է գողն, գողանայ
զվարձս քո. դարանակալէ աւազակն, յափշտակէ զո-
ղորմութիւնս քո. մերձ կան նենգիչք նենգել, և հա-
նել զբարին քո 'ի քէն. շրջանակաւ ամբարիշտքն շըր-
ջին, և ջանան զրաջան առնել զքեզ և անավաստակ
'ի վաստակոցն։ Այլ յամենեցունց պատրաստեա երբ-
կիւղիւ, պատրաստեա իմաստութեամբ. և զգոյշ լեր
յախտէն մտրդահաճութեան և 'ի զիւէն անափառու-
թեան, զի մի դարձուցանիցեն զբարիքն քո 'ի չար, և
մի զլոյսն քո 'ի խաւար. զի եթէ լոյսդ որ 'ի քեզ ասի՝
խաւար իցէ, իսկ խաւարն որչափ եւս իցէ. զի եթէ ո-
ղորմութիւնդ քո չարիք եղէն, չարիքն որչափ եւս ինչ լի-
նիցին։ Այլ վասն այսորիկ ծածկեա յամենեցունց զո-
ղորմութիւնս քո. և որպէս ոչ կամիս զպղծութիւն մե-
ղաց քոց ցուցանել, և մի զողորմութիւն ապաշխարու-
թեանդ տալ գիտել. այլ ծածկեա զառաքինութիւն ա-
պաշխարութեան իբրև զմեղացն զազրութիւն. և յա-
մենայն ժամ ընդունելի լինին ապաշխարութիւնք քո,
և գտանես մեղաց քոց թողութիւն։ Զի առ հաճոյ
անափառութեան զկոչունս ընդունելութեան արասցես,
և մի 'ի ցոյցս մարդկան զտուրս ողորմութեան արասցես
աղքատացն, և մի զմեծամեծս և զգոյաւորս յընդունե-
լութեան կարօտելոց աղքատաց բաշխեսցուք և կոչես-
ցուք. և մի զխոտանան կալոյ կամ հնձանի այնուիրեա-
ցուք, և զամենայն տուրս պտղոց եկեղեցւոյ կամ քահա-
նայից մի չարակնեսցուք, որով Կայեն յանդիմանեցաւ.
և զգէրն և զուղիղն 'ի հօտից անձանց մերոց մի թողու-
ցումք, և զանօգուտն և զվտիտն ընդունելութիւն աղքա-
տացն արասցուք և կարօտելոցն զենցուք. և մի յագա-
հութենէ և յափշտակութենէ և յանիրաւութենէ ընդ-
ելից ժողովելոց յաւծային ընծայսն մատուսցուք. զի պիղծ
են ամենայն զրկողք և ինչք նոցա առաջի այ։ Բայց զայս
ամ ըստ հաճոյիցն այ արասցուք, որով անձ հաճեսցի և
ընկալցի, և թողութիւն մեղաց արասցէ։ Արբութեամբ
և անմեղութեամբ կացցուք, և փառօք և պատուօք զեր-
կինս ժառանգեսցուք, և խոստացելոց բարեացն արժա-
նաւորեսցուք հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր.
որում վայելէ փառք և պատիւ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Ի

ՎԱՍՆ ՓՈԽՈՑ ԵՒ ՎԱՇԽԻՑ

Յոյժ չար են ախտք ընչասիրութեան, և անհնարին չար են քան զամենայն փոխոցն տոկոսիք, որ հանապազ հայհոյեալ բամբասի 'ի հին և 'ի նոր կտակարանս. և պատուհասեալք պատժին չարապէս խնդրողք վաշխիցն և փոխոցն՝ որ ընդդէմ պատուիրանացն ՅՍ զարծաթս իւրեանց 'ի վաշխու տան, և տոկոսեաք անդէն պահանջեն, և անակնածելի ուտեն զեարմինս տնանկաց, և ըմբ պեն զարիւն նոցա անողորմ. և ոչ ունկնդիր լինին Յզեկիէլի հոգելից մարգարէին՝ որ ընդ մեծամեծ չարեաք դնէ զփոխոցն տոկոսիսն, և ընդ կռապաշտիցն համեմատէ պղծութեամբքն ասելով եթէ 'ի կուռս տունն Իսրայէլի պղծեցաւ, և վաշխ ու տոկոսիս պահանջեաց։ Յու Ովսէս ասէ՝ թէ մի տացես վաշխ ընկերի քում, զի անօրէնութիւն է առաջի ՅՍ. զոր և արտաքս կացուցանէ յերկնային խորանացն՝ որք վաշխ և տոկոսիս պահանջեն։ Իսկ որ զարծաթ իւր 'ի վաշխու ոչ տացէ, և կաշառ 'ի վերայ իրաւանց ոչ առնու, նա մի սասանեսցի յաւիտեան։ Յու միւս մարգարէն ասէ. որ 'ի վերայ լերանց զոհեալն ոչ եկեր, և զգրաւ պարտապանին դարձոյց, և վաշխ և տոկոսիս ոչ պահանջեաց, արդար է նա, և կենդանի կեցցէ. իսկ որ զվաշխ և զտոկոսիս պահանջեն, դիմադարձ են պատուիրանացն ՅՍ, և հակառակ հոգւոյն հրամանացն. զի զարգելեալն 'ի հոգւոյն հրամանացն չարաչար 'ի կիր արկանեն անօրէնութեամբք։

Յու այնչափ անօրէն են ախտ փոխոց տոկոսեաց, մինչև յամուլ արգանդէ խնդրէ որդի բռնութեամբ, և յապառաժ քարանց պտուղ որոնէ, և առանց սերման կամի արդիւնս ժողովել, և յարուաց ծնունդս պահանջել, և 'ի քարէ կալմն կթել, և 'ի վիմաց ասր ստանալ. զթիւ արծաթոյն զոր տուեալն է՝ լիով ընդունի, և առանց

սերման ժտի արդիւնս ժողովել, և ընուլ զտուն իւր ա-
նօրէն ստացուածովք։ Այլ նստի խորհի նախ բաղմա-
ցուցանել զընչիցն առաւելութիւն, և ապա ընդ անօրէ-
նութեանն առնել ողորմութիւնս տնանկաց և պատա-
ղաց հաշտութեան, զոր յանդիմանէ Դասայի ասելով՝
թէ "Որ մատուցանէ ինձ զյափշտակեալն պատարագ,
այնպէս զազբալի է՝ որպէս թէ շուն ոք մորթիցէ, և
կամ թէ հարկանիցէ ոք զկառտին մարդոյ"։ Օ՛ի լաւ
է աղքատաց անտես լինել յողորմութենէ, քան թէ
յափշտակութենէ ընդունել ինչ։ Լաւ է քահանայից
'ի սովոյ մեռանել, քան թէ յանարժանիցն կերակրել։
Որ ուրուք, ասէ, զայլոյ առեալ և այլոց բաշխիցէ,
ոչ եթէ վարձս ընկալցի, այլ պատիժս և տանջանս սաս-
տիկս. զի հուր այրիչ և սուր սատակիչ են ծնունդք փո-
խոց։ Դա որ յընչիցն անիրաւութեանց զաւծ պաշտել
համարիցին, առաւել բարկացուցանէ. "Պատուեա,
ասէ, զտէր 'ի քոյ արդար վաստակոց, և հան նմա պը-
տուղ 'ի քոց արդարութեան արմտեաց"։

Այ՝ի խորհիր զյափշտակութիւն ժողովել, և ապա
առնել ողորմութիւնս վասն մեղաց թողութեան. զի ոչ
երբէք հրով հուր շիջանի, և ոչ վիրօք վէրք բժշկին, և
ոչ մեղօք մեղք սրբին, և կամ անօրէնութեամբ անօրէ-
նութիւնք քաւին. քանզի յոյժ չար են վաշխիցն անօ-
րէնութիւնք, և որպէս երկունք յղոյ են ժամադրու-
թիւնք նոցա։ Դա եթէ աղքատ ևս իցէ փոխապարտն,
'ի ծուփս և 'ի հոգս մաշի հանապազ. անքուն և դառ-
նաքաւն 'ի գիշերի ննջիւն նորա. տխուր և ապտում և
մռայլոյզ 'ի տուրնջեան շրջի, և ոչ գիտէ յո երթայ։
Դրբեանն ասաղ ինչ զպախարէն կամի վաճառել, զի հա-
տուսցէ զվաշխիցն տոկոսիս. և երբեմն զանօրէն գողա-
նալն ախորժէ՝ զուրիսն կորուսանել և դիմադարձ լինել
ոչ վասն պահանջողի վաշխի փոխիցն. և երբեմն խորհի
գաղտագնաց լինել 'ի տար աշխարհ։ Զ՚ոչն թափառա-
կան յաղագս պարտուցն բռնութեանց, և 'ի բազում խոր-
հրդոցն վարանիցի, և մնացն չփոթելոց զաղօթսն առ-
ուծ մոռանայ. և յոգժամ ձայն ոտիցն հարկանի, նաս
'ի ներքս սրտաբեկ լինի յերկիւղէն. և թէ արտաքոյ
տեսանէ փոխառուն զփոխատուն, փախչի և թաքչի իբ-
րև 'ի տարակուսանաց ազէտիցն, և սիրտն թափեալ

զգողի հարկանի, և կայ գլխարկեալ և լեզուակապ. և սամենևիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ և ոչ համարձակի, զի տոկոսիքն վաշխիցն բազմացան 'ի վերայ նոցա, և ոչ ինչ ունի հատուցանել և հաձել զփոխատուն։

Այս արդ տես, ով պահանջողդ վաշխիս, եթէ քանի տարակուսանաց և ընդ վշտաց զեղբայրն արկանես, և քեզ քանի կողկողանաց և աղէսից ետ պատճառք՝ դիմադարձդ ՈՒՅ և բազում մեղաց պարտապան, արկանելով 'ի վերայ փոխոցն վաշխ, և վաշխիցն վաշխ, չար ծնունդոց չար թոռունս ծնուցանես. և այս են օձք՝ ծնունդք իժից։ Իժից ծնունդք զորովայն մօրն ծակեն ելանեն, և փոխոցն ծնունդք զոգիս վաշխաժազովացն պատառեն և ապականեն, և դառն տանջանացն և ահեղ հրոյն պատրաստեն. զի դառն արուեստ և անօրէն մշակութիւն ստացաւ, որ առանց երկրի տնկեալ յանդգնի և առանց սերման հնձել. որոյ սերմն ժանտ է, և հունձք չարաչարք, և մշակք անօրէնք, և ստանայ սատարիչ, վարիչ և յորդորիչ անօրէն հնձողաց զչար փոխոցն տոկոսիս։ Որ վառէ իբրև հրով անօրէն վաշխիցն ցանկութեան, և հանապազ սուր և հուր ժողովէ յշտեմարանս, և չարութիւն սատակիչս քան զօձս և զիժս և ծնունդս քարքիս ժողովէ 'ի տունս փոխոցն և տոկոսացն։ Այս ոչ լուաւ զողբումն մարգարէին՝ որ թէս որպէս զաղաւնոյ ըղձանայր հեռանալ 'ի քաղաքաց, վասն զի ոչ պակասեաց 'ի հրապարակաց նոցա վաշխս և նենգութիւն. և ոչ զաղաչանս նորուն առ ՈՒՅԾ, զի 'ի վաշխէ չարէ փրկեսցէ զանձինս նոցա. այլ զաչս խցեալս և զականջս կափուցեալս անդադար ժողովէ զվաշխիցն տոկոսիս։

Ո՛վ չար ախտի անօրէն ստացող. յորմէ պարտ էր երկիւղիւ հեռանալ 'ի տոկոսեաց գթով, նա բազում ցանկութեամբ ընդ շահիցս վաշխիցն ընտանենայ, որ զուշն ապշեցուցանէ չհայել 'ի պատուիրանս ՈՒՅ. զսիրտն յիմարեցուցանէ չյիշել զօր ահեղ դատաստանին. զմիտսն քարացուցանէ 'ի գութ կողկողեալ եղբօրն խոնարհել. խնամս զլսելիս և զտեսանելիս. յամենեցուն տեսողացն չամաչէ, այլ յանդգնեալ հոլանեալ ժողովէ և գանձէ հուր յաւիտենական՝ ոգւոյն թշուառացելոյ։ Այս որպէս երկրագործքն յաղագս անձրևաց աղաչեն և մաղթեն յՈՒՅ վասն սերմանցն և լիութեանց աշխարհի, իսկ

վաշխաժողովն կարօտութիւն և տարակուսանս և տոկս սաստիկս և հարկապահանջս աշխարհի ըղձանայ, զի 'ի գործ և 'ի շահ վաշխիցն ինչքն անկանիցին։ Ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի. և յորժամ ժամադրութի վաշխիցն հասանիցէ, տեսանելով զչքաւորութիւն և զտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, և ոչ երդմանն հաւատայ մեղթողին, ոչ խոնարհի յաղաչանս վարանեցելոյն. այլ դժոխեալ անխոնարհելի և անհաշտ, և իւր ծառայ զփոխառուն համարի փոխատուն։ Զինչ եթէ զինչ ինչքն նորա իցեն նման արժանի. հետազօտէ՝ թէ ուր տարեալ թագուցանէ. արտաքոյ զդուրս պահէ, 'ի մէջ բազմութեանն թշնամանէ, 'ի սիրելիսն ամաչեցուցանէ, 'ի հրապարակսն խեղդէ։

Զար պատահումն 'ի տուն, 'ի կեանս չար քան զմահ տեսանէ փոխապարտն. ատէ զաւուրն ժամադրութիւնս, երկնչի յամենայն, երեսքն խոնարհի տեսանել 'ի պահանջողն. աչքն պատրուակին իբրև շուն ըմբռնեալ 'ի տեղիս, ամենայնն աղաչարի։ Տեսէք զողորմելի տեսումն. տեսէք զչար մեքենայսն սատանայի. տեսէք զանօրէն շահանն նզովից. զի մոլար ախտիւն անամենայցեալք զընչաւէտն աղքատացուցանեն, զաղքատն մերկացուցանեն, զմերկն խեղդեն, և յարտասուաց արծաթ ժողովեն և բերկրին ընդ անօրէն շահիցն յաշխատութեանցն։ Ո՛վ անօրէն վաշխիցն չարեաց՝ որ է որ գայթ մահու ստացողաց, և ոչ իմանան. խեղդ է անձանց, կապանք հոգւոյն, առիթ գեհենին, առաջնորդ խաւարի, և պատրաստող ամենայն տանջանաց և յաւիտենական ամենայնի։

Ո՛ան որոյ բազում զգուշութեամբ փախիցուք յընչից տենչանաց. փախիցուք 'ի չար ախտէն յայնմանէ. փախիցուք 'ի չարաժանի գազանէն. փախիցուք 'ի սատանայական մեքենայէն։ Օ՛ի վաշխ չար օձին է վարդապետութեան. վաշխ գիւտք են դիւական. վաշխ թշնամին են սերմանք. վաշխ առհաւատչեայ է տանջանացն. վաշխ խափանիչ է բարեպաշտութեան. վաշխ ճանապարհ է գեհենին. վաշխ զրկումն է արքայութենէ. վաշխ ամբոխումն է մարմնոյ և սատակիչ հոգւոյ և մերժումն ամենայն արդարութեանց։ Ո՛րդ փախիցուք

յաճախմարտ յախտեդ յայդմանէ, 'ի վարդապետէ խա-
ւարէ, 'ի մարգասպան մնրէ։ Ի՞նչ է՞մ՝ մի՛ ախտասցուք
զհիւանդութիւնն զայն. և եթէ 'ի ներքս անկեալ ի-
ցեմք յախտն, արտաքս փախիցուք։ Իսկ որ նոքաքն վա-
ղին չարաչար, արժանի են սգոյ և ողբալի արտասուաց.
զի զոր օրինակ սուր առեալ՝ և զինքն խոցոտիցէ, այսպի-
սի է չարութիւն ախտին, և բազում գլուխ ստացեալ
ունի. ագահ է՝ սոյն և կռապաշտ առնէ. անամօթ է՝
սոյն և գազանամիտ առնէ. անագորոն է՝ սոյն և անո-
ղորմ առնէ. անիրաւ է՝ սոյն և յափշտակող առնէ. անձ-
նասէր է՝ սոյն և քրիստոսատեաց առնէ հակառակ կա-
մայն ՅՍ։

Եւ արդ զինչ ասացից. չէ մարդն այն քրիստոնեայ՝
որ վաշխս ժողովէ անիրաւութեամբ. այլ բագին է այն
զիսին սատանայի լի մարդազոհիւք, և գերեզման լի նե-
խեալ մեռելովք, և նմանեալ բորբոքեալ հրոյ գեհե-
նոյն՝ որ զամենայն ինչ ծախէ, և երբէք ոչ յագենայ։
Օ՜ ապհուրեացուք, սիրելիք, եթէ ուր երթեալ տարաւ
զմեզ ընչիցն ցանկութիւն. զարհուրեացուք և բազում
զգուշութեամբ զարմանն խլեացուք, զի մի՛ զարգացեալ
ծայրիցն՝ զմեզ 'ի վայր դարահոսեացեն յանդունդս 'ի
հուր գեհենին։

Եւ արդ զինչ արասցուք, և կամ որո՞վ օրինակաւ ըզ-
չար արմատն խլեացուք. զի իբրև ընդ օձս և ընդ գա-
զանս խօսիմք, և ոչ ընդ քրիստոնեայս և ընդ քրիստո-
սասէրս՝ որ հնազանդին հրամանացն ՅՍ։ Պատերազմին
բարբառեալ ասելով. եթէ ոչ դառնայ առ մեզ արծաթն
վաշխաւ, ապա և 'ի տալոյ իսկ արգելումք զփոխին, և ոչ
ողորմիմք եղբօրն կողկողելոյ։ Ի՞նչ դարբաւ անօրէն և
հակառակ կամացն ՅՍ. այդ բարբաւ ծնունդ է սատա-
նայական կամացն՝ որ յՅՍ հեռացուցանէ. այդ բարբաւ
չար թշնամին է սերմանք, զի զձեզ 'ի Ճշմարտութենէն
մոլորեցուցէ. քանզի այդ իսկ են խորհուրդք չարին վար-
գապետութեանն ընդդէմ պատուիրանացն ՅՍ։ Օ՜ի Քրիս-
տոս ասաց. թէ տացէք փոխ այնմիկ՝ ուստի ակն ունիք
անդրէն առնուլ զկշիռն, զայդ և մեղաւորքն առնեն.
իսկ դուք, ասէ, տուք փոխ այնոցիկ՝ ուստի ակն ոչ ու-
նիք առնուլ, յորժամ զմիմեանց բեռն բառնայցեմք, և
կատարեսցեմք զօրէնսն Քրիստոսի՝ որ ասէն, թէ ձեր ա-

աւելութիւնդ եղկցի չքաւորացն կարօտութիւն, զի եղկցի հաւասարութիւն երկոցունց։ Եւ արդ 'ի միտառ, զի ոչ եթէ չափով ինչ հրամայէ ողորմել քեզ աղքատին, այլ քում ընչաւէտութեանդ հաւասարել զչքաւորութիւն նորա. զի ՝ուծ եղբայր քո անուանեաց զաղքատն չքաւորն, և անդամ յանդամոց քոց. և քեզ չէ օրէն զանդամն քո մերկ տեսանել և անտես առնել, և կամ զրկել 'ի բաժնէ ընչից. զի եղբայր քո կոչեցաւ։

Եւ արդ թէ եղբայր քո համարիս, մի հեթանոսաբար անկուշներ 'ի պատուիրանաց ՝ուց. այլ կալ քրիստոնէաբար զհրամանն տեառն՝ որ ոչ զպակասութիւն աղքատին հրամայեաց ընել, այլ և առաւել ևս բազմաց։ Զարդ զայս հրաման ունիս յ՝ուց, և դու զիօին ևս կամ տաս չարաչար վաշխիւ, և կամ փակես անօրէն և անՈՒծաբար։ Զայլ անամթիս ևս ասել՝ եթէ փոխ առնուս. զայն քաջ սիրես, եթէ տամ մին՝ և երկուս առնում, քան եթէ ոչ տամ։ Իսկ նա զժամուն վարանն կամի փարատել, և առ նեղութեանն յակամայ առնու. բայց դու եթէ ՝ուծապաշտ ես՝ հայեաց 'ի պատուիրանս ՝ուց, զի ձրի իսկ հրամայեցաւ տալ տարակուսելոյն, և թափել 'ի պահանջողաց բռնութենէն. զի և դու 'ի թշնամոյն զերծանիցիս, որ հանապազ յաշխատութեան պահէ զքեզ՝ ժողովել և ապրել[1] և գանձել զայլոց ինչս, և վայելել և ոչ երբեք. զի ոչ ակն տեսանելով յագի, և ոչ արծաթասէրն ժողովելով և առնլով զայլոց։ ԶՈՒժոխք են անձինք ագահաց, և ոչ երբեք շատանայ, և ոչ երբեք ասեն շատ։

Զնդէր տարածանիս. յաղագս էր անօրինիս, ով թը շուառական. զի ժողովես զանպտղութիւն արծաթոյն առիթ յաւիտենական գեհենին։ Զիր դու առաջի աչացդ զՔրիստոսի դատաստանն. զինչ պատասխանի տայցես՝ յորժամ զքեզ շուրջ զայցեն զրկեալքն 'ի վաշխից ամբաստանելով զքեզն առ դատաւորին. զինչ առնիցես, ով թշուառականդ, թե աղաչեսցես։ Զնդ ոչ ա ղօթք, ոչ ինչք, ոչ մեծութիւնք. անապատ ես 'ի սիրելեաց, հեռի յօգնականաց. առանց խօսնակի, առանց պատասխանուոյ. ամաչեցեալ, տրտում, տխուր, միայ-

1 Ցայլում օրին. պահել։

նացեալ, առանց համարձակութեան. զի ուր և 'ի շուրջ ածիցես զակն՝ յայտնապէս տեսցես զչարեացն զպատկերս՝ զոր գործեալ իցես. աստի տեսանես զորբոյն արտասուսն, անտի զայրոյն հառաչանսն, այլուր զկոփեալն 'ի քէն զաղքատն, զծառայն զոր չարչարեցեր, զդրացիսն զոր բարկացուցեր. ամենեքեան քեզ 'ի վերայ յարիցեն, և գժնդակ 'ի վերայ չարեաց քոց զհետ քո շրջիցին հանապազ. զի զոր օրինակ շուք իւր անմոկնելի է 'ի մարդոյն, նոյնպէս և մեղքն անմոկնելի զհետ երթան զոգւոյն. յայտնապէս զկերպարանս բազմութեան մեղացն ցուցանէ ամենայն հրապարակին։ Ա՛ սան այնորիկ ոչ ոք կարէ ուրանալ անդ զչար գործոյն զպղծութիւնն. այլ կապի լեզու չարախօս, կարկի բերան անօրէն. դողայ մարմին յանցաւոր, զի իւրաքանչիւր ուրուք մեղք վկայեն զգործելեացն, ոչ բարբառ ինչ արձակելով. այլ որպէս 'ի մէջ օդեացն երևի այծեացն սեւութիւնն, նոյնպէս և մեղաւորացն անձինք խաւարազգեցեալք և պատեալք 'ի մէջ լուսազարդեալ հրապարակացն երևեսցին։ Այս արդ ընդէր վասն ծփական կենցաղոյս և կորստական արծաթոյդ մատնիս աննրելի տանջանաց և յաւիտենական ամօթոյն. ընդէր ոչ ուրանաս 'ի չար ախտէն ընչասիրութեան. ընդէր ոչ հեռանաս 'ի գլթոց վաշխի շահիցն՝ որ զքեզ առաւել քան զանօրէն դատապարտէ 'ի հուր ահեղ հնոցացն։

Ա՛յլ ասիցես. եթէ ցրեցից զընչիցն առաւելութիւնն՝ արհամարհիմ, աղքատանամ և կարօտիմ. ո՞չ լուար մարգարէին որ ասէ, եթէ "Ա՛յ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զգաւակ նորա թէ մուրանայ հաց"։ Ա՛յլ թէ և յաղքատանալն հասեր, քեզ լաւ է կողկողել և թափառել, շրջել և մուրանալ յողորմածաց, քան եթէ 'ի գառնութիւն անօրէն վաշխիցն կերակրել։ Ա՛յլ ունիս ձեռս, ունիս ոտս, ունիս արուեստ. գործեա, վարձեա, սպասաւորեա, և ուտես։ Յոլով հնարք են մարմնոյդ դարմանոյդ, եթէ կամիս վաստակել։ Ո՛չ եթէ մինչիմն ինչին ինչ զեռուն է՝ զինքն կարէ կերակրել, և մեղուքն զնչխարս իւրեանց կերակուր թագաւորաց ընձեռեն, որք ոչ ձեռս և ոչ գործիս արուեստից ունին ստացեալ. իսկ քեզ ետ Ա՛ծ ձեռս և գործիս և միտս ամենահնարս, անմեղութեամբ հաւասարեա զնունդ կեն-

ցաղոյս։ Եւ արդ զմի գիտես պատասխանատուութիւն յաղագս քոյոյ ուղղութեանդ, որում հրամայեցաւ գործել և տալ ում պիտոյ իցէ. դու և անձին քում ոչ ես բաւական։ Եւ մատնիս ահեղ աղէտիցն յաղագս փոխոյն վաշխիցն՝ որ հանդերձ մարմնով և հոգւով զքեզ արկանեն 'ի հրացան 'ի հնոց տանջանաց, ուր է լաղանդաղար և կրճտել զատամունս, յորմէ զմեզ փրկեսցէ շնորհք և ողորմութիւն հոգւոյն սրբոյ. որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

Ը

ՅԱՂԱԳՍ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՔԱՏԱՅ

Զոր տասցից, և կամ զոր պատմեցից, և կամ զոր թողեալ արհամարհեցից. և զոր ոչն կարծեմ կարևոր՝ այն զլեզու իմ շարժէ, և զհոյլս 'ի խորհուրդս իմ ժողովէ։ Այլ քանզի կարևոր տեսանեմ զմիտս Ձառիս, կամաւ և ես խօսեցայց և պատմեցից զնեղելոցն զվհատութիւնս, զչքաւորացն զչարչարանս յիմարութիւն անօթէնութեան, մինչև առ յոյժ անմտութեան յանձ և հայհոյութիւն առնել. և կոչեն զնա աչառող և ակնառու մեծատանց ընչասիրաց։ Այսուն. ասէ զմեծատունս սիրէ, և նոցուն աչառի, և զվաստակս նոցա յաջողէ, և ոչ հայի 'ի զոկանս տառապելոցն, այլ արհամարհեալ անտես առնէ։ Այսպիսի անօրէն բարբառումն ուրանան զՀնմարտութիւնն և զարդարութիւնն ասի, և զստուգագործութիւն նորա կարծեցուցանեն անօրէնութեան գործակից. և այսու առաքէն հայհոյութիւն 'ի բարձունս, և խօսին զայն անիրաւութիւն. այսու 'ի Հնմարտութենէն ասի ուրանան, և յանդունդս հերձուածողացն ընկղմին։ Զի զՀնմարտութիւն արդարութեանն ասի ոչ հրամայն կարէ ուրանալ և ոչ հեթանոսն. զոր հայհոյողն ամպարշտեալ ուրանայ, և զարթուցանէ զսատիկ սրբտմտութիւնն ասի 'ի վերայ ոգւոցն կորուսելոց։

Այս արդ էր խօսիս զայն անիրաւութիւն, ով չքաւորդ և աղքատացեալդ. մինթէ զքեզ զրկեաց ինչ ասի յիւրոցն. ոչ ապաքէն մեծատանց և աղքատաց միապէս բարժանեաց իբրև եղբարց՝ աչս ամենեցուն զնոցն, ձեռս և ոտս զնոցն. յարեգակնէ և յօդոյ և յանձրևաց առհասարակ վայելելիք. ամենեքեան յերկրէ և յԱդամայ. ամենեցուն մի մկրտութիւն և մի ջնորհք և մի մարմին և մի արիւն Քրիստոսի. ամենեցուն մի երկիր և մի երկինք և մի հիւթ ամենայն։ Այս ասեն ասուածոյքն

զոր շնորհեաց հասարակաց՝ աղքատաց և հզօրաց։ Զդրդ ի՛ զրկեաց զքեզ, և եղև աչառող մեծատանց։ Զայլ գիտեմ եթէ ոչ ինչ ունիս ասել առ այս. բայց ասես, իսկ ուստի՞ է սմա մեծութիւն։ Ի միտ առ. ոչ եթէ զնա տարաւ՝ ած, և եցոյց ինչս բազումս և ետ նմա, և զքեզ զրկեաց. այլ ոմանց յագահութենէ և յափշտակութենէ է մեծութիւն, և ոմանց յանդգոյլ վաստակոց, և ոմանց 'ի հայրենի ժառանգութենէ։

Իսկ ընդ այն զի ես տրտմեալ դու, որ յանբնչութեդ ես և յանհոգութեան, 'ի հանդարտութեան և 'ի խաղաղութեան, դիւրաւ և սակաւս վարես[1] զկարևոր պէտս մարմնոյդ։ Իսկ մեծատանցն դժուարաւ յօրինին ճաշք և ընթրիք, և լի բազում հոգովք են վայելք նոցա. և մանաւանդ եթէ 'ի սպանութենէ և 'ի զրկանաց ես իցեն կերակուրքն՝ խղճիւն հանապազ հաշին և մանշին, և վասն բազում աղքաց որովայնին բազում մթրիկք երկիւղիւ պատեն զմիտս նոցա. և կարաձմեռն յամենայն կողմանց կայ 'ի վերայ նոցա, կասկած 'ի գաղաց, և երկիւղ յաւազակաց. արհաւիրք 'ի զբաղարտողաց, տագնապ 'ի հարկահանաց, մախանք 'ի նախանձողաց, չարախօսութիւնք 'ի թշնամեաց, նենգութիւնք և վարանք յամենայն կողմանց. զի ամենեցուն 'ի նա բացեալ են զբերանս իբրև զվիշապաց, և կամին կլանել։ Զնա առաւել են մեծատանց հոգք և տրտմութիւնք քան ըստ հանգիստ և զուրախութիւն։ Յաւ ոչ իսկ է մեծատանց ուրախութիւնն յորժամ հանապազ զերկնից անձրևս խնդրեն, զդառնաշաւուն ձմերունս հոգան, զգաշտաց զարմանս հոգան, զգազանաբեկ հօտիցն հոգան, 'ի հինոիցն դողան, ընդ խաշնամունսն տրտմին, վասն զանձուցն սկեն, 'ի պակասելն հալին. ուր և ցեց իսկ տիրէ 'ի վերայ մեծատանց, և երկեղուկս արկանէ։ Օ՜ ինչ ես ասասցից վասն ահեղ առուրն զարհաւիրս և զդառն ողբումն տանջանացն, որ և աստէն իսկ յահէ պատուիրանացն սարսափէ և սակայ հանապազ՝ յորժամ ընթերցուածք մարգարէիցն և առաքելոցն յանդիմանեալ կշտամբիցեն զանազորամ և զագահ մեծատունս։

Զդրդ ուր է խնդութիւն մեծատանց, և կամ ուր մը-

1 Յայլում՝ օրինակի վարէս։

խիթարութիւն՝ որում չքաւորդ բաղձաս և ցանկաս, և ընդ հեշտական և ընդ խաղալական կեանսդ քո տրրտմիս, և եղկելի և թշուառական զքեզ համարիս, և ըզբազմապատիկ իմաստութիւնդ քո արհամարհես։ Օ՛ի ոչ երկիւղ՝ի գողոց է քեզ, և ոչ կասկած յաւազակաց. ոչ հոգաս վասն դաշտաց դալարոյ, և ոչ վասն լերանց արօտոյ. ոչ երկնչիս՝ի հովուաց նենգութենէ, և ոչ՝ի գազանացն յափշտակութենէ. ոչ սարսես՝ի բռնաւորացն բռնութենէ, և ոչ՝ի գրաւահարկէ իշխանացն. ոչ նախանձոտքն նախանձին ընդ քեզ, և ոչ զրպարտողքն զրպարտեն. ոչ երկիւղ է քեզ յումեքէ, և ոչ խռովութիւն. ոչ ահ իշխանացն կարէ զարհուրեցուցանել զաղքատն, և ոչ սատ տերանց. ոչ հանել ոք կարէ յաղքատէն, և ոչ խռովել և սաստել։ Եթէ ասիցես՝ եթէ ամենայն խռովեալք և աղմկեալք, և աղքատն ծաղր առնէ զնոքօք. իշխանք ամբարտաւանեալք զայրագնին՝ի վերայ ընչեղացն, և աղքատն յոչ ինչ համարի զնոսա. երկիր լի գողովք և աւազակօք, և աղքատն աներկիւղ է՝ի նոցանէ. հրապարակք լի զրպարտողօք և բռնաւորօք, և աղքատն անհոգ է՝ի նոցանէ. դատաւորք գայլացեալք և գազանացեալք, և աղքատն անլուկ է՝ի նոցանէ. զի վասն անընչեղութեանն՝ի բազում խաղաղութեան և յանհոգութեան են կեանք աղքատին, ազատ յամենայնէ և անկասկած յամենեցունց, աննախանձ և անքինահան, և անմեղ՝ի բազում ախտից։ Եկ ապէտս ունի բազում շինուածոց. ոչ պէտք են նմա փականք աղխից. ոչ տրտմութիւն է՝ի հիւանդութեան աղքատին, և ոչ խռովութիւն և աղմուկ՝ի մահուն. այլ՝ի բազում անհոգութեան են կեանք աղքատաց, և անեղբաղ հանգիստ նոցա։ Այս ամենայն ազատութիւնք ասա։

Լսեկ զանտի մեծութիւն և զփափկութիւն և զանանց բարութեանցն զվայելչութիւնսն զոր պատրաստեալ է անդ չքաւորութեանն համբերութեան՝ որ բերան բանական է պատմել. զի քան զամենայն վայելչութիւնս թագաւորաց աշխարհիս ցանկալի է և փափագելի։ Եթէ միայն առանց տրտնջելոյ աղքատութեանն համբերիցէ, թեթև և անհոգաբար անցանէ ընդ կեանս աշխարհիս. զի ինդրէ զաւուրն միայն զկերակուրն՝ զոր բազում ցանկութեամբ զարհամարհն իբրև զքաղցրա-

համ ախորժելով ճաշակէ, և ինքէ անհոգաբար։ Իսկ մեծատանցն զմայլելոց և ոչ անոյշքն թուին ախորժելիք, այլ անպիտոյք և տաղտկալիք։ Զտանեն նոքա մեծագին գինեաւն, թմբրին և յիմարին. իսկ աղքատն դիւրագին ջրովն զնոյն պէտս ծարաւոյն վճարէ, և ըզգաստ և առողջ քան զարբեցողն գտանի։

Եւ արդ ընդ էր եղկելի և թշուառական զքեզ համարիս. զի զկեանս անհոգս և հեշտականս, և կերակուրս անոյշս և ախորժելիս զաղքատին տեսանեմ քան զմեծատանցն. զի սուրբ են յամենայն նենգութենէ, և յաւգահաց խռովանաց վայելքնոցա։ Իսկ մեծատանցն փափկութիւնք նախ այն է՝ զի անաւուրբ է և անպարկեշտ, և լի ամենայն պղծութեամբ շուայտութիւնք նոցա. և ապա զի 'ի յափշտակութենէ և 'ի զրկանաց ժողովեալ անօրէնութեամբ և ագահութեամբ։ Զայլ և 'ի բազմաց քրտանց յօրինին սեղանք նոցա. բազում երկիւղիւ, և սակաւ վայելումն. ազգի ազգի հոգք, և սակաւ ինչ հանգիստ, և այն բազում ինչ կասկածանօք. զի սակաւ է կարօտութիւն քաղցելոյ աղքատին, և հեշտ հանգիստ քնոյ նորա։ Իսկ մեծատունն չև ելեալ 'ի մանչութենէ, անդէն պատեն շուրջ զնովաւ խորհուրդք նորա իբրև զթշնամիս և զպատերազմողս, հոգք տանն և ծառայիցն, երկիւղ գողոց և զբպարտողաց, նենգութիւն դրացեայն և իշխանացն. և ամենայն ծուփք մեծութեանն պատեալ պաշարեն զնա՝ թէ որով հնարիւք զինչս աճեցուցանել մարթասցուք։ Զհա դառն են մանչիք մեծատան ագահի, և ամենայն ուրեք տրտմութիւն 'ի վերայ տրտմութեանց յաւելուն. զի տեսանէ մնաս և սխալումն 'ի տանն և տրտմի. տեսանէ սխալումն յանդին և տրտմի. տեսանէ սխալումն 'ի խաշինս և տրտմի, և ամենայն ուրեք իբրև ալիք յալեաց առնուն հոգք և տրտմութիւնք։ Իսկ զանտի տանջանացն և զկրոյ գեհենոյն զինչ ասացից և կամ զինչ պատմեցից, զոր պատրաստեալ է մեծատանց ագահաց և անողորմից։

Եւ արդ, դու աղքատդ և չքաւորդ, ընդէր նեղիս և տրտմիս և տագնապիս ընդ նաւահանգիստն անընչութեանդ, և խնդրես այնպիսի մրրիկս և ալէկոծութիւս մեծութեան. ոչ է մեծ քեզ զի անհոգ ես 'ի գիշերի, և անհոգ 'ի տուրնջեան. անհոգ 'ի տան, և անհոգ 'ի

Digitized by Google

հրապարակս . աներկիւղ 'ի Ճանապարհի , և աներկիւղ յօթեւանի . անկասկած 'ի բռնաւորաց , և անակնածելի յամենայն զրպարտողաց . և մանաւանդ եթէ համբերութեամբ և ս 'ի փոքր ժամանակիս փորձանաց և աղքատութեանդ տանիցիս : Օ՛ի մեծ է բաշխել զինչս իւր աղքատաց , այլ մեծագոյն և ս է զանձն աղքատացուցանել խոնարհութիւն , և գոհանալ զայ : Օ՛այս և տէրն գովէ . " Երանի է , ասէ , աղքատաց հոգւով , զի նոցա է արքայութիւնն երկնից " : Օ՛ի եթէ չար ինչ էր աղքատութիւնն , և ոչ Քրիստոս յամենայնի զաղքատութիւնն ընտրէր . զի նմա մարթ էր 'ի թագաւորական քաղաքի երևել , և 'ի դատերաց թագաւորաց յղանալ , և յապարանս թագաւորաց ծնանել : Ա՛յլ նա յաղքատ 'ի կուսէ երևեցաւ , և 'ի գձուձ քաղաքի ծնաւ , որ ոչ տուն և տեղի օթեւանի գտանէր , այլ օտարանաց քարաքուի , ուր ոչ մահիճք , և ոչ որոդան գտանէր . այլ 'ի քարանձաւ մնուրս հանգուցանէր զտէրն ամենայն արարածոց , և 'ի հիւսան խղի մնանէր , և գետնագնաց Ճանապարհորդէր . և այնչափ ինչաւ 'ի խոնարհութիւն՝ մինչև զոտս աշակերտացն լուանալ ծառայական կերպարանաք : Յ՛ս այսու օրինակաւ ամենեքեան որ կամեցան յերկինս մեծանալ , զաղքատութիւն և զխոնարհութիւն ընտրեցին :

Իսկ դու ընդէր դողաս յաղքատութենէդ , որով յերկինս վայելես անհոգաբար , և զերկնից անբաւ բարութիւնսն ժառանգես փոխանակ ընդ սուղ ինչ աղքատութեանդ : Զանգի կրկին նեղութիւնք և հեշտութիւնք մարդոյ , մինն աստ , և մինն 'ի հանդերձելումն . զի կամ զյաւիտենականն զանանց բարութիւնսն ժառանգեսցես , կամ զաստի անցաւորն . կամ 'ի մշտնջենաւորսն է աղքատանալ և նեղել , և կամ 'ի սուղ ինչ ժամանակիս . կամ աստ է սգալ և լալ , և կամ անդ . կամ աստ է վայելչութեամբ պայծառանալ , կամ անդ . կամ աստ համբերել նեղութեանց և տանել , կամ անդ : Որպէս Երկիս մարգարէն աստ նեղեցաւ և աղքատացաւ , և յերկինս մեծաւ փառաւք փառաւորեցաւ . նոյնպէս և Յովհաննէս Մկրտիչն աստ աղքատացաւ , քաղցեաւ և ծարաւեցաւ , և յերկինս զանբաւ բարութիւնսն ժառանգեաց . նոյնպէս ամենայն մարգարէքն և առաքեալքն ան-

ցաւոր ներդութեամբք զանբաւ կենացն զվայելչութիւն ստացան։ Եւ հաղորդն մեր առաջինքն զաղքատութեան կեանս ընտրեցին. քանզի գիտէին եթէ յոյժ դժուարագոյն է մեծութեամբ աշխարհիս զերկնից մեծութիւնն ժառանգել, և ոչ անցաւոր փափկութեամբս զանանց փափկութիւնն վայելել. քանզի ասէ՝ թէ դժուարագոյն է ասն փափկասիրի զերեսս Աբրահամայ տեսանել, և մեծատանն յարքայութիւնն այց մնանել. այլ ներդեալոց և աշխատելոց է անուն հանդիսանն, և կարօտելոց է արքայութիւն։ Զոր ապա իբրև՝ի բանդի են յաղքատութեանն, նոցա՝ի բաց է դուռն արքայութեանն։ Օ՛յ ոչ ասծ անիծեալ է՝ եթէ՝ի բանդէ տառապանաց հանեալ զներդեալսն և զտառապեալսն, և՝ի բանդ դժոխոց արկանէ. այլ՝ի մեռելոց կենաց հանեալ, և յանսպառ ուրախութիւնն հանդուցանէ։ Եթէ միայն զոհութեամբ աղքատութեանն տանիցին, բազում մեծութիւնք համբարեալ կան յերկինս, և անբաւ ուրախութիւնք։

Եւ արդ որ է ուրախութեան պակասութիւն անընչիդ և աղքատիդ՝ որ հայհոյութիւն՝ի բարձանս առաքես, և խօսիս զայ անիրաւութիւն։ Եւ այլ ասիցես, թէ յընչիցն բազմութենէ ողորմութիւնս բազումն բաշխէ մեծատունն։ Եւ այլ և ողորմութիւնք աղքատին առաւել զամենալի է և ընդունելի քան զմեծատանն։ Օ՛յ յորժամ սիրով զբ զտառապեալն տեսանիցէ, և՝ի սակաւ ընչիցն իւրոց՝ տառապելոցն բաշխիցէ և ջամբիցէ, և զբաղցեալս կերակրիցէ, զանցուցանէ զտուրս իւր քան զբազում մեծատանց. քանզի ոչ եթէ՝ի չափս տրոցն նայի ասծ, այլ՝ի կամն տալեացն. և ընդունի զսակաւն իբրև զմեծ։

Եւ այլ եթէ ինչս ոչ ունիցիս՝ որով և զկարօտեալսն մխիթարեսցես, տունս ունիս՝ յորում զօտարսն հանդուցանես. ունիս ջուր, զոր ծարաւելոցն արբուցանես. ունիս գութ և ողորմութիւնս, որով լաս և հեծես՝ի վերայ վշտագնելոցն և ախտացելոցն ախտաժեռաց. զի ո՞ ողորմութի՞ մեծ է քան զընչիցն բաշխումն։ Եւ նախանձիցես, եթէ պատարագս և պտուղս հանիս մեծատանն՝ի մեծութենէն։ Եւ ասել և յայսմ մտրթ է աղքատին զանցուցանել զմեծատամբն։ Եւ՝ասա զանձն քո պատարագ այ խոնարհութեամբ և անմեղութեամբ. “Պա-

տարագ ՝ այս է , հոգի խոնարհ ,, : Եւ այս մեծ է քան զողջակէզս խոյոց և զուարակաց . զի մարգարէն զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ անուանէ պատարագ ընդունելի և հաճոյ ՝ : Սրտիք մանկունքն զանձինս և զհոգիս մատուցին պատարագ ՝ : Եւ եթէ ընդ պտուղս կալոյ կամ հնձանի մեծատանն նախանձիցիս , * որ մեծ է քան զամենայն բարեգործութիւնս , քան զպատարագս և զողորմութիւնս և քան զպահոց պնդութիւնս՝ պտուղս ՝ հանել յարմտեաց իւրեանց 'ի կալոյ և հնձանէ . . . ոչ՝ հոտոտի ՝ 'ի հոտ անուշից , և օրհնէ ՝ զտունս և զվաստակս նորա : Եւ տուն յորմէ պտուղք օրհնութեան ոչ ելանեն յեկեղեցիս և 'ի քահանայս և 'ի ապաստաւորս եկեղեցեաց , ՝ ծայրն օրհնութիւնն ոչ մնանէ 'ի տուն յայն , և ոչ 'ի վաստակս նոցա , և հանապազ 'ի նուազութեան լինի տունն այն : Զայն այսորիկ պատուիրեաց ՝ Զովսէսի՝ եթէ " Զառաջինս արմտեաց քոց ինձ տացես , զանդրանիկս հօտից քոց , զարջառոյ և զոչխարի ինձ նուիրեցես . զի յամենայն յոր ինչ միտցես զձեռն քո , աձեցուցից և բազմացուցից ,, : Նոյնպէս և Սողոմոն ասէ . " Պատուեա զտէր 'ի քոց արդար վաստակոց , և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեան արմտեաց ,, . ասէ . " Զցին շտեմարանք քո ցորենոյ , և գինուոյ հնձանք քո առաւել բղխեսցեն ,, : Արդ եթէ ինչք չկան քո , ով ՝ քաւորդ , և || հան և դու պտուղ 'ի քոց անդամոց . քանզի յաչաց պտուղ է՝ կուրին առաջնորդել և հանել 'ի դիւր . յոտից պտուղ է՝ կաղին ցուպ մատնել , և զհարկ ոտիցն նորա հարկանել . 'ի ձեռաց պտուղ է՝ անդամալուծին առաջնորդել , և գօսացելոյն օգնել . 'ի լեզուէ պտուղ է՝ զմոլորեալն ուսուցանել , զտրտմեալն սփոփել . 'ի լսելեաց պտուղ է՝ լսել վաղվաղակի եղբօրն հրամանի , և խոնարհութիւն կամաց նորա հնազանդել :

Արդ զայս ամենայն ողորմութիւն առանց ոսկւոյ ամենեցուն մարթ է բաշխել , և վարձս առաւել ընդունել քան յընչիցն ողորմութենէն : Արդ զինչ ունիս ասել , զի և պատարագք և պտուղք և ողորմութիւնք աղքատացն դիւրաւ և ընդունելի է քան զմեծատանցն : Զայն որոյ բազում ժուժկալութեամբ համբերեցէք

* Զմիջանկեալ հատուածդ ոչ ունի . . . ով լսասցէ , ՝ || ջունին այլք :

նեղութեանց, և զոհութեամբ ընկալարուք։ Այս է-թէ տրտմիջիք և հայհոյիցէք, ընդունելոց էք չար վարձուց հատուցումն. քանզի անտուտ է որ ասէն՝ եթէ են ոմանք որ աստ տանջին և անդ. զի աստ աղքատութիւն նեզին, և վասն տրտնջելոյն յարդար դատաւորէն յանդիմանեալ կշտամբին, և հալին և մաշին 'ի հուր գեհենին. որպէս ստդումայեցիքն ողբ աստ տանջեցան, և անդ տանջելոց են։ Որոց մի լիցի մեզ անկանել յայն տեղի տանջանացն և դատապարտութեան։ Այլ զմեզ ապաշխարեսցուք, զաղքատութիւն սիրեսցուք, նեղութեան համբերեսցուք, զվշտաց գոհացուք, յանընչութեան փառաւորեսցուք, բազում առաքինութեամբ զերկինս ժառանգեսցուք և յանբաւ բարութեանցն վայելչութիւնն վայելեսցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Թ

ԹՈՒՂԹ ՎԱՄՆ ՓԱՀԱՆԱՑԻՑ ՏԵՍԶՈՒԹԵԱՆ Ի ՎԵՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Ես լի անթիւ յանցանօք և ունայն 'ի վարուց առաքինութենէ, թափուր 'ի բարեաց, և սոսկ յարդարութենէ, որ յամենայն ժամ յաւելում մեղս 'ի վերայ մեղաց, որ սպանանէ զիս չարաչար։ Այլ արդ ոչ ոք միգապատեալ բաղում յանցանօք և խաւարազգեաց վարիւք անօրէնութեան զայլս լուսաւորել ժպրհիցի, և կամ հիւանդացեալն մեղօք զայլս առողջացուցանել մարթասցէ։ Մեծ յանդգնութիւն է ծանրացելոյն 'ի մեղաց՝ ժտել զայլս թեթևացուցանել, և անկելոյն 'ի մտաց՝ ախորժել այլոցն լինելով վարդապետ. և կամ զիմարդ մոլեանն անօրէնութեամբ առաջնորդել այլոց բաւիցէ։ Այլ վասն զի սէրն ՅԾային և յանհնարս հնարի, և ժտի յաղագս փրկութեան, և ջանայ ընդ նեղ և ընդ նուրբ ծերպս մտանել առ 'ի շահ և յօգուտս լսողաց. հայել յՅԾային բանին զօրութիւնն, երթ դարձո զեղբայրն քո՝ զի քաւեսցին մեղք քո. զի որ ջանայ, ասէ, դարձուցանել զոգի մոլորեալ, զբազմութիւն մեղաց իւրոց փարատէ. և որ հանէ զպատուականն յանարգէն, բերան ՅՈյ կոչեսցի։ Օ՛ի մեծ շահ և օգուտ և կարևոր՝ ջանալ և խնդրել զընկերացն փրկութիւն։

Այլ արդ աւասիկ հովիւք հօտից և առաջնորդք եկեղեցւոյ՝ ցանկի հօտիդ, տեսանէք զսատանայ հանդիսացեալ, և զԱրիստոս թշնամանեալ, և զեկեղեցւոյ փարախդ արհամարհեալ, և զհետ գայլոց ընթացեալ. և հովիւք հօտիդ լռեալ դադարէք, և ոչ անդադար բողբէք զպատուէրս պատուիրանացն յամենեցուն լսելիս։ Օ՛չբդ 'ի տագնապի են 'ի մէջ թշնամեաց, և զօրավարդ անկեալ ընջեալ. նաւդ 'ի ծփանս և 'ի մէջ ալեացդ

ալէկոծեալ, և նաւապետդ անկեալ կաս անհոգաբար. գազանք մոռեալ զայգիդ սպականեն, և այգեգործդ տեսանես և անտես առնես յարաժամ. գողք մոռեալ շուրջանակի զանկիւնդ փորեն, և պահապանդ 'ի քուն ես և խորդաս. ժողովուրդդ կարեվէր են 'ի վերս, և բը-ժիշկդ չէ 'ի միջի. խաշինք գայլավատնեալ ցրուեցան ընդ խորխորատս, և յառապարս դարահոսեալք, և յանխնայ կոտորեն գայլք և գազանք, և թռչունք մահաբերք գեշ գեշ ոլատառեն, և անկեալ կան տարատարափ, և հովիւդ ոչ երևին։ Զ՚չարհուրիք յահեղ հովուապետէն՝ որ ասէ, թէ "Ղատեցայց ոչխար առ ոչխար, և խոյ առ խոյս,,. և դարձեալ մարգարէին ամբաստանէ զքահանայիցն ասելով. եթէ "Ղահանայք անարգեցին զօրէնս իմ. զի զսուրբն 'ի պղծոյն ոչ ընտրեցին, և զարատաւորսն յանարատէն ոչ զատուցին. այլ զկաթնն ուտեն, և զասրն զգենուն, և զխաշինս իմ ոչ արածեն, զտկարացեալսն ոչ զօրացուցանեն, զհիւանդացեալսն ոչ բժշկեն. հովիւք էք՝ զանձինս արածէք, և ոչ զոչխարս. և ցանեցից, ասէ, զապաւառ ասնից ընդ երեսս ձեր։ Լայ արդ բարձից զձեզ նոքօք, և առաքեցից 'ի վերայ ձեր անէծս, և անիծեցից զօրհնութիւնս ձեր, և նզովեցից զձեզ. փոխանակ զի ոչ եդիք 'ի սրտի ձերում երկնչել յինէն, և յերեսաց իմոց ոչ խորշեցէք,,։

Զ՚դդ տես զի այսպիսի անէծք և սպառնալիք են յայ 'ի վերայ քահանայից հեղգացելոց. և դու երկիր յահեղ սպառնալեացն այ, և մի ինչ հեղգար 'ի տեսչութենէ հոգևոր հօտիդ, այլ զգայգ և զցերեկ անդադար վաստակել վասն նոցա փրկութեան և քոյոյ սրբութեան։ Յիշեա զփոյթն Մովսէսի և Զհարոնի և զՍամուէլի, զի և նոքա դորին հօտի էին առաջնորդք։ Յիշեա և զփոյթն Պաւղոսի և Պետրոսի, և նոքա դորին հօտի էին առաջնորդք։ Յիշեա և զփոյթ սրբոցն որ յետնոցա, զի և նոքա դորին հօտի էին առաջնորդք, որք հրով և սրով և զանազան չարչարանօք չարչարեցան վասն հօտին տեսչութեան, և գանիւք և բանդիւք և բազում կըտտանօք ելին յաշխարհէս վասն մեծ սիրոյն այ և ջերմագութ հօտին տեսչութեան։ Զի և ձեզ ըստ նմին նըմանութեան ամենայն քահանայից և վարդապետաց պարտ է հանապազ 'ի սոյն վաստակել. և մանաւանդ

որ ինքնակամ կամքը ստացաւ զվերակացութիւն, զոր գովելի է՝ թէ ոչ 'ի պատճառս ինչ կենաց անձինն իմացաւ, և զօրացաւ 'ի հոգւոյն մտանել 'ի գործ մշակութեան վասն բազմաց փրկութեան։ Օ՛ի արժանաւորացն և պատուիրանապահացն գովելի է հոգևորապէս ցանկալ վերակացութեան յաղագս առաւել սիրոյն ՝՝՝. որպէս ց՚Պետրոս ասէր. "Եթէ սիրես զիս առաւել քան զդոսա, արածեա զոչխարս իմ,,. և Պաւղոս ասէ. "Եր վերակացութեան ցանկայ, բարի գործոյ ցանկայ,,, և ոչ չարի։ "Ա՛յլ ուսցին և մեքզն բարեաց գործոց վերակացու լինել, զի մի անպտուղ լինիցին. զի այն է բարի և օգտակար մարդկան,,։ Օ՛ի քան զարեգակն Հառագայթիւք լուսաւորեալ՝ առաւել ևս մեծ է զմոլորութիւն մեղացն փարատել։

Ա՛յս է կարևոր ՝՝՝, և առաւել քան զամենայն առաքինութիւն. վասն այսորիկ ասէ՝ թէ "Երիցունք կըրկին պատուոյ արժանի եղիցին, և մանաւանդ որ վաստակեսցին բանիւ և վարդապետութեամբ,,։ Օ՛ի մեծ և անհանգիստ է ՝՝ան քահանայութեան, և շահաւոր չնորհք վարդապետութեան. բժիշկ հոգւոց է քահանայն և գործակից գործոցն ՝՝՝։ Ա՛ստուած արար զմարդն կամաւ 'ի բարի և 'ի չար, և քահանայն զկամն ուղղեալ՝ զարդարէ գործովք առաքինութեամբ. ՝՝՝ զբնութիւնն ստեղծ, և նա ՝՝՝ածանութեամբն [1] լուսաւորէ, և հեռացուցանէ յամենայն սատանայական խաբէութենէ, և մերժեալ փարատէ զմէգ մոլորութեան և զխաւարն անգիտութեան. և ծանուցանէ զարարիչն արարածոց, և պարգևիչ ամենայն բարութեանց, և լիութիւն ծովու և ցամաքի. և լուսաւորեալ Հիմարիտ հաւատովք, և ուղիղ վարիւք առաքինութեան, և առաջնորդէ ՝՝՝ածաս սիրացն յառաքինութիւնս և յուրախութիւնս։ Ա՛ման որոյ և բազում պատուօք պատուին, և լուսաւոր պսակօք պսպծառանան։

Ա՛յլ արդ ամենայն որ ունի զվերակացութիւն քահանայութեան, պարտ է ՝՝՝ան մեծ և վաստակ անհանգիստ ցուցանել վասն հօտին փրկութեան. զի եթէ Հակովբ վասն անբան ոչխարացն 'ի պարզոյ ցրտանայր, և 'ի տութոյ տապանայր, և քուն յաչացն մերժէր, որչափ ևս

[1] Ա՛յլ օրինակք ՝՝՝ածանութեամբն։

առաւել քեզ պարտ է բանաւոր՝ հօտիդ վաստակել և տքնել անդադար միշտ, և դողալ և հոգալ հանապազ, և ջերմագութ գորովով առաւել քան զհայր գթած և քան զմայր մատաղածին խնամել և սիրել, և խնդրել ոգւոցն նոցա փրկութիւն, և հանապազ ուսուցանել բանիւ վարդապետութեամբ, և որ առանձինն և որ 'ի մէջ ժողովրդոց։ Այլ զոր բանիւք ոք ուսուցանէ, նախ գործովք պարտ է կատարել. զի չէ ինչ շահաւոր բան առանց գործոց. "Սկսաւ Յիսուս առնել, և ապա ուսուցանել". և "Որ արասցէ ինքն և ուսուցցէ այլոց, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից"։

Ի միտ առ, զի Ճրագունք 'ի լուցելոյ Ճրագէ լուսաւորին, և ոչ 'ի խաւարեալոյն. և Ժողովուրդք 'ի ձեռն սրբոցն սրբին, և ոչ յաղտեղացելոյն մեղաւք. զի քահանայն իբրև ակն 'ի մարմնի է 'ի մէջ ժողովրդոց, և պարտ է զամենեքումբք նայել և յարդարել և մաքրել զամենայն աղտեղութիւնս մեղաց։ Իբրև Ճրագ է 'ի վերայ աշտանակի, և պարտ է զխաւարն թանձրամած փարատել, և զամենայն տունս լուսաւորել։ Այլ դէտ է և պահպան, և պարտ է հանապազ բողոքել, զի մի եկեալ թշնամին սրով մեղացն վիրաւորէ, և արիւն սպանելոցն 'ի ձեռաց քոց խնդրեսցի։ Ի ժիշկ ես վիրաւորելոցն 'ի սատանայէ. հանապազ լուա և պատեա և յարդարեա։ Ղ ես համեմիչ. սրբեա զամենայն ներխուութիւն մեղաց։ Ղեւիւր ես փրկութեան. զամենեսեան լուա և մաքրեա 'ի չարեաց։ Հովիւ ես հօտից. զգոյշ լեր 'ի գայլոց։ Առաջնորդ ես Ժողովրդոց. դիտեա որպէս առաջնորդեաս. ահա համարք կան և պատիժք և Ճշդիւ քննութիւն։

Դահանայ, զգոյշ լեր երկիւղիւ. զի չէ ինչ ընդվայր զմարդն ստեղծեալ, և ոչ 'ի կամն են կենաց աշխարհիս. խնդիրք են յածող աչաց, քննիչք են անպարկեշտ լսողաց, պատիժք դատարկ բանից, և պահանջումն անդէպ խորհրդոց։ Օ՛յ եթէ ասել զեղբայրն յիմար կամ մոռոս՝ դատապարտեսցէ, զինչ ևս այլ մեթերք մեղաց մեծից գործիցեն. և եթէ ակնարկելն պոռնկութիւն գործիցէ, որչափ ևս առաւել գործն այրիցէ. եթէ երդնուլն 'ի սատանայէ է, որչափ ևս առաւել որ սուտ երդնուցուն. և եթէ ամբոխելն և աղաղակելն վնաս գործէ, որչափ ևս առաւել ոխս պահելն տանջիցէ 'ի գեհենին.

Digitized by Google

և եթէ ցանկանայն ապականել, որչափ և առաւել եթէ զգործն ցանկութեանն կատարիցեմք. և եթէ չարակնեալն չարամահ սատակէ, որչափ և առաւել նախանձն և ոխայն. և եթէ զիւր ինչս չաշխեալն դատապարտէ, որչափ և առաւել որ զայլսն զրկիցէ. և եթէ զիսոտանն մատուցանել՝ նզովս իբրև զայրէնն ընդունի, որչափ և առաւել որ 'ի զրկանացն մատուցանէ. եթէ գաղտ զեղբօրէն խօսեալն վնասէ, որչափ և առաւել քսեալն նենգութեամբ. և եթէ որ զընկերն բամբասէ՝ 'ի հուր առաքի, որչափ և առաւել որ զքահանայն և զվարդապետն բամբասէն. և եթէ պահարանք և սիրնկոնք [1] 'ի կուապաշտութիւն տանին, որչափ և առաւել յուռութք և հմայք դիւականք. և եթէ ագալն վասն մոռելոց հեթանոսութիւն է, որչափ և առաւել կոծել և փետել. և եթէ որք լկտին և ծիծաղին՝ որպէս զոլոմն 'ի հուր արկանին, որչափ և առաւել որք 'ի թատերան ընթանան. և եթէ առանին զարդարելն չէ գովելի, որչափ և առաւել որ 'ի տեսիլս հրապարակին պճնիցի. և եթէ զրկելն 'ի սեղանն դատապարտէ, որչափ և առաւել խորելն և գողանալն յեղբօրէն. և եթէ յամել 'ի գինւոջն պատուհասէ, որչափ և առաւել շուայտութեամբ զեղխեալն և զորկորստութեամբ արբեալն, զոր հին և նոր պատուիրանք պատուհասեն։

Լաւ արդ տես, զի այս ամենայն և որ ինչ նման է սոցին՝ 'ի տանջանան դատապարտեն զգործելիսն։ Լաւ դու որ վերակացուդ ես եկեղեցւոյ՝ եթէ ծուլացես ինչ, և ոչ զգուշանայցես զայս ամենայն ճշդիւ խրատել և քննել, գիտեա՝ զի արիւն կորուսելոյն 'ի ձեռաց քոց խնդրեսցի։ Լաւ եթէ անձին տանջանաց ոչ ոք կարէ հանդարտել, որչափ և առաւել այնքան ոգւոցն լինել պարտական. յոր խաւար երթայցէ, և կամ քանի գեռք հրահոսք իցեն նման բաւական, և քանի գուրք խաւրայինք։ Լայլ զգոյշ լեր, հանապազ բողոքեա, աղաղակեա անդադար, քննեա և լուր զամենայն. կարդա փութով և խրատեա. զոմանս սատիս, զոմանս աղերսիս, զոմանս փափագելի արքայութեանն փափկութեամբն յորդորեա. զոմանս չար ահեղ տանջանացն երկիւղիւն հիացո. զոմանս 'ի մէջ եկեղեցւոյ խրատեա, զի այլքն

[1] Այսպէս յօրինակին. յայլ օրինակս չեք ամբողջ յօդուածն։

ուսցին. զոմանս առաձինն յանդիմանեա, զի մի 'ի բազմաց ամենեցին ուրացեալք՝ զյանդիմանութիւն արհամարհիցեն. և եթէ արհամարհիցեն իսկ, դու մի աղաղակաւ հակառակիցիս, զի ծառայի տէառն չէ պարտ հակառակող լինել, այլ հեզ առ ամենեսին, զի թերևս տացէ նոսա ապաշխարութիւն։

Բայց դու մի մեծարուս ինչ զքեզ համարիցիս. այլ արհամարհեա զփառս աշխարհիս. անարգեա զսուտ կասպասացն զգովութիւնն. յիշեա զպատուհասն զՀերովդէի՝ որ զգովութիւնն ընկալաւ։ Յաղագս որոյ և դու մի ինչ անձինդ շուք դնիցես, և մի պատիւ ինչ քեզ որոներ. այլ պաշտեալ զամենեսեան սպասաւորս լերս ամենեցուն, ծառայ զքեզ անուանեա։ Յիշեա և զծառայելն Քրիստոսի, զղենջակին սփածանիլն, զջուրն 'ի կոնքն արկանելն և լուանալ զոտս աշակերտացն, ոչ մարդ զմարդոյ, այլ Աստ զմարդոյ. որ է Աշխարհիս խաստուվանութիւն և խոնարհութիւն և սերտ ծառայութիւն. "Ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել"։ Այս է քո վարդապետն, և ոչ հեծեալքն և մեծարեալքն։ Արդ դու նմա լեր նմանող, և հօտք քո քեզ նմանեն. որպէս և Պաւղոս ասէ. "Նմանողք եղերուք ինձ, որպէս և ես Քրիստոսի"։ Այսպէս դու նոյն ինքն Պաւղոս ես՝ որ քարոզես, և նոյն ժողովուրդդ որ ուսուցանես. և ահա մարդ էր քո նմանող 'ի Կիլիկեա գաւառէ 'ի Տարսոն անուն քաղաքէ. և չունէր ինչ աւելի քան զքեզ, բայց միայն զյօժարութիւն և զվաստակն որով զշնորհս հոգւոյն սրբոյ ընկալաւ. որ և քեզ չէ ինչ արգել, այլ միայն յօժարել և վաստակել, և զշնորհս հոգւոյն սրբոյ ստանալ։

Արդ մի ինչ պատճառեր, և ընդ այս և ընդ այն ինչ բաղբաղեր. բայց միայն արթուն լեր աղօթից և փոյթ վարդապետութեան. ըստ նմանութեանն Պաւղոսի ընդ հիւանդն հիւանդացիր, 'ի մեղուցելոյն վերոյ աղաս, ընդ գայթակղեալն տրտմեա, զտկարացեալն զօրացո, և ցոյց զՔրիստոս նոցա, հատ զծուլ և զցամաք վասն նոցա։ Ի վաստակս մի վհատիր, յամենեցուն մի լքանիր, 'ի բանից մի ակնածեր. այլ թէ և սովամահ և ծարաւահատ ևս հասանել լինել վասն նոցա փրկութեան, ընկալ խրդութեամբ։ Ոչ ի ոչ որկորատութեամբ ոք եղև մարգարէ, և ոչ արբեցութեամբ առաքեալ. այլ ներեալք և

չարչարեալք յամենայն ցանկութեանց. որ և քեզ պարտ է լինել նմանող քաջացն և առաքինեաց, և ոչ գայլացելոցն հովուաց՝ որք անուամբ միայն են հովիւք, և 'ի հաւատն գազանաբար յարձակին և գայլաբար կոտորեն և ցրուեն և կորուսանեն. և ոչ զհոգս ինչ հոգուոցն հոգան, և ոչ ընդ մեղայն նոցա վարանին։ Այլ խնդիրք են գողոցն, և ոչ համարք պոռնկացելոցն. ոչ քննումն բամբասողացն, և ոչ փոյթ է զարբեցելոցն ինչ. ոչ դիւթական հմայիցն են պատժողք, և ոչ յուսթոցն պահանջողք. ոչ դիւական թատերացն են անարգիչք, և ոչ հեթանոսական լալեացն են խափանիչք. ոչ զնախանձոտն յանդիմանեն, և ոչ զոխապահսն թշնամանեն. ոչ վասն չարեաց ինչ սաստեն, և ոչ վասն հեղգութեց ինչ պատուհասեն. ոչ յողորմութիւն զոք յորդորեն, և ոչ յաղօթս փութացուցանեն, և ոչ ամենևին զոք վասն ուղղութեան տրտմեցուցանեն։ Այլ զամենայն փոյթ 'ի մարմնաւորն ևեթ ցուցանեն. իբրև պատՀառանս ինչ կենաց իմն աշխարհիս ստանան զքահանայութիւնն, յաղագս մարմնոյ հեշտութեան, վասն ուտելոյ և ըմպելոյ, և գիւտոյ ընչից, յաղագս պատուի և գահերիցութեան և սատանայական մնափառութեան։ Այսոքոյ ոչ որբոյն ողորմին, և ոչ յայրին ինայեն. այլ պատժովք մուտս ինդրեն, և պատուհասիւք ինչս ժողովեն յանուն եկեղեցւոյն. բռնութեամբ վարին, և իշխանութեամբ հրամայեն, և քահանայական ինչ ոչ երևին. և ոչ զՊետրոսին երբէք ածեն զմտաւ՝ թէ "Արածեցէք որ 'ի ձեզ հօտ է յԱստուծոյ, վերակացու լինել մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի իբրև տիրելով 'ի վերայ հօտին, այլ լինել օրինակ գործոց բարութեանց,,։ Զի 'ի ժողովրդոցն, ասէ, թէպէտ և քիւր անգամ անկանիցին, կարեն հասանել ներելոյ և թողութեան. իսկ վարդապետ ոք եթէ զնոյն ախտ ախտանայցէ 'ի ժողովրդեանն, յամենայն պատասխանւոյ զրկեալ գտանիցի, և զվերջին պատժոցն տացէ զտուկասիս. զի կարի դժուար է ապրել առաքինորդացն մեղուցելոց։

Այսոքոյ և դու հովիւդ հաւատարիմ, լուր առաքելական հրամանին, և մի նմանիր պղծոցն և կորուսելոցն զորս հուրն այրելոց է. որք զանուն միայն հո-

վուացն ունին, և զյափշտակութիւն գայլոցն յափշտակեն. ընդ որս համարս տալոց են չարաչարս, զի ուսուցեն և իրատեսցեն ըստ հաճոյիցն ՝ այ։ Եւ ՝ի կասն անձանց իւրեանց շրջելով անկան կերակուր չարաժանի գազանին՝ որ կարեվէր վիրաւորէ, և չարաչար սպանանէ։ Ցիշեա և զՀեղի. թէպէտ և վարս անարատս ունէր, այլ քանզի զօրէնսն ՝այ տեսանէր և անտես առնէր, անհնարին վրիժուց պատժեցաւ։ Եւ այլ դու միշտ իրատեա, և վաստակեա անդադար վասն հօտիդ փրկութեան, զի և հովիւդ ապրեսցիս ՝ի պատժոց պատուհասից։ Ի միտ առ՝ զի և զգազանակերն և զգողհանն տուժին ՝ի հովուացն, և զդրոշմն և զմոլթ մեռելոցն ՀՀդիւ պահանջեն, և զհամար շաղղակեր անդամնցն ինդրեն. և որ ոչ զամենայն հաւատեաւ ՝ի մէջ բերիցէ և վկայիւք հաւատարմացուցէ, սաստիկ պատժոց լինի պատժապարտ, և լի բազում ամօթով մերժի ՝ի հօտէն։ Եւ արդ եթէ վասն անբան ոչխարացն այն պիսի ինդիրք և պատիժք պահանջին, որչափ ևս առաւել վասն հոգւոցն կենդանեաց, ընդ որոց և Քրիստոս մեռաւ, ահեղ համարս ՝ի քահանայիցն պահանջիցէ։ Որերևս սակաւիկ ինչ ծուլացեն վասն բանաւոր հօտին տեսչութեան. վասն զի ՀՀդիւ են համարք և անհնարին են տանջանք, որք առաջնորդութիւն ստանան և ոչ առաջնորդեն։

Տես թէ քանի մահուց պարտապան է զօրավարն ՝ի թագաւորէն՝ թէ զզօրսն առեալ յապրեցուցանել, և ՝ի ծուլութենէ ՝ի սուր մատնեսցէ. և կամ դէտ՝ որ ոչ զգուշացոյց, ոչ ապաքէն ամենայն արիւն սպանելոցն ՝ի ձեռաց դիտին պահանջեսցի։ Եւ որք առնուն աւանդ ՝ի թագաւորաց, և սակաւ ինչ անտի կորիցէ, սաստիկ պատժոք պատուհասին։ Տես և զծառայիցն զպատիժս որք յարքունեացն վնասեսցեն. հայեա և ընդ պահապանս հօտից, զի փոսս փորեն և կարս ձգեն և զամբարս դնեն, և շունք շուրջ զհօտիւն շրջին՝ զի մի գազանաբեկ լինիցին. և եթէ սակաւ ինչ ծուլացին և քնոյ զանձինս տայցեն, գայլք և գողք դարանակալք մտեալ ՝ի հօտիցն յափշտակեն և ցրուեն և վիրաւորեն։ Եւ արդ տես որչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. և եթէ անբան ոչխարացն նոյնքան պիտոյ է զգուշութիւն

յերևելի գայլոցն յափշտակութենէ, քանի՞ և զչուշալի պահպանութիւն ոգւոց մարդկան պիտոյ իցէ յաներևոյթ նետից սատանայի, որ գումար հասեալ կայ 'ի վերայ, և պատեալ պաշարէ զամենեսեան վարմիւք և ցանցիւք, և յածի շրջի զամենեքումբք, և նետս իբրև յամպս տեղէ 'ի խորհուրդս մարդկան, յոմանս ագահութիւն, յոմանս այլազգկութիւն, յոմանս պոռնկութեամբ, յոմանս հնութեամբ, յոմանս գողութեամբ, յոմանս ատելութեամբ, յոմանս սպանութեամբ, յոմանս նախանձու, յոմանս ոխակալութեամբ, յոմանս բամբասանաց, յոմանս բարկութեամբ, յոմանս նենգութիւն, յոմանս մեղմախանաց, յոմանս չարակնութեան, յոմանս չարաբարութեան, յոմանս դեղատուութեան, յոմանս վաճառաց զրկութեան, յոմանս վաշխաժողովութեան, յոմանս չափոց և կշռոց նենգութեան, յոմանս դիւթոց և յուռթաց և դիւթութեան, յոմանս թատերասիրութեան, յոմանս պճնողութեան, յոմանս սատանայական սգոյ տրտմութեան, յոմանս անյուսութեան, յոմանս անհնազանդութէ, յոմանս անժուժկալութեան, յոմանս անհաւատութեան, յոմանս մնափառութեան, յոմանս ձանձրութեան, յոմանս մոռացութեան, յոմանս ստութեան, յոմանս հայհոյութէ, յոմանս քինահանութէ, յոմանս երդմնակերութեան, յոմանս ստախօսութեան, յոմանս որկորատութեան և արբեցութեան և ամենայն զօշաքաղութեան և ամբարտաւանութէ և ամբարհաւաճութեան և պղծութեան, և այլ ևս ախտից բազմութեան՝ զոր եկեալ հոսէ սատանայ 'ի սիրտս ամենեցուն, և կարեվէր վիրաւորէ, և չարամահ սպանանէ։

Այլ քո զայս ամենայն տեսեալ անտեմս առնես և անփոյթ, և հեղգաս և ոչ լաս և ոչ ողբաս զայնչափ վիրաց բազմութիւն։ Պարսեա և սոսկա յահեղ բեմբէն երկիւղէ, թէ որովք աչօք և երեսօք զտէրն փառաց տեսանիցես. և քանի՞ գլուխք պատժոց և պատուհասից են բաւական վասն քոյոյ ծուլութեան։ Այլ երկիր 'ի հովուապետէն, զարթիր 'ի ծուլութենէդ, և առ զնախանձն Փենեհէզի. խոցեա զսատանայ և զդևս, վիրաւորեա զնոսա սուրբ հոգւովն. հալածեա զգնակիչս բանսարկուին. ցրեա զզօրս սատանայի. խորտակեա զաղե-

ղունս չարին, և դարձո զնեստս 'ի նոսա. բարբառեա զբանս վարդապետութեան, և արա հօտի քումդ դեղ ողորմութեան՝ ծերոց, արանց և կանանց, ծառայից և տերանց, հիւանդաց ախտացելոց. և մի ինչ ամենևին դանդաղեր և դատարկանար, այլ անդադար վարդապետեա։ Ոչ էտ ես, աղաղակեա. տեսուչ ես, յանձանձեա. առաջնորդ ես, յեկեղեցի հետևեա. հովիւ ես, յուղիղ հաւատս արածեա. բժիշկ ես, զվէրս մեղացն բժշկեա. նաւապետ ես, զնաւդ զերծո յալէկոծութենէդ։ Լ՝ անդ ստացար, և համար ունիս տալ՝ թէ և սուղ ինչ հեղգայցես։ Լ՝այլ երկիր 'ի հովուապետէն, և խնդրեա զբանաւոր հօտս քո զկորուսեալն, և զամենեսեան ժողովեա. պարապեա խրատու վարդապետութեանէ. զթշնամին ընդ ՝այ հաշտեցո. զվարաւմտնեալն 'ի սատանայէ միաւորեա. զհեռացեալն յեկեղեցւոյ մերձեցո. զվերհերոտն յաղօթից 'ի փոյթ յորդորեա. զկորուսեալն 'ի ճշմարտութենէ խնդրեա. զմոլորեալն յարդարութիւն դարձո. զհիւանդացեալն յախտից թշնամոյ բժշկեա. զվիրաւորեալն 'ի սատանայէ առողջացո. զգլորեալն անօրէնութեամբ՝ կանգնեա. զխաւարեալն անդիտութեամբ՝ լուսաւորեա. զօտարացեալն 'ի պատուիրանացն ՝այ ընտանեցո. զաղտեղեալն կռապաշտութեամբ՝ լուսաւորեա. զմեղուցեալն ապաշխարութիւն արդարացո. զքաղցեալն 'ի մարմնոյն Ք՝րիստոսի կերակրեա. զծարաւեալն արեամբն Ք՝րիստոսի արբո։ Լ՝զամենեսեան արժանաւորս արա 'ի վերին քաղաքն մտանել այսպիսի գործովք առաքինութեան. 'ի վարս պարկեշտս յորդորեա. 'ի հաւատս ուղղափառս զօրացո. ըզխոնարհութիւն և զհեզութիւն հրամայեա. զպատուիրանապահութիւն և զօրէնս տեառն կատարել ուսո, զսրբութիւն սրտի և զճշմարտութիւն լեզուի, 'ի ցածութիւն աչաց և 'ի պարկեշտութիւն մարմնոյ. 'ի ժուժկալութիւն և 'ի համբերութիւն յորդորեա. 'ի ինդութիւն պահոց և 'ի յօժարութիւն աղօթից և յառաւելութիւն ողորմութեան ամենեսեան պատուիրեա։ Զ՝ի այսպէս ամենայնիւ կատարեալք և սրբեալք և լուսաւորեալք կայէք առաջի Ք՝րիստոսի ընդունել զանթառամ փառաց պսակն։ Զ՝ոսմ և զմեզ արժանիս արասցէ վայելելոյ, և փառս տալ հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ՑԱՂԱԳՍ ԲԱՄԲԱՍՈՂԱՑ ԵՒ ՁԴԱՏԵԼՈՑ ՁՎԱՐԴԱՊԵՏՍՆ

Մթերք հոգոց և աղջամուղջք տրտմութեան դիզեալ 'ի վերայ իմ կուտի հանապազ. զի ախտք չար և ահեղ անօրէնութիւնք մնեալ յեկեղեցի իբրև զհուր 'ի վեր բորբոքեալ, զամենեսեան առ հասարակ այրէ, և 'ի միտս մեր փոքր կարծեցուցանէ սատանայ. որպէս Մարիամայ ետ բամբասել զՄովսէս ծառայ ՅՍ, և 'ի միտս նորա փոքր կարծեցուցանէր սատանայ, զի մի 'ի զղջումն եկեսցէ. և վասն այսորիկ ընկալաւ զպատիժս պատուհասիցն։ Այլ որպէս Համայն ետ բամբասել զմերկութիւն Լոյի հօր իւրոյ, և 'ի միտս նորա փոքր կարծեցուցանէր, մինչև ընկալաւ զանէծն ծառայութեան, սոյն հուր և այժմ մնեալ յեկեղեցի՝ առ հասարակ զամենեսեան այրէ և կորուսանէ, սոյնպէս և որոգայթիւք. զի մինն ինչ, և մինն բամբասէ, և երկոքեանն հաւասար անօրինին. մինն գողանայ, և միւսն բամբասէ, և միապէս պատուհասին. մինն արբենայ, և միւսն զարբեցողն բամբասէ, և համանման դատապարտին։ Այս ամենայն իսկ զամենայն բնութիւն մեղացն մինն գործէ, և միւսն բամբասէ, և միահաւասար դատին և տանջին. քանզի ոչ եթէ զգողանալն և զինալն առաւել ևս անօրէնութիւն ցուցանէ Պաւղոս քան զբամբասելն և զարբենալն, այլ միապէս չարութիւն է. միահաւասար զերկոցունցն ելանելն յարքայութենէն միով բանիւ ընդհանակեալ ասէ՝ եթէ "Ոչ գողք և ոչ պոռնիկք և ոչ արբեցողք և ոչ բամբասողք զարքայութիւնն ՅՍ ոչ ժառանգեն"։

Այս արդ ահա ելից սատանայ զբերանս ամենեցուն անօրէն ախտիւն բամբասանաց, և հանապազ անդադար բորբոքին լեզուք ամենեցունց յեղբօրն բամբասանս և 'ի

Digitized by Google

հայհոյութիւնս։ Ընդերկիւղ և անկասկածելի ինն տեսանեմ զանձինս ողբ զանօրէնութիւնս զայս գործեն, և ոչ փութան լուանալ և արբել ապաշխարութեամբ իբրև զգողութեան և զպոռնկութեան զչարութիւնս։ Օ՛ի եթէ գարշիս 'ի չնութենէ, գարշեա և 'ի բամբասանաց. զի եթէ չար է չնութիւն, հաւասար առնէ և զբամբասողութիւն։ Այլ առաքեալն օրէնսուսոյց առաւել ևս ցուցանէ զբամբասանացն անօրէնութիւնն ասելովն՝ եթէ "Ընդ մինայն որ բամբասէ զեղբայր իւր, զօրէնն բամբասէ և զօրէնս դատի"։ Այս որ քան զայն անօրէնութիւնք իցեն, որ օրինայն ՚ՅՅ ոչ առնելի է, այլ տէր և դատիչ լինի։ Զի՞ է, ասէ, օրէնսդիր և դատաւոր, որ փրկէ և կեցուցանէ և կորուսանէ. դու զի դատիս զայլոյ ծառայ։ Այս արդ տես թէ քանի մահաց պարտապան է՝ որ զպատիւ և զիշխանութիւն թագաւորին յափշտակէ, և զդատաւորի դատաստան դատիցի ինքն. զի նա ասէ. "Ամ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ տէր"։ "Դու զի դատիս զեղբայր քո, կամ զի անգոնանես զեղբայր քո"։

Այս արդ դու դատեալդ և դատապարտեալդ մեղք, ոչ սակաս և դողաս դատել զայլոյ դատաստան. որ ոչ եթէ զմարդ ոք արհամարհեցեր և թշնամանեցեր, այլ զՅՅ. և զպատիւ և զիշխանութիւնորա յափշտակեալ դատիս զդատաստան նորա, չյիշելով զբանն սուրբ աւետարանին որ ասէ՝ թէ "Զի դատիք, զի մի դատիջիք. զի որով դատաստանաւ դատիք, նովին դատելոց էք" ասէ։ Որքաց է դատել, և անարատից է յանդիմանել. և զայն առանձինն և աղաչանօք, և ոչ հրապարակաւ զմեղս ուրուք յանդիմանել, և կամ գաղտ 'ի նմանէն 'ի լսելիս ուրուք բամբասել։ Այս են մեղք ահեղք և անօրէնութիւք. զի ով ոք 'ի խեղութեան ինչ իցէ և զայլս խեղութեամբ թշնամանէ, ոչ ապաքէն յառաջ քան զնա զինքն թշնամանիցէ։ Ընդ և զի ինքն իսկ թէ և բիւր չարիք ստացեալ ունի, ծածկեալ խաղաղէ. և զեղբայրն թէ և սուղ ինչ յանցանիցէ, սահի, շրջի, և յամենեցուն լսելիս արկանէ, և լինի դառն դահիճ և քննիչ չարաչար եղբօրն յանցանացն։ Յիւրում ականն գերան կայ և ծածկէ, և զշիւղ ական եղբօրն որոնէ. զոր և Քրիստոս ոչ միայն մեղաւոր ասէ, այլ և կեղծաւոր ևս

կոչէ. «Լեղծաւոր, ասէ, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա մատիցես հանել զշիւղ յականէ եղբօր քո»։

Եւ արդ ով իցէ քան զնա անսամոթագոյն, որ զիւր մեղաց սիսալանս ինչ գիտիցէ, և զայն անփոյթ արարեալ հետաքրքիր եղբօրն յանցանացն լինիցի, բամբասել 'ի բազմաց լսելիս։ Եւ զայն ոչ իմանայաւ՝ թէ որով ինչ յանցանօք զեղբայրն բամբասիցէ, նովին մեղաց տանջանօքն և ինքն պատուհասի։ Եւ հանապազ անդադար բողոքին լեզուք ամենեցուն յեղբօրն բամբասանս. զի զտանջանս ամենայն մեղացն զոր գործեացն՝ է պատրաստեալ զնոյն տանջանս և բամբասողացն հաւասար։ Եւ արդ ընդէր այդպիսի տանջանօք դատապարտիցիս, և կամ զինչ 'ի բամբասանացդ օգտեցար. զոր ցանկութիւն կամաց քոց կատարեցեր, և կամ զոր յաճախութիւն ընչից շահեցար. քաղցր ինչ միխիթարութիւն ստացար 'ի բամբասանացդ, եթէ մերկութեամբ ինչ ծածկոյթ։ Եւ այլ ինչ աւելի գտանես, բայց միայն զսակ զսատանայ տեսանես զփոխս բամբասողացն՝ որ հանապազ լցեալ յղացեալ կան չարեօք. իբրև զծննդական երկնեն արտաքս զբամբասանս հոսեալ. յուղղանն շրջին, և խօսին զեղբօրէն չարութիւն։ Կամ 'ի չար մտաց իւրոց իմանայ, կամ 'ի յայլմէ 'ի լսելիս յաւելու չարաչար սերմ և զազրացուցիչս, և ատելի ամենեցուն զեղբայրն ցուցանել, և զբազումն 'ի նա գայթակղեցուցանել. ընդ որոց գայթակղութեան ինքն դատապարտի։ Եւ չար կարծիս զեղբօրէն հնչեցուցանել 'ի լսելիս ամենեցուն. որում և ասէ իսկ՝ թէ վայ որ կարծեն, և եղուկ որ զկարծիսն տայցեն. տէր է հատուցանող և դատաւոր, բարեացն բարիս, և չարարարացն չարիս։ Դու զի՞ դատիս զեղբայր քո, և զի՞ անպոռնես և բամբասես. ահա դատաւորն առ դուրս կայ, և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց։

Եւ արդ որպիսի՞ տանջանօք դատապարտիցին՝ որ ոչ միայն զեղբարս, այլ և զվարդապետս և զքահանայս բամբասեացեն. քանզի անօրինեալ և լցեալ են սատիկ անառակութեամբ, և ամենայնիւ սատանայի կան 'ի հնազանդութիւն։ Քանզի հեղու զամբարշտեալ ըզթոյնս իւր 'ի վերայ, մինչև յահեղ անօրէնութիւնս

կործանեմ. որպէս և ժողովրդեանն յանապատին նախ զՄովսէս ետ թշնամանել, և ապա զնա՛ծ արհամարհել. նոյնպէս և հրէական ազգին՝ որ նախ զմարգարէսն կոտորեցին, և ապա զՔրիստոս սպանին. նոյնպէս և Յուդայի նախ զաղքատացն ետ գողանալ, և ապա զտէրն մատնել։ Ըստ նմին օրինակի և բամբասողաց նախ զընկերս ետ բամբասել, և ապա զվարդապետս և զքահանայս, որոց բամբասանքն յա՛ծ ելանեն. որպէս և ինքն Քրիստոս ասէ՝ թէ "Որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ"։ Եւ եթէ որ զքահանայս և զվարդապետս բամբասէ, զՔրիստոս թշնամանէ։

Հշխարհական ես, մի՛ զպատիւ քահանայութեանն բամբասեր և հայհոյեր։ Հայեա՛ ի Կորխ և ի Դաթան և ի Յաբիրոն՝ որք զպատիւ քահանայութեանն թշնամանեցին. տես զի բացաւ երկիր, և եկուլ զնոսա, և հուր ի բանակս նոցա վառեցաւ։ Զգոյշ լեր, զի մի՛ և դու զփորձ նոցա առնուցուս՝ որ զպատիւ քահանայութեն արհամարհես։ Քեզ ոչ եթէ զառաջնորդս բամբասել հրամայեցաւ, այլ ունկնդիր լինել և պատուել։ "Ունկնդիր լերուք, ասէ, առաջնորդաց ձերոց, և հլապատակ կացէք նոցա. զի նոքա հոգան վասն ոգւոց ձերոց, և համարս տալոց են ընդ ձեր"։ Եւ դու հայհոյութեամբ և բամբասանօք պատերազմիս ընդ նմա. տես զի ոչ ընդ նմա, այլ ընդ այ մարտնչիս՝ որ նմա զպատիւ քահանայութեանն շնորհեաց։ Զի ամենայն որ պատուէ զքահանայն, զնա՛ծ փառաւորէ և պատուէ. և որ արհամարհէ, զնա՛ծ թշնամանէ։ Զքահանայս քո մեծարեսջիր, և զիշխանս ժողովրդեան քո մի՛ արհամարհիցես։ Զի թէպէտ և յանպիտանեաց ոք իցէ քահանայն, այլ նա՛ծ տեսանէ՝ զի վասն նորա և զանարգսն մեծարես. զի սրբոյն վասն սրբութեանն ակն ածես։ Դակ վասն այ պատիւ այն է՝ որ զանարգն մեծարիցես. այլ չէ անարգ, զի հրեշտակ տեսանն ամենակալի է քահանայն։ Եւ եթէ արհամարհես, յա՛ծ մեղանչես՝ որ ետ զձեռնադրութիւն նորա, և նովաւ ինքն կատարէ զխորհուրդն և զմկրտութիւնն. թէպէտ և նոքա չիցեն արժանի ահեղ խորհրդոյն մերձաւորութեան, այլ վասն փրկութեան ժողովրդեանն չարգելու զշնորհս հոգւոյն

սրբոյ։ Զի եթէ իշումն և Դաղաստանն գիւթումն խօսեցաւ վասն փրկութեան ժողովրդեանն, որչափ ևս առաւել անարժան քահանայիւն ինքն գործէ զամենայն վասն մերոյ փրկութեան։ Եւ դու եթէ սրբութեամբ հաղորդիս 'ի սուրբ խորհրդոյն, քահանային պղծութիւնն զքեզ ոչ վնասէ. նոյնպէս և որ պղծութիւն մերձենայցէ, քահանայի սրբութիւնն ոչ օգնէ։ Այլ եթէ համարիցիս՝ եթէ 'ի ձեռն արատաւոր ինչ քահանայի շնորհք հոգւոյն ոչ ինքանեն 'ի պատարագն և ոչ ՀԱԾ ինչ նուվաւ գործէ, 'ի միտ առ՝ զի բառնաս զկարգս եկեղեցւոյ և զանուն քոյոյ քրիստոնէութեանդ։ Եւ եթէ այդպէս իցէ, և պատարագն չէ պատարագ ըստ քումդ ասելոյդ, ապա և ոչ ձեռնադրութիւնն ձեռնադրութիւն, և ոչ կարգ քահանայութեան հաստատուն. ահա յոյսդ քո քրիստոնէութեանդ մնոտի է, զի ամենեքին ընդ մեզոք եմք գրաւեալք։

Եւ արդ մի ինչ այսպիսի ածեր զմտաւ, և մի քններ զվարս առաջնորդին, և մի զքահանայս և զվարդապետս քո բամբասեր։ Ղառեր հրաման քննել զմեզս ուրուք, թող թէ զքահանային. ՀԱՅ է քննել և դատել, դու զի՞ քննես և դատես և հայհոյես։ Զի եթէ զընկեր չառեր հրաման դատել և քննել և բամբասել, որչափ ևս առաւել զքահանայս և զվարդապետս։ Զքո վարդ քննեսցես և դատեսցես, և մի զառաջնորդաց. բայց եթէ 'ի հաւատս ինչ անպիտան իցէ, և թիւրս ինչ ուսուցանիցէ, փախիր 'ի նմանէ, մի մերձենար և մի Հաշակեր և մի հաղորդիր ընդ նմա և մի հուպ լինիր. զի որ 'ի նմա հաւատս թերին է, և թիւրս ինչ ուսուցանիցէ, եթէ Պաւղոս իսկ իցէ՝ կամ հրեշտակ, մի հաղորդիցիս. զի չէ առանց պատժոց անխտիր հաղորդիլն։ Զի վասն հաւատոց քո է քննել, և վասն վարուց ՀԱՅ է դատել։ Եւ եթէ 'ի հաւատս առողջ իցէ քահանայն, հնազանդ լեր նմա. վասն վարուց մի ինչ հայհոյեր։

Հաշակերտ ես, մի դատիս զվարդապետն. Քրիստոս է որ քննէ և դատի։ Զի եթէ ընդ դատարկ բանի հանարս տալոց եմք, և կամ զեղբայրն մորոս և անարգ ասիցես՝ 'ի հուր առաքիս, իսկ որչափ ևս առաւել պատժոց արժանի համարիցիք, որ զվարդապետն և զքահանայն ՀԱՅ բամբասիցէք հայհոյութեամբ։ Այլ եթէ նա ա-

զատ ինչ իցէ 'ի պատժոց՝ որ զիսեղձ ինչ մեղայ ունիցի, և 'ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյն յանդգնիցի, այլ ահեղ հրով և անմերձելի տանջանօք է դատելոյ։ Օ՛ի չեն ինչ, ասէ, այնչափ մեղք չարաչարք՝ որ կարող են զբոլոր զարկութիւնն ՚ի զարթուցանել քան զայն՝ որ անարժանութեամբ ոք 'ի քահանայութիւն մերձենայցէ. զի սպասաւոր անարատին պարտ է անարատ լինել ոգւով և մարմնով, զի 'ի ձեռն անարատին արատաւորքս ապրեսցուք։ Իսկ արհամարհողքն 'ի քահանայից՝ որ զիսեղձ մնացն ինչ զիտիցեն, և արհամարհանօք 'ի սուրբ սեղանն մերձենայցեն առաջի ահեղ խորհրդոյն, մեծամեծ և չարապատիժս տանջանաց նոցա պատրաստեալ է՝ առնուլ զվրէժս ահագին յարհամարհողաց ՚ի։ Յիշեա զորդիսն Ի՞հարանի՝ որք արհամարհանօք 'ի սպասաւորութիւն մնանէին, և հուր բարկութեան եկեր զնոսա. յիշեա զորդիսն Հ՞ելեայ՝ որք անարժանութիւ սրբութեանցն սպասաւորէին, և սուր եկեր զնոսա. վասն նոցուն կորեաւ և Հ՞ելի, և բազումք յԻսրայէլէ սատակեցան. զի եթէ 'ի հնումն այսպէս էր, որչափ ևս առաւել ահեղ վրէժինդրութիւն 'ի նորումս պահանջիցի, եթէ ոք անօրէնութեամբ 'ի սպասաւորութիւն ահագին խորհրդոյն մերձենայցէ։

Ի՞նդ քահանայք եթէ սուղ ինչ յանցանիցեն, և խղճիւ 'ի սուրբ խորհուրդն մերձենան, այսպիսի են տանջանք. բայց դու չառեր հրամանն բամբասել և արհամարհել. զի ոչ զմարդ, այլ զՍ՞ծ հայհոյես և արհամարհես։ Ի՞նդ արհամարհեցին զԻ՞ովսէս ժողովուրդն, և Ս՞ծ իւր համարեցաւ. արհամարհեցին զՍ՞ամուէլ որդիքն Իսրայէլի, և Ս՞ծ իւր համարեցաւ. "Ոչ եթէ ըստ քեզ անարգեն, այլ զիս արհամարհեն,,. զի ամենայն որ բամբասէ և արհամարհէ զքահանայն, յՍ՞ծ մերձանէ։ Ի՞նչ ասեր՝ թէ ստոյգ են բամբասանքս, և ամենայն ոք գիտէ. զի եթէ ստոյգ է՝ ոչ է մեր այն, այլ դատաւորին է քննել։ Տես զի զմեղսապարտն ոչ ամենեքեան քննեն և դատին, այլ դատաւորքն միայն. բայց դու մի դատիր զուրուք դատաւորան, և մի խօսիր զուրուքէ, և մի լսեր զուրուքէ. և եթէ լուար բան զեղբօրէն՝ մեռցի 'ի սրտի քում՝ զի ոչ եթէ ծակէ և եղանէ։

Ա՛ւ արդ մի զմիմեանս բամբասեացուք. զի ըստ խ-

բաքանչիւր գործոց կալոց եմք առաջի նոյ, և ըստ իւրաքանչիւր գործոց համարս տալոց եմք պատուհասից, և իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց եմք, և ընկերին ոչ ոք կարէ օգնել։ Օ յ 'ի բաղում աղէտից գերհեռին, և յահէ հրացան հոսանացն գեռոյն յորդութեանց համարի՝ թէ միայն իսկ 'ի տանջանս վասն չարակեցիծ ցաւոցն վարանաց. զի բորբոքումն գազանացեալ հրոյն իբրև ընչաւոր ինն շանթիւք յարձակի առնուլ զվրէժս յարհամարհողացն նոյ։

Եւ արդ որոց այսպիսի ահեղ արհաւիրք և դառն դատաստանք մնան, պարտ է զիւրաքանչիւր հոգս հոգալ, և զիւրաքանչիւր վաստակս վաստակել, և զիւր մեղսն կոծել, և զիւր յանցանսն քննել, զիւր չարիսն որոնել, զիւր աղէտսն միայն ածել զմտաւ, զիւրն սգալ և հառաչել, զիւրն լալ և ողբալ, և հանապազ զիւր անօրէնութիւնսն բամբասել, և վասն իւր մեղացն չարախօսել, և ոչ զյանցանս ընկերին որոնել, և մանաւանդ զքահանայիցն և զվարդապետացն։ Օ յ քահանայն վասն քո դեղերեալ կայ յեկեղեցւոջն. պաշտէ և սպասաւորէ վասն քո. ընթեռնու և վարդապետէ վասն քո. ձեռս 'ի վեր ամբառնայ վասն քո. մատակարարէ խորհրդոյն վասն քո. միշտ պատարագ մատուցանէ հանապազ վասն քո. զուխտ քո ընծայէ նոյ. զտօն քո կատարէ հանապազ. զմոլորեալս քո ուսուցանէ և դարձուցանէ. զերախայս քո մկրտէ. մեղուցելոցն վարդապետէ. վասն ապաշխարողացն խնդրէ թողութիւն. վասն ածպաշտութեան զգուշացուցանէ. զհանգուցեալս քո օրհնութիւն յղարկէ. զհարսանիս քո և որդւոց քոց ուրախութեամբ պսակաց յորդորէ և շքեղացուցանէ, և զթշնամին յամենի առնէ. վասն կենաց և փրկութեան քո աղաչէ. վասն պատուհասից քոց անկանի առաջի նոյ յարաժամ. պաղատի վասն քոյոյ փրկութեան միշտ զտէրն քո ընդ քեզ հաշտեցուցանել, ողորմութիւն և թողութիւն մեղայ քոց խնդրէ անդադար. և վասն հոգւոյ քոյ յամենայն ժամ հոգայ, և մարմնոյ քում սպասաւորէ հանապազ, և առաւել քան զարծաթագին կայ քեզ 'ի հնազանդութեան։

Եւ արդ այսպիսի ծառայութիւն և աւելի քան զսոյն քեզ քահանայն հարկանէ, և ընդ այսր ամենայնի քա-

հանային հայհոյութիւնս և բամբասանս լսէ. և որպիսի հուրք և տանջանք ահեղք և անսերելիք քեզ սպասեալ մնան. ընդ որոյ երախտեացն պարտ էր քեզ ծառայել քահանային, աղաչել և մնղթել, անձամբք և որդւովք սպասաւորել, և իբրև յոյժ երկնչել, և իբրև 'ի հօրէ ակնածել, և իբրև յերախտաւորէ պատկառել, իբրև զանձն և զհոգի քո սիրել, զարտմութիւն նորա սփոփել, և զվաստակ նորա երանել, 'ի վարդապետութիւն զօրացուցանել, զտկարութիւն ինչ միխիթարել, կերակրել և յաղեցուցանել, և զամենայն մարմնաւորս նորա հոգալ, զնա միայն հոգևորացն պարապեցուցանել։ Այս և բազում ևս այսպիսի երախտիս պարտ էր հաստուցանել քեզ ընդ քահանային վաստակոցն, և ոչ բամբասանս և հայհոյութիւնս և արհամարհանս անակնածելիս։

Եւ արդ զայս ամենայն լսելով շինչուսցուք զբորբոքեալ հնոց հայհոյութեան, դադարեսցուք զհուրն արհամարհանաց։ Անձեցէք զլեզուս 'ի չարախօսութենէ. մաքրեցէք և զաչս 'ի յարատ հայեցուածոց. ուղղեցէք զսիրտս 'ի չար խորհրդոց. ծառայեցէք տեառն երկիւղիւ. պատուեցէք զվարդապետս. հնազանդեցարուք քահանայից. սպասաւորեցէք հիւանդաց. զգեցուցէք զմերկս. լցուցէք զքաղցեալս. սփոփեցէք զնեղեալս. օգնեցէք տնանկին, և անդադար վաստակեցէք ազօթիւք, պահօք և ողորմութեամբ։ Այս է ձեզ ճանապարհ փրկութեան՝ որ հանէ 'ի վերին քաղաքն փափագելի յանանց վայելչութիւնս. յորս և մեզ եղեցի վայելել, և փառս տալ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

ԺԱ.

ՎԱՄՆ ՍԻՐՈՑ ԵՒ ՄԱԽԱՆԱՑ ԵՒ ՆԱԽԱՆՁՈՒ

Ոչ ինչ պիտոյ է որ յաղագս սիրոյ Նորագոյնս ինչ խնդիրք. զի ունիմք զնոցն ինքն Քրիստոս սիրոյ մեզ վարդապետ, որ ասաց՝ եթէ սիրեսջիք զմիմեանս. և եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք։ Զի գլուխ պատուիրանին սէր է. և որ կամի մերձենալ յաճապաշտութիւն, յառաջ քան զամենայն պատուիրան զսէրն պարտ է ստանալ. "Յայսմ ծանիցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զիմմեանս, որպէս ես զձեզ սիրեցի.,։ Զի ինքն իսկ սէր է, և Յովհաննէս զաճ սէր կոչէ. և որ կայ 'ի սէր Նորա, նա յաճ բնակէ, և աճ 'ի նմա. զի զհրամանս սիրոյ Նորա կատարեաց։ Զի սէր և 'ի հնումն ևս քարոզէր. այլ 'ի Նորումն Քրիստոս և զսիրելիս ևս հրամայէ սիրել, և զթշնամիս ևս սիրել, և զանձն ևս դնել 'ի վերայ սիրոյ սիրելոյն. և նա զանձն իւր եդ 'ի վերայ թշնամեաց և սիրելեաց, զի զպատուիրանն սիրոյ ոչ բանիւք միայն, այլ և արդեամբք 'ի մեզ հաստատեսցէ։ Զայն որոյ և մեք զաճ արտիւ սիրեսցուք, և զպատուիրանս Նորա երկիւղիւ պահեսցուք. զի այս է սիրելն զաճ՝ եթէ զպատուիրանս Նորա արտիւ պահեսցուք. և պատուիրանք Նորա այս են՝ զի ճշմարտիւ սիրեսցուք զմիմեանս. և ամենայն որ ճշմարտիւ սիրէ զեղբայր իւր, նա պահէ զպատուիրանս Նորա։

Եւ այս է ճշմարտիւ սիրելն՝ յորժամ ոչ վասն երախտեաց իրիք սիրեսցուք, և ոչ վասն ընդելական իրիք տաղտկութեան, և ոչ վասն քաղցրահայեաց երեսաց, և ոչ վասն ազգի ինչ գթոյ, և ոչ սէր փոխանակ սիրոյ սիրեսցուք։ Այլ միայն վասն պատուիրանին աՅ զամենեսեան սիրեսցես, և ընդ ամենեսեան զհաղորդութիւն ունիցիս։ Բայց զընչիցն կարողութիւնն կարօտելոյն

Digitized by Google

միայն բաշխեսցես, իբրև վշտացելոց իւրոց անդամոց ինամ ունել աղքատին. վասն զի ամենեքեան անդամք եմք միմեանց, և պարտիմք ընդ վշտացելոյն միոյն անդամոյն՝ այլոց անդամոցն վշտանալ ըստ ասելոյն Պաւղոսի, և տալ զանձն 'ի չարչարանս վասն սիրոյ ընկերին. որպէս և Քրիստոս ետ զանձն իւր 'ի չարչարանս վասն մեր։ Օ՛ի թէ նա որ ՚ուծ էր՝ այնչափ յանարգութիւն էջ վասն մեր և թշնամեաց և ատելեաց, մեք զի՞նչ պատասխանի ունիցիմք եթէ չսիրեսցուք զմիմեանս ըստ պատուիրանին զոր պատուիրեաց մեզ սիրել զթշնամիս, օրհնել զհալածիչս, բարի առնել այնոցիկ՝ որ ատենն զմեզ, և աղօթս առնել 'ի վերայ հալածողացն։ Օ՛ի սէր ընդ սիրոյ և մաքսաւորք հատուցանեն. բայց այն էր վասն պատուիրանին՝ որ զթշնամիսն սիրեցին. և ըստ զօրութեանն իւրում օգնեսցէ ամենեցուն. զկարօտեալսն միսիթարեսցէ. զտրտմեալսն սփոփիցէ. ընդ զրկելոյն խօսեսցի վրէժխնդրութիւն. անօգնականին օգնեսցէ. հիւանդացելոյն սպասաւորեսցէ. զմոլորեալն 'ի գիտութիւն ածիցէ, և զամենայն տկարութիւն եղբօրն լցուսցէ, և զինչս և զօրութիւն ամենեցուն 'ի կիր արկանիցէ, եթէ հաւատացելոցն է ամենայն ինչ հասարակաց։

Այլ արդ այսպէս սիրել պարտ է զեղբարս քրիստոնէին և աշակերտին Քրիստոսի. զի "Յայսմ ծանիցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս"։ Օ՛ի քան զոգի մարգարէութեան ընդունել՝ առաւել է սիրելն զեղբայրն, և քան զկոչումն առաքելութեան բարձրագոյն է, և քան զպատիւ մարտիրոսացն պատուական է, և 'ի վեր քան զամենայն առաքինութիւնս պատուեալ երևի, և ամենևին իսկ իբրև զթագաւոր 'ի մէջ ռամկաց պայծառացեալ 'ի վայելչանաց։ Օ՛ի թէպէտ և մեծ է վայելչութիւն կուսանաց, բայց առ սիրոյ պայծառութեանն նուազին ամենայն լուսաւորութիւնք առաքինութեան. որպէս 'ի Հառագայթից արեգականն ծածկին ամենայն պայծառութիւնք աստեղաց, ուր ողորմութիւնք լինին առանց սիրոյ։

Այլ արդ զիա՞րդ լինիցին ողորմութիւնք առանց սիրոյ։ Յորժամ սնափառութեամբ ոք ախտիւ 'ի ցոյց մարդկան առնիցէ. և կամ նովիմբ ախտիւ ոք 'ի գանա

և 'ի բանտս մաշեսցի, և 'ի հուր այրեսցի, ոչ ինչ օգտի. որպէս և Պաւղոս ասէ. "Եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրուիմն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ,, ։ Օ՛ի որ սրտիւ ոք սէր սրբութեամբ ոչ ունիցի, թէպէտ և զհոգիս մարգարէութեան ունիցի, և շնորհս առաքելութեան, և բազում խստամբերութեամբ զանձն չարչարիցէ, և բանիւ վարդապետութեամբ զբազումն լուսաւորեսցէ, և հաւատովք նշանս մեծամեծս առնիցէ, և զլերինս փոփոխիցէ, ամենևիմբ յամենայնի ոչ ինչ օգտի. զի սէր աղ համեմիչ է ամենայն առաքինութեան. և ուր սէր ոչ մնանէ՝ ապականի, և արտաքս ընկենուն յարքայութենէն ։ Որ սրտիւ ոք սէր ունիցի, նորա է ողորմութիւն և անընչեղութիւն. զի հարկ է սիրողին անընչանալ, զի սէր և ինչք 'ի միում անձին ոչ բնակին. զի սէր զինչս թօթափէ կարօտելոցն յօգնականութիւն։ Ի սիրոյ հալածական են ագահութիւնք և չարակնութիւնք և նենգութիւնք և թշնամութիւնք, նախանձ և բարկութիւն, ամբարշտութիւն և մնափառութիւն, և ամենայն մախանք ախտից հեռանայ 'ի սիրոյ պահողին ։ Այլ ընդ սիրոյն միաւորեալ և կապեալ է խոնարհութիւն, հեզութիւն, քաղցրութիւն, ողորմութիւն, անընչութիւն, անկեղծաւորութիւն, անանձնասիրութիւն, խաղաղութիւն, ճշմարտութիւն, սրբութիւն, անմեղութիւն, բարերարութիւն. և զամենայն առաքինութիւն և զկատարեալ պատուիրանապահութիւնս պահողն սիրոյ կատարէ ։

Իսկ որ ոչ սրտիւ 'ի սէր հաստատեալ է, ամենայն չար խորհուրդք սատանայի զեղուն զնովաւ, ամենայն բազմութիւք ախտից. զի սատանայական ախտից գլուխ անձնասիրութիւնն է, և 'ի նա շարին ամենայն ախտիցն բազմութիւնք. քանզի անձնասէրն ոչ երբեք կարէ ընկերասէր լինել։ Իսկ գլուխ պատուիրանին սէր է, և 'ի նա շարին ամենայն առաքինութիւնք. զի ընկերասիրին չէ հնար զկամս անձին իւրոյ խնդրել, այլ և զամենայն հաճոյս ընկերին ևեթ կատարել 'ի բարիս, այլ և զանձն ևս տայ 'ի ծառայութիւն վասն պատուիրանին նոյ. քանզի գիտէ՝ եթէ կատարումն պատուիրանին սէր է։ Այս ամենայն առաքինութիւնք որ առանց սիրոյ են,

փակեցան նոցա դրունք երկնային առաքաստին, և լըսեն զսոսկալի ձայնն զայն՝ եթէ ոչ գիտեմ ձեզ, և մանսին 'ի հուր գեհենին ընդ պոռնիկս և ընդ մարդասպանս. "Օ՛ի ամենայն, ասէ, որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է,,: Իսկ որ չարակնէն և նախանձին, նա յոր խաւար երթայցէ, և կամ ոչ ուր ասուզանիցի, կամ որպիսի տանջանօք խաշիցի և մաշիցի: Զանգի ըսկիզբն ախտից է նախանձ և չարակնութիւն. զի նովաւ անկաւ սատանայ 'ի փառացն, նովաւ եկ Ադամ 'ի դրախտէն. և անէծք և քրտունք, փուշ և տատասկ, մահ և մեղք 'ի վերայ ամենայն ծննդոց Ադամայ տիրեցին. նաև վիմբ Կայէն երերեալ տատանէր:

Եւ այժմ բազումք են՝ որ միշտ այրին նախանձու, յորժամ տեսանիցեն զեղբօրն զյաջողութիւնն՝ կամ ընչիւք, կամ արուեստիւ, կամ բանիւ վարդապետութեամբ յարգեալ 'ի բազմաց. և զայն տեսեալ նախանձորդացն հալին և մաշին, և յօդեն զնմանէ բանս բամբասանաց, և կան հակառակ կամացն ՀՍ՝ որ զյաջողութիւնն ջնորհեաց: Զանս այսորիկ թէպէտ բազում ՀԳունս տանիցի նախանձոտն, և բիւր առաքինութիւնս ստացեալ իցէ, և սրբութիւն կուսութիւն ունիցի, և պահօք և ամենայն վշտամբերութեամբ զինքն մաշիցէ հանապազ, և խորգով և մխիթարով և միտահեղ արտասուօք սպայցէ 'ի տուէ և 'ի գիշերի, և ողորմութեամբք անընչանայցէ, և նշանս մեծամեծս առնիցէ, և ցանկալն աղօթիւք և փառատրութեամբք վերին զուարթնոցն նմանիցէ, այլ և մարտիրոսացի ևս, և հրով այրեսցի, և 'ի սիրտն նախանձ և չարութիւն ունիցի, և քան զամենայն ապանողս և զինացողս պիղծ գըտանիցի, և քան զամենայն ամբարշտեալս թաթաւեալս մեղօք՝ անիրաւագոյնս: Եւ արդ որ չարիք ժանտագոյն իցեն քան զնախանձ և զչարակնութիւն. զի քան զՀուր այրիչ է և զուր սատակիչ, զունելիս իւր սատակէ: Եւ ոմ ոք կարէ համբերել այնմ բոցոյ, և կամ զոր ներեալ թողութիւն ունիցին այնպիսի սատանայական անձինք: Զանգի և ոչ մի ինչ չարութիւն նման է նախանձու և չարակնութեան, զի միշտ 'ի մեղս է. հանապազ 'ի տուէ և 'ի գիշերի ոչ դադարէ 'ի սպանութենէ, քանզի միշտ բարձեալ կրէ ընդ իւր զչարիս իւր:

Այս արդ ոմ կարասցէ փարատել զքաւարն զայն թանձրամած՝ որ տարածեալ մածեալ ունի զմիտս նախանձողացն. զի դառն մթերք նախանձու մարդասպանի ոչ երբեք հեռանայ 'ի սրտից նոցա։ Զի թէպէտ յեկեղեցի մնանիցեն այնպիսիքն, և յաղօթս և 'ի խնդրուածս մնչիցին, թէպէտ և արտասուիցեն և ողորմութիւնս առնիցեն, ոչ երբեք սրբին 'ի սպանութենէ։ Արդ զոր ներեալ թողութիւն ունիցին այնպիսիքն, և կամ որպիսի՞ ինչ ահեղ չարութեան կարիցեմք նմանեցուցանել զայնպիսի անմեկնելի անօրէնութիւնս. որ գազան չարաժանի, որ սողուն խածանող, որ իժ, կամ որ քարբ այնպիսի չարագազան թոյնս ունիցի։ Զէ և չէ իսկ հնար գտանել անսուրբ և անօրէն անձինս քան զչարականցն և զնախանձոտացն, զի* միշտ լուցեալ բորբոքի 'ի միտս իւր հոգածութեամբն։ Զողայ և դեղնի, զի տեսանիցէ զեղբարս իւր և զդրացիս, զի տուն և տղայս ունիցին. և զևք աւերեն զտունն՝ հատուցանեն, կամ վիմաք, կամ հրայրեցութեամբ, կամ 'ի ջուր ընկղմելով, կատարելով զկամս սատանայի. զայնպիսին պարտ է արտասուել և ողբալ հանապազ։ Զի լաւ էր այնպիսւոյն երկու աչօք կոյր լինել, քան բոլորովին անդամօք 'ի հուրն յաւիտենից առաքիլ։ Զի նա ևս քան զՀեթանոս պղծագոյն երևեսցի, և լծակից է սատանայի չար նախանձմամբն, և ընդ նմին ժառանգեսցէ զՀրեշտակս տարտարոսն և զանշէջ գեհենն։

Այս եթէ զամենայն բարեգործութիւնս և զզանազան առաքինութիւնս և զազգի ազգի վարս և զկրօնս յինքն բարձեալ ունի, ոչ օգուտ գտանէ յայսմ ամենայնէ, եթէ զքաւար ատելութեան 'ի սրտին պահիցէ, և զչարակնութիւն և զնախանձ։ Արդ փութա այսուհետև և 'ի քաց փախիր 'ի խաւարամած մեղացդ, և արտասուօք մեղայ տեառն այ ասա. զի կարասցես լսել 'ի Քրիստոսէ որ ասէ. "Այսպէս օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ արքայութիւնն"։ Զուտ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* Ցօրինակին 'ի բաց անկեալ է դին մինչև բանից, նա ||։ Թերին երկաքանչիւրոցն առաւ բաղդատութեամբ յերկուց օրինակաց։

ԺԲ

ՎԱՍՆ ԲԱՐԿԱՑՈՂԱՑ ԲԱՐՈՒՑ

Ամենայն բնութիւնք մեղաց և պիղծ ախտից անօրէնութիւնք ջանան 'ի մարդկանէ ծածկել զանօրէնութիւն իւրեանց։ Իսկ բարկութեան ախտին մոլութիւն անամօթ և վայրենաբարոյ, անակնածող և գազանամիտ և արագ շարժի յաղաղակէն իբրև զհաւահալածն մրրկագապահաց, որ մինչ չև օդոյն ինչ շարժեալ՝ և նա ըստ կամանի կարկաչել, ցուցանելով զիւրոյ բնութեանն ըստ թեթևութիւն։ Այնպէս է և բարկացող մարդն, զի դեռ չև իցէ 'ի սիրտն հասեալ ընդդիմութիւն ինչ բանից, նա ||[1] իբրև զհուր լուցեալ՝ աղաղակելով 'ի վեր բորբոքի, և անամօթ ամենեցուն ցուցանէ զիւրոյ բնութեանն թեթևութիւնն, և յանհամբոյր գազանութենէն ոչ կարէ ծածկել զիւրոյ մոլորութեան անօրէնութիւնն. այլ իբրև զհողմ 'ի հուր մտեալ վառէ 'ի ցասումն բարկութեան անօրէնութիւն 'ի զրկելիս իւր, և զամենեսեան առ հասարակ ցաւեցուցանէ աղաղակաւ իբրև 'ի հինէ արշաւանաց։

Վասնզի յորժամ բարկութեան դիւին ոք հնազանդեսցի, զամենայն զգայութիւնս նորա յիմարեցուցանէ, և վառէ որպէս կամի զլեզու նորա 'ի չարութիւն. զլեբանն ընդ թշնամանաւք, զմիտսն գազանացուցանէ 'ի ցասումն, զսիրտն թնդէ բարկութեամբ, զլեարդն պնդէ կռուողութեամբ, զարիւնն եռացուցանէ, զմարմինն դողացուցանէ, զաչսն այլագունէ, զգոյնն շրջէ, և ամենևիմբ զմարդն վայրենի ցուցանէ, և տայ աղաղակել բազում մորոսախօսութեամբ. գազանացեալ առաւել քան զվայրենի գազանացն գազանութիւն։ Այլ և ոչ 'ի գազանս ինչ խածանող, և ոչ 'ի սողունս թիւնաւոր կրի երբէք այնպիսի չարաբարութիւն, և ոչ իժից և

[1] Դարձեալ յաջորդէ երկաթագիր օրինակս։

քարքելից դատնութիւն հաւասարէ բարկացողացն ախ-
տից. ոչ դեղք մահաբերք և ոչ հարուածք կարձի նման
են հարուածոց բարկութեան. ոչ հատումն սրոյ և ոչ
այրեցուած հրոյ կսկծեցուցանեն առաւել քան զբար-
կացողացն. և [1] ոչ այնչափ չար են մոլունք դիւաց, որ-
չափ բարկացողք դիւաց յայնմանէ։ Բանզի դեռն բար-
կութեամբ վառի 'ի նախանձ միշտ, և պնդէ յանհաշտ
ախտակալութիւն, և հանապազ մածեալ պահէ 'ի վերայ
արտին զիսաւարն նախանձու։ Այլ զոր օրինակ թիւնա-
ւորքն զթոյնն ընդ իւրեանս կրեն հանապազ, այնպէս
և բարկացողքն զցասումն և զքէն նախանձու. և յամե-
նեսին յարձակին իբրև զշունս կատաղիս, և հանապազ
խայթեն իբրև զկարիճս, և խածանեն իբրև զօձս, և
յցեալ թիւնօքն բարկութեան ոչ կարեն վաղվաղակի
խոնարհել առ միմեանս։ Բանզի իժք և ծնունդք իժից
անուանին, անհաշտք 'ի միմեանց, և անհնազանդք։
Բազում քանս ձևացուցանեն՝ իւրաքանչիւր ոք զինքն
արդարացուցանելով, և յօրինեն տողս բազումն պատ-
մութեանց զանձինս իրաւացուցանելոյ. և զմնասս կու-
տել 'ի վերայ ընկերին ջանայ ամենեցունց առաջի, կար-
ծեցուցանելով զնա մեսակար։ Զի դեռ նորա տրտմու-
թեան պնդէ յանզղջութիւն, և խստացուցանէ զմիտն
յանապաշաւ անհաւանութիւն, և զսիրոն քարացու-
ցանէ չլինել ունկնդիր խրատու եղբօրն և գրոց վար-
դապետութեան. և յիմարեցուցեալ սատանայի զգայ-
ութիւնս նորա՝ ոչ տայ ճանաչել զյանցանս նորա. այլ
'ի միտս նորա կարծեցուցանէ զնա անմեղ յամենայնի,
և զընկերն մեսակար։ Այնպէս և 'ի միւսում ընկերին
զսա տայ նման համարել մեսակար, և զինքն արդար յա-
մենայնի։ Այլ դարձեալ զսա ստոյ խստացուցանէ՝ թէ
նման պարտ է քեզ խոնարհել, զի մեսակար է. և զնա
անդ պնդէ՝ թէ չէ արժան քեզ նախ նման հնազանդել,
զի անմեղ ես։ Այլ այսպէս զերկոսեան թշնամութեամբ
'ի միմեանց հեռացուցանէ սատանայ 'ի մնալ անզեղջ և
անապաշաւ։ Այլ բազում ծանրացուցանէ զսիրտ
եղբօրն, և ամօթ և անարգանս տայ համարել զիսո-

1 Երկուք յօրինակացն այսպէս ունին զայս տեղի. և ոչ այնչափ լարլարչին մոլիսն 'ի դիւացն, որպէս բարկացողն։ Քանզի։ Եւ երրորդ մի. ուայնչափ լարլարին մարմնոն 'ի դիւ-ն, որպէս բարկացողն 'ի դիւացն ցասմանէ։ Քանզի։

նարհեալն ընկերին. զի եթէ ես յառաջ խոնարհիմ, ա-
ւե՛ւ, զիս փեսասակար ոք կարծիցէ, և զնա անտեղ հասան-
ջիցին. վասն այսորիկ գաղանայեալ անհնազանդի։
Զանգի յորժամ միանգամ զիսոր հուրդս ընդունէ ա-
նօրէն ախտն բարկութեան, յաւիշտակէ զմիտսն 'ի նը-
մանէ, և գաղանացուցանէ, և ամենևին չտայ իմանալ
զերկիւղն ՅՍ, և ոչ զահ ահեղ դատաստանին. այլ հե-
ռացուցանէ յիրատանց, և զդատաստանն ոչ երբեք ածէ
զմտաւ, և ոչ յիշէ զօր մահուանն իւրոյ և զարհաւիրա
ոստիսի բեմբին. այլ այնդեալ մանքաւի՝ զկամս անձին իւ-
րոյ կատարեալ։ Եւ ոչ ամօթ եղբարցն, և ոչ խրատ
վարդապետաց, ոչ հրամանք պատուիրանաց, և ոչ եր-
կիւղն ՅՍ, ոչ փափագանք արքայութեանն, և ոչ ար-
հաւիրք տանջանացն գիտ ոչ պատկառեցուցանեն 'ի զեղջ
և յապաշաւ։ Այլ և ժտի ևս յեկեղեցին մտանել, և
աղօթս առ ՅԱ կատարել՝ որ ոչ ընդունի, և առ ՅԱ ոչ
ելանեն։ Զեզ ինքն տերն ասէ. "Եթէ հանեալ ի-
ցես զպատարագն քո 'ի վերայ սեղանոյն, և անդ յիշես
ցես եթէ եղբայր քո ունիցի խնդիր զքէն, թող զպատա-
րագն 'ի վերայ սեղանոյն. երթ նախ հաշտեաց ընդ եղ-
բօր քում, և ապա եկեալ մատուցանիջիր զպատարագն
քո", և ընդունելի է։ Եւ իրաքանչիւր ուրուք ա-
ղօթքն են պատարագք. և անընդունելի են ՅՍ, եթէ
ոչ նախ երթեալ հաշտի ընդ որոմտեալ եղբօրն, և ապա
եկեալ աղօթէ առ ՅԱ, և ընդունելի է։ Այլ և ասէ.
"Երեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ".
զի մի դևքն եկեալ 'ի գիշերին յսրուցանիցեն զսիրտ քո
առ վաղիւն չհաշտել ընդ ընկերին, և խորհուրդս չարս,
որս և նախանձս, և ազգի ազգի նենգութիւնս ապրա-
նիցէ 'ի միտս քո։ Այլ մինչ չև գիշերոյն հասեալ իցէ՝
երթ հաշտեա ընդ եղբօրքում։ Զի՞նչ գեռ յաշխարհի
ես, հաշտեա ընդ ոսոխի քում. մի՛ գուցէ մնանիցեն
դատաւորին, և դատաւորն դահճաց, և ոչ ելանիցես։
Զոյնպէս և դու մինչ դեռ օր առաջի կայ, փութա հա-
ճել ընդ ընկերին, և 'ի վաղիւն մի՛ յապաղեր, զի ան-
երևոյթ են ելք մեր յաշխարհէ, և ոչ գիտեմք՝ թէ ու-
նիմք զվաղիւն ժառանգել՝ թէ ոչ. սակայն ժառանգեմք
զվաղիւն, և ոչ փութամք հաշտել ընդ եղբօրն։ Ընդ
հեթանոսս համարեալ եմք, զի անընդունելի իցէ առանց
հաշտութեան ընդ եղբօրն և ընդ ընկերին։

Իսկ որպիսի զասն տանջանաք դատիցին՝ որ խիղճ ինչ թշնամութեան ընդ ընկերին ունիցին, և 'ի սուրբ խորհուրդն մերձենայցեն. որպիսի հուր, և որպիսի գեհենք խաւարայինք նոցա սպասիցեն։ Պարմնոյ տեսանն հաղորդիս, և զաւծ գողանալ կամիս՝ թաքուցանելով զթշնամութիւն քո ընդ ընկերին։ Այո և Այսէն գողանալ կամէր զաւծ՝ թաքուցանելով զեղբօրն սպանութիւն. և արդ տես զերերումն տատանմանն նորա՝ զչար խորհրդոյն զպտուղն։ Որ 'ի մարմնին տեսանն մերձենայ, և թշնամութիւն ընդ ընկերին ունիցի, ոչ մարմին կենաւրաւ է նմա, այլ հուր կիզանող, զի դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ։ Այլ ամենք ոչ եթէ վասն փափագելոյ սրբոյ խորհրդոյն փութան 'ի հաշտութիւն ընկերին, այլ աւուրք բազումք հեռանան 'ի սուրբ խորհրդոյն, և զաղաչելն և զհաշտելն ընդ եղբօրն ծանր համարին քան զհեռանալն և զչընդունելն 'ի սուրբ խորհրդոյն՝ 'ի մարմնոյն և յարենէն Քրիստոսի. վասն խնայարհելոյ ընկերին արհամարհէ զխորհուրդն տերունական. հրաժարելով 'ի նմանէն՝ կարծէ պատիւ հանելոյ՝ մերձենալ 'ի խորհուրդն։ Այս ոչ իմանայ՝ եթէ առաւել ևս արհամարհէ չփութալով 'ի հաշտութիւն ընկերին վասն սիրոյ փափագելի մարմնոյն Քրիստոսի, զոր և Պաւղոս ասէ, թէ ով մեկնէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն թէ մահ, և որ 'ի կաթգին է՝ ոչ կարեն մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի։ Այս ըզքեզ սակաւ ինչ թշնամութիւն ընդ ընկերին մեկնեաց 'ի սիրոյն Քրիստոսի, և 'ի սուրբ խորհրդոյն մերժեալ հեռացոյց։ Օ՛ի թէ թշնամանեաց զք զքեզ, և դու խնայարհեացիս վասն պատուիրանին այ, մինթէ փնասեցար ինչ. այլ վարձս մեծամեծս ընկալար։ Ընարդ և ապհամարհեալ զք զքեզ անուանեաց. այլ դու հաղ և մեխիր ևս ասա զանձն քո։ Ձուռձ և ցնոտաւոր[1] զք ըզքեզ կոչեսցէ. այլ դու ասա. մերկ իսկ եկի յաշխարհս, և մերկանդամ անդէն դառնալոց եմ։ Այսպիսի խոնարհութեամբ կապեցեր զքեզ ուս անօրինաց, խոյեր ըզքերանս թշնամանողաց, լուծեր զվիզս ասատանայի, ցրեցեր զխորհուրդս նորա, և ամենևին ոչ զք ինչ քեզ կա-

1 Օրինակ մի ցնոտաւ. այլ օր. ցրպոտաւ։

րէ փնասել՝ի թշնամանողաց, եթէ միայն առողջ միտս ունիցիս։ Ահա բաղումք թշնամանեցան և համբերեցին. այլ և աղօթս ևս՝ի վերայ թշնամանողացն արարին։ Ստեփաննոս աղօթէր՝ի վերայ քարկոծողացն իւր. Յովսէս, Սամուէլ, Դաւիթ և Հրիստոս որդին այ թշնամանեցաւ, և առ հայր վասն նոցա աղօթս մատուցանէր։ Լաւ արդ լեր դու նմանող արանցն երևելեաց։ "Լռեա՝ի բարկութենէ, և հանգիր՝ի սրտամտութենէ, և մի նախանձիր ընդ չարս" ասէ մարգարէն. զի ուր բարկութիւն և սրտմտութիւն մնանէ, անդ չնորհք հոգւոյն ոչ մնանեն, և ոչ խորհուրդք արդարութեան ելանեն՝ի բարկացող սրտէ. որպէս և ասէ. "Բարկութիւն մարդոյ զարդարութիւն այ ոչ գործէ"։

Լաւ և ցաւումն արդար, և բարկութիւն արդարութեան, յորժամ զվրէժս ինչ պատուիրանացն այ խնդրեսցես իբրև զԱմուէլն և զԴենեհէզն, կամ վրէժխնդրութիւն եղբօրն զրկելոյ։ Իսկ որ աւելի քան զայս առաւել ինչ բարկանայցէ, կամ վրէժ անձին իւրոյ խնդրեսցէ, այն է՝ի տարապարտուց բարկանալ, զոր՝և Հրիստոս ասէր՝ պարտաւոր եղիցի՝ի գեհենն և՝ի հուր։ Հանզի տարապարտուց բարկութիւն՝ Ճանապարհ է բաղում ինչ ախտից. զի բարկութիւն է և ագղակ և կռիւ, ատելութիւն և թշնամութիւն, նախանձ և ոխակալութիւն, քինահանութիւնք և սպասնութիւնք, և բաղում այլ ևս չարութիւնք։ Լաւ որ բարկութեանն յաղթէ, այս ամենայն իջեալ դադարէ իբրև զհուր առանց նիւթոյ. զի յորժամ բարկանայցէ ոք, և դու համբերութեամբ տանիցիս, շինուցեր զբարկութիւն։ Այլ թէ դիւահար ոք զքեզ անուանեսցէ, մի ինչ բարկանար. և եթէ բարկանաս՝ արդարացուցեր զթշնամանողն, զի՝ի դիւէն է բարկութիւն և ոչ յայ։ Ահա և զտէրն դիւահար կոչէին, և նա ոչ բարկացաւ, այլ հեզութեամբ ետ պատասխանի՝ եթէ յիս դև ոչ գոյ։ Թշնամանեաց ոք զքեզ և արհամարհեաց, այլ առաւել ևս զտէրն թշնամանեցին և արհամարհեցին։ Կռփեաց ոք զքեզ և ապտակեաց, ահա և զտէրն կռփեցին և ապտակեցին, այլ և չարչարեցին և խաչեցին, որ քո չեն ևս ընկալեալ։ Արդ զայս ամենայն զմտաւ՝ի ժամ ցաւմանն յուզելոյ։

Շատ է մեզ սատանայ թշնամի, զեղբարս մեր մի՛ արասցուք մեզ թշնամի. այլ փութասցուք հաշտեցուցանել ընդ մեզ, զի զպակ նահատակութեան ընկալցուք ընդ կանխելոյ և անկանելոյ առաջի եղբօրն։ Վասնզի պակք և պարգևք կան 'ի միջի ոսոխայն և կագոյն. և որ ոք յառաջագոյն նահատակի և խոնարհի եղբօրն աղաչանօք ածել զտրտմեալ եղբայրն 'ի հաշտութիւն, նա յափշտակէ զպարգևս և զպակս վասն նախախոնարհ նահատակութեան իւրոյ. զի զչար թշնամին սատանայ վիրաւորեաց 'ի խոնարհելն իւրում, և զինքն և զեղբայրն իւր զերծոյց 'ի ձեռաց նորա, և փրկեաց 'ի յաւիտենական կան 'ի մահուանէն։ Յաղագս այնորիկ ընդունի համարձակութեամբ վարձս բազումս, և զվայելչութիւն անանց բարութեանց։

Լա՛ արդ մի՛ վասն սակաւ մի խոնարհութեան կորուսանիցեմք զյաւիտենական փափկութիւնսն. զի բազումք վասն յաւիտենական կենացն զանձինս և զինչս արհամարհեցին, զսէրս ամուսնութեան և զգութս որդւոց իւրեանց. զանազան տանջանաց համբերեցին և հրոյ մատնեցան, զի միայն զարքայութիւնն ա՛յ ընկալցին։ Իսկ քեզ ոչ հուր կայ առաջի և ոչ սուր, և ոչ զանազան տանջանաց համբերել. այլ միայն խոնարհել եղբօրն տրտմելոյն, և աղաչանօք հաշտեցուցանել, և զնոյն պակս նահատակութեան ընդունել։ Ինքդ՞ծանրացուցանես զսիրտ քո աղաչել զեղբայրն. չես 'ի հուր դիմել, այլ 'ի խոնարհութիւն իջանել։ Դու նախ փութա անկիր աղաչանօք առաջի ընկերին, և առ զպակն լուսոյ և պարծանաց նահատակութեան, և զերկնից արքայութեանն զանբաւ վայելչութիւնն։

Արդ զայս ամենայն լսելով զտրտմութիւնն ցածուցուք, զբարկութիւն շիջուսցուք, զաղաղակ դադարեցուսցուք, զսէր սիրեսցուք, զխոնարհութիւն ստասցուք, զհնազանդութիւն ընկալցուք, և ընդ հաշտել ընկերին յառաջ ընթասցուք. զի համարձակութեամբ զերկնից բարութիւնն ժառանգեսցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից։

Digitized by Google

ՎԱՍՆ ՈԽԱՊԱՀԱՑ ԵՒ ՔԻՆԱՀԱՆԱՑ

Ահեղ անօրէնութիւն և սատակիչ չարութիւն տեսանելիք զոխապահացն և զքինահանացն քան զամենայն զմեղաց անօրէնութիւնս. զի ամենայն մեղք և անօրէնութիւնք երբեմն սատակեալ բորբոքին և երբեմն դադարեն։ Իսկ չարայուշ քինահանութիւն եթէ բան ինչ ընդիմութեանց յընկերէն ինչ լսիցէ, միշտ բորբոքի յանօրէն 'ի խորամանկացն խորհուրդս։ Եւ յամենայն ժամ՝ անշիջանելի վառի բոցն նախանձու 'ի միտս նոցա, և հանապազ զսիրտն քինախնդիր ոխապահացն կսկծեցուցանէ. և 'ի միտս իւրեանց հալին և մաշին և չարչարին. և ումանց զոյնք իսկ երեսացն եղծանին 'ի չար խորհրդոյն և 'ի նենգութենէ սրտին։ Եւ շքջի ընդ մարդկան իժ խորամանկն, իբրև զթոյնս իժի բարձեալ կրէ զնենգութիւն սրտին. և հանապազ վանք և օթեվանք են սատանայի միտք նոցա. և զոր ինչ ասէ սատանայ՝ լսէ նմա, և զոր ինչ կամի՝ վաղվաղակի կատարէ զկամս նորա. 'ի տեսս մարդ երևի, և բարիւք իբրև չարաժանի ինչ գազան։ ՀՍտի 'ի հրապարակս իբրև զմարդ, և խորամանկութիւնք չար գիւին են 'ի խորհուրդս նորա։ Ի՞տանէ յեկեղեցին իբրև զքրիստոնեայ, և սիրեալ են աղօթքք նորա քան զպղծութիւն զոհից. քանզի ոչ ելանեն ոխապահացն աղօթքն առ Ա՞ծ, զի չարութիւն է 'ի սիրտս նոցա, և անօրէն նենգութի խորհին հանապազ։

Թէպէտ և ինչս բազումս յողորմութի ծախեաց այն պիսին, թէպէտ և հսկեսցէ և պահեսցէ, և զանձն սատիկ ճգնութեամբ ցամաքեցուցանիցէ, յամենայնի ոչինչ օգտիցի՝ յորժամ ոխս ընդ ընկերին պահիցէ, և զչարիսն 'ի սրտին թաղեալ ունիցի։ ՀՍտի հանապազ, և խորհի պատահարս չարեաց և դիպումն փորձութեանց նախան-

Digitized by Google

ձորդին։ Ողձանայ, շրջի մնոախորհ յուռ մնրեալ[1], և երկնէ իբրև ծննդական։ Լուեալ չար ընկերին. նման խորհի և զսով, նման խորհի և զսուր, նման խորհի և ըզ-հէնս, նման խորհի և զմահս և զամենայն չարս և չարա-լուրս։ Քողին երեսք նորա 'ի տեսչութենէ նորա, և առ դրամբք տան նորա չախորժէ անցանել։ Եթէ 'ի ճանա-պարհի ուրեք դիպեսցի, խնդրէ թողուլ զճանապարհն, և ոչ պատահէ նմա. և եթէ յեկեղեցւոջն տեսանիցէ, չիամի և յեկեղեցին մտանել. և եթէ 'ի հրապարակին դիպեսցի, պատրուակին աչք նորա առ ոչ կարել հայել յերեսս նորա. այլ զգլուխն խոնարհեցուցանէ, և իբրև ընդ գետինն խօսի, և ըղձանայ չար ինչ խօսել զնա-խանձորդէն։ Եւ եթէ չար ոք զնմանէն խօսեսցի, նա 'ի վեր հայեցեալ զարթնու և զուարթանայ, և լսէ ա-խորժելով, և աճեցուցանէ զչարախօսութիւն նորա, և բազում խնամով խօսի ընդ չարախօս նորա։ Եւ եթէ բան ինչ բարի զնախանձորդէն լսիցէ, տրտմի և տխրին երեսք նորա, և հալին և մաշին միտք նորա։ Սիրելի է թշնամեաց նորա, և թշնամի է բարեկամաց նորա։ Ուտէ և զորդիս նորա, և չարախօսէ զնմանեաց նորա. և ոչ միայն զխօսունսն, այլ և զանասունս նորա ատէ, և զանդաստանս նորա չարակնէ, ըղձանալով ցամանս, երաշտութիւնս վասն նորա։ Օ այս և առաւել ևս քան զնոցնս խորհի չարայուշն և ոխապահն 'ի սրտի իւրում, և յերեսս մարդկան ոչ երևեցուցանէ զթշնամութիւնն։ Եւ արդ ոչ է պարտ զայնպիսի սատանայամիտն մարդ անուանել, այլ օձս և իժս, և եթէ ևս քան զնոսա գա-զանագոյնս ինչ կայցէ. զի նա է չար գազան քան զօձից և զիժից բնութիւնս. քանզի իժից և օձից բնութեամբ է դաժանութիւն. իսկ ոխապահն ինքնակամ կամաք ընկալաւ զչար խորհուրդս սատանայի, որ ընդ նմին ժա-ռանգելոց է զհուրն անշէջ և զխաւարն աղջամղ ջին։

Եւ զարմանամ ևս ընդ ներողութիւնն այ՝ որ առ-ժամայն իսկ ոչ առաքէ զփայլատակունս յերկնից 'ի վե-րայ այնպիսի մնջեզնելոց ամբարշտութեանց. զի առա-ւել ևս քան զաւազակացն և զսպանողացն զանցոյց զա-նօրէնութիւնս իւրոյ չարութեանն. զի նոքա երբեմն

1 Օրինակ մի ուռ մառեալ. երբ ե երբեր ինքն։
կու օր. զչի պիսոյ յարմարելոյնն,

սպանանեն, և երբեմն դադարեն. իսկ ոխապահն չարայուշ ոչ երբեք դադարէ 'ի սպանութենէ։ Այս և 'ի զբաստանս իւր մարդասպան է, զի զոխս ընկերին 'ի սրբոտին ունի. նա և յանկողինս իւր մարդասպան է, յորժամ զոխս ընկերին յիշէ. նա և 'ի տան մարդասպան է, նա և յեկեղեցւոջ մարդասպան է, և 'ի հրապարակս մարդասպան է. այլ և 'ի ճանապարհի, 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու մարդասպան է, զի զոխս նա խանձուն հանապազ 'ի սրտի իւրում կրէ։ Այս ապա անօրէն ամբարշտութիւնք ոխապահացն աճեցուցեալ 'ի քինահանութիւնս յօժարեցուցանէ սատանայ՝ առնուլ վրէժս 'ի զրկողէն. թէպէտ և փոքր են զրկանք նորա, այլ սատանայ 'ի մեծս յօժարեցուցանէ զնա, մինչև հարուածս այգեաց և անդաստանաց տայ գործել. և 'ի զբրանալ ամբարշտութեանց սատանայի, առաւել ևս յանօրէնութիւնս յանդգնեցուցանէ զնա, մինչև տանց և բերդից վնասել հրդեհիւք։

Արդ որպիսի՞ անդունդք գեհենի սպառնայցեն այնպիսի անօրինելոց. որպիսի՞ հուր և աղջամղին խաւար. օրք այնչափ ամբարշտեցան՝ մինչև զտունս բնակութեամբ մարդկան հրդեհել, և գողալ և սարսել 'ի ձեռաց մահուցն. այլ և ծերս և զտղայս առ հասարակ սատակել անողորմ և անակնածելի։ Այս արդ ո՞ր անօրէնութիւնք քան զայս ամբարշտագոյն իցէ, և կամ ո՞ր մեղք չարաչարք քան զայս չարագոյն կայցէ, և կամ զո՞ր չարիս քան զայս չարագոյն ոք կարծիցէ, և կամ ո՞վ 'ի մարդկանէ իցէ՝ որ այսչափ յանօրէնութիւս կործանեցաւ, և յահեղ ամբարշտութիւնս։ Ո՛չար և անօրէն սատանայ՝ որ յայսչափ խորխորատս ընկղմես զմարդիկ, մինչև այսպիսի ահեղ անօրէնութիւս գործել, և հեղուլ արիւնս բազումս. և այսչափ յիմարութիւնս մոլորեցուցանել զսիրտս մարդկան, մինչև միանգամայնս զամենայն ստացուածսն ապականել, զտունս հրդեհել, և զբնակիչսն առ հասարակ չարաչար անողորմ և աննեղելի մահու սրով սպանանել։ Այս և անօրէն հեթանոսացն հիանալի է։ Օ այս և ոչ 'ի կռապաշտիցն և 'ի քարբարոսացն ոք գործէ. այսպիսի մահս բազումս և վնասս մարդկան միանգամայն ո՞վ գործիցէ, որպէս գործի յանօրէն քինահանացն մոլորութենէ։ Թէպէտ և ապրեսցին 'ի հրոյն 'ի

մահուանէն բնակիչք նորա, սակայն նա մոռք և գար-
ծովք զամենեցուն զսպանութիւնն կատարեաց, և զա-
լիւնս նոցա եհեղ. և տալոց է համարս և պատիժս տան-
ջանաց ընդ ամենեցուն սպանութեանցն։

Լրդ զինչ գործեաց, ով Թշուառական և անօրէն
անձն, որ յայսպիսի խորս ամբարշտութեան կործանե-
ցար. եղեր գործակից սատանայի, և քան զդևս մոլորե-
ցար, և վնասս անօրէնս գործեցեր, և բազմաց արեանց
եղեր պարտական։ Օ՛յ եթէ Լայէն վասն միոյն սպա-
նութեան յայնչափ պատիժս տանջանաց դատապարտե-
ցաւ, իսկ ո՞ւրչափ առաւել հնոցք և հրեղէն գետոցն հո-
սանք քեզ սպասեսցեն։ Վանզի առաւել ՀՀդիւ պահան-
ջէ ՈՍԾ 'ի ձեռաց առն զարիւն ընկերի իւրոյ, և մանա-
ւանդ զայնպիսի սպանութեանց՝ որ փոխանակ կսկծելի
և տգեղ ինչ բանից և կամ վասն սակաւ ինչ պարտուց՝
քինահանութեամբ ոք ՀՀնասս մեծամեծս և ահեղ արիւնս
հեղու։ Լրդ արդ ած զմտաւ, ով Թշուառականդ, զյի-
մարութիւն անօրէնութեանդ քո. և 'ի մտավաստակ ա-
նօրէնութեան քո ահա այրեցան համբարքն, և հրդե-
հեցան տունքն, մեռան բնակիչքն, կորեան ինչքն, և
ամենայն ստացուածքն ապականեցան։

Լրդ արդ զինչ շահեցար զսատանայական անօրէնու-
թիւնս կատարելով. բայց միայն զտուգան ոգւոյ և զեր-
կիւղ գեհենին ստացար, հուր և խաւար և տանջանս
յաւիտենականս։ Օ՛նոսա շինջանելի հրովս չարչարեցեր,
և քեզ պահին անշէջ հնոցք բորբոքեալ, ուր հուրն խա-
ւարային 'ի ներքոյ վառեսցի, և գետք հրեղէն 'ի վե-
րայ հոսեսցեն նոցա։ Լրժամայն մի ցաւեցուցեր, և ըզ-
քեզ ահեղ ախտիցն կսկիծք և դաժանութիւն որդանցն
թիւնաւորաց միշտ հանապազ անհնարին ցաւոք կսկծե-
ցուցանեն, ուր լալ աչաց է անդադար, և կրՀՀել ատա-
մանց անհանգիստ, և ամենևին ներուամն ինչ անհնարին
վարանացն ոչ գտանես. փոխանակ զի ընդ սակաւ ինչ
զրկանաց մեծամեծս գործեցեր։ Օ՛յ եթէ զրկեցար
ինչ 'ի նմանէ, և ցաւեցոյց զքեզ, քեզ պարտ էր ան-
սալ վրէժխնդիր իշխանին, և դատաստանի մեծին ՈՍ,
և ոչ անՀամբ ինչ պահանջել քինահանութեամբ. զի
ծառայ որ զլծակիցն իւր նեղիցէ, և նա ժուժկալեալ
համբերիցէ վասն ահի տեառն իւրոյ, տէրն դատի ըզ-

դատաստան նորա։ Այլ եթէ վրէժխնդրութեան և դատաստանի տեառն ոչ անսայցէ, այլ ինքն իւրովի առնուցու վրէժ 'ի ծառայակցէն իւրմէ, զարթուցանէ զսրտմտութիւն տեառն իւրոյ, զոր և դատաւորք աշխարհիս ՀՀզիւ պահանջեն։ Եթէ ոք 'ի զրկելոցն ոչ անսայցէ վրէժխնդրութեան դատաւորին, այլ արհամարհեալ զպատիւ իշխանութեան նորա՝ իւրովին իսկ վրէժ 'ի զրկողէն առնուցու, տես թէ քանի բարկութիւն ածէ 'ի վերայ նորա դատաւորն. սոյն և առ դատաստանն ՀՀ։

Եթէ ոք զրկիցի 'ի զօրաւորէն, և համբերիցէ երկիւղիւ ՀՀ, և վրէժ զրկանաց ոչ ինդրիցէ 'ի զրկողէն, նորա տեր է վրէժխնդիր, և հատուցանէ նեղչայն նորա նեղութիւն, և չարչարողաց նորա չարիս, և պահանջէ 'ի զրկողէն զվրէժ նորա հրով գեհենին և զանազան տանջանօք։ Եւ նա որ վասն երկիւղին ՀՀ զրկանացն համբերէ, ընդունի զկատարեալ համբերողացն զպսակս, և զյաւիտենական զբարութիւնս սրբոց և արդարոց։ Իսկ որ ոչ թողու յՀՀ զվրէժխնդրութիւն զրկողին, և ոչ անսայցէ մնալ դատաստանի նորա, այլ յափշտակէ զիշխանութիւն վրէժխնդրութեան ՀՀ, և զքէն զրկանաց իւրոց ինքն պահանջէ, զարթուցանէ 'ի վերայ անձին իւրոյ զսաստիկ սրտմտութիւն ահեղ բարկութեանն ՀՀ՝ չարչարել և տանջել զնա անողորմ և անմերելի տանջանօք հրով գեհենին և անշեջել խաւարաւն, ուր բազում ողբովք և դառն տանջանօք կոծեսցի և լացցէ զահեղ աղէտիցն զնեղութիւնս, և ամենևին ոչ ինչ օգտիցի. փոխանակ զի դատաստանին վրէժխնդրութեանն ՀՀ ոչ հաւանեցաւ, այլ արհամարհեաց զպատիւ դատաւորութեան ՀՀ, և զդատաստանն ՀՀ ինքն դատեցաւ՝ քինահանութեամբ ՀՀեսելով զզրկողն իւր։ Եւ որպէս դատեցաւ զզրկողն, առաւել և՛ս բազմապատիկ տանջանօք դատելոց է յՀՀ. զի զրկողն ընդ սակաւ ինչ զրկանաց է դատելոց. իսկ քինահանն ընդ անթիւ ինչ կորբատեան, և ընդ բոլոր ստացուածոցն ապականութեան, և ընդ բազում արեան հեղման է դատելոց անմերելի տանջանօք։ Օ՛ի թէպէտ և ինչք և տուն և բնակիչքն ապրեցան 'ի հրոյն ապականութենէ, սակայն նա զանազրկնութիւն անձին իւրոյ կատարեաց. և զոր ինչ կորու-

սանելն կամեցաւ, ընդ ամենայնի է պարտապան պատ-
ժոց պատուհասից և անհնարին տանջանաց։

Արդ մի՞ զ յանդգնեացի յահեղ անօրէնութիւնքի
նահանութեան, և մի՞ զանձին վրէժս պահանջիցէ, այլ
անսայլ դատաւորին ՅԻ. զի "Իմ են վրէժխնդրութիւնք,
և ես հատուցից՝ ասէ տէր"։ Այլ դա՞ մի՞ չաք փոխա-
նակ չարի հատուսցես. այլ թէ քաղցեալ իցէ թշնա-
մին քո, հաց տուր նմա. և եթէ ծարաւի է, ջուր. և
զչարեացն զհատուցումն ես հատուցից՝ ասէ տէր։ Նա-
արդ որովհետև տէր է վրէժխնդիր և հատուցանող
զրկողացն և զրկելոցն, ոչ զք պարտի զվրէժ անձինն
խնդրել, և ոչ զքէն զրկողին պահանջել. զի այս անօրէ-
նութիւն առաւել ևս զանցուցանէ զհեթանոսական սմ-
բաւորութեամբք, յորմէ ամենայն զգուշութեամբ հե-
ռանացուք, զի մի՞ 'ի խորխորատ կորստեանն ընդ սատա-
նայի իջեալ այրեսցուք, և անլոյծ կապանօք կապեսցուք,
և անհրաժեշտ տանջեսցուք յանհաշիւ խաւարին։ Այլ
փախիցուք յորոգայթից սատանայի. անարգեսցուք ըզ-
հրամանս նորա. մերժեսցուք 'ի չարայուշն ոխակալու-
թենէ, և փարատեսցուք զկսկիծ սրտից՝ զոր սատանայ
'ի մեզ իբրև զհուր լուսանէ, և իբրև զբոց 'ի վեր բոր-
բոքի՝ կատարել զքինահանութիւն անօրէնութեան։
Ո՞այս արհամարհեսցուք, և ընդ զրկողին խաղաղու-
թիւն արարէք. զթշնամին սիրեսցուք, զատելին օրհ-
նեսցուք, չարարարին բարի արասցուք, և զամենայն ինչ
ըստ հաճոյիցն ՅԻ արասցուք. զի եղիցուք կատարեալք
որդիք հօրն երկնաւորի, և ժառանգեսցուք զանանց բա-
րութեանցն վայելչութիւնն 'ի Քրիստոս Յիսուս 'ի
տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

ԺԴ

ՎԱՄՆ ՍԱԿԱՒ ԳՈՂՈՒԹԵԱՆ ՈՐ ՈՉ ԱՊԱՇԽԱՐԵՆ

Յանկարծակի գողանայ և աներևոյթ յափշտակէ ըզ միտս բազմաց սատանայ, և մոռացուցանէ զպատուիրանս ՝ի՛. և իբրև ըմբռնէ զամենայն խորհուրդս նորա և զգայարանս նորա, և պատրուակէ ՝ի Ճշմարտութենէ զմիտս նորա, և սերմանէ զորոմն անօրէնութեան ՝ի խորհուրդս նոցա, և զոր ինչ մեղանչեն ՝ի՛ պատուիրանս ՝ի՛ փոքր կարծեցուցանէ ՝ի սիրտս նոցա։ Լուաք ՝ի պատուիրանաց ՝ի՛՝ եթէ յովտ մի, որ է գրակէս, ոչ կորիցէ յամենայն պատուիրանաց ՝ի՛ և ՝ի մարգարէից. և ընդ դատարկ բանից և անպատեհ խորհրդոց և ընդ մեծատուութեան եմք դատելոց։ Իսկ զինչ արասցեն որ ընդդէմ պատուիրանացն ՝ի՛ գործեսցեն և սակաւիկ ինչ կարծիցեն, մինչև յայտնի գողունիս փոքր և սակաւ համարեսցեն, և առ ոչ ինչ կարծելով զսակաւին՝ անապաշաւ թողուցուն, և ոչ բեկեալ սրտիւ և ցաւագին անձամբ խոստովանեսցեն, և բազում պաղատանօք ապաշխարիցեն. այլ չարին խորհրդովք յամենայն ինչ անխտիր մերձենան և ոչ ինչ համարին, և ասեն՝ եթէ փոքր ինչ գողունիս առնուին և կամ արտաքուստ ոչ խընդրէ և կամ դատի ՝ի՛ Մբարիշտ և սատանայական է այս բարբառ, և լի բազում անօրէնութեամբ։ Այլ եթէ ողորմածն ընդ ուղիղ կամացն միայն զարքայութիւնն ընդունի, և ընդ բաժակի միոյ ջրոյ վարձս բազում, զիարդ զայսոսիկ մեղս անհամար թողուցու։

Արդ մի՛ այդպիսի կարծեցուցանիցէ զքեզ սատանայ. այլ և եթէ միով դանկիւ չափիցին յանցանքն՝ հատեր և կոխեցեր զհրամանսն ՝ի՛, և զամենայն պատուիրանս նորա արհամարհեցեր. զի որ միով ինչ պատուիրանացն ՝ի՛ գթիցէ, եղև ամենայն օրինացն պարտական։ Զի ոչ եթէ չափք ընչիցն չարացուցանեն զվերս

մեղացն, այլ հրամանահատուածքիւնն[1] կորուսանէ ըզ-
պատուիրանազանցն։ Զի որ զհրովարտակս ոք արքունի պատառէ, ոչ միայն զքարտն փոխանակ քարտին պահանջեն 'ի նմանէ, զի զայն և սակաւ ինչ լուծանիւք մարթ էր վճարել, և կամ ըստ չափոյ քարտին պատժել, այլ ընդ արհամարհելոյ զհրամանս թագաւորին են տանջանք զանազանք և մահք դառինք։ Նոյնպէս և Աստուծոյ ոչ եթէ մեծ էին գողանքն, այլ հատուածն միոյ ինչ մրգոյ. և արդ տես զբազում հոյլս պատուհասիցն, զանիծիցն և զմահուցն, ոչ միայն 'ի վերայ Աստուծոյ, այլ և ամենայն ծննդոց Աստուծոյ. զի ոչ եթէ գողուն մրգոցն եղև պարտապան, այլ հրամանացն արարչին և բանի բերանոյ նորա. զի որ ասացն՝ եթէ մի սպանաներ, նոյն ասաց՝ եթէ մի գողանայցես։ Այլ ոչ եթէ փոքու և մեծի մեղաց խնդիր իցէ, այլ պատուիրանազանցութեան և հրամանահատուածքէ. զոր և ինքն իսկ ասէ, եթէ և յետի նաքարակիտն խնդրեսցի. և եթէ լուծցի մի ինչ 'ի պատուիրանացն այ՝ փոքր կոչեսցի յարքայութեան։ Զի զոր ինչ և է 'ի վերս մեղաց, և փոքր համարեսցի և ոչ ապաշխարեսցէ, այն են մեղք մահու չափ։

Տես զի փոքրիկ է հատ մանանխոյ, և ապա աճէ և ծառանայ. սակաւ է և խմոր, և զամենայն զանգուածն իւր նմանեցուցանէ. նուազ է և փայլակն կայծակի, այլ 'ի նիւթ ինչ մտեալ՝ զբազում վայրս հրդեհէ. նեղ և նուրբ է և խայթոց օձի և սուղ ինչ վերքն նորա, այլ դաժանութիւն թիւնից նոցա դառնատեսիլ մահ գործէ. աներևոյթ է և հարուած կարձի, այլ սաստիկ ընդ ամենայն մարմինն կսկիծ արկանէ մինչև 'ի սիրտն։ Ա՛ր-չափ ևս առաւել հրաման բանի բերանոյ այ դառնամահ տանջանօք տանջէ զարհամարհիչս իւր։ Ա՛հա փոքր հաւ մարեցաւ Աստուծոյ զանպատկառութիւնն 'ի հօրէն, և եղև յանէծս և 'ի ծառայութիւն ամենայն զաւակաց իւրովք։ Փոքր համարեցան և որդիքն Աստուծոյ զեղծաւորութիւն սպասաւորութեան իւրեանց, և հուր զ-տար եկեր զնոսա։ Փոքր համարեցաւ Լայէն զանընտիրն մատուցանել պատարագ, և խոտել անարգել

[1] Մի օրին. հրամանայն ատոպնհարութիւն։

յերեսացն ՝այ։ Փոքր համարեցաւ և մարգարէն զհրամանն հայրին չուտելոյ, և առիւծ 'ի ճանապարհին եթեկ զնա։ Այս ամենայն որ փոքր համարեցաւ զհրամանն պատուիրանացն ՝այ՝ պատիժս մեծամեծս ընկալաւ, ոչ միայն յաւիտենական տանջանաքն, այլ յանցաւորս և յառժամանակեայս ևս պատժի։ Զի որպէս յողորմութիւնն երկու լուսոյիւք զբոլոր աղորմութեանն զվարձս ընկալաւ, սոյնպէս և 'ի պատուիրանազանցութեանն թէ և հաւատոր զբ երկու լուսոյիս մեռցէ և ոչ ապաշխարիցէ, զբովանդակ պատիժս և զտանջանս պատուիրանազանցութեանն ընդունի։ Զի որ զքծուար երկաթոյ գողանալ մտաբերէ, նա թէ և ոսկւոյ պատահէր՝ ոչ ակն ածէր. քանզի ինքն իսկ Յիսուս ասէ. "Որ 'ի սակաւուն անիրաւ է, և 'ի բազմին անիրաւ է. որ 'ի սակաւուն հաւատարիմ է, նա և 'ի բազմին հաւատարիմ է"։ Զի թէպէտ և թուին ոմանց սպանութիւնք մեծամեծք և փոքունք, այլ մի է հրամանն ՝այ՝ եթէ մի գողանաք, մի չնար, և մի սպանաներ. ահա մի է հրամանատուութիւն սակաւուն և մեծին։ Զի որ սպանանէ զթագաւոր ոք, նոյն սպանութիւն է և որ զազքատն սպանանէ, և նոյն սպանութիւն ծերոյն և տըղայոյն. և որ չնայ ընդ թագուհւոյն, նոյն չնութիւն է և որ ընդ աղքատին. սոյնպէս և որ գողանայ ոք ոսկի, նոյն գողութիւն է և պատուիրանահատութիւն և որ զկապարն գողանայ։

Այլ առաւել ևս մեղադրելի է՝ որ վասն ոչընչին ըզհրամանն ՝այ արհամարհեաց. զի որ վասն բազումս ոսկւոյ զոք սպանանէ, թերևս ասէ ոք՝ թէ յոսկւոյն խաբեցաւ. իսկ որ միոյ լուսոյի զոք սպանանէ, առաւել ևս տանջանս ընդունի։ Այնպէս է և որ սակաւուք զպատուիրանս ՝այ արհամարհէ, եղկելի է և թշուառական և արժանի բազումս տանջանաց։ Այս ևս առաւել չարագոյն է՝ որ ընտանւոյն և ջերմին մեղանայ. և չար է սպանութիւն զոր անձին ոք առնէ քան օտարին. զի այնչափ բորբոքեցաւ սիրտ ընչասիրութեան՝ մինչև առ ընտանին և մերձաւորին ետ մեղանչել։ Այս արդ մի ոք ասիցէ՝ եթէ յընտանեաց անտի հատանեմ, և այս ոչ ինչ վնասէ. այլ գողութիւն է, և առաւել ևս մեղանչական է քան եթէ յօտարացն գողանայցէն. քանզի ընտանեաց և մի-

ընելեաց մեղանչեն, որպէս վերագոյն ասացի՝ եթէ չար է անձնամահութիւն քան զօտարպանութիւն։

Եւ արդ զայսպիսի մոռխաբ կեղծաւորութիւն 'ի բաց արասցուք, և բազում զգուշութեամբ զպատուիրանս այ պահեսցուք. զի ոչ եթէ յակամայ կամաց բռնադատէ զմեզ այծ գործել զբարին, այլ թողու յանձնիշխանութիւն կամաց մերոց։ Եւ եթէ ոչ երկիւղիւ պահիցեմք զհրամանս նորա, պահէ զամենայն յանցանս մեր 'ի մեծ օր ահեղ դատաստանին և սոսկալի բեմքին յանդիմանութեան՝ յորժամ աթոռ դատաստանին դընի, և հին աւուրց նստի, և գեռք հրեղէնք յորդեալ ելանեն, հնոցք բորբոքեալք և տարտարոսք խաւարայինք, ըղումն աչաց և կրճտումն ատամանց և սուգ անմխիթար մեղաւորաց։ Արդ զայս ամենայն զմտաւ ածելով զընդվայրաբանութիւնս[1] մեր դադարեցուսցուք, և զծուլութիւնս մեր 'ի փոյթ դարձուսցուք. հրամանաց նորա զգուշասցուք, և զոգիս մեր մաքրեսցուք. սրբութեամբ զաւուրս մեր անցուսցուք, և անմեղութեամբ զվախճանն կատարեսցուք. զփափաքելի դրախտն ժառանգեսցուք, և յանմահ բարին վայելեսցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Մի օր. ընդվայրագնոյ բնութիւնս մեր։

ԺԵ

ՎԱՍՆ ՉԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԴՄԱՆ

Յոյժ չար են սովորութիւնք չարին ամենայն ուրեք. այլ առաւել ևս չար ախտ և սովորութիւնք անօրէնութեանց են երդմունք. և այնչափ յիմարեցուցանէ 'ի սովորութիւն ախտին՝ մինչև յընդելական սովորութենէն և չարիքն չարիք իսկ ոչ երևին։ Որպէս և այժմ զբաղումն տեսանեմք զոր սովորեցոյց սատանայ յերդմունս անօրէնս. և 'ի սիրտս իւր ոք ոչ երկնչի՝ եթէ մեղս ինչ անօրէնս գործեսցէ։ Թէպէտ և ասաց 'ի հնումն՝ եթէ 'ի տէր ՝ծ քո երդնուցուս, ոչ եթէ հրամանս ինչ երդման հաստատեաց, այլ զտղայական միտս նոցա յանուանցն 'ի կռոցն երդմանէն հեռացուցանել կամեցաւ։ Որանզի ոչ եթէ անդէն և անդ զամենայն կատարելութիւնս կաւրէին ընդունել, այլ ընդելացուցանէր որպէս յովանակս տրմուղս։ Եթէ ասացեալ էր թէ ամենևին մի երդնուր, թերևս և չերդնուին իսկ. այլ եթէ երդնուցուս, 'ի տէր ՝ծ քո երդնուցուս։ Իսկ 'ի նորումն Քրիստոս զամենայն հրամանս կատարելութեանն պատուիրեաց, և ամենևին 'ի բաց եբարձ զերդմունս սատանայականս։ Եւ ասէ Մովսէս՝ թէ "ամենևին մի երդնուցուս սուտ. այլ ես ասեմ. ամենևին մի երդնուցուս, մի յերկինս՝ զի աթոռ է ՝ծոյ, մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է արքայի մեծի, և մի 'ի գլուխ քո երդնուցուս՝ զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ"։

Եւ արդ տես զառաւելութիւն նորոյ պատուիրանիս։ Մովսէս ասաց թէ սուտ մի երդնուցուս. այլ ես ասեմ, ամենևին մի երդնուլ, մի սուտ և մի արդար. զի երդումն արդար երբէք ոչ է, այլ 'ի սատանայէ է. զի ինքն Քրիստոս ասաց, եթէ որ քան զայոյն և քան զչէն աւելի է՝ 'ի սատանայէ է։ Եւ արդ եթէ յաթոռն ՝ծոյ չհրամայէ երդնուլ, իսկ քանի՞ գեհենի և ահեղ հրոյ

մատնիցին որք յաճ երդնուցուն. և եթէ 'ի պատուանդանն չհրամայէ երդնուլ, իսկ յոր խաւար երթիցէ՝ որ 'ի խաչն երդնուցու և 'ի չարչարանս նորա. և եթէ 'ի գլուխն չհրամայէ երդնուլ, յայտ է՝ թէ ոչ ես իշխան 'ի վերայ գլխոյ քո, այլ այն՝ որ սպիտակացուցանէ. և եթէ գլխոյդ ոչ ես իշխան, որչափ ևս առաւել ընկերին։ Իսկ որպիսի տանջանաք դատապարտեսցին որք 'ի մարգարէս և յառաքեալսն և 'ի մարտիրոսս երդնուցուն. և եթէ յԱրուսաղէմ չհրամայէ երդնուլ, յայտ է՝ եթէ և ոչ 'ի սուրբ բնակիչս նորա. և եթէ յերկինս չհրամայէ երդնուլ, յայտ է՝ եթէ և ոչ յերկնաւորն։ Արդ ո՞ւր է արդար երդնուլ, յորժամ ասիցէ՝ եթէ ամենևին մի երդնուլ, մի յաճ, մի յերկինս, մի յերկիր, և մի որ ինչ 'ի նոսա է. ամենևին արգել և եբարձ զսովորութիւն սատանայական երդմանց։ Իսկ զինչ. եղիցի ձեր բանն այոն այո, և ոչն ոչ. և որ քան զայն աւելին է երդումն, այն 'ի սատանայէ է։ Արդ ո՞ւր է արդար երդնուլն, յորժամ ասացն՝ եթէ որ քան զայոյն և զոչն աւելի ոք ասիցէ՝ 'ի չարէն է։

Այլ արդ որ զերդումն ոք արդար ասիցէ, յայտ է եթէ զսատանայ արդարացուցանէ։ Արիստոս զերդմունս ամենայն՝ ծնունդ սատանայի ասաց. բայց միայն զայս երդումն՝ որ հրամայեացն զայոյն և զոչն. զոր և իւր իսկ 'ի կիր արկեալ երդուաւ Աբրահամու, և ասէ. "Այո օրհնելով օրհնեցից զքեզ"։ Այլ այլուր ասէ. արդարեւ ասեմ ձեզ. և 'ի միւսումն ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ։ Այս է երդումն զոր հրամայեաց մեզ, և այսպիսի երդմամբք հաստատին, և վստահանային ամենայն հաւատացեալք։ Իսկ չարք և հակառակողքն 'ի սատանայական երդմանցն առնուն զվՀիւ հաստատութեան, որպէս և Պաւղոս ասէ՝ եթէ ամենայն հակառակողացն հաստատութեան վՀիւ երդումն է. հակառակողաց և ոչ քրիստոնէից հաւատացելոց։ Իսկ հաւատացելոցն՝ այոյն այո է հաստատուն, և ոչն ոչ. և ՈՒ պաշտօնեայն որ քան զայոյն և զոչն աւելի երդնուցու, թէ և քրիստոնեայ անուանի վասն մկրտութեանն, այլ ոչ հաւատացեալ, բայց հակառակող։ Որպէս քրիստոնեայք են և գողք, քրիստոնեայք են և պոռնիկք, նոյն քրիստոնեայք են և հակառակողք, երդմնահարք և երդմնա-

կերք։ Իսկ հաւատացելոց այս պատուիրանապահութիւն է որ վասն երդմանս է, զոր և առաքեալն Յակոբոս եղբայր տեառն յայսմանէ զգուշացուցանէ ասելով. “Յառաջ քան զամ ինչ մի երդնուցուք, մի յերկինս, և մի յերկիր, և մի յայլ ինչ երդումն”։ Եւ վասն այսորիկ ասաց, եթէ յառաջ քան զամենայն, զի երդումն է անօրէնութիւն առաւել քան զամենայն ամբարշտութիւս մեղաց։

Զհա մեղս և անօրէնութիւնս գործեցին որդիքն Իսրայէլի, ումանք չարաչար սպանութիւնս և պոռնկութիւս, իսկ ումանք զհայր և զմայր սպանին. ումանք զկանայս ընկերաց յափշտակեցին. ումանք զուստերս և զդստերս իւրեանց զոհեցին դիւաց. ումանք թողին զամ, և կուռս երկիր պագին. և այսու ամենայնիւ ոչ զարթեաւ սրրտմտութիւնն այ 'ի վերայ նոցա՝ որպէս յորժամ երդումանն և ստեցին. քանզի որթ կտրեցին 'ի տաճարին, և անցին ընդ մէջ քահանայքն և թագաւորն Եզեկիա, և երդուան արքային բաբելացւոց, եթէ ոչ ապստամբեսք և ապստամբեցին։ Եւ ասէ ամ՝ թէ Եզեկիա որ երդմանն իմում ստեաց, ասէ՝ ահա ես հանից ընդ կառափն նորա։ Զայս յարոյց ամ զարքայն բաբելացւոց 'ի վերայ Երուսաղէմի, և եկին պատեցան զքաղաքն զնովաւ քաղդէացւոց, զքաղաքն հիմն 'ի վեր արարին, ըստ տաճարն աւարեցին, զաչս թագաւորին խաւարեցուցին, զորդիս նորա փողոտեցին, զմեծամեծս նորա սրով սատակեցին, և զժողովուրդն 'ի գերութիւն վարեցին։ Զայս են երդման անօրէնութիւնք առաւել քան զամենայն ամբարշտութիւնս. որպէս և գրեալ է՝ թէ “Արդարացաւ ապստամբութիւնն Իսրայէլի առ ուխտազանցութեամբն Յուդայ”։ Զապստամբութիւնն Իսրայէլի կռապաշտութիւնն էր, և ուխտազանցութիւնն Յուդայ՝ երդումն Եզեկիայ. և վասն առաւել երդմանն Յուդայ՝ կռապաշտութիւնն Իսրայէլի որպէս թէ արդարութիւն համարէր։ Զի որպէս որ սակաւ ինչ ցաւ ունիցի, և ապա յետոյ սաստիկ կսկիծք ինչ 'ի վերայ հասանիցեն, առ ազէտս վերջին ցաւոցն զառաջինն որպէս առողջութիւն համարիցին, նոյնպէս և առաւել մեղացն և չարութեան երդմանն այլ անօրէնութիւնք որպէս եթէ արդարութիւն համարէին։

Եւ արդ 'ի չար սովորութենէ ախտիս այսորիկ ամ-

նևին իսկ մեզս չարաչարս և անօրէնութիւնս ոք ոչ հաս-
մարի. այլ իբրև զհուր վառեալ 'ի բերանն զերդման
սովորութիւնն այրեն հանապազ և ոչ զգան, այլ և 'ի
հրապարակս երդնուն հանապազ։ Եւ յորժամ յեկեղե-
ցին երթան մնանել 'ի ներքս 'ի յերդնուլ՝ զարթնու-
թիւն և խորհի. ընդե՞ր. զի յերդումն երթամ, ասէ. և
որ արտաքոյն երդուաւ, բազում անգամ զայն ոչ իսկ
նայ, և ոչ համարի ինչ առ ընդհանրական սովորութեամբ։
Եթէ 'ի ներքս բաւանդակեալ է ոմն, և արտաքոյ ոչ.
այլ նա արտաքոյ է և ներքոյ. և ամենայն որ մեզս և ա-
նօրէնութիւնս առնէ, եթէ արտաքոյ գործէ և եթէ
'ի ներքս, առաջի ոմի է։ Եւ զու զհրապարակին երդումն
մի փոքր ինչ և ընդվայր համարիր։ Ի միտ առ զոր ա-
սեմ. ամենայն սպանութիւնք եթէ արտաքոյ է, եթէ
ընդվայր ինչ, սպանութիւն գործեցաւ. և ամենայն գո-
ղութիւնք եթէ արտաքոյ և եթէ 'ի ներքս, և եթէ ընդ
խաղ ինչ և եթէ ընդվայր, գողութիւն գործեցաւ.
և ամ պոռնկութիւն եթէ արտաքոյ և եթէ 'ի ներքս,
և թէ զինչ օրինակաւ է, պոռնկութիւն գործեցաւ։
Այնպէս և երդմունք ամենայն եթէ արտաքոյ երդնուն
և եթէ 'ի ներքոյ, և կամ ընդ խաղ ինչ ընդ վայր, և
եթէ զինչ օրինակաւ և իցէ, չարութիւն երդմանն կա-
տարի։ Եւ՝ի զայս փոքր կարծեցուցաներ. եթէ աստ երդ-
ուար և անդ, եթէ աստ ստեցեր ոմի և անդ, եթէ աստ
ուրացար և անդ և ամենայն ուրեք երդուար, առաջի
ոմի երդուար, առաջի ոմի ասեցեր, առաջի ոմի ուրացար։
Զարդ զինչ արասցուք զահեղ ամբարշտութիւնս ախ-
տիս այսորիկ. զի իբրև զհուր հոսեցաւ ընդ ամենայն
երկիր, և լցան բերանք ամենայն բոցով անօրէնութեան
ախտին։ Իրք 'ի հրապարակս և երդմունք 'ի բերանս.
մանկունք 'ի զբօսանս և երդմունք 'ի բերանս. վաճա-
ռականք վաճառեն և երդնուն. իշխանաւորքն թշնա-
մանեն և երդնուն. դատաւորքն դատաւորեն և երդ-
նու. և ամենեցուն քան զիսօս բերանոյն սատանայա-
կան երդումն յառաջէ. և ամենայն ցոփոգեացն և ագա-
լեզուացն [1] չև խօսք 'ի օրտին՝ երդումն 'ի լեզուն կայ
պատրաստ։ Եւ արդ ո՞ զայսոքիսիս մնարդ անուանեսցէ.

1 Ագլոպէս յօրինակին. որ և փոքր մի զկնի աղաւալեղաց գրէ, զոր ուղղելի է աղաւալեղաց։ Շաւալնա. աստ միոյն աղաւալ ելեղաց։

չէ և չէ իսկ ասել մարդ, այլ օձ չար և չարին սատա-
նայի սպասաւոր։ Պիղծ է բերան այնպիսւոյն, և հուր
ժանդահոտ ցոլացեալ ելանէ 'ի բերանոյ նորա հանա-
պազ։ Ընդէր հանապազ առաջի ՝այ հայհոյես, երդնուս
և ուրանաս։ Ընդէր հուր առեր 'ի բերանդ այրել ըզ-
քեզ հանապազ։ Ընդէր սուր սրեալ 'ի լեզուիդ ունիս՝
անդադար զքեզ խոցոտել. ո՞չ գիտես՝ եթէ երդումն
տեգք սրեալ են սատանայի, և հանապազ որչափ երդ-
նուս՝ ցցին 'ի սրտիդ քում։ Երդումն կապանք սատանայի՝
կապէ զմարդիկ, և լուծումն ոչ գոյ։ Երդումն խեղդ ան-
ձին՝ որով խեղդէ զմարդիկ 'ի ժամմահուն, և առեալ
տանի 'ի դժոխս։

Եւ արդ եղբարք, երկիցուք յերդմանէ քան յամե-
նայն մեղաց և քան յամենայն անօրէնութենէ. զի քան
զամենայն մեղս հեռացուցանէ յայ։ Զ՝ան զի գիտաց
անիծեալ թշնամին՝ թէ 'ի ժամ մկրտութեանն երդ-
մամբ հրաժարեն յինէն, և երդմամբ ուրանայցեն զիս,
երդմամբ հեռասցին յինէն ասելով՝ թէ հրաժարեմք 'ի
քէն, սատանայ, հրաժարեմք 'ի պաշտամանէ քումմէ,
հրաժարեմք 'ի հրեշտակաց քոց, հրաժարեմք յամե-
նայն իսաբէութենէ քումմէ. և դարձեալ երիցս ան-
գամ երդուան և հաւատացին 'ի սուրբ երրորդութիւնն
ասելով՝ հաւատամք 'ի հայր, հաւատամք յորդի, հա-
ւատամք և 'ի սուրբ հոգին, և կնքեցին զինքեանս եր-
րորդական զօրութիւն հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն,
և զսուրբ խաչն 'ի վերայ մատանի եդին։ Եւ ես յոր-
ժամ հայիմ յերեսս նոցա, և տեսանեմ զնշան խաչին
սրբոյ դրոշմեալ 'ի վերայ երեսաց մարդոյն, յետս եր-
թամ 'ի սուրբ նշանէն և փախչիմ և հեռանամ, և չը-
կարեմ ինչ առնել։ Խորհեցաւ և ասէ. զինչ արարիցս,
և կամ զինչ գործեցից, ի՞ կարացից հեռացուցանել
զքրիստոնեայս 'ի մեծութէ և հիմանէ հաւատոց սուրբ
երրորդութեանն, և 'ի զօրութենէ և 'ի պահպանու-
թենէ սուրբ խաչին։ Եւ ասէ. գիտեմ զինչ արարիցս.
զի երդմամբ ուրացան զիս, և երդմամբ հեռացան յի-
նէն, ուստ՝ցից և ես առ հասարակ ամենայն մարդկան՝
թագաւորաց և իշխանաց, եպիսկոպոսաց և քահանայից,
մանկանց և ծերոց, արանց և կանանց երդմունս սուտս
'ի հրապարակս, 'ի վաճառս, 'ի տունս, յեկեղեցիս,

Digitized by Google

յարեգակն և 'ի լուսին և յաստեղս և 'ի գլուխ իւրեանց և յաչս և յաղ ինքն գլխովին և 'ի սուրբ խաչն Քրիստոսի, որ է կատարեալ ուրացութիւն և հեռանալ 'ի քրիստոնէութենէ և 'ի զօրութենէ սրբոյ խաչին, և ապա կարացից յաղթել ամենայն մարդոյ։ Եւ արդ ոչ երկնչիցիմք յահագին և 'ի կործանիչ և յանկանգնելի չարեացս այսոցիկ. ոչ դողայցեմք և ընդ երկրաւ մտանիցեմք՝ որ հանէ զմեզ յերեսաց ՝այ, և տայ 'ի ձեռս սատանայի։

Այլ երդմամբ հաստատեմք զաւերանս, զի առանց երդման ոչ հաւատայ։ Չէ այդ հաստատութեան, այլ սատանայական սովորութեան. քանզի զանն միտք առաքինիք ընտրեն, և ոչ երդմունք. զի առաքինեացն երկիւղածիցն թէ և չերդնուն՝ հաւատան. իսկ ցոփոգեացն և աղտաւաղեալացն թէպէտ և բիւր անգամ երդնուն՝ ոչ ոք հաւատայ. զի ամենայն ոք 'ի մտացն հաստատութիւն և յառաքինութիւն հայի, և ոչ յընդվայրած լեզուին աղութիւն։ Քանզի մեծ առաքինութիւն այս է՝ եթէ մտաւք ոք 'ի բանս կամ յերդմունս հաստատուն կայցէ, քան զողորմութիւնս և զպատարագս մատուցանել. այն յընչիցն ձեռնհասութենէ է, բայց 'ի բանս և յերդմունս հաստատուն կալ՝ մտացն առաքինութիւն է. և որոյ միտքն առաքինիք են, երդումն ոք 'ի նմանէն ոչ պահանջէ։ Իսկ երդմանց սովորութիւնք յաներկիւղածութենէ է, և յանընտրող յիմարութենէ. հանապազ կապէ զբանս իւր երդմամբք, և կապէ զհոգին իւր ընդ հուր գեհենին։

Եւ արդ զայս ամենայն իմացեալ թափեսցուք զթըմբիր յիմարութեան մերոյ. երկիցուք յահէ ահաւորի մեծին ՝այ, և բազում զգուշութեամբ պահեսցուք ըզհրամանս պատուիրանացն ՝այ՝ ամենաքննող և ճշմարիտ ահեղ դատաւորին, և զչար սովորութիւն 'ի լեզուաց մերոյ 'ի բաց արասցուք, և առաւել փութով հեռասցուք 'ի սատանայական և 'ի սատակիչ ախտիցն երդման. և մի վայրապար ընդ ՝այ յուխտ մտցուք և զսուրբ անունն ՝այ ընդ երդմանն կապեսցուք. այլ վստահացուսցուք ըզմարդիկ յոչն և յայոյն մեր հաստատել. զի այս են երդմունք քրիստոնէից հաւատացելոց. և ամենևիմբ ոչ նեղել զոք և զրկել, և ոչ հակառակութեամբ երդմունս

սատանայականս յեկեղեցի այ մուծանել։ Եւ զի՞ իսկ գոն, ասէ, դատաստանք 'ի մէջ քրիստոնէից. ընդէ՞ր ոչ դուք զրկիք և նեղիք 'ի նոցանէն, այլ դուք զրկէք և նեղէք զնոսա, որ ոչ էք 'ի քրիստոնէից հաւատացելոց, այլ յանօրինաց հեթանոսաց։ Զարդ 'ի բաց արասցուք զայս ամենայն, և դիցուք սանձս լեզուի և կապ բերանոյ զերկիւղն այ. զի ըստ հաճոյիցն նորա խօսեսցուք, և զկամն նորա արասցուք. կացցուք առաքինութեամբ, և վախճանեսցուք հաւատով, և անդ երթեալ զերկինս ժառանգեսցուք, և 'ի խոստացելոց բարութեցն վայելեսցուք 'ի Քրիստոս Յիսուս. որում փառք և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ՎԱՍՆ ԱՐԲԵՑՈՂԱՑ ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆՑ

Մեծ սգալ և ցաւագին արտասուք պարտ է պատմել զմիտս Ճառիս, և ցուցանել զանզգջի չարութիւնս արբեցողացն, զանապաշաւ անօրէնութիւնս բամբասողաց՝ որ միշտ արովայնի իցեն պաշտօնեայք, և չար դիւին արբեցութեանն կան 'ի հարկի։ Այս են հանապազ հայհոյողք և արհամարհողք և թշնամանողք պատուիրանացն Աստուծոյ. զոր և Պաւղոս իսկ լալով ողբայր ըզթշնամիս խաչին Քրիստոսի. որոց կատարածն, ասէ, կորուստ է. որոց Աստուծ որովայնն իւրեանց է, և փառք ամօթն. որք զերկրաւորս միայն խորհին, և ոչ զվարս առաքինութեան՝ զոր յերկինս վայելեմք. և մեծաւ ըզգայութեամբ նմանեն անասնոց անմտից՝ յամենայն ժամ խոտաՃարակ, զի թշնամիք խաչին են և չարչարանացն Քրիստոսի որկորեայքն և արբեցողքն՝ որ միշտ զորովայնն պաշտեն և ոչ զՔրիստոս, և անհնարին անզգայութեամբ զկեանս անցուցանեն. որոց և յայտնի իսկ բաղդէ մարգարէն՝ եթէ անզգամք և անմիտք կորիցեն։

Այս ոչ ուրեք այնչափ անզգամագոյն անմտութիւնք կայցեն, և ոչ կարասցեն գիտել՝ եթէ մեծ պակասութիւն է կուրի որ զքկեալն է 'ի լուսոյ արեգական։ Այս եթէ այս պակասութիւն է, պարտ է գիտել՝ թէ ո՞րչափ ևս առաւել մեծագոյն ևս պակասութիւն է և անհնարին կուրութիւն այնոցիկ՝ որ խաւարեալքն են 'ի լուսոյ պատուիրանացն, և վրիպեալք 'ի գթոց տեղեկութենէ. և ոչ կարեն որոշել զչարն 'ի բարւոյն, և ոչ հաւասար միմեանց իմանալ։ Այսպիսի ինչ է զոր ասեմն. որպէս թէ ումեք դիպեսցին երկու օձք չարաթոյնք, և զմինն թիւնաւոր կարծիցէ և փախչիցի 'ի նմանէ, և 'ի միւսն աներկիւղ մերձենայցէ՝ որ զնայն չարութիւն մահաբեր թիւնիցն ունիցի, և չարամահ սպանանիցէ։ Այսպիսիքք

են՝ որ զմի 'ի պատուիրանացն լսեն և պահեն երկիւղիւ, և զհաւասարն նորուն արհամարհեալ անարգեն, և նոքա վին չարաչար կորնչին։ Այս արդ այս է որով կորնչին. լուաք 'ի Պաւղոսէ, մանաւանդ եթէ 'ի Քրիստոսէ իսկ որ ասէ, թէ "Պողք և պոռնիկք և արբեցողք և բամբասողք զարքայութիւնն ՚այ ոչ ժառանգեն,,։

Այս արդ ոչ կայցէ այսպիսի յիմարութիւն կուրութեան՝ որ զայս ամենայն ընդ մի չարութիւն ոչ համարիցի։ Այլ յոմանց զգուշանայ և պահէ, և զոմանս արհամարհեալ անարգէ, և աներկիւղ մերձենայ՝ որ ունի զնոյն չարութիւն։ Արդարեւ իսկ անզգամք և անմիտք են այնպիսիքն, և նման կուրացեալ մոլորելոց որք ընդ խաւարն խարխափիցեն. այնպէս և նոքա յամենայն ինչ անխտրութեամբ մերձենան, և լքեալք 'ի սաստիկ ծուլութենէն, և աներկիւղ գործեն զարգելեալսն 'ի պատուիրանացն։ Զի եթէ արգել զպոռնկութիւնն և զգողութիւնն, արգել և զարբեցողութիւնն և զբամբասանս. զի միապէս հաւասար միով հրամանաւ արգել զամենայն։ Իսկ դու ընդէր 'ի համանմանն հաւասարացն յոմանց իբրև 'ի չարէ աներկիւղ հեռանաս, և յոմանց իբրև 'ի բարի անկասկած մերձենաս. զի եթէ պիղծ է գողութիւնն և պոռնկութիւն, պիղծ է և բամբասանք և արբեցութիւն. ընդէր զպոռնկութիւն զղջաս և ապաշխարես, և վասն էր զարբեցութիւնդ անփոյթ արարեալ արհամարհիցես, որք միապէս վիրաւորեն, և երկոքեան սպանանեն։ Զի եթէ օրէնսդիրն հաւասար չարութիւն ցուցանէր և համանմանս պղծութեամբ, և որ ասացն եթէ գողք և պոռնիկք զարքայութիւն ՚այ ոչ ժառանգեն, անդէն ասաց՝ նոյնպէս բամբասողք և արբեցողք զարքայութիւն ՚այ ժառանգել ոչ կարեն։

Այս արդ եթէ չար է պոռնկութիւն, չար է և արբեցութիւն. իսկ ընդէր չերկնչիս և խորշիս յարբեցութենէն իբրև 'ի պոռնկութենէն. այլ աներկիւղ մերձենաս, և անկասկած կատարես զարբեցութեանն պղծութիւնս։ Ո՞չ լուար 'ի Պաւղոսէ՝ զի միով պատժովք պատուհասէր զպոռնիկն և զարբեցողն։ Իսկ որ համարիցին եթէ զպոռնիկս դատի ՚ած, և զարբեցողսն ընդ նրմին ոչ, այսպիսիքն յիմարեալք և կուրացեալք են միտօք. զի նոյն հուր և նոյն վայրումն և նոյն տանջանք են

արբեցողին որպէս և պոռնկին. և որպէս և մարգարէն զվայրումն գեհենին նշանակելով ասէր. «Վայ հզօրացդ ձերոց՝ որ ըմպեն զգինին, և իշխանաց՝ որ խառնեն զգբին». զի գինին իսկ, ասէ, այրէր զնոսա անչափութեամբ և արբեցութեամբ։

Այլ և ոմանք զայրենն իսկ ոչ իմանան. զօձից չարաթիւնից բուռն հարկանեն, և զդառնամահ սատակումնն որ անտի է՝ ոչ իմանան։ Որոց ոչ միայն զոգին ապականեն արբեցութեանն զեղխութիւնք, այլ և զմարմինն փետեն և ապականեն գինւոյն նեխութիւնք, և հանապազ զսիրտն տաղտկացուցանեն, և նեղեն նողկալովն և շմալովն, և որովայնին փքալովն. և զողորմելի ոգին միշտ նեղէ և չարչարէ իբրև զթշնամի, և արգելեալ պահէ 'ի մթի և 'ի խաւարի՝ յորժամ մթերք կերակրոցն և ըմպելեացն 'ի ներքս ամբարիցին, և ընդ ցիխ աղբոյն և տղմոյն որդունքն զուղիցին, և զկարգս աղեացն ողողիցեն, և զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ։ Այլ միշտ հեծէ և հանապազ թառանչէ յորովայնին ծանրութենէ, և զժահահոտ զգայուքն նեխութեանն զմերձաւորսն զաղբացուցանէ, և 'ի կարկառակոյտ աղբոյն յաձախութենէ զառ 'ի վեր փսխածք ելանեն, և զառ 'ի վայր խողխոջանք արձակին, և շոգին աղտեալ ընդ երեսն մտանէ, և ընդ օդն տարածանին, և ազգի ազգի ցաւս 'ի մարմինն արկանէ. զսիրտն մեղկէ, զմարմինն թուլացուցանէ, զստամոքսն խանգարէ, զուղիղն ապականէ, զտեսանելիսն գիջացուցանէ, և զամենայն անդամսն ջրգողեցուցանէ. այլ և 'ի նեխութենէ լճացեալ աղբոյն զեռունք զեռան, և ճիճիք ծնանին. որոց բազում անգամ զսիրտն նեղեալ յանկարծամահ սպանանեն։ Ընդ այս և այսպիսի ցաւք և աշխատութիւնք են մարմնոյ 'ի զեղխութենէ արբեցութեանն։

Իսկ զոգւոցն ցաւոցն զինչ ասացից, և կամ որ բերան բաւական է պատմել զանհնարին աղէտիցն ցաւոց՝ որ 'ի դատաստանի մեծի ահեղաւուրն յայտնեսցի. սոսկումն բեմբին, արհաւիրք դատաստանին, դատն դատաստանն, անողորմ տանջանք, աններելի պապակումն գեհենին աղջամղին, տապարոաք ներքին և հնոցք վառեալք, յորհուրն հոսեալ ի ջանէ յորդահոս գետոցն հրեղինաց, որ կան և պահին 'ի պահանջումն ամենայն մեղաւորաց և

Digitized by Google

արբեցողաց։ Եւ եթէ մտքթ էր ցուցանել յանդիմանն, ասասէն իսկ 'ի տունջանս և 'ի գաւառապարտութեան ցուցանէր զոգիս արբեցողացն, զի միշտ 'ի մթի և 'ի խաւարի պահէ արբեցութեանն թմբրութիւնն, և իբրև 'ի յանդունդս ինչ աղջամղջին անկեալ գնի 'ի մարմին. և միշտ նեղեալ 'ի գինւոյն գիջութենէ՝ թաղեալ կայ հանապազ իբրև մեռեալ 'ի գերեզմանի կիսամահ և տրխուր. և արշաւի 'ի մարմնոյն թանձրութիւնն յաւելու, նոյնչափ և ոգին 'ի տկարութիւն իջանել։ Եւ արդարեւ իսկ յիրաւի են յայսպիսի խաւարի արբեցողացն հոգիք, որք զտիւն ամենայն յարբեցութեան ծախիցեն, և զգիշերն ազջամն 'ի քուն հանիցեն, և այգուցն յարուցեալք ծանրարթունք իբրև զխելագարս դանդաչիցեն, և չև երեկուն թմբրութիւնն թափեալ՝ անդէն 'ի նոյն գառնայցեն, և զհառս երկիւղի այ և վարուց առաքինութեան ոչ ճանաչեն։

Զոգ չիցէ՞ն յանկոյս խաւարի այնպիսիքն. չիցէ՞ն 'ի միգի և 'ի մելոթութեան մեռեալք և թաղեալք 'ի բարեաց, և չարեացն միայն կենդանիք. որք վասն արբեցութեանն շուայտանաց մոռացածին և բանիւք անօրէնութեան բանս ևս յօգեն և ասեն, թէ որ յարբեցութեանն ոչ գողանայ և ոչ պոռնկի և կամ սպանանէ, արբեցութեամբ միայն ոչ մեղանչէ։ Զայս 'ի մոռաց թափելոց են բարբանջք, որք և զարբեցութեանն անուն ոչ խնայեն։ Զի ամենայն որ արբենայ և սպանանէ, երկուք են չարիքն, սպանող է և արբեցող. նոյնպէս և որ արբենայ և պոռնկի, պոռնիկ է և արբեցող. իսկ անաւակ՝ արբեցողք միայն են։

Զվինեաւքք են որք յանդուգն ցանկութեամբ զհետ գինւոյն շրջիցին, և 'ի նմին յամիցեն, և զանէծս ոչ պատուիրանապահացն ժառանգեսցեն։ Զայսպէս և Զողոմոն ասէ՝ թէ ո՞ւմ է վայ, ո՞ւմ է խռովութիւն. եթէ ոչ այնոցիկ՝ որք յամեն 'ի գինւոջ, և որք դիտենն ուր գինեբաքն լինիցին, և անչափութեամբ գինւոյն զեղխեալ յիմարին և թմբրին իբրև զանբան անտաուն՝ ոչ գիտելով թէ ո՞ծ խնամտուն բանաւոր արար զքեզ, և դու յանաւակ արբեցութեանդ թմբրիս և յիմարիս և 'ի մոռաց անկանիս, և չես 'ի մարդկան համարի, այլ 'ի վայր ևս քան զանասուն՝ անզգայացար յիմարութեամբ

և անքանութեամբդ, և ամենևին իսկ իբրև զփայտ և զքար անզգայացար 'ի գինւոյդ զեղխութենէ։ Օ՜ի թէ պէտ և մնրմին է արբելոյն, ձեռքն 'ի գործոյն են դադարեալք, ոտքն 'ի գնացիցն են պարապանդեալք, լեզուն 'ի խօսելոյ համրացեալ, լսելիքն 'ի լսելոյ են խըցեալք, աչքն 'ի տեսութենէն կուրացեալք, սիրտն յիր մնատութենէն է յիմարեալ, և ամենայն անդամքն է 'ի խոտարի՝ խելացնոր և մնակորոյս։

Այս են չարիք և անօրէնութիւնք արբեցութեան՝ որք զաղբայութիւնն ՚ի ոչ ժառանգէն, այլ ընդ պռանիկս և ընդ ապանողս դատին. զի զիմաստունն ասեղծեալ՝ 'ի յիմարութիւն փոխեցին ցանկութեամբ գինւոյն արբեցութեան։ Այս ուր են և ուր երթանն և ուստի գան՝ ամենևին իսկ ոչ իմանան, զի ըմբռնեալ ունին զգայութիւնսնոցա գինւոյն թմբրութիւնք, որ յիմարեցուցանէ զիմաստութիւս, թուլացուցանէ զթմբրութիւնն, քայքայէ զիսորհուրդսն, և լուծանէ 'ի յուժոյ ուրութեանն գինւոյն զեղխութիւնն։ Այս արդ ոչ է այս տրժանի մեծի տանջանաց և ահեղ բարկութեանն 'ի վերուստ. զի զիսօտունն և զբանաւորսն անբան անասունն եցոյց արբեցութեանն զեղխութիւն։ Այսոր որոյ Պաւղոս պատուիրէ՝ եթէ "Մի՝ արբենուք գինւոյ յորում զեղխութիւն է,,։ Օ՜ի եթէ որք 'ի խորանն մտանէին 'ի հնումն՝ գինի ամենևին իսկ ոչ ճաշակէին, որչափ 'ի նորումն պարտ է պարկեշտութեամբ եւ մնանել առաջի այ, զի մի յարբեցութենէն զեղխիցիմք, և յանդիմանեալ դատապարտիցիմք իբրև զորդիսն Հալոմնի, որ վասն զեղխութեանն հուր օտար եկեր զնոսա, որ եղև յօրինակ անառակ քահանայիցն։ Այսոր ոչ որոյ գիրն ասէ՝ եթէ անառակ է գինի, և թշնամանող է արբեցութիւն, եւ որ խառնակի ընդ նա՝ չէ իմաստուն. զի իմաստնոյն և ջուրն միայն բաւական է 'ի դադարումն ծարաւոյն, և 'ի պէտս խելացն զուարթութե. քանզի զուարթ են, ասէ, խելք ջրարբաց, և առողջ են մարմինք ուծակերաց. զի և տերն ամենայն արարածոց այսպիսի սեղանովք յագեցուցանէր զժողովուրդն յանապատին, և զգինի ամենևին ոչ յիշեաց. զի օրինակ ամենայն աշխարհի էր լինելոց Ճաշն Քրիստոսի։

Բայց գիտեմ զի ասես իսկ, եթէ ընդէր ապա արար

զգինին՝ զի զբմպելն արգել։ Եւ եթէ զբմպելն արգել, այլ զարբենալն. որպէս արար զգինի վասն ամուսնութեան, և զպոռնկութիւնն արգել. արար և զերկաթ վասն երկրագործութեան, և զպատերազմն արգել. արար և զգինի վասն մերոյ տկարութեան, և զանչափն կարձեաց։ Եւ եթէ զբմպելն խոտէ, այլ զարբենալն պատուհասէ։ Բայց և գինի իսկ 'ի պէտս հիւանդաց է և ոգեւորաց, և մեծի խորհրդոյն. որպէս և ասէ՝ եթէ գինի ոգեւորաց, և ուրախութեան այնոցիկ որ 'ի տրտմութեանն իցեն։ Իսկ որ զկենդանութեան զպէտս վճարէ, հաց է և ջուր և հանդերձ. բայց այլն ամենայն ցանկութիւնք են և ոչ կարեւորք, ընդ որ ոմանք սովորութեամբ և կամաւք կապին, և ոմանք կամաւ և սովորութեամբ հեռանան։ Եւ արդ մեք մի սովորութեամբ իսկ կապեսցուք ընդ չար դիւին արբեցութեան. այլ կամաւք հեռասցուք յոր կորստութենէ կերակրոց և յանառակ արբեցութենէ, որով զօրէնս նորա ընկալցուք. զվարս յարդարեսցուք, և զառաքինութիւնս յօրինեսցուք, և զսէր սուրբս սիրեսցուք, 'ի պահս պնդեսցուք, յաղօթս պարապեսցուք, յոգորմութիւնս յորդորեսցուք, և 'ի պարկեշտութիւն յօժարեսցուք, զանձինս արդարասցուք, և զոգիս մեր ապրեսցուք. զվախճանն բարի ընկալցուք, զի յանանց 'ի կեանսն փառաւորեսցուք, և ընդ հոգեղէնսն դասակցեսցուք. զփափագելի դրախտն ժառանգեսցուք, և յանմահ բարիսն վայելեսցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ԺԷ

ՎԱՍՆ ԱՆՕՐԷՆ ԹԱՏԵՐԱՑ ԴԻՒԱԿԱՆԱՑ

Ո՛ւր երթեալ դադարեցից և լացից զահեղ անօրէնութիւնս որ զիս ճմլեցուցանէ. և կամ ո՞ւր լռեալ ղօղեցից թախծեալ մեղօքս, և մաշեալ յամենայն զազրալի և չարալուր համբաւոյս՝ որ միշտ զսիրտ իմ գելու, և գալարեցուցանէ զաղիս իմ և զորովայն իմ ողբալով, և հանապազ հալեն և հեղձուցանեն զիս տրտմութիւնքս. զի յամենայն ժամ զանառակ պղծութիւնս լսեմ, և զանօրէն ամբարշտութիւնս տեսանեմ։ Այլ 'ի բազում թախանձանաց սրտի իմոյ կցեցաւ ոսկր իմ 'ի հող, և մարմին իմ յերկիր քանցեցաւ. զի 'ի լռութենէ բազում մնաց յուզութեանց եղև իբրև զխուլ չորացեալ, և իբրև զպատկեր ինչ առանց շնչոյ. և յափշութենէ մնաց իմոց զիմ սխալանս յետոյ ընկեցեալ մոռացայ, և զձերդ քննեմ հանապազ։ Ա՛ սան զի լուր չար և համբաւ զազրալի 'ի լսելիս մեր հասեալ հնչեն հանապազ. յորմէ բուրէ սատրիկ ժանդութիւն և շարաւ նեխութեան և փտութեան. և հոտ չարահոտ 'ի վերս ցոլացեալ տաղտկացուցանէ զսուրբ եկեղեցիս, ընդ որ անձինք ամենայն արդարոց ահիւ հիացեալ ողբան զանօրէնութիւնն։

Այլ ես լի ամենայն յանցանօք միշտ զդոյն հառաչեմ և սգամ. զի 'ի զազրալի անօրէնութեանց ձերոց յամենայն ժամ թատերք սատանայականք ցնծան խայտալով, և եկեղեցիք Քրիստոսի միշտ ողբան դառնապէս։ Քանզի առեալ զմանկունս սուրբ եկեղեցւոյս՝ իւր ընծայեցոյց սատանայ, պղծեալս և պղտորեալս յանառակ թատերս տեսարանաց։ Ո՞ր միշտ հանապազ կամի հեռացուցանել զմարդիկ յողորմութենէն այ, և յամենապայծառ անանց բարութեանց, և տանել առնել բաժանորդս իւրոյ ահեղ աղէտիցն տանջանաց։ Ա՛ սան որոյ զի-

մոյ բազում յանցանացն անտես արարի, ձերոյ վշտացդ լինիմ վշտակից, և ողբամ զանձերևոյթ վեր բեկմանն անձին ձերոյ. զի մերժեալարհամարհեցեք զպատուէրս պատուիրանացն ՅՍ, և առ ոտն հարեալ կոխեցեք զհաւատս առաքելական եկեղեցւոյ. և առ ոչ ինչ համարեցայք զսրբութիւնս մարմնոյ և արեանն Քրիստոսի, զոր հանապազ ընդունիք յահաւոր և 'ի սոսկալի սեղանոյն։

Եւ արդ յոյժ ընկղմեալ էք 'ի դիւական մոլորութենէդ, և գերեալք և գրաւեալք 'ի խորհրդոց սատանայի. փութացայք անկանել 'ի դառնամահ որոգայթս նորա, երթեալ մնանել յապականիչ թատերս խաղաց, լսել զձայնս աղտեղիս խաբարան ականջաց, 'ի զազրացելոցն և պղծեցելոցն յանօրէն և 'ի չարալուկ կատաղանաց գուսանաց, որք միշտ զչնորհս հոգւոյն սրբոյ հալածեն, և զմահաբեր պիղծ խորհուրդ սատանայի 'ի սիրտս և 'ի խորհուրդս ձեր սերմանեն. յորմէ վառեալ լուցանի հուր ցանկութեանց, և բորբոքեալ տոչորի բոցն ազգի ազգի ախտիւք 'ի մարմինս հնազանդելոյն, որք իբրև զփուշս և զտատասկս թաղեալ զանձինս վիրաւորեն, և մթերեալ կուտեն բեռինս դժուարակիրս 'ի վերայ ոգւոյն կորուսելոց։ Եւ հուր այրիչ և սուր սատակիչ անձանց իւրեանց ստացեալք ելանեն 'ի թատերս պղծութեանց՝ եղեալ կաբեվերս և հաստախոց 'ի գաղտնի նեռից սատանայի՝ որ չարաչար զոգիս. վիրաւորէ, և փոքր կարծեցուցանէ զմեծամեծ անօրէնութիւնս. յորմէ պարտ էր սարսել և դողալ հանապազ, և փախչել և հեռանալ բազում երկիւղիւ։ Օ՛ և չար է սովորութիւնն, չար են և յորդորիչք նորա՝ զինի և գուսան և սատանայ, և միտք մոլորեալք ցոփագնացութեամբք և յափրանօք վաւաշոտութեաբ, որք կամայօժար և դիւրահաւան ընդունին զչար սերմանս սատանայի, մանաւանդ թեթևամիտ և շուաղաբարոյ ազգն անհամեստիցն կանանց, երաշխաւոր և դիւրահաւան և վաղապատիրք [1]. որք յափրանօք պակշոտեալք միշտ 'ի թատերան փութան աներկիւղ 'ի տեսիլ անօրէն խաղացն և սատանայական հրապարակին, ելեալ 'ի վեր 'ի գիտակ տեգիս նատին, խորհին և դիտեն զնմանիսն իւրեանց 'ի չարիս.

1 Երկու օր. ընդվայրապատիր ... 'ի վերնագիրսն գրեալ։

որ թէպէտ և գործոյն անօրէնութեան ոչ պատահէն առաջամայն, սակայն զնեռոս սատակիչս հարեալ տանին 'ի սիրոս, յորմէ պարտ է առ յապա մեռանել։ Որպէս և զգաղան ինչ վիրաւորեալ 'ի նետից որսորդաց, որ թէպէտ առաջամայն 'ի հաղբիցն զերծաւ, սակայն զնետոն տարեալ մեռանի։

Այս արդ ի՞ւ իւիք դադարեցուսցուք զահեղ տոչորումն ցոլացեալ բոցոյն այնորիկ. և կամ ի՞ հնարս բժշկութեանն երևոյթ վիրացն գտանել մտրթասցուք. և կամ որովհետև իւիք աւարեալ կործանեսցուք զտեղի թատերոյն պղծութեան, զորոգայթն մահաբեր, զժողովն բազմաչար, զարուեստանոցն ամենայն ախտից։ Զի անտի յորգորին կուսանք 'ի պոռնկութիս, ամուսնաւորք 'ի ինութիւնս. անտի լինին կանայք ատելի արանց, և արք կանանց արհամարհելի. անտի որդիք 'ի հարանց թշնամանին, և ծառայք 'ի տերանց. անտի ծերոց անհամութիւն և երիտասարդաց վաւաշոտութիւն. անտի է պառաւանց յայրատութիւն, և աղջկամարդկացն գիշութիւն, և արանց լկտութիւն, և կանանց կատաղութի. անտի են մարդեղուզութիւնք և կնահանութիւնք և մանկասպանութիւնք և այլ զբկութիւնք յաղագս զարդուցն պաճուճանաց. անտի են սնափառութիւք և պրճնութիւնք, և բազում մեքենայք չարարար ախտից. անտի է և զանազան պղծութիւնք՝ զոր և ասել իսկ աղտեղի է։ Այլ և ուսուցանէ անձին լկտութիւն, ոգւոյ մեզկութիւն, մտաց քայքայումն, աչաց յարատութիւն, լեզուի դատարկաբանութիւն, գործոց հեղգութիւն. և պարապեցուցանէ յամենայն չարիս, որ ուծացեալ հեռացուցանեն 'ի սիրոյն ՅՍ, և մերժեալ հանեն 'ի քրիստոնէական կարգէ։ Այլ և զայլ ևս աղգի աղգի կերպարանս չարեաց ասել չեմ բաւական, զոր թատերքն ուսուցանեն. զամբարտաւանութիւն, զհայհոյութիւն, զնենգութիւն, զմերմերութիւն, զչարակնութիւն, ըզհարիանձ, զբամբասանս. վասն որոյ զեղուն պատուհասքն ՅՍ 'ի վերայ երկրի, որ սաստիկ սրտմտութեան 'ի տանջանս դատապարտէ։ Այսոքա զայս ամենայն անօրէնութիւնս ստանան՝ որք մտանեն 'ի թատերս խաղուցն, և ՅՍ ՀՍ 'ի մարմինս իւրեանց զչար դրոշուղ սերմանցն սատանայի։

Եւ արդ որ բերան բաւական է ողբալ և լալ զայն-
պիսի աղտեղեալն և զպղծեալն. և կամ որ լեզու
պատմել կարասցէ զանթիւ աղէտիցն բազմութիւնս՝
զոր անտի ստանան. և կամ որ միտք ցուցանէ զահեղ
տանջանացն բազմութիւնն՝ զոր պատրաստեալ է նոցա
'ի հոսանս հրոյ գեհենին ընդ ՅԾամարտն սատանայի,
որք զխաւարայինսն ախորժելով ընկալան։ Եւ արդ էր
վասն այդպիսի տանջանացդ մատնիցիս, և կամ զինչ 'ի
պիղծ խաղոյն ընկալար. քրքրանս և ցոփանս և թե-
թևանս, և օգուտ և ոչ ինչ. այլ անթիւ ահեղ աղէ-
տից բազմութիւն։ Ի թէպէտ և պակշոտելոցն լինին
ցանկալի պիղծ թատերցն տեսութիւն, որք միշտ յախտիցն
ցանկութիւնսն ծիւրին և ծորան, այլ առողջիցն երևի
տաղտկալի պղծութիւնն և ամօթալի վաւաշոտութիւնն։

Կանայք 'ի բարս բոզից կերպարանեալք, և արք ձիոց
մատակախազաց, որք անօրէն զաղրաբանութեամբն և
քան զանասունս ևս 'ի վայր ինջանեն, և քան զշանց փրս-
խածն աղտեղագոյնս ևս փսխեն զտաղտկալի բանիցն
զգարշութիւնս, յորմէ շաւաւ նեխութեան և հոտ զաղ-
րալի ելանէ, որ զանձինս երկիւղածացն զզուեցուցանէ,
և դիւացն է ցանկալի. զի 'ի մէջ այնպիսի խայտառա-
կելոցն սատանայ գումարեալ շրջի 'ի վերայ։ Ի ուր
կատակք և գուսանք են և խաղ և ծաղր լկտիք, անդ և
դևք ընդ նոսա 'ի պարու անցանեն, և սերմանեն բա-
զում աղտեղութիւնս 'ի միտս զեղխեցելոցն, և առաւել
ևս 'ի մոլեգնութիւն բորբոքեն զչուսանսն՝ զպիղծ և ըզ-
հալածողս հնորհին սրբութեան, զբորբոքիչս հրոյն ցան-
կութեան, զարհամարհողս պատուիրանացն, զկարա-
պետս սատանայի խորհրդոցն, զանօրէնս և զՅԾամարտս
և զթշնամիս ամենայն արդարութեան։ Ի որս պարա
էր իսկ բազում քարամբք քարկոծել և յաշխարհէ հա-
լածել, զնոսա առեալ զեղխելոցն 'ի խաղարանս զբօսա-
նին, յորս մտանեն ողջանդամք, և ելանեն վիրաւո-
րեալք. զՔրիստոս 'ի բաց մերկացեալք, և զսատանայ
յանձին զգեցեալք. զհոգին հնորհաց հալածեալ, և լը-
ցեալ պիղծ հոգւովն դիւայ։ Ի ամենայն որք հաւա-
տովք և երկիւղիւն մերձենան 'ի Քրիստոս, տուրբ հո-
գւովն լուսաւորին, և օր ըստ օրէ գործովք առաքինու-
թեամբ 'ի վեր ելանեն, և մեկնեալ հեռանան յամե-

նայն խաբէից սատանայի։ Եւ որ պղծութեամբ թատերայն առ դևս հպին հանապազ, խաւարին վարիւք միգապատեալք մթանան, և ընդ պիղծ ոգւոցն սատանայի, և օր ըստ օրէ անօրէնութեամբք ծանրացեալք 'ի վայր կործանին, մինչև ուծացեալ հեռանան յերկիրս։ Եւ վասն այսորիկ առաւել ախորժելով ընթանան 'ի քանակեցող դիւաց, փութալ 'ի կոչն սատանայի՝ քան առ Քրիստոսի սուրբ եկեղեցին։ Օ՜ի բանակք դիւաց են թատերքն խաղոյն, և ամենայն անառակ և գուսանական գինարբուքն, որք զեղխին և պակշռոտին անօրէն և անաւծաբար՝ լուծեալ զանձս լեզուի և զկապ բերանոյն արձակեալ ուտեն և շուայտանան հանմանգամ[1] կերակրոցն, և հոտն հոսեալ 'ի բերանոց նոցա՝ բուրէ բազում ժանտութիւնս. և խորհին և խօսին զամենայն կանն սատանայի, և ոչ իմանան զչար նետս սատանայի։ Հարկանէ՝ և զվէրսն խաղալոյ, և չտայ իմանալ, զի մի ապաշխարութեամբ բժշկեսցուք. վասն զի գող է, և ոչ ընդ յայտնի ճանապարհն գնայ՝ եթէ զգուշանայցեմք. այլ գաղտնի և զկեռ արածէ, և անակնածելի տայ արհամարհել զմեծամեծս պատուիրանայն, և փոքր կարծեցուցանէ՝ զի մի զգուշացուք։ Զի՞ տես թէ արգելեալ է 'ի պատուիրանացն զբան տգեղ և զատարկ, զլամբասանս և զհայհոյութիւնս. և առաւել հեղուն 'ի բերանս վաւաշ գուսանացն և բազում խեղկատակութիւնս և մորոսախօսութիւնս, զարշաբանութիւնս, զատարկաբանութիւնս։ Զրհամարհութիւն, ճաղութիւն և հայհոյութիւն հոսեն 'ի նոցանէն հանապազ. զի 'ի ծաղր և 'ի խառն և 'ի խառնախօսութիւն դեռ փութացեալք հասանեն, և բերեալ ախտս բազումս ջամբեն և արբուցանեն՝ որք անդն շուայտանայցեն։ Զայն որոյ պարտ է լալ և ողբալ զայնպիսի անառակութիւնս, և մանաւանդ զկատակն մտակորոյս՝ որ 'ի մէջ վրտի բազմանկանացն. իբրև զայսահարս յատիրին, ծռին, պչելուն, աքսորտեն, և զամենեսեան աղտով բերանոցն պղծացուցանեն. զոմանս հայհոյէ, զոմանս բամբասէ՝ զոմանս թշնամանէ, և զոմանս ճաղէ, խեղութեամբ ամենեսին կուրացուցանէ. ոմանց ստէ, և յար-

[1] Երկու օր. համանգամայն էրակրոմ։

գանաք մնափառեցուցանել. իբրև զշուն կատաղեալ զա-
մենեսեան առ հասարակ խածանել։

Օ՜ինչ գործես, ով Թշուառական. ընդէ՞ր ոչ փառ-
Թաս Թափել 'ի չարաչար ամբարշտութենէդ. ընդէ՞ր
ոչ սգաս յանզգամութենէդ՝ գալ 'ի միտս քո. ընդէ՞ր ոչ
ողբմիս ոգւոյդ կորուսելոյ. ընդէ՞ր ոչ լաս և ողբաս զա-
նօրէնութիւնս. ընդէ՞ր հուր 'ի հուր յառելոս ապրել
դառնապէս. ընդէ՞ր 'ի վերայ կայծականց և փշոց գնաս
հանապազ. զի՞ ընդ բեռինս մեղաց բևեռիս հանապազ.
հիմ քարավէժ և դարահոս լինիս 'ի վախիս. վասն ի՞ր
սուր արես, և նովին վիրաւորիս. զի ոչ ոք է՝ որ հրով հաւ
շինուցանել, և ոչ ջարիւ քարւոյ հանդիպի։ Ա՞վ է որ
փուշ տնկէ՝ և խաղող կթիցէ. կամ օձանն սերմանիցէ՝ և
ցորեան հնձիցէ. և ոչ անառակ վարիւք ոք զՔրիստոս
տեսանիցէ և զարքայութիւնն ժառանգիցէ. այլ 'ի հուր
գեհենին դատապարտի 'ի մէջ որդանցն Թիւնաւորաց։
Այլ որ այդպիսի անօրէն լկտութեամբ և գինեմոլ զեղ-
խութեամբք կեցցէ, և դիւական Թատերօք և ծաղրա-
ծու գուսանաւք վարիցի, մի՛ ամենևին ակնկալցի ապրել
'ի հոյն տանջանաց։ Մտիշեա զբանն ահեղ, Թէ վայ որ
ծիծաղիցին այժմիկ, զի նաքա սգայցեն. վայ որ խնդան
այժմ, զի՝ նաքա լացցեն և ողբասցեն. վայ որ քմծիկն զի-
նի յարբենալ, և անոյշ իւղաք օծանին. վայ ձեզ մեծա-
տանդք՝ զի ընկալայք աստէն զհատուցումն բարութեան
ձերոյ. զի բաղամ նեղութիւ պարտ է մնանել յար-
քայութիւնն ՚ի։ Ա՞ռդ Քրիստոս լալ և սգալ ասաց
յաշխարհիս, և դու ծիծաղիս և ցնծաս, և ոչ զարհու-
րիս և դողաս յահեղ դատաստանացն ՚ի, որ Աշխարհիս
քննել զամենայն որ կամաւ և որ ակամայ, զոր 'ի ծո-
լութենէ և զոր 'ի մոռացմանէ գործէք։

Ա՞ռդ փութա մաքրեա զանձն քո յայրատութենէդ,
զլեզուդ 'ի դատարկաբանութենէդ, զաչս 'ի պղծա-
լուր սովորութենէդ, և զմիտս քո 'ի մեհեանք սատա-
նայական խորհրդոց։ Ա՞նկիր առաջի ՚ի և ասա. մեղայ
յերկինս և առաջի քո։ Ա՞ի հեղգար 'ի վաստակ ա-
պաշխարութեան՝ մինչ աւուր կայ. ահա փութա 'ի գի-
շերն յայն հատանել ահեղ և սակաւն խուսարին և աղ-
ջամղին։ Ա՞ռդ ծանիր զմեղաց քոց բազմութիւն. յի-
շեա Թէ մեռանել ունիս առ վաղիւն. նկատեա զպա-

հանջումն հոգւոյդ քո 'ի մարմնոյդ. և ած զմտաւ հանապազ զմեծ ահեղ օր դատաստանին, զհուրն անշէջ, զխաւարն աղջամղջին, զգուբն ապականութեան, և ըզտարտարոս գեհենին, և զդառն ողբումն մեղաւորաց յահեղ դատաստանայն ահագին դատաւորին. ուր բանք սպառին, և գործքն թագաւորեն. ուր խորհրդոց և գործոց պահանջումն. ուր դատարկաբանին են խնդիրք, և անդէպ մտածութեան համարք։ Որդ զայս ած զմտաւ հանապազ, զայս յիշեա միշտ. յոգւոց հան և ողբա, հեծեա և լայ անդադար, զի թերևս ապրել կարիցես յահեղ աղէտիցն տանջանաց և յանշեջ խաւարէն, և հանդիպել անանց բարութեանն խոստացեալոց 'ի Քրիստոս Յ՚ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

ԺԸ.

ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ԿՆԱԹՈՂԱՑ

Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն փրկական բանիցն յանդիմանութեան չարչարանօք իսաչեցաւ յաճատարտ ազգէն և յընդդիմակաց Ժողովրդենէն։ Եւ այժմ նոքա ոչք զուղիղ բան և զփրկական վասն փրկական ոգւոց խօսիցին, թշնամանեալ բամբասին 'ի կարծելոցն իմաստնոց։ Բ.յլ չէ այն իմաստութիւն, այլ իշխանութեան անիրաւութիւն, զ' իմաստութիւն երկիւղ տեառն է. և որ եգիտ զերկիւղն ՅՍ, նա եգիտ և զիմաստութիւն։ Բ.յլ թէ իցէ և իմաստուն, չէ պարտ զօգնականն իւր արհամարհել։ Բ.պա իմաստուն էր և Ի'ովսեպ, սակայն լուաւ խրատուն Յոթորայ. հոգևոր էր և Դաւիթ, այլ պէտք եղեն և նմա 'Լաթանայ յանդիմանութիւնն. զ' իմաստունք իմաստնոց լսեն, և խոնարհք խոնարհաց հնազանդիցին։ Զ.յ որք ուղղապէս մնաց աչօք նայիցին 'ի պատուիրանս ՅՍ, և հոգևոր վարիւք զքաղցրութիւն արտին ստացեալ ունին ազատաբարոյ բարուցն հանդարտութեամբ, չէ պարտ արհամարհել զայսպիսի աղերսաբանութիւնս. քանզի երանելին Պետրոս ասէ՝ եթէ "Բ.ոք իմաստութեամբ բնակեսցեն ընդ կանայս, իբրև տկար անօթոյ արասցեն պատիւ կանանց.,։ Եւ ոչ ատելութեամբ ինչ հեռանալ հրամայէ. զի ամենայն, ասէ, որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է. իսկ որ զկինն իւր ատէ, անձնասպան է։

Բ.յլ թէ վասն չքաւորութեան ոք որդւոյ առնիցէ ատելութիւն ընդ ամուսնոյ իւրոյ, չար է առաջի ՅՍ։ Զ.ինչ օգուտ է որդիս խնդրել, և զդիս կորուսանել անիրաւ ատելութեամբն։ Զ.ի ոչ եթէ որդւոց խնդիր է առաջի ՅՍ, այլ անարատ ոգւոց։ Քանզի և մարգարէն ասէ վասն անիրաւ որդիս խնդրելոյ. որոյ վարձք իւր առ ՅՍ են, այն է պտուղ որովայնի իւրոյ, և զա-

Digitized by Google

ւակ սուրբ արձանութիւն նորա։ Բ. յլ ոչ գիտէ՝ եթէ վասն առնն յանցանաց արգելլ ՝ի զպտուղ որովայնին, և կամ վասն այլ բարւոյ չետ. զի բազում որդիք են որ բարկացուցանեն զծնողս, և ընդ արիւն զկեանս նոցա անցուցանեն. և վասն այնորիկ արդեօք արգելու ՝ի։ Բ. յլ և այլ անիրաւութիւն է, եթէ զայ ոք գործ 'ի մարդոյ պահանջէ. և անիրաւք, ասէ, զարքայութիւնն այ ոչ ժառանգեն, քանզի անիրաւութեան ասմկաց [1]։ Իսկ թագաւորաց և իշխանաց անիրաւութեան՝ պատուիրանք այ են յանդիմանիչք և արգելիչք։

Եւ արդ զինչ օգուտ իսկ են որդիք ոգւոց. ահա մարդ, ասէ, և գործք իւր։ Ընդ ած զմտաւ զահեղ զարհաւիրս ահագին աւուրն այնորիկ, և մի ընդդէմ ինչ կամայն այ առնիցես, զորս յետ սոսկալի ատենին այնորիկ մատնեսցին աղէտիցն տանջանաց. զի մի ոք կարծիցէ իբրև զաստի ինչ չարչարանս՝ զոր երկրաւոր թագաւորք ածեն 'ի վերայ մահապարտացն։ Բ. յլ անդ դառն լալիւն է, և չարաչար կսկիծք, և աղախարշանք յորդահոս գետոցն հրեղինաց՝ որ 'ի վերայն հոսեսցին, 'ի գուբս հրացան կայծականց հնոցին՝ ուր տանջին և մնաջին մարմինք մեղաւորացն 'ի խորս տարտարոսացն և յանչշյալ խաւարն, 'ի մէջ որդանցն թիւնաւորաց. զոր ոչ զչարաչար իրս աղէտիցն բանիւք ոք ոչ կարէ ցուցանել՝ զողորմելի վարանումնն, և զահեղ ողբումնն աննեբելի տանջանացն. զոր եթէ աշխարհս ամենայն մեծաւ սգով ողբասցեն, այլ և փայտք ևս և քարինք լայցին 'ի ձայն ողորմելի աշխարանաց, ոչ կարեն արժանապէս ողբալ և սգալ զայնոսիկ՝ որք այնմ չարատանջ գեհենին և աննեբելի աղէտիցն մատնեցան։ Օ որ պարտ է առտէն միշտ զմտաւ ածել, և զգուշութեամբ անցանել ընդ սահելի և ընդ ծփալի և ընդ մեղասէր կեանս աշխարհիս։ Եւ անբաւ են յաւիտենականքն, պատիր և երազ են երկրաւորքս սիրելի, և տկարագոյն քան զաւրգի ոստայն։ Ահա այսօր և վաղիւ, և այլ ոչ ևս իցեմք. երկաւուրց է հանգիստ աշխարհիս, և յաւիտենական են տանջանք և ամօթ։ Ահա յայլ երկիր կայ անցանել, և զտէրն փառաց կայ տեսանել։ Արտիւ զսիրտս քննես-

1 Թերի է պարբերութիւն բանիս։

ցուք, և աստէն մաքրեսցուք. զի յետ սակաւ աւուրց եմք երթալոց առ ահեղ և անխոսք դատաւորն՝ որում գաղտնիքն մեր յայտնին, և զիսորհուրդս սրտից յանդիմանեսէ. յորմէ ոչ ինչ ծածկի 'ի ճշմարտատես և 'ի քննող ականէն։

Զոգ երկիր յահեղ ահեղ դատաստանէն այնորիկ, և մի այլ ևս յերկար աներևոյթ սրոմն վիրաւորիր, և չար 'ի չար յաւելուլ՝ յանցանելն տրտմութիւնն յամեցուցանելով զանդամն քո. վասն որոյ պէտք են յերկար ժամանակի ապաշխարութեան և ընդ այդր՝ եթէ երկեղած իցես յայ։ Զոգ մի ևս հաստուցաներ ապաշխարութիւն[1] քահանայից, և զեկեղեցի տրտմեցուցաներ և այլ ևս ժամանակաւ. մերձ է վախճանն հասարակաց, փութա մերձենալ առ ած, և ած մերձեսցի առ քեզ։ Զհա գող է օրն մահու, գուցէ հասանիցէ տարաժամ. արթուն լերուք, ասէ, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն, որ յանկարծակի անակնկալ անկանի 'ի վերայ քո իբրև զողոգայթ։

Զոգ երկիր դու յօրէն յայնմանէ. փութով զզնացիր զոր գործեցեր դ մինչ դեռ մերձ է ժամանակս. մի պատաղիր[2] երկրաւորաց, զի 'ի մնոյ փոխելոց եմք 'ի վերին քաղաքն, և մնան աստէն ժողովեալքս յաշխարհիս. զի ոչ բերեալք ինչ յաշխարհս, և ոչ տանել ինչ կարասցուք աստի. այլ մերկ մնալք յաշխարհս, և մերկանդամ անդրէն դառնալոց եմք։ Զան որոյ միշտ ըզմտաւ ած զերկիւղ ահագին աւուրն այնորիկ, և մի մոռանար զբոցն՝ որ ոչ երբէք շիջանի. և փութա խոտորել 'ի ձախոյն սատանայի, և լինի ած ընդ աջմէ քումմէ. լուր հոգւոյն սրբոյ, և ած լուիցէ քեզ յահեղ աւուրն տագնապի։ Զի ինդրեր 'ի բարեխօսութիւն ըզբանս շքեղ երեսաց և զպատիւ նախանթառոյն, յորմէ և վարձս սակաւ ընդունիս։ Զայլ յիշեա եթէ գոն դատաստանք, կան տանջանք, լինի յարութիւն և ինդիրք ամենայն գործոց. և այսու երկիւղիւ հնազանդեա, զի և վարձս մեծամեծս ընկալցիս։

Զեծ է լսել ձայնի աւետարանին 'ի բարեխօսութիւն մահկանացու մարդկան։ Զուր մնարգարէական հրամա-

1 Թերևս ապաշխարութիւն։ 2 Յորինակին. պաղատիր։

նին և առաքելական պատուիրանացն քեզ 'ի բարեխոսութիւն, և հնազանդեա ՅԾայինն պատգամիս. ած ըզմտաւ և զմեղաց քոց զբազմութիւնս։ ||՝ի զսակաւն ուրուք պահանջեր. 'ի միտ առ զահագին բողոքումն պատուիրանաց՝ որ քեզ վկայեցին։ Ոչանիր զի և ընդ բանիցն իցէ դատումն և ընդ խորհրդոյ և ընդ սակաւիկ ինչ քինի պահանջումն։ Հայեաց 'ի կեանս աշխարհիս՝ զի իբրև զտուեր անցանեն, և փութա յօր ահագին դատաստանին։ Երկիր 'ի սոսկալի բեմքէն և յահագին դիմաց դատաւորին, և եկ 'ի զգաստութիւն. դողա 'ի դառն դատաստանէն և յանտանելի ամօթոյն, և փութա զնա հաշտեցուցանել. զարհուրեա 'ի չարաչար տանջանացն և յանշեջ խաւարէն, և եկ 'ի լուսոյն Ճանապարհ. փափագեա անբաւ բարութեանցն և անյագ փափկութեանն, և հան հալածեա 'ի քէն զՀոգեկորոյս խորհուրդս սատանայի. հնազանդեա հոգւոյն սրբոյ հրամանաց, և բանիւ բերանոյ ՅՅ՝ որ ասացաւ քեզ 'ի թղթիդ, զի և վարձ քում հնազանդութեանդ զաբբայութիւնն երկնից չնարհիցէ հանդերձ անբաւ բարութեամբքն. և յաստիս առողջ մարմնով պահէ 'ի ցաւոց, և քաւեալ ոգւովք 'ի մեղաց. և բովանդակ քո ոգի և շունչ և մարմին անարատ 'ի գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցէ. որում փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ԺԹ

ՎԱՄՆ ԱՆԱՄՆԱՄՈԼԱՑ ԵՒ ԻԳԱՑԵԼՈՑ ԵՒ ԱՐՈՒԱԳԻՏԱՑ

Ողբալով յիս հոգի իմ հիացեալ զարմանամ, և առ կալի հիացմամբ և դողութեամբ անձն իմ հեծէ անդադար, առ միշտ հանապազ զմտաւ ածելով թէ յորպիսի անդունդս խաւարային ախտից սողի ինքանէ ժպրհութիւնս մեր. ընդ որոյ ախտիւ տարակուսեալ լեզու իմ տկարանայ առ ոչ բաւել ցուցանել զահեղ ախտիցն պղծութիւնս՝ որ առաւել քան զամենայն բնութիւնս մեղաց զանցուցանէ անօրէնութեամբք. զի քան զամենայն յայտնի ամբարշտութեանցն աւազակութիւն է սա, և քան զգազանի գողութեանցն չարութիւնն, և քան զամուսնացելոցն հնութիւնն, և քան զկուսանացն պառնրկութեանցն պղծութիւնս, և քան զարիւնահեղ լպանութեանցն խողխողումն։ Այլ քան զայս ամենայն չար ամբարշտութիւնս մեղաց առաւել ևս ահեղ ամբարշտութիւնք և անհնարին պղծութիւնք այն են՝ զոր արուք ընդ արուս գործեն զազրալի անօրէնութիւնս և դիւական մոլութիւնս, և էգք առ էգս կատարեն զանառակ զցանկութիւնս և զսատանայական կատաղութիւնս. և առաւել ևս այն է՝ յորժամ յանբան յանասունս զք պղծիցի։

Ինդ այս և վերին զօրութիւնքն հիացեալ զարմանան. ընդ այս և սրբոցն դասքն տխրացեալ սգան. ընդ այս ողբան և անձինք ամենայն արդարոց, զի զարարիչն արարածոց թշնամանեալ արհամարհեցին անօրէն պղծութեամբք։ Այսմանէ և հոգիս սուրբ գարշի և փախչի և հեռանայ, և այլ ոչ դառնայ 'ի սա. և ապա բնակարան լինի սատանայի և դիւաց, և ողորմելի ամենեցուն։ Զանգի և ոչ մի ինչ ամբարշտութիւն հաւասարի ախ-

տիս այսորիկ. այլ քան զամենայն դիւահարս միշտ ան-
զգայացեալ են անձինք նոցա՝ որք մոլեկան ցանկութիւնք
'ի միմեանս կատաղին, արուք վաւաշոտեալք զարուացն
զարուական բնութիւնն իգացուցանեն. և եգբն լը-
բեալք և անամթեալք զիգական բնութիւնն արուա-
ցուցանեն։ Այլ յանբան անասունն ևս ապականե-
ցան, որ է առաւել քան զամենայն պղծութիւնս։

Բայց հիացեալ զարմանամ ընդ այնչափ ներողու-
թիւնն ՆՈՅ՝ որ ոչ վաղվաղակի փայլատակունս յերկնից
իջուցանէ 'ի վերայ այնպիսի ամբարշտելոցն, և ոչ զեր-
կիր միանգամայն հերձանէ և ընկղմէ զչար տղմին զաղ-
բացեալսն. զի արտաքոյ օրինացն պղծեցան, և քան զա-
մենայն սահմանս մեղաց անօրինեցան։ Օ՛ի ոչ բաւեմ
ցուցանել զդառն ողբալի ախտին զեղխութիւնսն. և
առաւել ևս ընդ այս զարմանամ և հիանամ՝ յորժամ և
կանայք ևս զայսպիսի մոլեկան կատաղութիւն գործեն, և
զանբանական զպղծութիւնս կատարեն։ Օ՛ի 'ի սկզբանէ
այրն այր ստեղծաւ 'ի պէտս կանանց, և կինն կին ստեղ-
ծաւ 'ի յարանց յօգնականութիւն. իսկ անօրէն պակշռ-
ռուիքն անզգայական ախտիցն զՆՈՅԱԴԻՐ զասհմանս փո-
խեցին ամբարշտութեամբ. և զպէտս բնականս զոր պարտ
էր արանց 'ի կանանց ընդունել, և կանանց յարանց, նո-
քա և յայլ աղտեղութիւնս փոխեցին, և յանհնարին
պղծութիւնս այլակերպեցան՝ որ է տապալելի ամենայն
լսողաց, զոր և պատմել՝ յիս հիացումն արկանէ։

Ընդ և դուք 'ի բանէս ինչ լսելով գարշելիք. այլ
երանի թէ յիրացն ուռողակացեալ նաղկայիք, զի քան
զամենայն ախտս զաղրագոյն է։ Օ՛ի առ այնպիսւոյն
ոչ է օրէն բնակել, և ոչ ճաշակել ընդ նմա. այլ իբրև
'ի դիւէ փախչել. զի պիղծ է ամենայն՝ յոր ինչ հասանէ
ձեռն նորա, և քան զամենայն պղծութիւնս առաւել
ևս պղծագոյն է, և արժանի մեծաց վրիժուց, և բա-
զում շանթից հրոյ 'ի վերուստ։ Այլ առաւել ևս բա-
զում մահաբեր իբրև զպոռնիկս դատին այնպիսիքն անտե-
սելի ահեղ տանջանաբ։ Օ՛ի պոռնկութիւն թէպէտ և
անօրէն է և դիմադարձ ՆՈՅԱՅԻՆ հրամանին, սակայն
քան բնութեան է մեղացն խստանկումն. իսկ անասնա-
մոլացն և իգացելոցն և արուագիտացն պղծութիւնք ա-
ռաւել են քան զամենայն չարաչար անօրէնութիւնս, և

զարթուցանեն զբարկութիւնն ոչ և զսատիկ պտմոութիւնն։ “Զի ամենայն մեղք, ասէ, արտաքոյ մարմնոյ են. բայց որ պոռնկին, յիւր մարմնին մեղանչէ”։ Իսկ ծրչափ զազրալի է և գժնեալ այս մեղութիւնս, և անհնարին պղծութիւն քան զամենայն պոռնկութեանց. և արդարացուցանէ զամենայն չարաչար անօրէնութիւնս մեղաց ըստ առաւելութեանն իւրոց ամբարշտութեանն։ Իսկ և գրեալ է՝ եթէ “Յորդորեցաւ կապաւորութիւն Իսրայէլի առ ոչխտապանցութեամբն Յուդայ”, սոյնպէս առաւել զեռաւ այս ամբարշտութիւնս քան զամենայն չարութիւն անօրէնութեան ախտից, զոր և բանիս թերմամբ չէ հնար 'ի միջի կացուցանել զպղծութիւնս նոցա. վասն զի չիոթեալ փոփոխեցին զբնութիւն իւրեանց, զառնացին լինել կանացի, և զկանացին արանցի. և առաւել սողեալք յանգան անասունս ապականեցան. անօրէն ահեղ անօրէնութիւնք, և արհաւիրք և գոզումն տոկալիք 'ի միտս բանիս։

Զրդ զինչ ասացից, և կամ որպիսի բանիւք ծանուցից զչար ախտիս դառնութիւնս. զի անդուանդք ժանտահոտք բանան յախտէս, որում ոչ կարէք հանգարտել լսելեաք։ Զի եթէ հաւատաւ զբնութիւն ախտին բանիս մերկացեալ ծանուցից առ 'ի քաջ 'ի միտ առնուլ, զլեզուս իմ աղտեղեալ ապականեմ և տղմով շաղախեմ։ կամ եթէ զղջացեալ ընդ պատրուակով ասացից, ծածկի չարութիւն մոլեկան ախտիս։

Զայդ արդ անցից ընդ պատմութիւն ախտիս ըստ ձերում լսելեացդ հանդարտելոյ, և մտաք 'ի միտս իմաստաք զազրալի ախտին, և մի զամենայն նեխութիւնս բանիս ցուցանել, զի մի և դուք տաղտկացեալք նողկայցեք առ 'ի չհանգարտելոյ լսելեաց. քանզի իմաստնոյն և մի բան բաւական է առ 'ի խրատ և 'ի զգուշութիւն հոգւոյ։ Զի զայնպիսի մոլեգնութիւնսն զոր ասնասնամոլքն պղծին, կամ էգք առ էգսն կատարին և արուք ընդ արուս, որ ընդ միտս անգամ անցուցանեն՝ պղծութիւն է ոգւոյ, իսկ ոչչափ և առաւել գործն այրեացէ. զի եթէ արգարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն մեղաւորն ո՞ւր գտանիցի։ Զի հուր անշէջ վառեցաւ 'ի մարմինս նոցա, և 'ի վերջ բորբոքեալ ապականեցաւ յանդման բնութիւնս. զի այրն այր էր՝ և ախորժեաց լի-

նել կին, և զայրն լինել կորոյս. և կինն կին էր՝ և կամ-
ցաւ լինել այր, և զկինն լինել կորոյս. զորս պարտ է հա-
լածել յարանց և 'ի կանանց, զի թողին զբնական պէտս
և յանբնականս մոլեցան. զոր և Պաւղոս ողբալով ասէր՝
թէ "Այգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս 'ի
պէտս անբնականս. նոյնպէս և արուացն թողեալ զբնա-
կան պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբ իւ-
րեանց 'ի միմեանս, արուք ընդ արուս զիայտառակու-
թիւն գործէին,,։ Որոց պիղծ խորհրդովք զչար ցան-
կութիւնս լցուցեալ 'ի մարմինս իւրեանց և յանբան ա-
նասունս բորբոքեցան, և զեղան յամենայն չարութիս,
և առաւել ևս պղծեցան քան զսեղանակապուտսն և զգ-
գերեզմանակրկիտսն, և չար ևս քան զմարդասպան անօ-
րինեցան. զի մարդասպանն միայն զմարմինն սպանանէ,
և զայն՝ ասա միայն. իսկ սոքա զհոգին և զմարմինն սպա-
նանեն յաւիտենական տանջանսն։

Այս և քան զհեթանոսութիւնս ամբարշտագոյն է.
և վասն այսորիկ բարկութիւնք ահեղ հեղուն 'ի յերկ-
րի. վասն այսորիկ երկինք կամ փակին չարաչար, և
կամ բանին խստութեամբ. վասն այսորիկ մահք տարա-
ժամք և զանազան պատուհասք. վասն այսորիկ ջրհե-
ղեղք համօրէնք զտիեզերս հեղձեալ կորուսին. վասն
այսորիկ և հրացան անձրևք կայծականց տարածեալ տե-
ղեաց 'ի վերայ Սոդոմայ և հրակիզեաց զամենայն սահ-
մանս նորա վասն արուամոլ գիջութեանցն և իգական
կատաղութեանցն։ Ո՛վ անօրէն մոլորութիւն. ո՛վ սատ-
տիկ կուրութի՛ և միգապատ յիմարութիւն. զի 'ի սկզբ-
բանէ սառսուռ առնու, և առ ահիս միտքս յիմարին,
և ոչ կարեմ զբանս բովանդակել։ Ո՛վ ետես, կամ ո՛վ
լուաւ այսպիսի ահեղ արհաւիրս և անօրէն ամբարշ-
տութիւնս և զազրալի պղծութիւնս։ Ո՛վ սատանայ և
'ի սկզբանէ մարդասպան, յո՞ր խաւար կամ յորպիսի՞
խորս անօրէնութեան իջուցեր զմարդն, մինչև արուա-
մոլս և անամնամոլս և իգացեալս գործեսս։

Այլ արդ զի՞նչ անուանեսցուք զնոսա, որք զայնպիսի
մոլեգնութիւնս մոլեգնեցան. զի մարդ չէ, և չէ իսկ։
Իսկ անասո՞ւն կոչեսցուք. այլ և նա քան զանասունս ա-
ռաւել ևս անմտագոյն գտանի, քանզի ոչ երբեք տեսա-
նեմք զանասունս 'ի մարդոյ բնութիւն ախորժեալ։ Իսկ

Digitized by Google

շունս կատաղեալս անուանեցուք. այլ և քան զշունս առաւել անամօթացեալք կատաղին։ Օ՛ի շունք յիւրեանց նմանութիւնն ախորժին, և մերձենան բան իւրեանց օրինաւոր քնութեանն. իսկ իգացեալքն և արուագէտքն և անօրէն անասնամոլքն առաւել քան զշունս կատաղին, և զանցուցանեն զչարութիւնս իւրեանց քան զչարութիւնս դիւաց։

Ո՛վ ահեղ երկայնմտութիւն Ցայ. ո՛վ մեծի սիրոյն և անբաւ երախտեաց բարերարին, որ ոչ զերկինս 'ի վայր կործանէ յայսպիսի ամբարշտելոցն վերայ, և ոչ զերկիրս 'ի ներքոյ հերձանէ և ծածկէ զապականեալսն և զծանրացեալսն, և ոչ սաստիկ փայլատակունս ի՝ջուցանէ 'ի վերուստ, և շանթիւք հրոյ խանձոտէ. այլ երկայնամտեալ ներէ մինչև 'ի ժամանակս վրէժինդրութեան, և յօր ահեղ դատաստանին։ Այլ արդ քանի գեհենք և հնոցք հրացանք իցեն բաւական այնպիսի անձանց. քանի տարտարոսք ներքինք և աղջամուղջք խաւարի ընդ այնպիսի անօրէն զեղխութեան. քանի գուբք որդնալեցք սպառնացեալ են և բազմութիւնք տանջանաց, զոր և ասել չեմ բաւական զհրեղէն գետոցն ըզյորդութիւն, որ հոսեալ ի՝ջանեն յամբարշտութեանն վերայ, ուր են ահեղ արհաւիրք և լալ և ողբալ անդադար։

Արդ զի՞նչ առնիցես եղկելիդ և թշուառականդ ըզդառնութիւնդ սաստիկ յիմար[1] կուսանայն յաւուր չարաչար քո վախճանիդ, յորժամ պահանջիցք ոգւոյդ քո անողորմք եկեալ ահագին կերպարանաք 'ի վերայ քո հասանիցեն փութանակի տագնապաւ զոգիդ քո յափշտակել ընդ մարմնոյն, և տագնապեալ ոգիդ վարանեալ ահագին դողմամբ անգրէն 'ի ներքս դառնալ չանայ, և ողղեալ ընդ յարկաւ մարմնոյդ, և ոչ հանդարտեալ հայել ընդ դէմն եկելոց հրեշտակացն, որք սաստիկ սպառնալեաք զոգիդ 'ի մարմնոյդ հանեալ ձգիցեն. և յայնժամ պատիցեն զքեզ արհաւիրք սոսկալի ահեղ ատենին, և երկիւղ տարակուսանաց չարաղէտիցն տանջանաց։

Այլ արդ զահն զայն ոչ զմնաւ ածեալ ըստ դառնապէս, և անդադար ողբալով հառաչիցես զբազմութի՝ չարաչար քո ամբարշտութեդ. թերևս երկայնամտեալ

1 Այլք փարիսեանայն։

գԹասցի տէր 'ի Ջերմեռանդն արտասուս վշտագնելոյ սրտի քո, և գորովագութ ողորմութեամբ ընկալցի ըզպաղատանս քոյոյ հեծութեան։ Երդ վաղվաղեա յապաշխարութիւն մինչ դեռ է մեր ժամանակս, զի մի եկեալ օրն յափշտակիցէ, և ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ։ Երայլ փութա զերծանել 'ի պղծութենէդ՝ ապաւինեալ 'ի մարգասիրութիւնն այ։ Եվ էպէտ և անթիւ են անօրէնութիւնք քո, այլ անբաւ են մարդասիրութիւնքն այ. թէպէտ և չարաչար գլորեցար, այլ վաղվաղեա աղաչեա զԵրիստոս՝ որ կանգնէն զգլորեալս։ Եվ էպէտ և գեռաթաթախ տղմով զաղբացար, այլ ունիս աղբիւր արտասուաց՝ որ մաքրէ և լուանայ։ Եվ էպէտ և յանմերելի աղտեղութիւնս մեղացն կործանեցար, այլ մի ևս յամեր և մնար 'ի կործանմանդ, և գտանես թողութիւն և փրկութիւն։ Եվ էպէտ և ներկեալ նեխեցար 'ի սևաթոյր ամբարշտութիւնս քո, այլ մերձեցիր առ Երիստոս Ջերմեռանդն արտասուօք, և լուսաւորեալ պայծառացուցանէ զքեզ։ Եվ էպէտ և սաստիկ բարկացուցեր յամենայն յապականեալ 'ի գնացս քո խաւարային, այլ կանխեա խոստովանութեամբ, և ընդունիս որպէս զանառակ որդին։ Եվ էպէտ և կարեվէր վիրաւորեցար յոտից մինչև 'ի գլուխ, այլ կարող ես բժշկել ողորմութեամբ և գթով տնանկաց։ Եվ էպէտ և կապեցար 'ի շղթայս սատանայի, և շաղեալ պատեցար 'ի հաղբանոցս, այլ մնդութիւն պահաց և Ջերմութիւն աղօթից քոց ցրուէ զտուտունս մեղաց կապանաց սատանայի։ Եվ էպէտ և յանդունդս խաւարայինս և 'ի խորինս իջուցին զքեզ ահեղ անօրէնութիւնք քո, այլ հայցումն և հառաչումն կամաւոր ապաշխարութեանդ քո հանէ 'ի խորին խաւարէն, և բարձրացուցանէ 'ի կամարն երկնաւոր՝ ուր արդարոցն են բարութիւնք։ Եվ էպէտ և ժանտահոտ պղծութեամբ եղեր բնակարան խաւարային գիւաց, արդ սրբեցիր 'ի զաղբալի նեխութենէդ, խորգով և մնիտրով և պաղատանօք եկ 'ի տաճարն այ։ Եվ էպէտ և չար են չարիքդ քո, այլ յաղթող են մարդասիրութիւնք նորա։ Եվ էպէտ և պղծագոյն քան զոհեալն և զմեռելսն, այլ կարող ես մաքրեալ վարիւք առաքինութեամբ և հաճոյանալ այ։ Եվ էպէտ և տաղտկալի աղտոտն մեղաց չարանեխ փետեցեր զմարմնդ քո, և շաղախեալ ծըր-

գեալ կաս յանօրէնութեանդ, բեկեալ անձամբ, խոնարհեալ սրտիւ ընկեա 'ի քէն զանօրէնութիւնս քո, և վաղվաղակի ընդարձակ սուրբ հոգւոյն լուսաւորիս։

Բազումք մոլորեցան 'ի ճշմարտութենէն, և ապա գտին ճանապարհս փրկութեան. բազումք գլորեցան չարաչար, և միւսանգամ կանգնեցան. բազումք 'ի նահատակացն խոցեալ կիսամահ վիրաւորեցան, և դարձեալ յաղթութիւն գործեցին. բազումք աղքատացեալք 'ի նաւաբեկութենէ՝ դարձեալ մեծացան. բազումք 'ի խորս չարեաց ընկղմեցան, և միւսանգամ աջոյարացան ապաշխարութեամբ. բազումք 'ի հիւանդաց յեռ անյոյս լինելոյ բժշկեցան. բազում ծանրաբեռնք մերձաւոր ջերմեռանդ ապաշխարութեամբ թեթևացան։ Զդող և գոմի յուսահատիր յոդորմութենէ մարդասիրին ՅԻ. չիշեա զի բազում մեղաւորք արդարացան, բազում պոռնիկք սրբեցան, բազում աւազակք արդարացան և բացին զդրունս դրախտին. և գոմ փութացիր կանգնեա 'ի գլորմանէդ, և ընկեա 'ի քէն զանօրէնութիւնդ, և հաստատես փրկութեան։ Զի նմանիր սոդոմայեցւոցն անզղջութեամբ քով, զի մի ընդ նոսին հրակիզեալ այրեսցես 'ի հուր գեհենին. այլ՝ Զինուէի նմանեա ապաշխարութեամբ, և դարձիր 'ի չար ճանապարհէն։ Զհա գեռևս բնակեալ է 'ի քեզ թշնամին անօրէն, և խաստացուցանէ զսիրտ քո չդառնալ 'ի զղջումն ապաշխարութեան. արդ ծանիր զդաղանի նետս սատանայի, և փութա զերծիր յորոգայթից նորա։ Զհա պահպանեալ կան զքեզ անթիւ բանակք դիւաց, և պատեալ պաշարեն զքորհուրդս քո՝ չիսոստովանել և չապաշխարել. այլ ոտիր 'ի միջոյ նոցա իբրև 'ի հրոյ կայծականց, և փութա անկիր յողորմութիւնն ՅԻ. ողբա ասելով. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. մի մերժեր յողորմութենէ քումմէ. յորմէ լեամ 'ի ձեռն մարգարէին, թէ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Զրուսմ ողորմութեան և մեք ապրժանի լիցուք ընդարձակ և մարդասիրութեամբ հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի

ՎԱՄՆ ՁԱՌՆԵԼՈՑ ՍԷՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԹՇՆԱՄԻՍ ԱՅՏՈՒԺՈՑ

Հանապազ զմտաւ ածեալ զարհուրիմ յահեղ յանցանացս այսորիկ, և անպակաս խորհուրդք իմ յուզին. սիրտ իմ հիացեալ երկնչի, զի հանապազ վիրաւորիմ յանիտէս յայսմանէ. զի յընդելական սովորութենէն և վէրն իսկ վէր ոչ երևի։ Դարեաւքն չարաչար խացոտիմք, և անհոգ եմք իբրև զառողջս. ընդ միշտ հիացեալ զարմանամ և սգամ հանապազ, քանզի գիտեմ զվիրին չարութիւնն, գիտեմ լիով զվիրացն ծուլութիւնս։ Այն այսորիկ պարտ է առաւել սգալ դողալով, և անգադար ողբալ զկուրութիւն յիմարութեանս մերոյ. քանզի գիտեմ թէ ահեղ բանդք և կապանք մեծամեծք և պատիժք զանազան տանջանաց կան արհամարհողաց բանից և թագաւորաց աշխարհի։ Սակ ժրչասի և առաւել հուր ահեղ տանջանաց բազմութեան այնոցիկ մնասցէ՝ որ ըզհրամանն հոգւոյն և զպատուիրանն այս արհամարհեն, և թշնամեաց այս բարեկամք լինիցին, որք հանապազ զհոգին սուրբ հայհոյեն և տրտմեցուցանեն անօրէն գնացիւք, և ոչ դառնան և զղջան, այլ կան 'ի նմին հանապազ. յորոց պարտ է ամենայն ուշադրութեամբ և քրիստոսասիրաց 'ի բաց հեռանալ ըստ բանին Պաւղոսի որ ասէ. "Դ-թէ եղբայր անուանեալ կամ պոռնիկ ինչ, կամ ագահ, կամ արբեցող, կամ բամբասող, կամ յափշտակող, ընդ այնպիսեաւն և հաց մի ուտել,,։ Եղբայր անուանեցաւ՝ որ առազանին ծննդեամբն և սրբոյ սեղանին հաղորդութեամբն լուսաւորեցաւ. և զի անսուրբ վարիւք և անարպաշաւ անօրէնութեամբք պղծեաց և կորոյս զսուրբ աւազանին զարքունութիւնն, և հեռացեալ մերժեցաւ 'ի մէնջ և 'ի սուրբ հաւատոյ քրիստոնէութեանն, կամ

պղծեցաւ ընդ անօրէնս հնութեամբ աղտեղեալ, և կամ զաղիր և գարշելի անկողնեաւք ամուսնութիւն կասկելով[1] զօրէն խոզի ընդ ցեխ և ընդ տիղմ թաւալեալ, այնպիսին եթէ եղբայր իսկ իցէ և կամ քոյր, կամ որդի, կամ դուստր՝ նզովեսցի և մերժեսցի 'ի սիրոյն և 'ի ինամոյն և 'ի բարեկամութենէ. և ընդ այնպիսումն և հաց մի ուտեր, փոխանակ զի դարձաւ յետս 'ի Քրիստոսէ, և եթուք յաւազանն, և հաւատաց անօրէնն խաբէութեան սատանայի։

Արդ ոյր են հրամանքս, ոյր են պատուիրանքս. ոչ ապաքէն միածնին ՅՍ և թագաւորին թագաւորաց՝ զոր պատուիրեաց հոգւոյն սրբով 'ի բերանոյ առաքելոյն։ Այլ արդ թշնամանեալ արհամարհին պատգամք հոգւոյն սրբոյ և պատուիրանք ՅՍ վասն չհրաժարելոյ մերնախ յանօրինացն սիրոյն և յանարժան ինամութենէն, որ է հանապազ պոռնկութիւն։ Այլ արդ որոմ ներելոյ և թողութեան արժանի լինելիցիմք, զի զհրամանս և զպատուիրանս ՅՍ կոխան արարաք. նա ընդ ագահի և ընդ արբեցողի չհրամայեաց առնել բարեկամութիւն, և մեք ընդ Հրեայս և ընդ հեթանոսս և ընդ հերձուածողս առնեմք բարեկամութիւն և ինամութիւնս։ Այլ յոր խաւար երթայցեմք, և կամ ոչ սուզանիցիմք վասն անհնարին ծուլութեանս և չարաչար սովորութեանս, որ արհամարհեմք զպատուիրանս ՅՍ. և կամ ոչ կամ տասխանատրութիւն կայցէ յաւուր ահեղ դատաստանին՝ յորժամ յանդիմանեալ կշտամբիցիմք առաջի տիսեղերական հրապարակին. զինչ ասիցեմք, չլուա՞ք երբէք յումեքէ ասեմք, կամ չուսոյց ոք։ Այնպես Պաւղոս բողոքէ և ասէ. եթէ եղբայր ոք ագահ իցէ, կամ արբեցող և կամ բամբասող և կամ յափշտակող, 'ի նոցանէ, ասէ, որոշեա և 'ի բաց հեռացիր. ընդ այնպիսումն և հաց մի ուտեր։ այլ ելէք 'ի միջոյ նոցա, և մեկնեցարուք 'ի նոցանէն. մի ճաշակէք, մի հուպ լինիք, զի հանապազ թշնամանողք են ՅՍ, և արհամարհողք պատուիրանացն նորա։ Օ այս յամենայն ժամ լսեմք 'ի Պաւղոսէ, մինաւանդ 'ի հոգւոյն սրբոյ՝ եթէ չէ պարտ թշնամեաց ՅՍ լինել բարեկամ։ Այնա և մարդարէն ասէ՝ եթէ

1 Ասպէս յօրինակին։

“Ո՛ատելիս քո տէր՝ ատեցի, և վասն թշնամեաց քոց տրտմեցայ. ատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղէ նոցա թշնամի, զի զօրէնս քո ոչ պահեցին,,։ Ահա մարգարէն ուսուցանէ թէ պարտ է ատել զթշնամիս այ, և ոչ եթէ բարեկամութիւն ընդ թշնամիս այ առնել։ Այլ և միւս մարգարէն ասէ, եթէ “Այս վասն այսորիկ խորտակեաց զնաւս քո, զի թշնամեաց այ բարեկամ եղեր,,. ահա և սա զնոյն բողոքէ՝ եթէ չէ պարտ ընդ թշնամիս այ առնել բարեկամութիւն և խնամութիւն և լինել ատելի և թշնամի այ։ Ոչ այս և այլ մարգարէ ասէ. “Որ ամբարտաւանն էր աչօք և ագահ սրտիւք, ընդ նմա և հաց ոչ ուտէի. և ոչ քնակեր 'ի մէջ տան իմոյ, որ առնէր և գործէր զանօրէնութիւն,,։

Այդ զայս գիտելով և մեք հեռասցուք 'ի թշնամեաց այ. զի չէ պարտ քրիստոսասիրաց և ածապաշտից ընդ ատելիս այ և ընդ թշնամիս Քրիստոսի սէր ինչ և բարեկամութիւնս առնել. այլ ատել և իբրև զթշնամիս հալմարել։ Կին ոք եթէ զայրն իւր թշնամանեալ տեսանիցէ, ոչ միայն թշնամի թշնամանողին լինի, այլ և քինանայ և ընդ նմա և ոխայ. մեք վասն Քրիստոսի չատեմք իսկ երբեք և չքինանամք ընդ գողս և ընդ պոռնիկս և ընդ բամբասողս և ընդ ամենայն թշնամիս այ, որ յամենայն ժամ բարկացուցանեն զնա անօրէն գնացիւք։ Այդի զանարգիչս հօր իւրոյ անարգէ և թշնամանէ. և մեք զթշնամիս այ հօր մերոյ սիրեմք և պատուեմք, և առնեմք բարեկամութիւն ընդ նոսա։ Խազում ծառայք 'ի վերայ տերանց իւրեանց մեռանին, և մեք վասն այ հօր մերոյ և արարչի մերոյ ատելի և թշնամեաց նորա չկամիմք լինել։ Այլ զիաւրդ անուանիմք ածասէրք և ածապաշտք, և ակն ինչ յաւիտենական կենացն ունիցիմք. և կամ զիաւրդ սիրիցիմք 'ի նմանէ՝ որք ոչ սրտիւք զնա սիրիցեմք. զի որով չափով չափէք՝ չափեցից ձեզ։ Ոչ ի եթէ կոչէք զիս հայր՝ ասէ, և զոր ասեմն ոչ առնէք, որդիս կոչեցից և ես, և 'ի ժառանգութենէ իմմէ հեռի արարից։ Ընդէ՞ տեր և վասն է՞ր. զի զթշնամիս իմ սիրեցիք, և զատելիս իմ բարեկամ արարէք։

Այս այժմ ոչ ինչ համարին զայն բազումք. այլ խառն և անխտիր ընդ թշնամիս, ընդ շունս և ընդ գողս և ընդ պոռնիկս և ընդ ագահս և ընդ յափշտակողս ուտեմք, և

ընդ բամբասողս և ընդ զրկողս, և խնամով՝ի տունս մեր մուծանեմք, և պատուեմք զԹշնամանողս ՝այ, և զոգիս մեր վնասեալ կորուսանեմք։ Այլ որ ևս ահագին անօրէնութիւնք են քան զամենայն չարիս, և հաւասար կռապաշտութեան, որք քրիստոնեայքն լինին, և ընդ անօրէնսն խառնակին, ամուսնանան ևս և հաւասար անանանագիտաց անուանեն զանձինս իւրեանց, և զհոգին սուրբ հալածեն յինքեանց և՝ի տանց իւրեանց և՝ի ծնողաց և յեղբարց և յաղգատոհմից իւրեանց, և ոչ իմանան և զղջանան, և ոչ դառնան և ապաշխարեն. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, և չտայ իմանալ՝ եԹէ այս են մեղք որ մահուչափ են։ Զ՚ան որոյ ոչ է պարտ յայսպիսին յարել և ՀաշակեԼ ընդ նոսա. այլ իբրև յօձից փախչել՝ի հաղորդութենէ նոցա, գուցէ որ ուսանիցի զգործսն։ Իսկ եԹէ ընդ չարակն չհրամայէ հաց ուտել, ՈՐչափ ևս առաւել ընդ չարագործելն՝ որով ոգիք մեր ապականին։ Օ՚ի Թէ՝ի պոռնիկ ամուսնոյն հեռանալ հրամայէ, ՈՐչափ ևս յօտար պոռնկէն, որք զմեզ յայ հեռացուցանեն։ Օ՚ի եԹէ՝ի դատարկէն փախչել հրամայէ, որ դատարկ և անգործ և ստահակ շրջի, ՈՐչափ ևս առաւել փախչել՝ի բամբասողաց և յարբեցողաց։ Օ՚ի եԹէ ընդ բարկայող առն չհրամայէ բնակել՝ գուցէ ուսանիցին զՀանապարհս նորա, ՈՐչափ ևս առաւել՝ի նոցանէն հեռանալ՝ որք զայծ բարկացուցանեն հանապազ։

ԻնդէՐ օտար չարեօքդ չարչարիցիմք, և ընդ այլոց մեղացն դատապարտիցիմք. տես որ զՀանդերձս մաքուրս որք ունիցի, և առաւել չփիցի ընդ այնոսիկ՝ որ տղմոտն իցեն շաղախեալք, ՈՐ ապաքէն և նա ընդ նոսա շաղախեալ ապականիցի. նոյնպէս և որ սրբութիւն իցէ ստացեալ, և ընդ ագահս և ընդ յափշտակողս և ընդ ամենայն շաղախեալս մեղօք սեր և բարեկամութիւնս առնիցէ, ՝ի պղծոցն պղծութենէ զսրբութիւնն իւր ապականէ։ Զ՚պա եԹէ որ նեխեալ և փտեալ և չարահոտ վիրօք զոք տեսանիցէ, չկամի և ոչ՝ի մսհիՀան յարել. իսկ մեք ընդ անօրէնսն և անկնունքսն խառնակիմք, և ընդ հերձուածողսն՝ որ ևս չար քան զնեխութեան և փտութեան՝ի նոցանէ բուրէ մեղացն ծանրութիւն՝ որ զմարմինս մեր և զոգիս պղծեալ ապականէ, և հանէ

յարքայութիւնէն, և սատանայի և դիւաց առնէ ժառանգակից, որ զՔրիստոս բարկացուցանեն յանօրէն անկողինս պղծելով։ Իսկ քրիստոնեայք նոքա են՝ որք զհրամանն Քրիստոսի պահեն և առնեն հանապազ։

Ամէն քրիստոնեայքն միշտամեղք որք ընդ անօրէնս վաւաշին, և քան զհեթանոսս առաւել ևս դատապարտին։ "Ծառայ, ասէ, որ գիտէ զկամս տեառն իւրոյ, և ոչ առնէ, արբցէ գան սաստիկ"։ և Պաւղոս ասէ։ "Եթէ եղբայր ոք անուանեալ՝ կամ ագահ իցէ, կամ կռապարիշտ, ընդ այնպիսումն և հաց մի ուտել"։ Ամենահաւասիկ ընդ կռապարիշտս համարի զայնոսիկ երանելին Պաւղոս՝ որք ընդ անօրէնս կամաք յարաժամ պոռնկին, և ամուսնութիւնս համարին։ զԹլփատութիւնն պատուեն, և զառաքանն և զլուսաւորութիւնն Քրիստոսի անարգեն։ և ոչ իմանան թէ չէ նմանութիւն լուսոյ ընդ խաւարի, և ոչ Քրիստոսի ընդ սատանայի, և ոչ բաժին հաւատացելոյն ընդ անհաւատին։ Ամբդ եթէ սիրելի ես Քրիստոսի, ատեա զԹշնամիս նորա։ եթէ բարեկամ ես Քրիստոսի, Թշնամի լեր ատելեաց նորա։ զի ամենայն որ անօրէնութիւն գործէ, արհամարհէ զպատուիրանս նորա, և Թշնամի է նա ՝ի։ որ սրտիւք ՝ուծապաշտ է՝ մերժի և հեռանայ ՝ի նմանէ որպէս ՝ի Թշնամոյ, Թէպէտ և կարի սիրելի ոք է, և կարևոր յընտանեաց։

Մեծ առաքինութիւն է որք նահատակին և մերժին յարհամարհողացն ՝ի։ և լինին Թշնամիք Թշնամանողաց նորա։ ընդ որոց կան հատուցմունք մեծամեծք և պարգևք զանազանք և պատիւք ընդ մերձաւորս ՝ի։ Ամէն հարց ընդ Թագաւորս աշխարհիս, եթէ զոք ՝ի ծառայիցն տեսանիցէ՝ որ Թշնամի Թշնամեաց նորա լինիցի, տես քանի վայելչութեամբ պատուով փառաւորէ զնա առաջի մեծամեծաց իւրոց։ Իսկ եթէ լսէ եթէ ծառայ ոք Թագաւորին սէր ընդ Թշնամիս նորա առնիցէ, և բարեկամութիւն ընդ նոսա դնիցէ, ՝ի միտ առ Թէ քանի գանիւք և բանդիւք և զանազան տանջանօք մաշեսցէ, և չար մահուամբ յաշխարհէս բառնայցէ։ Իսկ մեք որո՞ւմ ներելոյ և Թողութիւն արժանի լինիցիմք, եթէ սէր և բարեկամութիւս ընդ Թշնամիս ՝ի։ առնիցեմք, որք հանապազ անօրէն գնացիւք հայհոյեն և Թշնամանեն զնա։

Յորոց պատ է բազում երկիւղիւ զգուշանալ 'ի սեղանոյ և 'ի սիրոյ նոցա. քանզի յանօրէնութեաց են կերակուրք յափշտակողաց և գողոց. պիղծ են կերակուրք պոռնկաց և բամբասողաց. առիւծ յաւիտենական տանջանացն են արբեցողացն խրախճանք, և մարդազոհիցն արեամբ շաղախեալ են ագահացն սեղանք, և են անսուրբ, և ապականիչ են կերակուրք ամենայն անօրինաց և ապստամբողաց յայ, յորոց և Պաւղոս պատուիրէ հեռանալ. զի թէ մատուցողն պիղծ է, առաւել զոհն նոքա պիղծ է. և որոց վարքն անսուրբ է, անսուրբ են և կերակուրքն նոցա։ Այլ զու եթէ սրտիւ ես ածապաշտ, մերժեա և հեռացիր 'ի սեղանոյ և 'ի սիրոյ նոցա։ Տես զի և դատաւորք աշխարհիս զոր և ընդ գողս և ընդ սպանողս գտանեն, ընդ նոսին և դատին, մանաւանդ զբարեկամն և զվանատուրս նոցա։ Այսոքն որոյ և մեք հեռասցուք 'ի նոցանէն զոր ածէ դատելոց. զի մի և մեք ընդ նոսին դատեսցուք յայնեղ հուր գեհենին և անսերելի տանջանաց։

Այլ արդ զայս ամենայն իմացեալ 'ի բաց եղիցուք 'ի բարեկամութենէ Հրէից և հեթանոսաց և հերձուածողաց, գողոց և սպանողաց, պոռնկաց և բամբասողաց, յարբեցողաց և յագահաց և յափշտակողաց. և առաւել յայնպանէ՝ որ յանապաշաւ չարիսն իցեն զազրեալ և ընդ անօրէնս՝ ամենևին 'ի բաց մերկնեացուք. զի չէ միաբանութիւն արդարոյն ընդ անօրինին. զի թշնամի է արդարութիւն ընդ անօրէնութեան։ Օ՞ինչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ՞ զինչ կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. զի հաւատացելոց տէր է բաժին, և անհաւատիցն հուր է ժառանգութիւն։ Այլ կամ զինչ նմանութիւն է տաճարի այ և մեհենաց. զի քրիստոնեայն տաճար է բնակութեան այ, և անօրէնն բագին է դիւաց։ Այնպէս և ամենայն անօրինեալք մեղօք մեհեանք սատանայի են և բնակարան դիւաց։ Ահա այս են բաժինք և սահմանք և որոշմունք, և զատուցանեն զմեզ յանօրինաց սիրոյ։ Զի՞ր է զի ազանիք ընդ ագռաւս բնակեսցեն, և գառինք ընդ գայլս մակաղեսցեն, և կամ խառնուրդք միաբանութեան դիւաց պղծոց և լուսեղէն հրեշտակաց լինիցին։ Զայլ սուրբք զսուրբս խնդրեն, և անօրէնք յանօրէնս յարին. զի ամենայն հաւ, ասէ, յերրամն իւր ինքանէ, և

մարդ վնմանիս իւր խնդրէ։ Վասն որոյ և մեք զսուրբս խնդրեսցուք և 'ի սուրբս յարեսցուք. զսուրբս պատուեսցուք, զառաքեալս սիրեսցուք և բարեխօս արասցուք, և 'ի Հնորհաց և յողորմութենէ և յաղօթից մի զանգիտեսցուք. և արժանի լիցուք ընդ նոսին խոստացեալ ՅԱծայլին բարութեանցն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

ԻԱ.

ՎԱՍՆ ԱՀԵՂ ՀԱՐՈՒԱԾՈՑ ԿԱՐԿՏԻ

Բազում կերպարանք են պատուհասից սպառնալեաց՝ զոր յօգուտ և գթութիւն մեզ մատակարարէ. զի թէպէտ և դէմք իրացն ցասման են նշանակ, այլ առ մեզ զգուն հայրենի խնամոցն ցուցանէ։ Զի յորժամ արհամարհիցեմք զպատուիրանս նորա, և յանցանք ինչ յանցանիցեմք ըստ կամաց անձանց մերոց գնալ, առ սա կաւ սակաւ ներէ և երկայնամտէ, ակն ունելով դարձի ապաշխարութեան։ Եւ յորժամ ոչ երկիւղիւ գեհենին, և ոչ փափագանօք անանց բարութեանցն շփութամբ յապաշխարութիւն, կամի փոքր մի զարթուցանել զդանդաղութիւն ծուլութեան մերոյ՝ ի ձեռն սուղ ինչ պատուհասից առ՝ ի խրատ և՝ ի զգուշութիւն. զի իւրաքանչիւր ուրուք սրտի հանդէս արարեալ՝ ծանիցէ զանօրէնութիւնս գնացից իւրոց, և զերծեալ հեռացցի՝ ի չար սովորութենէ մեղացն, և ապրեսցին յահեղ աղէտից տանջանացն։ Այլ եթէ զայս ևս արհամարհիցեմք, և ոչ փութանայցեմք զանձ հաշտեցուցանել ապաշխարութեամբ, և զայլ ևս ճաշակս դառնութեամբ պատուհասից տայ մեզ ընկել, և հեղու թափէ՝ ի վերայ մերս զահեղ պատուհասին բազմութիւն, և զահագին մրուր բարկութեան իւրոյ արբուցանէ մեզ չարաչար սպառնալեօք. զի յառաջագոյն ոչ փութացաք հաշտեցուցանել զնա՝ ի ձեռն խրատոյ գաւազանին։

Զի թէ էր Փարաւոնի առաջին պատուհասիւն խրատեալ, զտասն ևս հարուածոցն զճաշակն ոչ ընդունէր. և ժողովուրդն Այմվսայ մարգարէին եթէ առաջին պատուհասիւն էր ապաշխարեալ, զցաւս ատամանց և զդալուկն և զմարախն և զկարկուտն և զսատիկ երաշտութիւնն և զսոսկալի սոփն և զհարուածս չարաչարս և ըզմահս տարաժամս ոչ ճաշակէր։ Այսն որոյ պարտ է

Digitized by Google

զգուշանալ յիւրաքանչիւր 'ի չար ձանապարհէն, զի մի այլ ևս բազմութիւնք չարաչար պատուհասիցն յաւելցին 'ի ձեզ։ Զանազի յորժամ անօրէնութիւնք մեր առաւելուն, յայնժամ պատուհասքն զեղուն 'ի մեզ։ Այլ նախախնամութիւնն ՝այ և զայն ևս խնամով ածէ 'ի վերայ մեր. զի յորժամ մոռանայցեմք զերկիւղն ՝այ, և 'ի չարիսն յոլովիցեմք, ոչ անդէն 'ի մեղն կամի անապաշաւ զոք կորուսանել, այլ ընդունէ ժամանակ ապաշխարութեան։ Այլ եթէ ոչ ապաշխարեմք, և այլ ևս յանձինս մեր խնայէ վասն դարձի, և հարկանէ զանդաստանս մեր կարկտիւ, կամ մարախով և կամ այլ ինչ պատուհասիւք, զի ծանուցեալ զյանցանս մեր ապաշխարեսցուք։ Այլ եթէ և այնպէս ոչ ապաշխարիցեմք, հարկանէ վասն մեր զանասունս մեր պէսպէս հարուածովք իբրև զպատժապարտ, զի մեք 'ի զեղջ եկեսցուք։ Այլ թէ և այնպէս ոչ ապաշխարիցեմք, կամ փակէ զերկինս 'ի վերայ մեր դժնդակ երաշտութեամբ, կամ բանայ չարաչար յոլովութամբ յապականութիւն։ Այլ եթէ այնպէս ոչ ապաշխարիցեմք, շարժեալ զերկիր դողացուցանէ 'ի ներքոյ մեր, և իբրև ձայնիւ բարբառի ծանուցանել զյանցանս մեր. այլ ոչ ընկղմէ վասն դարձի ապաշխարութեան։ Այլ թէ և այնպէս ոչ ապաշխարիցեմք, այնուհետև առաքէ յանձինս մեր ախտս չարաչարս, կամ մահս տարաժամ, կամ խեղութիւն մարմնոյ, կամ ցաւս անբժշկելիս, կամ լկումն դիւական, և պէսպէս ախտաժէտութիւնս, որպէս և Պաւղոս ասէ՝ թէ "Վասն այնորիկ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք, և շատ ևս տարաժամ ննջեցեալք"։ Վասն որոյ պարտ է ձեզ միշտ պատուհասիւ դառնալ և ապաշխարել, և մի զհոյլս բազումս և չարաչարս ընդունել զպատուհասիցն, և յետ այնորիկ զհուրն անշէջ և զտանջանսն յաւիտենից։

Այլ արդ իւրաքանչիւր ոք զխեղճ անձին իւրոյ քննեսցէ, և զբազմութիւն յանցանաց իւրոց ծանիցէ, և մի զոՀ անիրաւ ոք կարծիցէ 'ի հեղուլ զցասումն սրտմտութեան իւրոյ. այլ տուր գոհութիւն ներող և արդար դատաւորութեան նորա, զի զոր ինչ ՝ած գործէ՝ ոչ եթէ բարկութեան ինչ նշանակիչ է, այլ ողորմութեան։ Այլ հա զՔՀեղեղն համաՀունՀ ամենայն աշխարհի՝ նշանակ էր

ողորմութեան և ոչ բարկութեան. զի իբրև ոչ կամեցան զղջանալ և ապաշխարել տապանագործ քարոզութեամբն՝ Լոյի, որ ձայնիւ ուրագին հնչեցուցանէր յամենեցունց լսելիս, 'ի ձեռն ապուագահաս մահուն յանթիւ մեղացն կարձեցան. թէպէտ և սաստիկ տանջանաց ընկալան վասն գործոցն չարեաց, այլ զոր 'ի վաղուն գործել կամէին՝ 'ի ձեռն մահուն ապրեցան. և յայտ է՝ եթէ ողորմութեան նշանակ եղև ջրհեղեղն նոցա, որք ոչն կամեցան զղջանալ և ապաշխարել։ Օ՜ սոյն և առաստղումայեցւոցն իմացիր. զի ոչ եթէ 'ի բարեգործութեանց ինչ կործանեցան 'ի ձեռն հլուցան կայծականց, այլ 'ի սաստիկ անօրէնութեանցն և 'ի ժանտագործ գնացիցն. զի բանտարգելեալք էին յամենայն զազրութիւնս, որք յարագ մահուն ապրեցան 'ի բազում պղծութեանց։

Լ՝յլ 'ի ձեզ իբրև յորդիս մատուցեալ է ոտ 'ի խրատել 'ի բժշկել, և ոչ վիրաւորել. այժմէն յայտնել զանօրէնութիւնս ձեր, և ոչ պահել յաւիտենական ամենայն տանջանաց։ Հարկանէ վասն ձեր զանդաստանս ձեր, զի անձինք ձեր 'ի զեղջ եկեսցեն։ Լ՝յլ թերևս չար սիրտն ագահութեան ընչաքաղց և օգտաժողով էիք, և կարձել կամեցաք. և կամ 'ի ցոփապնացս ինչ ցանկութեամբ յափլացեալք, և 'ի ձեռն կաբաստութեանցդ ցածուցանել կամեցաք. և կամ 'ի լքութենէ հացալիցք և մարմնապարար յափրութեամբք յուսացեալք ինչ մոռացաք զերկիւղն ոյ, և ապգ 'ի ձեռն սուղ ինչնեղութեան և կարօտութեան յիշէք, խնդրէք և աղաչէք զնա. և կամ մեղք ինչ բարկացուցանէք զնա, և զարթոյց զձեզ յապաշխարութիւն. ահա և ձեզ ցաւուն պատուհասիդ նշանակ է ողորմութեան, և ոչ բարկութեան։ Լ՝յլ ողորմութիւն 'ի դէմս ցաստանդ ցուցանելոյ՝ բազմութիւնք մեզաց դադարեն։

Լ՝յլհանդէս արարէք խորհրդոց, և քննեցէք զսիրտս ձեր, և գտէք զբազմութիւն յանցանաց, վասն որոյ զեղուն յորդութիւնք պատուհասից 'ի վերայ երկրի. զի չարն սատանայ միշտ 'ի չարիսն յորդորէ, և 'ի միտս մեր փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք. և մեք անմտաբար արհամարհեալ չնչին ինչ զմեղս համարելով, դիզեալ կուտէ 'ի վերայ մեր շեղջք շեղջք մեղացն։ Օ՜ի ամենք նեղեն և կտրեն զանհմանս անդառնանաց

ընկերին, զորմէ մարգարէն ասէ. “Այ որ չինէ զտուն առ տուն և ոչ իրաւամբք,,. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցեն։ Այլ ոմանք ըզվարձս վարձկանաց հատանեն, որք ընդ արիւնահեղսն համարին. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցեն։ Այլ ոմանք զպտուղս եկեղեցւոյ չարակնեն և խաբեն զնոծ, և զընտիր ընտիր խաշանց, ըզկալոյ և զհնձանի անձանց իւրեանց չարակնեն, և խաբեն զնոծ, և զխոտանն և զանօգուտն տեառն մատուցանեն. որում և մարգարէն ասէ. “Անիծեալ լիցի մարդն որոյ ընտիրն կացցէ, և զարատաւորն տեառն մատուցանիցէ,,. որով և Այդէն անիծեցաւ. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Այլ ոմանք ընդվայրած լեզուօք 'ի բամբասանաց ոչ դադարեն՝ զաղտ զընկերէն խօսելով, որոյ և ասէ. Եթէ որ 'ի մարմնոյ տեառն հաղորդի, և չար զընկերէն խօսեսցի, երկնաւոր սուրն շողասցի 'ի շրթունս նորա. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Այլ ոմանք յորկորստութիւնք ապականեալք, որոց և Պաւղոս ասէ՝ Եթէ “Անրբեցողք և բամբասողք զարքայութիւն ոչ ժառանգեն,,. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Այլ ոմանք աներկիւղ և պակասամիտք եղեալ 'ի թատերս նըստին անամօթեալք, և 'ի դիւամոլ տեսարանէն անեղուայթ նետիւք վիրաւորին. թէպէտ և ոչ զմարմինսն, սակայն զհոգին պղծեալ ապականեն. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Այլ ոմանք ոչ երկիւղիւ ՏՐՆ, այլ ըստ սովորութեանն միայն մտեալ յեկեղեցին՝ զանձինս դատարկ բանից պարապեցուցանեն, և զպաշտօնեայսն փառաբանութեանն ՏՐՆ արհամարհեալ՝ և զաղօթսն 'ի մեղս դարձուցանեն, և փնան դատապարտեալք. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Այլ ոմանք ուծացեալք 'ի սիրոյն ՏՐՆ, և մերժեալք 'ի հոգւոյն շնորհաց, կամ պղծութեամբ հաղորդին 'ի սուրբ խորհրդոյն, և կամ ժտութեամբ հեռանան. երկոքեան չարաչար տանջանօք դատապարտին. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցեն։ Ոմանց արհամարհեալ զնորա մկրտութիւնն և զյոյս յարութեան՝ հե-

թանասական անյուսութեամբն գնան, և լան և կոծին 'ի վերայ մեռելոց. զոր արգելեալ 'ի քրիստոնէից սրբոց առաքելոցն. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանց թաղեալ 'ի բաց ընկեցեալ զՀաւատս քրիստոնէութեան և զզօրութիւն խաչին, և 'ի հմայս և յոռութս և 'ի խտիրս և 'ի դիւթս և 'ի գիւաց զառածանս ընթանան, որ է կատարեալ կռապաշտութիւն և մերժումն յաստուծոյն. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանց աներկիւղ յերդումն և 'ի սուտ երդումն սովորեցուցանեն զլեզուս, զոր և Քրիստոս իսկ պատուիրեաց՝ թէ և ամենևին մի երդնուր. այլ եղիցի ձեր այոյն այո, և ոչն ոչ. որ աւելի քան զայն՝ 'ի չարէն է. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք զորբս և զայրիս և զպանդուխտս յաղթահարեն, և տան հառաչել 'ի վերայ զոր պարտողացն. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք զդրացիս իւրեանց նեղեն ընդարձակել զտեղի իւր, և զվիճակ ընկերին սակաւացուցանեն. վասն որոյ ասէ մարգարէն. "Վայ որ յարէ տուն 'ի տուն, և զընկերին հանիցէն". և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք թիւրեն զվերաւունս այրոյն 'ի դատաստանի, և ակն առնուն 'ի շքեղ երեսաց, խոտեալք և ապհամարհեալք կաշառաց անօրէնութեան, զոր և գիրն ասէ, եթէ "Ի հրապարակս անէծք եղիցին, և անէծք բնակեսցեն 'ի տունս կաշառառուաց". և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք 'ի տոկոսեաց վաշխից ժողովեն մեծութիւն և ընուն զտունս իւրեանց, զոր և մարգարէն ողբալով ասէ՝ թէ "Վայ որ ժողովէ զմեծութիւնս անօրէնութեամբ". և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք զվաճառս ճշդեն և կանգնեցուցանեն զսիրտս գնողացն՝ չհայելով յարդարակշիռ վաճառուցն. այլ ջանան առնել զսակաւն մեծագին, և զմեծն սակաւագնի. և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։ Յս ոմանք չափ արդար և կշիռ արդար ոչ ստանան, այլ առնեն փոքր և մեծ 'ի խաբէութիւն և 'ի զրկումն բազմաց, զոր և մարգարէն

ասէ՝ եթէ «Ձայն կրկին պիղծ է առաջի ՝ի ,, . և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ , զի մի ապաշխարեսցուք ։ Այլ ոմանք քինահանութեամբ զանդատանս ընկերին և զհամբարս ապականեն . այլ առաւել մոլորեալք խորհրդովն սատանայի յանդգնին ահեղ անօրէնութիւն զտունսն բնակութեանց նոցա հրդեհեն , որ են բաղումարեանց պարտապան . որ թէպէտ և մարդիկն ապրեցան 'ի հրոյն մահուանէ , սակայն նա որ զհուրն եդ՝ ըստ թուոյ ոգւոյն է պարտական վրիժուց մարդասպանութեան . և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ , զի մի ապաշխարեսցուք ։ Այլ ոմանք առանց հարկի հոգևոր ինչ պատճառանօք սէր ընդ թշնամիսն ՝ի առնել յօժարեն . և առնեն բարեկամութիւնս և խնամութիւնս ընդ անհաւատսն , ընդ Հրեայսն և ընդ հեթանոսսն և ընդ հերձուածողսն , զոր և մարգարէն ասէ՝ թէ «Ի ամն այնորիկ խորտակէ զնաւս քո , զի թշնամոյ ՝ի բարեկամ եղեր ,, . և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ , զի մի ապաշխարեսցուք ։ Այլ ոմանք 'ի պակասամտաց և յանէրկիւղածաց ՝ի թէպէտ և ոչ պոռնկութեամբ , այլ չարաչար նախանձու և շուաքարոյ զշոտութեամբ հաշեն և մաշեն զամուսինս իւրեանց 'ի կարծիս պոռնկութեան , որ ոչ երբեք դադարեն 'ի մեղաց և 'ի խռովութենէ , այլ անդադար հանապազ մեղանչեն քինու և աղաղակաւ . վայ որ կարծեն , և եղուկ որ կարծիս տան . և սատանայ զայն փոքր կարծեցուցանէ , զի մի ապաշխարեսցուք ։ Այլ ոմանք զծնողս տրտմեցուցանեն և ցաւեցուցանեն անարգանօք զսիրտս նոցա , զորս պատուիրանն պատուել հրամայէ ։ Այլ ոմանք զորդիս իւրեանց ոչ խրատեն , այլ խակ և ընդվայրագնաց թողուն . ընդ որոյ ծնողքն զպատիժս պատուհասի ընդունին ։ Այլ ոմանք ծառայք սատակք զտեարս իւրեանց արհամարհեն , մարդահաճոյ և աչք վաստակօք յանձանց դատապարտութիւն և 'ի տանջանս ։ Այլ ոմանք յուխտաւորաց՝ որք զխաչինս ընծայս մատուցանեն , անցին զուխտիւն և ստեցին , և զդաշինս երդմանն արհամարհեցին ։ Այլ ոմանք 'ի կուսանաց՝ որք Քրիստոսի կամեցան հաճոյ լինել հանդերձիւք և կերպարանօք , որ է չարաչար շնութիւն ։ Այլ ոմանք 'ի կրօնաւորաց ոչ երկիւղիւն ՝ի պարկեշտանան , այլ կերպարանեալք սնդիկն առ 'ի մարդկանէ , յիմա-

րեալք ախտիւն մնափառութեամբ զոյծ անգիտացուցա-
նեն. ընդ որոց առաւել քան զպոռնիկն և զարբեցողն
դատապարտին։ Այս ոմանք ախտիւք և խեղութեամբ
նախատեն և բամբասեն զեղբարս, որոց թշնամանքն
յոյծ եղանեն, զի զգործս ձեռաց նորա հայհոյեն. զի ո-
րոյ գործն հայհոյի, և գործելին թշնամանի։ Այս ո-
մանք չարակնեն և նախանձին ընդ եղբօրն յառաջագի-
մութիւնն, և ուրախ լինին և խնդան ընդ անկանելն և
ընդ աղքատանալն նորա, որ են մեղք ահեղք և չարաչար
անօրէնութիւնք առաջի ՝ոյ. և սատանայ զայն փոքր
կարծեցուցանէ, զի մի ապաշխարեսցուք։

Զ.յլ ըստ սովորութեանն և մարդահաճոյ աղօթեմք,
և ըստ սովորութեանն հաղորդիմք, և ըստ սովորու-
թեանն զպաշտօնն կատարեմք, և ոչ ահիւ և երկիւ-
ղիւ և սիրով հոգւոյն, և անձանց[1] ամենայն յօժարու-
թեամբ։ Մոռոլից ասել և զայլ անթիւ բազում յանցա-
նացն, զսմբարտաւանութեանցն, զգողութեանցն, զը-
պոռնկութեանցն, զպանութեանցն, զնենգութեանցն,
զկռապաշտութեանցն, և առաւել զարիւնարբու նա-
խանձուէ և զպիղծ ոխակալութենէ և զանհաշտ թըշ-
նամութենէն զընկերին, որ են հանապազորդ սպանողք
և միշտ 'ի մեզ. և սատանայ զայն փոքր կարծեցուցա-
նէ, զի մի ապաշխարեսցուք։

Այս արդ այս ամենայն բազմութիւնք անօրէնութեց
զեռան 'ի մեզ. և իշխիցեմք ասել արդեօք եթէ ընդէր
զեղուն 'ի մեզ ցասմունք պատուհասին ՝ոյ, զոր վան
ողորմութեանն իւրոյ 'ի բազում ժամանակաց երկայ-
նամտեալ արգել հեղուլ զսրտմտութիւն բարկութեանն
իւրոյ 'ի ձեզ՝ ակն կալով դարձի ապաշխարութեան։ Այս
վասն զի անզեղջ և անապաշաւ մնացէք, արբոյց ձեզ
սակաւիկ ինչ ճաշակումն սպառնալեաց իւրոց. զի ծա-
նիջիք՝ թէ գոյ որ դատի զամենայն բազմութիւն անօրէ-
նութեանց մերոց. և ոչ զբարկութիւնն եհեղ ըստ չա-
փոյ մեղաց ձերոց, այլ զմասն մի 'ի բազմաց առ 'ի խրա-
տել զձեզ. զի գիտասջիք թէ գոյ գեհեն և տանջանք
յաւիտենականք, որով դատի և զայլ ևս անթիւ զամ-
բարշտութիւնս ձեր։

1 Ճառընտիրն ամենայն անյնդօրդարութեամբ։

Եւ արդ ահա զիրդ առէք զզօրութեանն ՅԻ, և ծանեայք զմարդասիրութիւնն Նորա. մի այսուհետև նմանեսջիք ամբարշտութեանն Փարաւոնի խստացուցանել ըստ սիրտս ձեր. այլ յիշեցէք զանուղղայ զգործս ձեր, և գաթձաթուք յիւրաքանչիւր ձեր Հանապարհէ, և ուղիղ Հանապարհին խնդիր արարէք աղաչանօք և պաղատանօք. զի և 'ի ձէնջ այլ պատուհասից բաղմութիւնք վերացին, և սպառնալիք ահեղ տանջանացն անցեալ դադարեսցեն. զի և 'ի ցասումն եկելոց պատուհասիցն համարեսցի մեղայ Թողութիւն, որպէս և մարգարէն ասէ. "Տէր, տուր մեզ զխաղաղութիւն քո, զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաւ մեզ"։ Որպէս և դուք ընկալայք 'ի ձեռանէ տեառն սակաւ ինչ հատուցումն մեղայ ձերոց, որ եղև ձեզ նպաստ փրկութեան՝ զարթուցանել զձեզ յապաշխարութիւն։

Եւ արդ մի սողոմապէս պանծանալ անզղջութեամբ, այլ նիհնուէաբար ապաշխարել, լալով և հառաչանօք հաշտեցուցանել ընդ ձեզ զՀայրն երկնաւոր՝ որ խրատէ զձեզ որպէս սիրելիս, և ոչ անտես արարեալ արհամարհեաց իբրև զխորթս ատեցեալս։ Եւ զխրատն թէպէտ և առ ժամանակ մի տրտմութիւն համարիք, բայց յետոյ Հանաչէք՝ թէ զղջումն ապաշխարութեան և զթողութիւն մեղայ նոքաւ ընկալայք. զի զոր սիրէ տէր՝ զնոսին և խրատէ, զի սրբեալք և քաւեալք 'ի մեղայ պահեսցին։ Այլ թէ և գոհանայցէք ևս զարդար դատաստանացն ՅԻ, եթէ յիրաւի յորում գործեցաքն՝ ընկալաք, կարող է ՅԻ զսակաւ ինչ մնացորդս պտղոցն անդաստանաց ձերոց իբրև զկնգ հացին բաղմացուցանել առ 'ի լիութիւն բաւականութեան ձերոյ։ Բայց դուք մի ինչ զարմանաւոր յղփութիւն խնդրէք, այլ խնդրեցէք նախ զթողութիւն մեղայ և զբժշկութիւն հոգւոց ձերոց, և այդ ամենայն յաւելցի 'ի ձեզ։ Եւ ՅԻ որ մեծն է ողորմութեամբ, տայ սերմն սերմանահանին, և հաց 'ի կերակուր պարգևեսցէ ձեզ, և աՀեցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ։ Զեր զամենայն լիութիւնն ընկալեալ և առաւելեալ լինիք ողորմութեամբն ՅԻ՝ առ 'ի ընդ զամենայն կարօտութիւնս ձեր չքաւորացս, որքոյ և նեղելոց։ Եւ այդ է քաւութիւն մեղայ և ամենայն անօրէնութեանց ձերոց. այդ է Հանապարհ

որ տանի զձեզ յօթեվանս արքայութեանն. այդ է նաւ՝ որ տանի 'ի նաւահանգիստն խաղաղութեան. և այդ է դուռն որ մուծանէ զձեզ 'ի փափկութիւնս անուշահոտ դրախտին և 'ի լուսեղէն և յաւիտենական սրբոցն և արդարոցն խորանս։ Ընդ որս զմեզ արժանիս ապացէ վայելել 'ի հնորհս փառաց հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ԻԲ

ՎԱՍՆ ՁԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՐԿԻՒՂԻՒ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՄԵՐՁԵՆԱԼՈՑ

Սոսկան ոսկերք իմ դողութեամբ, և սարսափէ անձն իմ հիացեալ՝ յորժամ յիշեմ զմերձաւորութիւն ահագին և մեծ խորհրդին. և յերկուս վարեալ միտք իմ ծփին հանապազ. կամիմ մերձենալ՝ի փափագելին, և անարժանութիւնս իմ արգելու. մերժել հեռանալ՝ այս կորուստ է հոգւոյս։ Վասնզի են բազումք՝ որ կամ հպին չարաչար, և կամ հեռանան անօրէնութեամբ, և երկոքեան են սատանայականք. զի մինն զահեղ խորհրդոյն զզօրութիւն ոչ իմանայ, այլ ընդելական սովորութեանն հարեալ խղճի մտաց մերձենայ, ոչ՝ի փրկութիւն՝ այլ՝ի դատապարտութիւն, ոչ՝ի թողութիւն մեղաց՝ այլ յաւելումն անօրէնութեան։ Եւ միւսն իբրև զդոյզն ինչ արհամարհեալ հեռանայ՝ ոչ ինչ կարեւոր համարելով, զի զզօրութիւն և զշնորհս մեծի խորհրդոյն ոչ ճանաչէ, և կամ՝ի պատիւ ինչ խորհրդոյն համարի զոչ ստէպն մերձենալ. որ ոչ՝ի պատիւ, այլ յիմարութիւն և ծուլութիւն, հեռանալ՝ի կենաց, և փափագել խաւարի և մահու. զոր տէր ինքնին ասաց՝ եթէ «Եւ ես եմ հացն կենաց. և որ ուտէ՝ի հացէս յայսմանէ, կեցցէ յաւիտեան. և հացն զոր ես տայց՝ մարմին իմ է, զոր ես տայց վասն կենաց աշխարհիս»։

Եւ արդ ամենայն որ հեռանայ՝ի մարմնոյ և յարենէ Քրիստոսի, որպէս յաւել ևս զամէնն՝ վասն առաւել ևս հաստատութեանն, թէ «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ձեր»։ Եւ որք ոչ ունին զկեանսն յաւիտենից, նոցա խաւարն աղջամբղջին և հաւր գեհենին է ժառանգութի։ Զի ամե-

նայն որ հեռի է 'ի սուրբ խորհրդոյն, դիւրաւ ընդունի զախտ սատանայական, և օթեվան լինի նմա հանապազ։ Պարտ է անձին կամ 'ի ընորհաց հոգւոյն վայելել, կամ 'ի պիղծ հոգւոյն ընդունել։ "Հոգի տեառն վերացաւ 'ի Սաւուղայ, և նեղէր զնա այս չար"։ Զի այգւոյ որ ոչ է պարիսպ, գազանք ապականիչք և խոզք անտառի մտեալ ապականեն զնա. և որ սուրբ խորհրդոնն ոչ պարսպին, բնակարան են դիւաց անձինք նոցա. փախուցեալք 'ի հրեշտակական ժողովոյն 'ի բանակս դիւաց անկանին. և դեւք դիւրաւ ըմբռնեն զնոսա, և զհոգիս նոցա տանջեն, և զմարմինս նոցա լակեն չարաչար, երբեմն 'ի հուր, երբեմն 'ի ջուր։ Զու արդ տես և զյիմարութիւն քո փարատեա 'ի քէն, զթերահաւատութիւնդ քո ուղղեա, զծուլութիւնդ 'ի փոյթ յորդորեա, և փութա սրբիլ 'ի մեղաց, և մեծաւ փափագանաք փութա 'ի սուրբ սեղանն հոգևոր, զի մի 'ի քրիստոնէական անուանէդ մերժեսցիս։ Զի քրիստոնէութիւն հաւատքն են և մկրտութիւն և վայելումն սրբոյ խորհրդոյն. և որ յայրամանէ հեռի է և թերի, թերի է 'ի քրիստոնէութենէ. զի ոչ Քրիստոս 'ի նմա բնակէ, և ոչ նա 'ի Քրիստոս. քանզի որ ուտէ, ասէ, 'ի մարմնոյ իմմէ, նա յիս բնակէսցէ, և ես 'ի նմա։

Զու արդ որ կամի բնակել 'ի նմա, այնպէս պարտի գնալ, որպէս նայն գնաց։ Զու որ ունիցի զայն յոյս թէ ոչ 'ի նմա բնակէ և նա յոչ, այնպէս պարտի լինել սուրբ, որպէս և նայն սուրբ է՝ ըստ մարդկան տկարութեան չափոյ, ապա մերձենալ։ Զու որ ոչ այսպէս մերձենայ, յայտ է եթէ 'ի դատապարտութիւն անձին իւրում մերձենայ. զի մերձենալ 'ի սուրբ մարմինն տերունական՝ սրբոյն լոյս է, և լուսաւորէ հոգւոյն մերձաւորութեամբ. և պղծոյն հուր է, այրէ և ապականէ վասն խղճիւն մերձենալոյ։ Զի յորժամ վկայութիւն մտացն սրբութեան քում ոչ վկայէ, յայտ է եթէ մերձենալն քո 'ի սուրբ խորհուրդն ոչ է ըստ կամացն ՅՍ. որպէս և Պաւղոս ասէ՝ թէ "Զայս են կամք ՅՍ վկայութիւն մտաց ձերոց"։ Զու եթէ միտք քո վկայեն քում սրբութեանդ, ըստ կամացն ՅՍ է մերձաւորութիւնդ։ Զպա եթէ խղճիւ մերձենայցես, գիտեա զի դատապարտեալ ելանես, և անօրէն քան զամենայն անօրէնս. զի սա եւ

առաւել անօրինագոյն է քան զարիւնահեղ սպանողացն չարութիւնս։ Օ՛ի մարդ որ զմարդ սպանանէ, մարդասպան անուանի. իսկ որ անարժանութեամբ 'ի մարմնոյ տեառն հաղորդի, նա ՅԾասպան է. քանզի վերստին 'ի խաչ հանէ զորդին ՅՅ։

Լ՚ու արդ տես թէ յո՞ր սեղան անօրէնութեամբ մերձենաս. յորմէ վերին զօրութիւնքն սոսկան և սարսեն, և դու պիղծ շրթամբքդ յանդգնեալ մատչիս։ Օ՛ի եթէ հոտ ինչ չարեաց հարկանէր՝ առ թագաւոր ոք չիշխէիր մերձենալ, և զերկնաւոր թագաւորն 'ի հոտեալ հոգիդ ընդունիս, և ոչ մեծաւ ահիւ հիանաս. ցիսոտ ձեռօք 'ի կերակուրս խղճես մերձենալ, և գեռաթաթախ ոգւովդ անխտիր հաղորդիս։ Ո՛չ խորք անօրէնութեան, ո՛ ահեղ արհաւիրք, ո՛ անամեթ լքութիւն և սաստիկ ամբարշտութիւն. խղճիւ մտօք և աղտեղեալ ոգւով երթեալ մերձենաս 'ի սրբութիւնս մեծի խորհրդոյն. և որ քան զայս անօրէնութիւնս յանդգնեալ յանդգնեսցի, չէ և չէ իսկ տեսանել։ Յորժամ մարդոյ, ասէ, մեղանչէ՝ առ ՅԾ աղաչէ, իսկ որ ՅՅ մեղանչէ՝ զո՞ աղաչեսցէ. զի ոչ եթէ արեան մարդոյ եղեն պարտական, այլ և մարմնոյ և արեան որդւոյն ՅՅ։ Ղէ՛ 'ի միտ առ և տես՝ եթէ ո՞րպէս հաղորդիս 'ի սուրբ խորհրդոյն. զի եթէ վստահ ես յարքայութիւնն ՅՅ մտանել՝ անխիղճ ընկալ և զհաղորդութիւն խորհրդոյն. իսկ եթէ թերահաւատ ես յարքայութենէն երկնից, ապա և անարժան ես և խորհրդոյն սրբութեան։ Օ՛ի չէ հնար սրբոյ խորհրդոյն արժանաւոր լինել, և արքայութեանն ոչ. զի երկոցունցն մի սրբութիւն է արժանաւոր լինել։

Ա՚յլ և ոմանք թէպէտ և 'ի խղճէ մտացն ոչ հաղորդին, սակայն կեղծաւորեալք մնան 'ի ներքս, կարծեցուցանելով արտաքնոցն՝ եթէ 'ի հաղորդելոյն իցեն. զի ամենայն որ ոչ է արժանի խորհրդոյն, և ոչ 'ի ներքս կալոյ, ոչ աղօթից և ոչ հաղորդութեան. այլ ելանել արտաքս ընդ անարժանն։ Ո՛ի կեղծաւորիր մնալ՝ 'ի ներքս իբրև արժանաւոր, և չհաղորդել իբրև զանարժան։ Ինդէ՞ր արհամարհես զահաւոր և զմեծ խորհուրդն. ո՞չ իմանաս՝ եթէ յորժամ խորհուրդն սուրբ 'ի սուրբ սեղանն ելանիցէ, յայնժամ երկինք բանին 'ի վերուստ, և Քրիստոս իջեալ անդր հասանիցէ, և զոքք

հրեշտակաց յերկնից յերկիր ծաւալիցին, և շուրջ զամ-
ենայնին բոլորին՝ ուր ահագին խորհուրդն է տերունա-
կան, և սուրբ հոգւովն ամենեքեան ընուցուն։ Յայն-
ժամ հարեալքն խղճիւ ոչ են արժանի հաղորդել յայն-
պիսի խորհրդոյն, մինչև ապաշխարութեամբ ուղղիցին։
Լուր և զահեղ բողոք քարոզին. մի՛ ոք յերբախայից,
ասէ, մի՛ ոք 'ի Թերահաւատից, և մի՛ ոք յանցաւոր-
ոչ են պատրաստ սրբութեամբ, զնոսա արտաքս առաքէ.
և 'ի ներքս մնացելոցն աղաղակէ՝ եթէ հայեցարուք
յանձինս ձեր, և զսիրտս ձեր քննեցէք մի՛ խղճիւ ոք և
մի՛ նենգութեամբ, մի՛ խորամանկութեամբ ոք և մի՛
պատրանաք, մի՛ երկմտութեամբ և թերահաւատութիւն
մերձեսցի. զի սրբութիւն խորհրդոյն սրբոց և անարատ-
աց վայել է։ Լու զայս լսելով ոչ դողալք և սոսկալք
յահեղ և 'ի մեծ խորհրդոյն, յորմէ սերովբէքն սարսա-
փեն, և քերովբէքն չիշխեն մերձենալ. հրեշտակք և
հրեշտակապետք սոսկան դողալով, և ամենայն վերին զո-
րութիւնքն հիացեալ սարսեն։ Լակ որչափ սաստիկ տանջ-
անք մաշիցի, թէ մարդ յանցաւոր խղճիւ ինչ 'ի նա
հպիցի. և որպէս խուիւ ինչ 'ի հուր հպիցի, որ 'ի հրոյն
այրի և ապականի. զի իբրև փոքր ինչ համարելով
զՔրիստոսի մարմինն թշնամանեաց։

Լայլ մի՛ իբրև 'ի լոկ հաց հայիցիս, և մի՛ իբրև զգի-
նի համարիցիս և տեսանիցես. զի ոչ տեսանելի է ահա-
ւորութիւն սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւն,
քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս 'ի
խորհուրդն և 'ի մկրտութիւնն, այլ իմանալի։ Զուր
տեսանեմք, այլ ՚ուծային բանին հաւատամք, որ ասէն,
եթէ այս է մարմին իմ և արիւն. որ ուտէ 'ի մարմնոյ
իմմէ և ըմպէ յարենէ իմմէ, նա յիս բնակեսցէ և ես 'ի
նա, և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Լու մեք
ՀՀմարիտ հաւատով զՔրիստոս իմանամք 'ի վերայ սե-
ղանոյն, 'ի նա մերձենամք, զնա տեսանեմք, զնա շո-
շափեմք, զնա համբուրեմք, զնա առնումք 'ի ներքս և
ընդունիմք, և լինիմք մարմին և անդամք և որդիք ՚այ։

Լարդ որ այսպիսի հաւատով ոչ հաւատայ, և զմարմին
որդւոյն ՚այ ոչ իմանայ, հեռի է յօգնականութենէն
՚այ, հեռի է և 'ի շնորհաց հոգւոյն, հեռի է և 'ի թո-
ղութենէ մեղաց և 'ի կենացն յաւիտենականաց, ան-

Digitized by Google

ակնկալ յարութեան, և անյոյս փրկութեան, և մերժեալ՝ի քրիստոնէական հաւատոց, որով եղև մեզ փրկութիւն հեղմամբ արեամբն Քրիստոսի։ Այս արդ մի՞ ոք՝ի նա խղճիւ մերձեսցի, մի՞ ոք՝ի նա թերահաւատութեամբ մերձեսցի, մի՞ ոք թուլութեամբ յարեսցի. այլ հաւատացեալ ճշմարիտ՝ եթէ՝ի մեծ ահեղ խորհրդին երկինք են եկեղեցին, աթոռ փառաց է սեղան խորհրդին, և Քրիստոս իջեալ դնի՝ի վերայ՝ որ միշտ բաշխի՝ի փրկութիւն ամենեցուն։

Այս արդ ով մարդ, հայեաց՝ի քեզ և տես, ո՞ւր կաս, զո՞վ տեսանես, զո՞վ համբուրես և՝ի ներքս ընդունիս. ընդ երկնային զօրութիւնսն կաս, ընդ հրեշտակս օրհնես, ընդ սերովբէսն բարեբանես, զՔրիստոս տեսանես, զՔրիստոս համբուրես, զՔրիստոս առնուս և ճաշակես, և լցեալ հոգւովն սրբով և ճշմարտին շնորհօքն պայծառացեալ զօրանաս հանապազ։ Այսն որոյ և դուք քահանայք և սպասաւորք՝ մատակարարք սուրբ խորհրդոյն, ահիւ մատերուք, երկիւղիւ պահեցէք, սրբութեամբ սպասաւորեցէք, և զգուշութեամբ մատակարարեցէք. գանձ ունիք արքունի, մեծաւ երկիւղիւ զգուշացարուք պահպանութեանդ. քանզի և ձեզ անսերելի տանջանք են՝ եթէ զչարիս ուրուք գիտիցէք, և նա եկեալ յանդգնեսցի՝ի սուրբ մարմինն Քրիստոսի, և ակնածիցես ինչ խրատել մերժել և յանդիմանել։ Այլ վասն ծուլութեան և ակնառութեան զսուրբ մարմինն Քրիստոսի անօրինաց և անարժանից բաշխիցէք, և որպէս շանց և խոզից ընկեցուցուք, և զո՞ր ներեալ թողութիւն ունիցիք, և քանի՞ պատժոց և անսերելի տանջանաց մատնիցիք՝ որք մատնիչք և պարտականք տերունական մարմնոյն եղերուք։ Այս վասն Քրիստոսի իշխեք, վասն Քրիստոսի կերակրիք, և զՔրիստոս անօրինացն մատնեք, և պիղծ վարիւք անարժանիցն չարչարեք։

Արդ հայեա յանձն քո՝ քահանայդ, և ծանիր զքեզ՝ զի՞նչ է վաստակ քո քահանայութեանդ, և զի՞նչ գործ ստացեալ ունիս։ Այլ հերկահար ես ժողովրդեանդ, և ոչ արտունձ[1] և կասող, այլ յուսուցանել և՝ի խրատել կարգեցար, մերժել և յանդիմանել։ Այս է գործ քահանայութեան, և միշտ հարկ հանապազ. զի՞ վասն

[1] Նշանակիր օրինակն արտահոսի։

այնորիկ այսպիսի պատուով պատուեցայք, և իշխեք ա-
մենեցուն, զի զայսպիսիսն քննեցէք, և յանդիմանեալ
մերժեցէք։ Իսկ զոր ոչն գիտիցեն քահանայքն՝ նոքա
և առաւել աններելի տանջանաց են պարտապանք, որ-
պէս և Պաւղոս ասէ, եթէ "Որ ուտէ և ըմպէ անարդ-
ժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն
տեառն"։ Այլ և բազմաց իսկ զՀաշակ դատաստանին
արքուցանէ՝ չարաչար ախտիւք և դառնութեամբ հի-
ւանդութեանց տարաժամ հանէ յաշխարհէս, որպէս
և ասէ՝ եթէ "Ոմանք անարժան 'ի մարմնոյ տեառն
հաղորդելոյ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտա-
ժէտք, և շատ ևս որ տարաժամ հնջեցին"։ Օ՛ի ոմանք
վասն անարժան 'ի խորհուրդն մերձենալոյ լկին մոլե-
կան ախտիւք. և ոմանք վասն նորուն խեղք և լուծեալք
շրջին զամենայն աւուրս. և ոմանք վասն նորուն անկեալ
կան 'ի հարուածս և 'ի ցաւս անբժշկելիս. և ոմանք
վասն նորուն 'ի բանտս և 'ի կապանս մտանեն. և ոմանք
վասն նորուն անզաւակ իսկ յաշխարհէս ելանեն։ Այլ
և բազում ևս ցաստանք 'ի հիւթոցս, և սրտակորու-
սութիւնք և մահք տարաժամք մարդոյ և անասնոյ վասն
անարժան հաղորդելոյ 'ի մարմնոյ և յարենէ տն լինին։

Զան որոյ բազում երկիւղիւ մերձեսցուք, բազում
զգուշութեամբ զսիրտս մեր քննեսցուք. մի վասն ծու-
լութեան տօնս նշանակեսցուք 'ի հաղորդութիւնս մեր-
ձենալոյ. զի յուրբաթն և 'ի կիրակէին և 'ի տօնս
պենտեկոստէին և զատկացն մի զենումն է, և նոյն խոր-
հուրդ կատարի. և դու 'ի ժամանակ մերձենալոյ՝ սուրբ
զմիտս միայն պահեա, և մի ինչ աւուրս յերկարաձիգս։
Զէ ինչ յանդգնութիւն սուրբ սրտիւ բազում անգամ
մերձենալ, զի առաւել ևս կեցուցանես և նորոգես զ-
գիդ. իսկ անարժանութեամբ և խղճիւ թէ յամենայն
ժամանակս կենաց քոց մի անգամ մերձեսցիս, կորուսեալ
զոգիդ։ Տես զի մի յանցանս յանցեաւ Կայէն, և կո-
րեաւ. մի յանցանս յանցեաւ Բանան, և կորեաւ. մի
յանցանս յանցեաւ Աքաբ, և կորեաւ. մի յանցանս
յանցեաւ Յուդայ, և կորեաւ. և որք զՔրիստոս սպա-
նին՝ մի անգամ սպանին, և կորեան. և դու եթէ մի
անգամ յամենայն ժամանակս կենաց քոց անարժանու-
թեամբ 'ի սուրբ խորհուրդն մերձենաս, սպաներ զոգիդ
յաւիտենական տանջանացն կորստեամբ։

Digitized by Google

Ա.յլ ասիցես. 'ի տունս քառանոտդացն սրբեալ մերձենամ։ Այլ արդ զինչ օգտիցիս մի անգամ 'ի սրբելոյն՝ յորժամ դարձեալ աղտեղանայցես. զինչ օգուտ է լուանալն՝ յորժամ դարձեալ ցխոտ լինիս. զինչ օգուտ է շինելն՝ յորժամ դարձեալ քակիցես։ Յաւուր տունին միայն կամիս առողջ լինել 'ի ցաւոց, և յետ այնորիկ 'ի ցաւս մաշել. մի օր բժշկիլ 'ի վիրաց մեղացն, և ապա զնոյն վէրս ստանալ ախորժես. մի օր հեռանաս 'ի դիւէն, և ապա նովին լլկել հանապազ։ Ա.յսպիսիք են որ մի անգամ հաղորդին 'ի սուրբ խորհրդոյն, և ապա 'ի մեղս մաշին հանապազ։ Զինչ օգուտ է մի անգամ հեռանալ 'ի սրոյն սպանողին՝ յորժամ վաղիւն 'ի ձեռն նորա մատնիցիս. և կամ մի օր ընդ Թագաւորի բազմիլ 'ի սեղանն, և վաղիւն դահճաց մատնիլ անողորմ։ Այսպէս չէ՞ ինչ շահ և օգուտ 'ի տունի զատկին միայն վայելել 'ի սուրբ սեղանոյն, և ապա պիղծ գործովք հեռանալ, և ընդ սատանայի լինել հանապազ։ Զինչ օգուտ է յաւուր տունի գտանել ակամս պատուականս, և 'ի վաղիւն կորուսանել. և ոչ 'ի տունին հաղորդելն է օգուտ, յորժամ դարձեալ անարժան վարիւք կորուսանիցես։ Զինչ օգուտ է 'ի Քրիստոս մերձենալ, յորժամ դարձեալ անդրէն 'ի սատանայ յարիցես։ Չէ՞ ինչ օգուտ այսօր 'ի հրոյն զերծանել, և 'ի վաղիւն միայն այրել չարաչար. և ոչ մխիթարութիւն ինչ է՝ մի օր 'ի բանտե ելանել և լինել Թագաւոր, և ապա ընդ դատապարտեալսն տանջել անողորմ. և ոչ մի օր օգուտ է 'ի խորհրդին վայելել, և ապա ընդ դատապարտեալսն արտաքս ելանել։ Զի յերկուս ոտս կաղաս և յերկուս միտս տաղտապիս. կամ դիւաց լեր պաշտօնեայ, և կամ Քրիստոսի խորհրդակից. մի օր օդի սպիտակայեալ երևիս, և մի օր այծի սևաթոյր. այսօր Դաւիթ հոգեալոց, և վաղիւ Սաւուղ այսահար. այսօր Պետրոս հընազանդ, և վաղիւ Յուդայ ապստամբ. այսօր Քրիստոսի խորհրդակից, և վաղիւ սատանայի կամարար. այսօր իբրև զքրիստոնեայ 'ի մարմնոյ տեառն վայելես, և վաղիւն իբրև զերախայ հեռանաս 'ի նմանէ. այսօր ընդ խոստովանողսն, և վաղիւն արտաքոյ ընդ ուրացողսն. այսօր ընդ հաւատացեալսն 'ի խորհուրդն մտանես, և վաղիւն ընդ անհաւատսն արտաքս ելանես։ Զինչ

զքեզ կոչեցից, կամ զինչ զքեզ անուանեցից. երբեմն գառնացեալ, երբեմն գազանացեալ. երբեմն լուսազգեաց, և երբեմն խաւարապատ. այսօր առնուս պտուղս 'ի Թագաւորէն, և վաղիւն ջնջուսիս և դարձուցանես զերեսդ։ Այնպիսիք են՝ որ 'ի յաւուրս ինչ հաղորդին խորհրդոյն, և ապա իբրև զերախայս զերեսս դարձուցեալ ելանեն։ Եթէ արժանաւոր ես խորհրդոյն՝ հանապազ վայելեա համարձակ, զի հոգելից և քրիստոսազգեաց և քրիստոսընկալ լինիցիս. և եթէ անարժան ես վարիւք, և ոչ 'ի տօն զատկին ես արժանաւոր.

Այլ ասիցես՝ եթէ 'ի քառասներորդ պահն սրբեցայ, և ցանկամ 'ի սուրբ խորհուրդն մերձենալ։ Բարիոք է, և ես գովեցից. բայց արդ ընդէր չմերձենաս հանապազ։ Ակարեմ, ասէ, զիս մաքուր ունել հանապազ։ Արդ եթէ այդպէս է 'ի միտս քո՝ եթէ մի անգամ հաղորդիմ 'ի տօնին և ապա հեռանամ, և ոչ 'ի տօնին ես արժանաւոր. զի խորհուրդք չարին են 'ի քեզ։ Զինչ օգուտ է 'ի Քրիստոս մերձենալ, և 'ի սատանայէ չհեռանալ. զինչ օգուտ է զպատուական դեղն ճաշակել, յորժամ զթունն 'ի ներքս 'ի քեզ պահիցես. զինչ օգուտ է առ բժիշկն երթալ, յորժամ զվէրսն չբկամիցիս մերկանալ. և ոչ օգուտ 'ի հաղորդելոյդ ինչ գտանես, յորժամ 'ի մեղացն չկամիս հեռանալ. զի յաւելուս դատապարտութիւն և տանջանս։ Զի եթէ լսեր Թագաւորն՝ եթէ իշխան աք այսօր ընդ նմա 'ի խորհուրդ մտանէր, և վաղիւն հեռանայր 'ի նմանէ և թշնամեացն լինէր խորհրդակից, միթէ ընդունէր զնա 'ի խորհուրդս. այլ կապեր և տանջէր և սպանանէր։ Դակ ոչչափ ևս առաւել Քրիստոս դատապարտիցէ և տանջիցէ՝ որ այսօր կամի ընդ նմա 'ի խորհուրդն տեսրունական մտանել, և վաղիւն 'ի խորհրդոյն հեռանալ, և զկամս թշնամոյն կատարել։ Եթէ այսօր մաքուր ինչ իցես 'ի մեղաց՝ յորժամ զայդ 'ի միտս քո խորհիս եթէ վաղիւն հեռանամ, և զկամս անձին իմոյ կատարեմ. այս առաւել ևս չար է առաջի աչաց։ Որ խորհի զի մերձենալ 'ի սուրբ մարմինն Քրիստոսի, և ապա հեռանալ 'ի նմանէն և 'ի հրամանացն աչաց, այս է խաղալ մտաք մերձենալ, և այս է երկմտութեամբ ընդունել. այս է նենգութեամբ հաղորդել, և պատրանաք և խա-

բէհութեամբ և թերահաւատութեամբ ձաշակել։ Ա.յս աղտեղագոյն է քան զամենայն պղծութիւն՝ յորժամ դարձեալ հեռանալ խորհիցիս, և միւսանգամ անդրէն յառաջին չարիսն մերձենալ։ Օ՜ի մարդ որ ասէ դառնալ՝ի մեղաց, և միւսանգամ՝ անդրէն շրջիցի, շան նըմանն է՝ որ յիւր փսխածն դառնայցէ։

Այլ արդ զայս ամենայն իմացեալ մի՛ արժանաւորութեամբ հեռասցուք՝ի սուրբ խորհրդոյն յերկար ինչ ժամանակս, և մի՛ անարժանութեամբ յանդգնեալ հըպեսցուք յահեղ խորհուրդն սրբութեան. զի պատիժք ահեղք անարժանիցն մնան՝ որք յանդգնեալ խղճիւ մտացն հաղորդին, և պատիժք արժանաւորացն՝ որք հեղգանն և ծուլանան յերկար ինչ ժամանակաւ։ Ա.յլ բաղում երկիւղիւ անձանց զգուշասցուք, և մեծաւ փութով զխաւարն անգիտութեան փարատեսցուք. զանիրաւ զբարկութիւն, զթշնամանողութիւն, զչարայուշ ոխակալութիւն՝ի բաց ընկեսցուք. զխորամանկութիւն, զքինահանութիւն, զնախանձ մերժեսցուք. զտրտմութիւն և զառանց բարբառոյ աղաղակն՝ի բաց թօթափեսցուք. յագահաց, ՝ի բամբասողաց, յարբեցողացն և՝ի զեղխեցելոցն փախիցուք. զչարակնութիւն և զատելութիւն և զգաղտնի նենգութիւն դադարեցուսցուք. ընդ թշնամիսն հաշտեսցուք, զատելիսն սիրեսցուք, և զյանցանս միմեանց թողցուք. յամենայն սրտէ միմեանց ծառայեսցուք, միմեանց հնազանդեսցուք, զմիմեանց բեռինս բարձցուք, զմիմեանս սիրեսցուք, զընկերս լաքան զանձինս համարեսցուք. զսիրտս սրբեսցուք, զաչս ցածուսցուք, զլեզուս՝ի բամբասանաց դադարեցուսցուք, զմեղս ապաշխարեսցուք, զխիղճս փարատեսցուք, զմիմարութիւնս թօթափեսցուք, և զծուլութիւնս՝ի փոյթ դարձուսցուք. պահօք պնդեսցուք, աղօթիւք աշխատեսցուք, յողորմութիս յօժարեսցուք, գործովք առաքինասցուք, ՝ի չարեաց տղայասցուք, և հաւատով կատարեալ լիցուք։ Օ՜ի այսպէս ամենայն առաքինութիւք արժանաւորեսցուք ահաւորի և մեծի խորհրդոյն. բաղում փափագանօք և կատարեալ սրբութեամբ վայելեսցուք յամենասուրբ և՝ի կենսարար՝ի մարմնոյ և յարենէն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԻԳ

ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՆՔՃՆԵԼՈՅ ՑԱՇԽԱՐՀԷՍ

Հայեա դու 'ի յոյսն վերին՝ որ ի Քրիստոս 'ի խորխաւարային սգոյդ. փութա փարատեա 'ի քէն զյիմարեցուցիչ խորհուրդս չարին, և զարթիր և եկ 'ի միտս քո. յիշեա զպատուէրս պատուիրանացն Աստուծոյ, և թափեա ըզքեզ 'ի սատանայական թախանձանացդ, և 'ի միտ առ զբազմաչար հնարս թշնամւոյն, և պատկառեա 'ի նեռոյ հնարս. երկիր 'ի խորամանկութենէն և թիւնից անարգութեանց նորա. փախիր 'ի դառն վիրաց և 'ի սաստիկ հարուածոց նորա։ Հայեա 'ի պղտորութիւն մտացդ քոց, և ծանիր եթէ այդ սերմանք թշնամւոյն են 'ի քեզ. արի անկիր առաջի Աստուծոյ՝ զի ապրեսցիս 'ի չար խաբէից նորա և յանօրէն տրտմութենէն։

Օ՜ի յորժամ սատանայ բոլորովիմք գերէ զմիտս մարդոյն, ածէ 'ի վերայ տրտմութիւն և յուզմունս խորհրդոց. որ թէպէտ և սուղ ինչ իցեն տրտմութիւնքն, սակայն նա 'ի պղտորեալ միտս նորա անհնարին և անչափս կարծրացուցանէ, որով և զսիրտն յիմարեցուցանէ, և թուլացուցանէ 'ի սովորական աղօթիցն և յերկիւղէն Աստուծոյ։ Եւ մանաւանդ որում պատճառս ևս վախճանելոյ իւրոյ գտանիցէ, բոլորովիմբ արկանէ 'ի վերայ մերձաւորացն նորա անհնարին մթերս սգոյ տրտմութեան, և 'ի ներքս զսիրտն այրէ, և զմիտսն նուազէ, և ամենևին զուշն ափշեցուցեալ 'ի զգայութենէ մտացն ընկենու, և ոչ տայ խոնարհել 'ի բանս միսիթարչացն և սիրտիրողացն. այլ յամառեալ մնդին 'ի սգոյն տրտմութիւն, զի ցնորք թշնամւոյն անհնարին թաղծանօք յիմարեալ ափշեցուցանեն առաւել քան արբեցութեամբ. և ամենևին ոչ թողացուցանեն նայել 'ի պատուիրան

այ որ ասէ՝ թէ լաւ է օր մահուանն քան զօր ծննդեան։ Ինդէր. քանզի օր ծննդեանն սկիզբն է մեղաց և անօրէնութեանց, և անտի սկսանին աճել 'ի նմա ցաւք և հոգք և տրտմութիւնք և զբաղարտութիւնք և աղքատութիւնք, այրութիւնք և որբութիւնք և անզաւակութիւնք և ամենայն չարչարանք բազում նեղութեանց և տառապանաց աշխարհիս։ Այլ և ժողովեալ ևս հեղու զնովաւ սատանայ զամենայն բազմութիւն ախտից մեղացն չարչարել, նեղեալ, վիրաւորեալ զնա թշնամութեամբ, գողութեամբ, սպանութեամբ, բամբասանօք, երդմամբ, նախանձու, չարակնութեամբ, ոխակալութեամբ, ագահութեամբ և զայլս զրկելով, նենգութեամբ, հմայիւ դիւթականօք, և ամենայն անթիւ ախտից բազմութեամբ. ընդ որոց հատուցումն է հուրն անշէջ և տանջանք մշտնջենաւորք։ Իսկ 'ի ձեռն մահուանն յայնմ ամենայնէ բուժեալ դադարէ. զի թէպէտ և վարս արդարութեան ոչ ունէր, սակայն 'ի մեղանչելոյն դադարեաց. ապա եթէ վարս ուղիղս էր ըստացեալ՝ զերծաւ յամենայն կասկածանաց մեղաց և 'ի հոգոյս աշխարհիս, և վերացեալ խառնեցաւ 'ի բանակս սրբոց և արդարոց։

Այս արդ զայսպիսի լուսաւոր կեանս յիմարութիւն է լալ և սգալ անառակութեամբ և հեթանոսաբար. զի և Պաւղոս և զլոկ միայն տրտմութիւնն արգելեալ փակեաց ասելովն՝ թէ "Ոչ ան հնչեցելոցն մի տրտմիք որպէս և այլ հեթանոսք՝ որ ոչ գիտեն զՅԾ.,, Իսկ ո՛րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք՝ որք 'ի սուգս և 'ի կոծս և յողբս մնանիցեն. զի արգելեալ է 'ի քրիստոնէից հաւատացելոցն՝ որք լուսաւորեցան սուրբ աւազանաւն, և մեծ և ահեղ անուն սուրբ երրորդութեն 'ի վերայ նոցա անուանեցաւ, և կնքեալ խաչիւն Յայ նուիրեցան, ամենևին իսկ ոչ են իշխան զնուիրեալսն Յայ խայտառակել հեթանոսական անօրէնութեամբք, և ոչ չարաչար խզել և փետել և մոխիր 'ի վերայ նուիրեալ գլխոյն արկանել. այլ ամենևին 'ի բաց հեռանալ յանօրէն և 'ի սատանայական վայրէն և յողբոյն և անօրէն ձաղանացն։ Ոչ զՀերս փետել հրամայեսցէ քրիստոնէիցն, ոչ զայտս ցտել, և ոչ 'ի կոծ մնանել, ոչ զաւիգածն ածել, ոչ զուսուլքն մերկանալ, ոչ զՀակատն հարկ

կանել, ոչ քուրձ զգենուլ, ոչ մոխիր ցանել, և ձայնս արկանել, և ոչ աշխարանօք ողողանել. զի այս ամենայն սատանայական է և հեթանոսական, զոր անմիտ կանայքն բարբառեն 'ի ցոյցս կեղծաւորութեան, և զկուսաչիրն զգործն գործեն 'ի վերայ քրիստոնէից, զողբան ողբալով, և զկականն բառնալով, և զձիւն աշխարանացն հնչեցուցանելով, անյուսաբար չարաչար զմարմինն կոծելով 'ի վերայ քրիստոնէի վախճանելոյն, զոր պարտ էր սաղմոսիւք և օրհնութեամբք յղարկել, պատուեալ երգոք 'ի կեանսն յաւիտենականս։

Ինդէր խայտառականօք և անարգանօք սգոյդ թշնամանեալք զմարմինն հոգեկիր և քրիստոսազգեաց։ Եւ արդ ի՞ւրեք քրիստոնեայ անուանեսցուք զնոսա որք սատանայական մոլորութիւնս մոլորեսցին 'ի վերայ մեռելոյն. քանզի ընդ այդպիսի անօրինեալսն և դեռ խառնին՝ 'ի կոծատեղին անցանեն։ Քանզի նոքին իսկ ուսուցին զկոծ անյուսութեան և զտրտմութեան սգոյ աշխարանացն, զի զկոծողսն ընդ նմին 'ի հուր գեհենին դատապարտեսցեն։ Այլ ձեզ պարտ էր ամաչել 'ի Հրէից և 'ի հեթանոսաց և յայլազանդիցն՝ որ զհաւատս մեր բամբասեն և ասեն. ո՞ւր է ձեր յոյսն յարութեան՝ յորժամ այդպիսի ողբովք և սգովք և աշխարանօք և զաղքալի խայտառականօք արիւնահան և արիւնահեղ լինիք հանդերձ վայիւք և փետիւք, ձկիւք, գուժիւք կոծեալ աշխարիցէք զանուանեալն քրիստոնեայն։

Ինդէ՞ր պարծիք, ով քրիստոնեայք, որ երգովդ էք նմանեալք Հրէից և հեթանոսաց. այլ զուգ և ըստրտմութիւն զօրինաւորիդ առաւել քան զանօրինացն տեսանեմք, որք չարաձայնք կառանչիւք և վայիւք և փետիւք խեղդին, ողբան և ողողանին անյուսալի, զձակատն դիւահարեն հարկանեն, և զկուրծսն անզգամաբար բախելով իբրև զայսահար. և կանայքն կանչիւք հերարձակ զայտսն ցտեն, զստինս կեղեքեն, և անամթապէս իգացեալք մերկանդամք խզին և կոծին մոլելով, իբրև զմոլին չարալուկ գիւահարեալս. եղիձ, արիւն և մոխիր, և հանդերձք պատառեալք։ Երդ այսպիսի ձաղանօք ձաղին և ծանակին քրիստոնէիցն պատկելքն՝ որ ոչ 'ի հեթանոս լսի, և ոչ 'ի Հրեայս, և ոչ 'ի հերձուածողս, և որք ոչ ընկալան երբեք զայոյս յարութե

մեռելոց։ Այլ արդ մեք մերժեսցուք զայնպիսի անօրինեալ սգաւորսն 'ի համարոյ քրիստոնէից, և հանեալ յեկեղեցւոյ՝ ընդ երախայս համարեսցուք, և սուգ առցուք 'ի վերայ նոցա իբրև 'ի հեթանոսաց. զի այնպիսիքն են սգոյ արժանի՝ ողբալոյ և աշխարելոյ և կոծոյ մեծի, որք 'ի հուր գեհենին դատապարտին, և մասն ընդ անհաւատսն ունին, զի զհեթանոսական չարաչար ախտսն անյուսութեան յեկեղեցի մուծին։

Այլ արդ ասա ինձ, ով քահանայ, ընդէր մուծանես զգուշդս պաշտօնէից և սաղմոսաց 'ի դասս մերկանդամ խայտառակելոցն. զինչ կայ սրբեցելոց պաշտօնէից և սատանայազգեաց դիւամոլ կոծողացն։ Ընդէր խառնես զօրհնողդ ընդ անիծողսն, զգոհացողսդ ընդ թշնամանողսն, զփառաւորիչսն ընդ հայհոյիչսն։ Ոչ է օրէն յանօրէն ժողովս սատանայականս զհրեշտակական երգսն մուծանել, և ոչ 'ի պիղծ մեհեանս դիւացն նոցա զսուրբ զաղօթսն մատուցանել, և ոչ 'ի բագինս զոհարանացն պատարագս նուիրել. զի պիղծք առ պիղծն ժողովին, և սրբոցն սրբութիւնք վայելեն։ Ոչ է մի ժողովուրդ Հրէից և հեթանոսաց, և ոչ քրիստոնէից և հերձուածողաց, զի հակառակք և խափանիչք են միմեանց. և զու խառնեալ ընդ միմեանս միաւորես, և 'ի մի ժողովս առաքէք օրհնութիս և անէծս։ Կոծողք անօրէն անառակութեամբք բարկացուցանեն, և պաշտօնեայքն աղօթիւք և սաղմոսիւք բարեխօսեն։ Յորժամ մերձաւորք վախճանելոյն անօրէն սգով և կոծելով թշնամանեալ բարկացուցանեն զՅԱԾ, ընդէր աղաչես, մաղթես և բարեխօսես վասն թողութեան մեղաց վախճանելոյն. ուր լսէ, և զոր ընդունի։ Այլ թէ ես ինչ հոգաբարձու հրաժարելոյն, յեկեղեցիս քո յիշեա, և յաղօթս քո աղաչեա զՅԱԾ. այլ ընդ վայր և անվայելուչ է խառնել զպաշտօնեայս սուրբ եկեղեցւոյ 'ի պիղծ ժողովս սատանայական կոծողացն, և 'ի տեսիլ անամօթ կանանցն հերարձակացն արիւնաշաղախ խղելոցն և մոխրացանացն. որ թէ և թշնամիք էին վախճանելոյն, այնչափ կարէին տրտմեցուցանել և առնել նման չար, զոր 'ի ժամանակի հրաժարելոյն հոգւոյն արարին. և ոչ ընկալան զբանն մարգարէին որ ասէր՝ եթէ "Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի տէր բարի արար քեզ"։ Տէր բա-

բերարութիւն ցուցանէ զոր մահուանն, և զու կածիս և աշխարեա և ողբաս զատնապէս։ Զ՝Հա քեզ ասէ մեղ-գարէն՝ թէ "Զայ որ ասէ զչարն բարի, կամ զբարին չար.,, . քանզի չար էն կեանքս մերաւորին, և լաս քանս զնա յաւելու 'ի մեղս . և բարի է մահ նորան, զի դադարէ 'ի չարեաց։

Զ՝Այլ թէ կեցեալ էր, ասես, թերևս ապաշխարէր, ապաչէր և ողորմութիւնս առնէր, և արտասուօք զտիրն հաշտեցուցանէր։ Զ՝ի զու զայդպիսի ինչ ածեր զմտաս, և անգէտ զամենագէտն կարծեցուցաներ՝ որ ոչ կամի զմահ մերաւորին. բայց գիտէր սրտագէտն՝ թէ ոչ ապաշխարեսցէ, զմահն նմա ողորմութիւն պարգևէ՝ զի զադարեսցէ յառաջիկայ մեղացն գործելոյ։ Զ՝Այլ մահ արդարոյն ամենևին իսկ ցնծութիւն է և ուրախութիւն՝ փոխել 'ի մեղսասէր և մնավաստակ հոգոց աշխարհիս. և զգանձս վարձուց առաքինութեան զոր համբարեալ տարան, յամրի և զգուշութեամբ պահեսցէ. և եթէ ուղ ինչ իցէ ստգտեալ, օգնեսցուք նմա գթով ամենայն կաց, յիշեսցուք յահեղ խորհրդին, ողորմութիւն վասն նորա արասցուք. և այն է կաշառ բարերարին՝ զոր առնէ բարերարութիւն 'ի վերայ վախճանելոյն՝ որպէս ինքն գիտէ։ Զ՝Ի արդ զայս լսելով փարատեա 'ի քէն զսուգ թանձրամած յուսով ահեղ աւուրն յարութեան, և բոլորովին հանեալ զերծ 'ի քէն զաղճատանս սգոյ տրխ-ութեան, զի քրիստոնեայ կոչեցիս. և ամենայն բերկ-րանօք սթափեցիր, ակն կալ փափագելի կենացն յաւիտենականաց. և այսիւ միսիթարեա, զի քում վախճա-նելոյն ոչ պատահեցին մահք սոսկալի պատուհասից։

Զ՝Անզի բազում են մահք չարաչարք, և յանկարծ-օրէն յորոգայթից ինչ տարաժամ մեռանել. այլ զու այդիւ միսիթարեա և գոհացիր զնայ, զի քոյդ խաղաղու-թեամբ 'ի մահիճս իւր վախճանեցաւ։ Զ՝Ա մահք չա-րաչարք այնոցիկ է, որք 'ի գետոց վախճանեցան, և քա-ղածեծ պատառեցան. այլ զու այդիւ միսիթարեա և գո-հացիր զնայ, զի քոյդ 'ի գիրկս քո կատարեցաւ, և կտակ միսիթար կենդանեաց եթող։ Զ՝Ա մահ չարաչար այնո-ցիկ է՝ որք 'ի թիւնից օձից և 'ի չարաժանի գազանաց գէշ գէշ պատառեալ իցեն, և ոչ ոք զյետին բարբառն լսեաց, և ոչ զձեռս և զոտս ածեալ տեսանիցեն. այլ զու

այդիւ Մխիթարեա և գոհացիր զնա, զի զքոյդ ձեռամբ քովք թաղեցեր, և զյետին բարբառն լուար։ Եւ մահ չար այնոցիկ՝ որք 'ի պատերազմունս մեռանիցին՝ և ըզ սուրն շողացեալ տեսանիցեն, և կենդանւոյն խաւարն զաչքն պատիցի, և թշնամին դիթաւալ կացուցեալ՝ դէշ գազանաց արկանիցեն. այլ դու այդիւ Մխիթարեա և գոհացիր զնա, զի քոյդ 'ի վերայ անկողնոյ հիւանդացաւ, և պատուով նուիրեցաւ։ Եւ մահ չար այնոցիկ՝ որ վասն մեղայ դահճացն մատնեցան, և կենդանւոյն զմարմինն յօշեալ և պատառեալ անդամ անդամ 'ի փայտ՝ բարձանեսցեն անգեղք և ագռաւք ամենալից ճաղանաց. այլ դու այդիւ Մխիթարեա և գոհացիր զնա, զի քոյդ գոհութեամբ հիւանդացաւ, և խոստովանութեամբ կատարեցաւ, և համբուրիւք ողջունիցս զգերեզման հարցն ընկալաւ։ Եւ մահ չար այն՝ որք 'ի դիւաց լլկեցան, և անզգայեալ զմարմինս անդամոցն ուտիցեն, և անողորմ ձեռակապաք արկեալ յարգել՝ սովամահ մեռանիցին. այլ դու Մխիթարեա և գոհացիր զնա, զի քոյդ հանգստեամբ հիւանդացաւ, և օրհնութեամբ վախճանեցաւ, պատանաք պատեցաւ, և սաղմոսիւք յղարկեցաւ, և քահանայական աղօթիւք և պատարագաք յերկինս առաքեցաւ, և հանապազ օրհնի և յիշի 'ի յիշատակացն կատարելոյ։

Եւ արդ ոմ իցէ որ այնչափ ապաշնորհ և անիմաստ կան միտս ունիցի, և զայս զմտաւ ածելով մեծապէս ոչ Մխիթարեսցի, և անդադար գոհասցի զնա՝ թէ որպիսի փառաք և պատուաք վախճանեալն յերկինս կոչեցաւ, ուր են ամենայն ժողովք տիեզերաց, բանակք արդարոց և գունդք սրբոցն, երամք մարգարէիցն, դասք առաքելոցն և անթիւ հոյլք մարտիրոսաց, խորանք պայծառաղարդք, բնակութիւնք լուսեղէնք, և միանձնաւոր վայելչութիւնք, և փափագելի դրախտն, անանց բարութիւնք, անտրտում խնդութիւնք, անծերանալի մանկութիւն, անխախտելի առողջութիւն, սէր սուրբ, տեղի ցանկալի, կեանք փափագելիք, և անյագ ցանկութիւք հոգեւոր կերակրոց, հրճուանք հրաշալիք, գգուանք գգուանաց, և սփոփումն փափկութեանց, և հանգիստ հոգեւորական ամենայն ընտրելոց. ընդ որս և քո վախճանեալն ուրախութեամբ հանգիցէ։

Digitized by Google

Լա արդ քեզ պարտ է միխիթարել ամենայն խնդութեամբ, զի 'ի յերկինս թռեաւ, 'ի մարդկանէ 'ի հրեշտակս փոխեցաւ, 'ի մահուանէ 'ի կեանս ընկեցաւ, 'ի խաւարէ 'ի լոյս ձգեցաւ, յաղքատութենէ 'ի թագաւորութիւն կոչեցաւ, 'ի ծառայութենէ յազատութիւն, 'ի վաստակոց 'ի հանգիստս, 'ի հոգոց յանհոգութիւն, 'ի մեղաց յարդարութիւն, 'ի հողեղինացս 'ի հոգեղէնսն փոխեցաւ և ընդ հրեղէնսն դասակցեցաւ։ Լ՝ընդ դուայդիւ միխիթարեա ամենայնիւ՝ եթէ ակն ունիս յարութեանն. այլ և ած զմտաւ՝ եթէ մահ է ճանապարհ ամենայն աշխարհի, և ամենեքեան երթամք ընդ այն ճանապարհ։ Լ՝դամ, Լ՝բէլ, Ենէթ, Լ՝ոյ, և ամենայն արդարքն զմահ ընկալան. որով պարտ է և քեզ միխիթարել։ Լ՝Բրահամ, Լ՝սահակ և Յակոբ և Լ՝ովսէս և Դաւիթ՝ տեսողքն այ, և ամենայն նահապետքն՝ արդարքն և ճծախօսքն զմահ ընկալան. որով պարտ է և քեզ միխիթարել։ Լ՝հա ամենայն թագաւորք տուրբք և արդարք զմահ ընկալան, որով պարտ է և քեզ միխիթարել. ահա և մարգարէքն և առաքեալք և մարտիրոսքն և սուրբ կոյսն ճծածինն զմահ ընկալաւ, որով պարտ է և քեզ միխիթարել. ահա և Քրիստոս որդին այ վասն մերոյ փրկութեան զմահ ընկալաւ, զի զմեզ անմահացուսցէ 'ի կեանս անմահս։ Լ՝ան որոյ պարտ է գոհանալ և միխիթարել նորոգութեամբ յուսոյն յարութեանն ամենայն արդարոց, ընդ որս և մեք յարիցեմք, և զվախճանեալսն մեր ընկալցաք խնդութեամբ։

Լ՝ընդ լուարուք Պաւղոսի, որ միխիթարէ զմեզ ասելով եթէ "Լ՝ան ննջեցելոցն մի տրտմիք՝ որպէս և զայլ հեթանոսս որք ոչ գիտեն զյոյժ։ Լ՝ուր և մարգարէին որ ասէ. "Լ՝ինդ երեկոյս հանդիպիցեն լալիք. առաւօտուց եղիցի ուրախութիւն"։ Լ՝ընդ եթէ անուանեալ էք քրիստոնեայ, և հաւատացեալ էք յարութեանն, արիք միխիթարեցէք զձեզ մարգարէական և առաքելական միխիթարութեամբ. զի սուգ անյուսից է, և ոչ իմաստնոյ և հաւատացելոց՝ որք ակն ունին նորոգմանն ամենայն ննջեցելոց. զի ոչ է 'ի կորուստ մահ քրիստոնէին, այլ 'ի նորոգութիւն կենացն յաւիտենից. վասն որոյ և զոգիս վախճանելոցն մերոց սաղմոսիք և օրհնութիւք 'ի կեանս յղարկեմք, իբրև ընծայ ինչ այնուիրեմք։ Յա-

ղագս այնորիկ ոչ է պարտ քրիստոնէին 'ի վերայ մեռելոց սուգ ունել և լալ. այլ լայցեն զբեայք և ողբասցեն հերետիկոսք, սուգ առնուցուն և կոծեսցին ամենայն թերահաւատք և հերձուածողք, զի նոքա լալոյ և ողբալոյ արժանի են, աշխարհաց և կոծոյ մեծի. այլ մեք նորոգութեամբ կենացն յաւիտենից մխիթարեսցուք։ Եւ արդ վասն այսր ամենայնի բարձէք զկոծս, խափանեցէք զողբս, 'ի բաց արարէք զտրտմութիւն, դադարեցուցէք զարտասուս, արգելէք զլալկանս, լռեցուցէք զկառաչիւն լալեաց և վայից. արհամարհեցէք զեղանակամարս լալականաց, անարգեցէք զփետիւն վարսից և զխզել հերաց, հալածեցէք զարիւնահանսն և զմոխրացանսն, թշնամանեցէք զմերկանդամսն և զխայտառակեալսն։ Մեկնեսցուք յանօրէն մոլորութենէն, հեռասցուք 'ի հեթանոսական ամբարշտութենէն, ամենևին 'ի բաց փարատեսցուք զսուգ սատանայական և զանյոյս մթերս։ Այլ կեցցուք քրիստոնէութեամբ, և վախճանեսցուք ճշմարտութեամբ, և հանգստեան և երկնից աքբայութեանն արժանի լիցուք 'ի տեր մեր. որում փառք իշխանութիւն և պատիւ այժմ և յաւիտեանս։

ԻԴ

ՈՂԲԴ

Խոստովանողք փութացարուք
Զանալ ապրել յաւուրըս մեր.
Զի օր ահեղ կայ առաջի,
Ահեղ ատեան և հուր անշէջ։
Ստէն լացցուք և ողբասցուք
Զի խընդրեսցուք ըզթողութիւն.
Զի ապրեսցուք յանշէջ հրոյն,
Որ ըսպառնայ մեղաւորաց։
Մինչ հանապազ արտասուեսցուք
Գորովագին պաղատանօք,
Ցերսալի հառաչանօք
Զքաւիչ մեղացն աղաչեսցուք։
Ընկցուք առ նա խոստովանել
Զոր արարաք աստ 'ի ծածուկ,
Յայտնել ասել և ցուցանել
Զգաղտնիս մեղացըն բազմութեան։
Զի անդ քընինին խորհուրդքք մեր
Զի ցուցանին յանցանքըն մեր.
Յայտնին գաղտնիք սրտից մերոց
Յաշխարհատես հրապարակին։
Զոս զարհուրեալ եմ և գողամ
Յորժամ լսեմ ըզձայն փողոյն,
Որ տագնապաւ կոչէ զազգինս
Ի մեծ ահեղ օր ատենին։
Զի չարաչար մարտեաւ ընդ իս
Զմեռնամեղըն սատանայ.
Զի կարեվէր զիս արարեալ
Հանեալ ընկեաց յանմահ փառացն.
Գառնագին չար պատրաստեաց
Զգտարտարոսըս գեհենին,
Զի ըսպառնայ մեղաւորիս
Ելրել 'ի հնոցըս կայծականց։

Digitized by Google

Որ ոք ունիք սէր սրբութեան,
Օ՛խ ողբալով արտասուեցէք.
Ցերմագութ պաղատանօք
Ինձ խնդրեցէք ըղթողութիւն։
Քրիստոսասէրք իմ սիրելիք,
Ինձ օգնեցէք վիրաւորիս.
Նոր գորովով մեծ ողորմիւ
Աղաչեցէք ըղտէր վասն իմ։
Հառաչանօք զձեզ աղաչեմ
Մեղուցելոյս ողբակցեցէք.
Պաղատանօք լացէք ընդ իս
Զայնակցելով իմ աղէտիս.
Կականաբարձ զիս ողբացէք
Նոր ձայնս առէք ողորմելիս.
Օ՛ի չարաչար ըմբռնեցայ
Ի չար նետից սատանայի։
Միգապատեաց զիս թշնամին
Խաւարային ցանկիւքն իւրովք.
Նոր սուր հանեալ վիրաւորեաց,
Օ՛ր աղաչեմ զձեզ բրժըշկել։
Սուրբ հաւատոյ մանկունք, ո՞ւր էք,
Ողորմեցէք ինձ նեղելոյս,
Նոր գրթագին պաղատանօք
Օ՛քաւիչ մեղացն աղաչեցէք։
Յաղօթքս ձեր ապաւինիմ,
Նոր ինձ հայցեմ ըղթողութիւն.
Օ՛ի զանազան եմ մեղուցեալ,
Նոր ոչ բաւեմ ապաշխարել։
Նոս զարհուրեալ եմ և դողամ
Յորժամ յիշեմ զիս մեծամեղս,
Թէ յայն երկիր կայ անցանել,
Նոր զտէր փառաց կայ տեսանել։
Քրիստոս գրթած և ողորմած,
Գրթա և յիս ամենամեղս,
Օ՛ի ես գրտից ողորմութիւն
Ի գումարել մեծ ատենիդ.
Օ՛ի օր ահեղ կայ առաջի
Նոր սոսկալի մեղաւորիս.
Որ ըզգաղտնիս սրբտիս քննեսէ
Նոր ըղծածկեալ խորհուրդս յայտնէ։

Մարդ աղաչեմ, տէր մարդասէր,
Օ՛խ յայնմ աւուր մի՛ պահանջեր.
Զար տանջանացըն մի՛ մատներ,
Այլ կայծականց անշէջ հրոյն։
Օ՛ի քեզ տացից փառս օրհնութեան
Հօր և որդւոյ և սուրբ հոգւոյդ,
Որ միշտ օրհնեալ ես յաւիտեանս,
Փառաւորեալ յաւիտենից։

ԱՂՕԹՔ ՆՈՐԻՆ*

Ով որ անեղդ ես և անստեղծ և արարիչ ամենայն արարածոց, զոր ոչ երկիրս ստանալ հնդուրժէ, և ոչ երկինք բաւանդակեն. այլ՝ի վեր ես քան զերկինս, և անդր քան զծագս. և ամենայն երևելիքս և աներևոյթքըս ընդ քև եմք բովանդակեալ։ Դու տիրես ամենայնի, և քո հրամանդ կառավարէ զամենայն արարածս. դու աղքատացուցանես, և դու մեծացուցանես, հարկանես, և դու բժշկես. դու ես սփոփիչ վտանգելոյս՝ի սատանայէ, և առողջացուցիչ հիւանդացելոյս մեղաց. դու ես ընդունիչ աղօթից և կատարիչ խնդրուածաց։ Խոնարհեցո, տէր, զունկն քո, և լուր քոյոյ ծառայիս. տես, տէր, զտառապանս իմ՝, և ընկալ զիս գթութեամբ. մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս, և մի՛ սրտմտութեամբդ քով յանդիմաներ. զի՝ ոչ ես գթութեանց՝ գթա և յիս՝ի մեղաւորս, որ բազում հեծեծանօք և պաղատանօք մաղթեմ և աղաչեմն զքեզ։ Օ՛ի կարեւեր եմ մեղօք, և ցաւագնեալ անօրէնութեամբ. չարաչար ախտիւք եմ՝ի յանցանս, և պիղծ խորհրդովք յամբարշտութիւնս. ժահահոգւովս եմ աղտեղեալ, և մեղսաթաթաւ մարմնովս զազրացեալ. ամօթով երեսօք կամ առաջի քո, և ամօթով առաջի տեսողաց։

Այլ արդ դու տէր քաղցր և ներող, երկայնամիտ վասն մեղաւորաց կոչեցար. որ ասացեր՝ թէ՝՝ի դառնալ անօրինին ոչ յիշեցից զամենայն անօրէնութիւնս նորա

* Սման ինչ՝ի սկզբանէ ապրթիցս կայ՝ի գիրս հարանց վարուց յանուն Ս. Եփրեմի. կան և այլ չորս օրինակք՝ի կարգս աղօթաց գրոց յանուն Ս. Մեսրոպայ, ևիսոսվ. չափ նման երկաթագիր օրինակիս, թէպէտ երևելի տարբերութեամբ. այլ անտի յառաջ ամենևին տարաձայն։

զոր արար։ Եւ արդ ահա եկեալ անկեալ եմ առաջի քո ծառայս մեղուցեալ, և ժառեալ խնդրեմ 'ի քէն ողորմութիւն. մի յիշեր զմեղս իմ բազում, և մի զանօրէնութիւնս իմ յանդիմանել՝ եթէ կամաւ և եթէ ակամայ ինչ մեղայ, եթէ բանիւք և եթէ գործովք և եթէ անդէպ մտածութեամբք պղծեցայ, եթէ յանգիտութենէ և եթէ 'ի ծուլութենէ և 'ի մոռացութենէ գործեցի. զի դու տէր, սովոր ես գթալ և ողորմել, և թողուլ զմեղս բազումս, և քաւել զամենայն հոյլս անօրէնութեան. որ զպոռնիկս սրբեցեր, զաւազակն ազատեցեր, զմաքսաւորն արդարացուցեր, և զծանրաբեռնեալսն մեղօք թեթևացուցեր։ Ո՞ ասն զի՞ ես ողորմած, և գթաս 'ի մեղուցեալսն՝ որք հաւատով կարդան առ քեզ. գթա, տէր, և յիս 'ի բազմամեղս, և ապրեցո 'ի թիւնից թշնամին։ Փարատեցո, տէր, զնաւաբ յածող հայեցուածոցս իմոց, և բաց զականջս իմ խլացեալս յանդէպ լսելոյ. բժշկեա զվիրաւորեալ լեզուս 'ի բամբասանաց, և սրբեա զսիրտս իմ 'ի չար խորհրդոց։

Քեզ ցանկամ, տէր բարերար, և փափագեմ գթածի հօր իմոյ. գթա 'ի վերայ իմ մեղաւորիս, և ընկալ իբրև զանառակ որդին։ Յաղեցո 'ի քաղց իմ 'ի սիրոյդ քումմէ, և լցո զծարաւիս յառատաբուղխ շնորհէդ. զի ցանկ առ քեզ խնդրեմ մերձենալ, և բաղձամ 'ի քեզ հայել 'ի յարաժամ. միշտ շնորհաց քոց փափագեմ, և հանապազ ողորմութեան քում կարօտիմ։ Մի ընդ պատժեալսն պարտաւորեալ, և մի ընդ ատելիսն դատապարտեր. այլ ընդ կամարարս կամաց քոց ընկալ, և ընդ պահողս պատուիրանաց քոց պահեա։ Օ՜ի եթէ առանց ներելոյ զյանցանս իմ քննեսցես, ընդունայն են ինձ յարութեան խոստմունք. զի 'ի հուր գեհենին է ժառանգութիւն իմ։ Օ՜ի եթէ զդատապարտութիւն և զանդէպ մտածութիւնս իմ դատիցիս, ապա երանեմ ես չեղելոյն յորովայնէ. այլ նայեա 'ի մաղթանս իմ և 'ի պաղատանս, և մի մերժեր 'ի յողորմութենէդ քումմէ՝ որ ողորմութեան քումմ բաղձամ, և քոյոյ գթութեանդ կարօտիմ։ Օ՜ի միշտ զմարմինս իմ պղծեցի, և հանապազ զոգիս աղտեղացուցի, ոչ չարաչար վարիւք միայն, այլ և զաղիր խորհրդովք։

Եւ արդ լուա 'ի մեղաց, և մաքրեա 'ի գեռաթա-

թախ տղմոյս։ Օ՜քեզ խնդրեցի, և զքեզ աղաչեմ, լից զկարօտութիւնս իմոյ փափագմանս. իսառնեա զիս 'ի դասս սրբոց և 'ի ժողովս արդարոց, որք 'ի բաղձալի տեսութենէդ քումմէ վայելեն յարաժամ։ Այս ոչ համարձակերեա իբրև զարեգործ ոք հայցեմ, այլ աղերսիւ ժոխիմ իբրև զպարտապան և զաղաչմամբ։ [1]Լ.... ունելով համարձակիմ իբրև զմանուր, այլ 'ի մաքրութենէդ քումմէ զժահահոտութիւնս իմ մաքրել աղաչեմ, զի անթիւ ունիմ զմեղաց իմոց զգաղմութիւնս, և հոյլք անօրէնութեանս իմոց հեղձուցանեն զիս հանապազ. միշտ զսիրտս իմ ձնիեցուցանեն, և զմարմին և զոսկերս իմ հալեն և մաշեն. և վասն այսորիկ ժոխիմ հանապազ պաղատել, աղաչել և մաղթել, զի դու ես հայրս իմ և տէր, արարիչ իմ և ստեղծիչ. առ ո՞երթայց, և կամ յումմէ՞ խնդրեցից օգնութիւն։ Դ՚քեզ մեղայ, և առ քեզ խոստովանիմ, և զքեզ աղաչեմ. մի 'ի քումմէ ողորմութենէդ զիս մերժեր, և մի յերեսաց քոց ընկենուր։ Աղաթեմ քեզ տեառն բարերարիդ և բազմագութ իմոյ արարչիդ. մի յաւիտենական ամօթոյն ամաչեցուցաներ զիս, և մի 'ի մեծի աւուրդ դատապարտեր. մի 'ի տիեզերական հրապարակիդ զիս յանդիմաներ. մի անողորմ տանջանօքդ տանջեր, և մի ստակալի գեհենիդ պատուհասեր։ Այլ ապրեցո՛ 'ի հրացան հընոցացն, և 'ի հրահոսան գետոյն հրեղինաց, յորդանցն չարաժանեաց և յանշեջ խաւարէն և դատն դատաստանացն և յանեերելի տանջանացն, յանլոյծ կապանացն և 'ի հանապազորդ նեղութեանցն, 'ի միշտ ողբացն և 'ի կրճելոյն ատամանցն։ Այլ գթա 'ի վիրաւորեալս մեղօք, և բժշկեա զհիւանդացեալս անօրէնութեամբ։ Ընկալ իբրև զհայհոյողն և զհաղածիչն, և փարատեա զմեղաց իմոց զգաղմութիւն. սրբեա 'ի ալրոծութենէս իբրև զպոռնիկն, և արդարացո իբրև զմանաւաւորն։ Ողորմեա ինձ իբրև քանանացւոյն, և չնորհեա զյանցանս իմ իբրև զաւազակին։ Ընդունակեցո զիս 'ի դասս սրբոց և 'ի խորանս արդարոց կամարարաց յանանց կենացն վայելչութիւնս, և 'ի յանբաւ բարութեանցն ուրախութիւնն 'ի Դ՚րիստոս Յիսուս 'ի տէր մեր. որոյ փառք յաւիտեան։

1 Յորինակին բառ մի անընթեռնլի։

ՅԱՂԱԳՍ ԳԼՈՒԽՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԽՐԱՏՈՒ*

Յառաջ քան զամենայն առաքինութիւնս է խոնարհութիւն, և նախ քան զամենայն ախտս է փառասիրութիւն։ Գլուխ առաքինութեանցն սէր է։ իսկ գլուխ ախտիցն է արդարացուցանել զինքն։ Իսկ երկիւղն ՝ի հալածէ զամենայն զմեղսն. իսկ դանդաղումն հալածէ զերկիւղն ՝ի. նոյնպէս և գերութիւնն հալածէ զառաքինութիւնն յանձնէ։ Ողբ են առաքինութիւնք, լռութիւն, և խոնարհութիւն, և պահել զպատուիրանս ՝ի, և նեղութիւն։ Ողբ են առաքինութիւնք որ պահեն զանձն, ողորմութիւն յամենեսեան առնել, և մի բարկանալ, և երկայնմտութիւն, և զգուշանալ ինքեան 'ի մոռացմանէ մտաց։ Պէտք են առաքինութիւնքս այս յարաժամ, և անսպառ անկանել առաջի ՝ի սրտի իւրում, և ունել զինքն առ մեղաւորս, և մի դատել զոք. և յայնժամ դադարեն խորհուրդք։ Ողբ են այս առաքինութիւնք որ օգնեն մանկան աբեղայի, խոկումն գրոց յամենայն ժամ, և տքնութիւն և գործաձեռն, և հնազանդ և հպատակ լինել հօրն, և մի թուել զինքն յիրս ինչ ուրեք ամենևին։ Ման չորիցս այս իրաց հոգիք պղծին, մի՝ շրջել 'ի քաղաքի և չդնել պահապան աչաց, և մի՝ ունել ծանօթութիւն ընդ կանայս, և մի՝ ունել սէր ընդ փառաւորս երկրի, և սիրել զմարմնական խօսս և զդատարկաբանութիւնս։ Յաղագս չորից իրաց լինի պոռնկութիւն, յուտելոյ և յըմպելոյ յագ, և յագմանէ քնոյ և 'ի դատարկ կալոյ, և 'ի դատարկաբանելոյ խաղալ և ծիծաղել, և 'ի զարդարմանէ հանդերձից։ Ման չորից իրաց խաւարին միտք,

* Զայս Ճառ հանդերձ յաջորդ հատուածովն առս և 'ի Հարանց վարս երևելի տարբերութեամբ հա. Բ. 532. 571։

մի՝ յուզելոյ զընկերն, և անգոսնելոյ զընկերն, և արհամարհել և նախատել ընդ ընկերին, և 'ի չարախօսելն զընկերն։ Յաղագս չորից իրաց հոգիք խոպանանան և լինին անպտուղ, մի՝ յոչ դադարել 'ի տեղւոջ և 'ի տան, և մի՝ գործել ինչ ոչ, և մի՝ զի սիրեսցէ զզբաղմունս մարդկապէս, և մի՝ յորժամ սիրեսցէ զնիւթս երկրի և զագահութիւն։ Յաղագս չորից իրաց բարկութիւն գայ, մի՝ 'ի տալոյն, և յամելոյն զիւր կամն, և հակառակելն և սիրելն վարդապետ լինել բազմաց, և մի՝ կարծել զինքն լինել քան զայլ մարդ իմաստուն։ Ոչոք են այս առաքինութիւնք զոր դժուարաւ ստանայ մարդ, և այսոքիկ պահեն զամենայն առաքինութիւնս, սգալ յարաժամ, և հայել միշտ և եթ յիւր մեղսն միայն և մի դատել զոք, և ունել զինքն առ մեղաւորս, և ունել առաջի աչաց իւրոց զմահ իւր հանապազ։ Արդ որոք կամի սպահել զառաքինութիւնս զայսոսիկ, կարէ ապրել։ զօրաւոր է՞ն պահել զմեզ յամենայն չարէ և 'ի փորձութենէ և 'ի հանդերձեալ ժամանակին՝ որ գալոցն են 'ի վերայ ամենայն տիեզերաց։ զի գտցուք ողորմութիւն 'ի Քրիստոսէ 'ի ձեռն սուրբ հոգւոյն։

ՅԱՂԱԳՍ ԳԻՍԳԷՍ ԱԻՑԻՑ

Սրբոյ՝ն՞ զմարդն, և եղ զնա 'ի դրախտին փափկութեան, զամենայն զգայութիւնս ողջ ունելով 'ի բընութեան իւրում։ Արդ իբրև լուաւ այնմ՝ որ խաբեացն զնա, յայնժամ էառ զախտս ամենայն, և խսկոյն ընկեցեալ եղև արտաքս 'ի մեծ և 'ի չքնաղ փառաց իւրոց։ զի ծանիցէ մարդ՝ թէ գոն ախտք որ մերժեն զնա յայ։ և զի աղաչէ զբարերարն՞ն՞, որպէս զի օգնեսցէ նմա, և ապա կարասցէ կտրել յինքեանէ 'ի բաց զախտս ամենայն։ Այս ամենայն վէրք են՝ որ կրին յանձին մարդոյն, և քակեն որոշեն զնա յայ։ Այրանի որք սրբեն զինքեանս յամենայն ախտից և յամ՝ պղծութեանց հոգւոց և մարմնոց։ զի է ոչխար բանաւոր ընդունելի պատարագ՞ն՞, և ըստ զձայնն որ ասէ։ "Արարի ծառայ և հաւատարիմ։ 'ի սակաւուդ եղեր հաւատարիմ, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ, եկ մուտ յուրախութիւն

տեառն քում,,։ Իսկ ոչք կամին կատարել զկամս իւրեանց որ ըստ մարմնոյ, և ոչ կամին բժշկել զինքեանս 'ի բժշկութենէ սուրբ առաքինութեանց, զտանին մերկ 'ի սուրբ պատուիրանէն 'ի ժամ հարկաւորութեանն. անկանին 'ի խաւարն արտաքին՝ ուր կայ սատանայ և կապեալքն։ Եւ պատմուճանք պղծութեանցն են այսոքիկ, պոռնկութիւն, արծաթասիրութիւն, չարակնութիւն, բանսարկութիւն, նախանձ, փառասիրութիւն, հպարտութիւն. այսոքիկ և ոչք սոցին նման են։ Զ՞ինչ է պոռնկութիւն. պոռնկութիւն՝ ցանկութիւն, որկորբաստութիւն, յագել քնոյ, զատարկութի, զատարկաբանութիւն, պաճուճանք մարմնոյ, և զեղումն և ընդ վայր ծաղր, անամթութիւն, թուլութիւն, դանդաղումն։ Զ՞ինչ է արծաթասիրութիւն. արծաթասիրութիւն, անհաւատութիւն, անյուսութիւն, անգթութիւն, անողորմութի, ագահութիւն, արհամարհութիւն, անբարիստութիւն, անձնահաճութիւն, և ոչ հայել՝ 'ի պատուիրանն ՅՍ։ Զ՞ինչ է չարակնութիւն. չարակնութիւն է չարախօսութիւն, նախանձ, մարդահաճութի, անձնասիրութիւն, անգիտութիւն, ստութիւն, և սուտ վկայութիւն։ Զ՞ինչ է բարկութիւն. բարկութիւն է հարբատահարել զիւր կամն, հակառակութիւն, վիճութիւն, նենգութիւն, սուտ գիտութիւն, կարծմտութիւն, նեղկութիւն, ձանձրութի, ոչ բառնալ զթշնամանս մտօք, տալ և առնուլ։ Զ՞ինչ է նախանձ. նախանձ՝ ատելութիւն, ոչ բառնալով զփառս ընկերին, և արկանել դայթագղութիւն ընկերին։ Զ՞ինչ փառասիրութիւն. փառասիրութիւն է անզգամութիւն, սիրել զաշխարհս և որ ինչ յաշխարհի է, և լինել անուանի 'ի մէջ մարդկան, և կատարել զկամս յանդգնութեանն։ Զ՞ինչ է հպարտութիւն. հպարտութիւն է խստասրտութիւն, անհնազանդ լինել ամենեցուն, և քաջալերել յիւր զօրութիւնն, և համարելով զինքն իմաստուն, և առնել յար և եթ զիւր կամն, և արհամարհել զընկերն, և կարծել զինքեան իմաստուն գոլ, և ունելով զինքն իբրև ոչ իմիք կարօտ գոլ։ Այս ամենայն գործին յանձին մարդոյն, մինչև որոշեն զնա յՅՍ։ Այս է զոր եբարձն Աստուած՝ յորժամ եկերն 'ի պտղոյ ծառոյն, և անկաւ ընդ ոտիւք մահուն։

ԻԶ

ԹՈՒՂԹ ՎԱՆ ՀՄԱՁԻՑ ԴԻՒԹԱԿԱՆԱՑ ԵՒ ԱՆՕՐԷՆ ՑՈՒՌԹՈՂԱՑ

Առնոյր առնէր ոք զգլուխ իմ շտեմարանս Ջուրց բազմաց, և զաչս իմ յորդ աղբիւրս արտասուաց, և լայի գառնապէս 'ի տուէ և գիշերի զհանապազ մեղս մեր. զի կորեաւ երկիւղած յերկրէ, և ոչ գոյ ուղիղ առաջի մարդկան. և լցաւ աշխարհ մեր հմայիւք իբրև զառաջինն. և խոնարհեցաք մտաք 'ի հնազանդութիւն սատանայի մերոյին իսկ մտօք. զի լեզուօք խոստանամք ձանաչել զՅն, և գործովք ուրանամք 'ի նմանէ։ ԱսացՅն՝ եթէ "Սիրեսցես զտէր Յն քո յամենայն սրտէ և յանձնէ և 'ի զօրութենէ քումմէ"։ Յանձնէ է՝ այս ինքն եթէ զնա միայն պաշտեսցես, և կոչեսցես անձին քումմ տէր և արարիչ. 'ի զօրութենէ՝ այս ինքն եթէ զզօրութիւն անձին քումմ նախ հանիցես յաղօթս և 'ի վաստակս հոգևորս. յամենայն 'ի սրտէն՝ այս ինքն թէ մի 'ի տուն հեթանոսաց և 'ի ժողովս մարախրոսաց, մի 'ի մեհեանս և յեկեղեցիս, մի 'ի բախտս և 'ի չնորհս, մի 'ի խաչն և 'ի ձակատագիր, մի առ դիւթս և առ քահանայս, մի առ աղօթս և առ պահարանս. մի լեզուավ խոստովանել, և 'ի սրտէ ոչ հաւատալ. և մի սրտիւ հաւատալ, և լեզուիւ ուրանալ. մի բանիւք պատուել զՅն, և արդեամբք բարկացուցանել. մի հաւատովք մեծարել, և գործովք տրտմեցուցանել. այլ յամենայն սրտէ և յանձնէ և 'ի զօրութենէ և 'ի մտաց սրտէ սիրել զՅն, և քրիստոնեայ անուանակից Քրիստոսի։

Իսկ եթէ լեզուաւ կոչես զՅն պարիչ, տուիչ և փրկիչ և կեցուցիչ, իշխան մահու և կենաց, և սրտիւդ և անձամբդ առ դիւթս և առ թովիչս և առ հարցուկս և առ ուռութս և առ խտիրս և առ հմայս գերեսցիս, ոչ ևս պարտ է կոչել զանձն քրիստոնեայ՝ զի հեռացեալ ես

'ի Քրիստոսէ, և հնազանդեալ ընդ ծով սատանայի. զի թողեր զքեր զարարիչն և զկեցուցիչն, և առ սատանայ ապաւինեցար։ Օ՛ի եթէ Հնմարտիւ հաւատայիր՝ թէ ՚ուծ է արարիչ ամենայնի, ապա պարտ էր թէ արարիչն միայն էր իշխան կեցուցանել և մեռուցանել, հարկանել և բժշկել։ Օ՛ի ո՞ոք իշխէր մերձենալ առ հարցուկս՝ որ և անձին ոչ կարէ առողջութիւն և անմահութիւն շնորհել։ Զի՞ զոյց զոք 'ի կախարդաց՝ որ անցաւ և անմահ եղև։ Իսկ եթէ ասես՝ եթէ ոչ երթամ առ հարցուկս, այլ բժիշկ է և առ բժիշկս երթամ, գործ բժշկի այս է, խարել, կտրել և արիւն թափել և դարմանս ըստ ցաւոցն նմա մատուցանել. այլ ոչ եթէ յուռութս յուռթել, և զսատանայական բարբանջս բարբանջել. կամ աղ և ածուղ, կամ ասղենի առնուլ կարմիր, և երկաթ, և ջուր, և ուլունս ուռթել, և կամ գիր պահարան ընդ անձն արկանել, և կամ զոսկերս ձկանց և սողնոց, զծրարս բժժանաց 'ի ձեռին և 'ի յակին և 'ի պարանոցի կապել։

Զ՚ընդ եղկելի և թշուառական, զի թողեր զ՚ուծ արարիչ և զբժիշկ և զիսաչն պահապան, և ապաւինեցար առ կախարդս յիմարս և ապականեալս դիւօք։ Զի՞ տես զի՞նչ գործէ չարադիւթն. 'ի մէջ գետինն անցեալ յուռթելն, և ընդ ուռթելն մերձենան 'ի նա դևքն. և ընդ մտանելն յարանչտի, 'ի ձախ դիւթէ և 'ի յաջ թքթքէ, զիսաչն անարգէ և զ՚Քրիստոս թշնամանէ, և ոչ իմանայ։ Իսկ եթէ զուռութս ևս ցուցանէր, ծաղը և կատաղանս և խաղ մանկտուց լինէր։ Զ՚ընդ եթէ էր պարապ զմտանց մարմնոյ զուռութս մի ըստ միոջէ պատմել, ծաղը կացուցանէի զյիմարեալ միտս դիւթին առաջի ամենեցուն։ Օ՛ի ամենայն ուռութք և պարտանք դիւթի և թովչի և հարցկի սուտ են և եղկելի, և առիթ գեհենի և հրոյն յաւիտենից. և որ մերձենայ 'ի նոսա, 'ի հուր գեհենին դատապարտի, և մասն ընդ անօրէնս ունի. զի զշնորհս բժշկութեանն արհամարհիցեն, որով մարթ էր արուեստիւք բժշկութեան խարելով և կտրելով և դարմանս ցաւոցն առնելով՝ բժշկել։ Օ՛ի ևս առաւել զշնորհս պարգևացն արհամարհիցեն. զի որ ասէն՝ եթէ "Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ զեկեղեցւոյն։ Եկեղեցւոյն. աղօթս արասցեն 'ի վերայ նորա,

և օծցեն իւղով 'ի յանուն տեառն, և աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն ,, . և զոր դևն լկէ, նորին իսկ հրամայեաց՝ պահօք և աղօթիւք հալածեն 'ի ձեռն նշանի ամենայաղթ խաչին : Այս որ անարգէ զխաչն փրկական, և արհամարհէ զշնորհն Քրիստոսի, և գնայ առ դիւթս յուռթել, և պահարան և ուռուքթան և զգիր պահարան ընդ անձն արկանեն, զնոցանէ ասէ Քրիստոս՝ եթէ "Արթայք, անիծեալք, 'ի հուրն յաւիտենից, ոչ գիտեմ զձեզ ,, . վասն զի զայն արարին՝ զոր նայն ոչ հրամայեաց :

Արդ եթէ ասես՝ եթէ և նոքա քրիստոնեայք են և Քրիստոսի անուամբն ուռթեն, այլ և զգիրն և սպասաւորք եկեղեցւոյ և աբեղայք գրեն, արդ միտ դիր աւետարանչին . "Խազում մարգարէք, ասէ, ասեն յաւուր յայնմիկ՝ եթէ տեր, յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հանաք, և զօրութիւնս բազում արարաք, բաց և մեզ . և տերն ասէ . ոչ գիտեմ զձեզ ,, . վասն զի զայն արարին՝ զոր նայն ոչ հրամայեաց : Այս զինչ ասացից զմարգարէիցն . այլ և աշակերտն և Յուդաս՝ որ 'ի վերս քան զմարգարէսն նշանս և բժշկութիւնս առնէր, ոչ թուեցաւ ընդ առաքեալսն, այլ եղև 'ի ներքոյ գեհենին : Այս զինչ ասացից զաշակերտն . որ և հրեշտակն ոչ պահեաց զանակութիւնն ուր կարգեցաւն . այլ անիծեալ անկաւ և եղև սատանայ, և զխոտան անուն ժառանգեաց : Արդ որ 'ի յայդ ապաստանիսդ՝ թէ և նոքա քրիստոնեայք են և սպասաւորք եկեղեցւոյ, և անուամբ Քրիստոսի գրեն զերդմունս պահպանացն, ով անմիտ, զինչ են երդմունք գիւացն, ոչ ապաքէն պահք և աղօթք հաւատովք 'ի ձեռն յաղթողի նշանին խաչի, յորմէ դողան ամենայն բնութիւնք դիւաց :

Այլ գիր պահարան հակառակ է ճշորհաց և պատուիրանացն ՝՝՝. որպէս զսուտ մարգարէքն՝ որ թիւրեին ըզժողովուրդն առ ուղղեալսն մարգարէիցն, և զբանն Ճշմարտութեանն դադարեցուցանէին, և զմոլորութիւնն դադարեցուցանէին : Արդ եթէ մարգարէիցն որ սուտ ուսուցանէին՝ ոչ լուաւ յաւուր յայնմիկ, և զաշակերտն Յուդայ եհան 'ի գնդէն, և 'ի հրեշտակս յանցուցեալս ոչ խնայեաց, այլ խաւարային կապանաքն արկեալ 'ի տարտարոսն, ոչ պահեալ յօրն դատաստանի՝ յօրինակ

ոյժմամբ մեզուցելոցս , ապա պարտ է իմանալ՝ եթէ և 'ի սոսա ոչ խնայեաց՝ որք ոչ հաւատացեալք , բայց լոկ անուանակ զանձինս այ նուիրեն , և 'ի տան այ ծերակրին , և վասն այ պատիւ ընդունին , և եկեղեցւոյ գլուխ հաստատին , և զարքին այ ընթեռնուն , և տգիտաց վարդապետ անուանին , և մոլորելոց առաջնորդ . և ինքեանք մոլորեալք են , թողեալ զչնորհն այ , զաղօթսն և զիւղն օծման՝ զոր պատուիրանք հրամայեցին հիւանդին , և զպահս և զաղօթս ցաւածին , և ինքեանք յուռութս և 'ի գիր զաւածին :

Այլ և առաջնորդացն և սոս 'ի մեղրին խզեցին և կամ ցաւ ինչ արագ անկանի , դիւթս 'ի տունս ածեն առ 'ի յուռութել . և ոչ մի արտաքին գիւթիւքն վարին , այլ և անձանց և տաուութս տասանին , և գրել պատգրանս , և 'ի փոքս ցաւածիցն արկանեն , և ժաժամուկս մեռացածին բանից . և զանուանս որ ոչ լսի 'ի պատուիրանս՝ գրածս առնեն , և զանուն Քրիստոսի ընդ նոսին արկանեն՝ զի գրածն ածական հանդիսացի : Եւ այնչափ յանդգնեցոյց սատանայ , մինչև զտուրբ անուն այ 'ի պատգրանս դիւթաց գրել , և 'ի յուռութս արկանել . զի այն ոչ 'ի պատիւ այ է , այլ յարհամարհանս : Եւ և առաւել պատուաւորին՝ զի զածծ յուռութս և 'ի պատգրանս ընդ գիւաքն արկանեն , և ոչ խոնարհանս ցանկելոյթ նեռոս սատանայի . զի ուռութք և գիր պատգրան՝ դիւաց հրամանք են , և ոչ այ . և վասն այնորիկ չտայ սատանայ զգալ զչար նեռոս իւր , զի և զտուրբ անուն այ եւ՝ չարաչար հարկանել 'ի հրամանս իւր , զի վասն անուամբն այ մի ոք կարասցէ խոնարհել զիսատապային խորհուրդս նորա : Օ ի յիմարեալ մտաք անուամբ քրիստոնեացք անուանին , և գործովք յիմարեալ խոնարհին յիսատատութենէ իւրեանց : Այդ միթէ որ զդևն պաշտիցէ , յաչս և 'ի բերանս զդևն հանդուրեսցէ . ոչ , այլ զհրամանն դիւացն կատարել՝ է կատարեալ դիւապաշտութիւն :

Այդ յոժամ 'ի խաչս և 'ի հմայս երևի կեաս , և 'ի դիւթութիւնս և 'ի թովչութիւնս և 'ի հատահատղութիւնս և 'ի հաւահմայութիւնս և 'ի մանգաբանութիւնս և 'ի քատատղոյցութիւնս և 'ի հեղհեղութիւնս և 'ի հմայութիւնս և 'ի միջապիտութիւնս և 'ի գլուխարու-

Digitized by Google

թիւնս, յատեղագիտութիւնս, 'ի դիւահարցութիւնս, յօրահմայս, 'ի լուսնախտիրս, և 'ի շեղջախտիրս, յոզոտնահմայս, 'ի գեղահմայս, 'ի մնեկոնս, յուռութս, 'ի բախտս, 'ի ձակատագիրս, և 'ի գիր պահարանք, և յամենայն 'ի շարժմակս բժժանաց, հմայից, դիւթաց, յորս կոչեն զգեւսն յաղ, յերկաթ, 'ի ջուր, 'ի նարօտս, յիւղս, 'ի գարի, 'ի յուլունս, 'ի մոմ, և 'ի հեր գլխոյ և յամենայն պղծութիւնս՝ որով պղծեն և կորուսանեն զոգիս հնազանդելոցն։ Եւ արդ այս ամենայն ագոյ և արտասուաց և մեծի բարկութեան չիցէ արժանի, զի յետ զորդին իւր առաքելոյ յայսպիսի իրս մոռաբերել իշխիցեմք։ Եւ արդ որ՝ այսմ հնազանդիցի, պարտ իցէ արգեօք զանձն քրիստոնեայ կոչել՝ որ հեռացեալն է 'ի Քրիստոսէ, և հնազանդեալ կամաց դիւաց, և 'ի ծառայութիւն կայ սատանայի, և զհրամանս նորա կատարէ հանապազ հմայիւք և յուռթիւք և պահարանաքն գրոյ՝ զորս գրեն մանկունքն անիծից, և համարին կաղ 'ի սպասու սրբոյ սեղանոյն ։

Ալ անմիտք և անհանձարք, ոչ լսես՝ զի մեզաւորին ասէ ։ «Եթէ ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ 'ի բերանս քո»։ և դարձեալ ասէ ։ «Օ մեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, մի թէ լսէր ինձ տէր»։ և դարձեալ ասէ ։ «Եթէ բաց կացէք յինէն ամենեքեան՝ որ գործէք զանօրէնութիւն»։ Երդ 'ի անոտի աղօթս քո հրաժարէ զքեզ մարգարէն, և ոչ իմանաս։ Յորժամ ասես, եթէ 'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որ գործէք զանօրէնութիւն, ոչ ապաքէն անձինդ ասես հեռանալ 'ի բաց, պիղծդ և անօրէնդ։ Յորժամ դու իսկ ասես 'ի խնդրուածս քո, մեզաւորին ասէ՝ դու ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, ոչ ապաքէն քեզ ասես։ Ընդէր իշխես բանալ զամենապիղծ բերանդ քո, և պատմել զարդարութիւնն՝ այ, ոչ ապաքէն հակառակ քեզ բարբառիս, և ոչ իմանաս։ Եւ յորժամ լսես 'ի քումմէ բերանոյդ իսկ՝ զմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, մի թէ լսէր ինձ տէր, արդ ահա դու իսկ գիտես՝ թէ ունիս մեղս 'ի սրտի, տէրն ոչ լսէ քեզ։ զի դու ասես զայդ բերանով քով հանապազ։ Եւ արդ յորժամ զբարբառ բերանոյդ ոչ լսես, զիարդ հնարս սատանայի գիտել մոռ-

թասցես. և կարեվէր արարեալ զքեզ՝ և ոչ իմանաս. որ զգիրս ընթեռնուս, և զգրեալսն ոչ իմանաս։

Օ ինչ հրամայեն մեզ պատուիրանք ՝այ. ո՞չ ապաքէն ամենայն գործոց մերոց զհաչն հրամայէ պահապան և յօրինիչ, հիւանդաց աղօթս և օծումն իւղոյ, և լկեալոցն 'ի սատանայէ պահս և աղօթս. և որ զայս խոտիցէ, գրովք և յուռթովք վարիցէ, և կանայս ձեռնածուս 'ի տունս մուծանիցէ, արտաքոյ է պատուիրանաց և քրիստոնէութեան, և ընդ նզովիւք առաքելոցն։ Օ ի 'ի նոցանէ այդ ոչ քարոզեցաւ. այլ և նզովս ևս դնէ 'ի վերայ և ասէ. "Եթէ ոք աւելի քան զայս ուսուցանիցէ, նզովեալ լիցի". և դարձեալ ասէ. "Մի ինչ աւելի քան զգրեալսն իմանալ". և դարձեալ ասէ. "Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կացցէ 'ի գրեալսն 'ի գիրս". և Դրիտոս ասէ. "Եթէ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանաց, փոքր կոչեսցի"։ Արդ ահա զշնորհսն ՝այ և զզօրութիւն սուրբ խաչին լուծանես, և զպահս և զաղօթս զոր պատուիրանք հրամայեն, և մուծանես ըզգիր պահապան, և զուռութս դիւթացն՝ որ ոչ է 'ի պատուիրանաց ՝այ, այլ զգաղտնի նետ սատանայի 'ի ձեռն դիւթացն, որ իբրև զմէգ տարածեալ ունի զամենայն աշխարհս, և ոչ իմանան։

Այլ և ասես ևս. զոր դիւթքն գործեն և ասեն, այսպէս լինի։ Եւ եթէ երբեք պատահէ՝ մի խաբիր, ով մարդ. ոչ եթէ 'ի դիւթէն եղև, այլ և թէ չերթայիր առ դիւթն՝ քեզ 'ի ժամուն այն այնպէս պատահէր. բայց դու զ՝այ ողորմութիւնն դիւթին զօրութեն կարծեցուցանես։ Բայց 'ի ձեռն դիւթաց բազում անգամ չլինի, և երբեմն լինի. ոչ եթէ զօրութեամբ դիւթին լինի, այլ իբրև կուրաց ընդ խարխափս ընդ ոտս ինչ անկեալ գտանիցին. ահա ընդ խարխափս գտանես, և ոչ եթէ աչօք ինչ յառաջագոյն տեսանիցես. նոյնպէս և զդիւթացն տեսանիցես։ Բայց մարդիկ յիմար 'ի չպատահեալն չհային, բայց եթէ զմինն պատահել տեսանիցեն՝ զայն առեալ վերացուցանեն, և 'ի լսելիս ամենեցուն արկանեն։ Այլ դիւթի և ուռթոյ զօրութիւն ոչ լինի. և եթէ եղեալ տեսանես 'ի յանկարծ, որպէս ասացին, ոչ եթէ յուռթէն և 'ի դիւթէն եղև, բայց զի դու այնպէս հաւատացեր՝ թոյլ ետ ՝այ այնպէս

լինել ըստ քում այնպէս հաւատալոյն, զի մեծապէս դատապարտեացիս, զի փոխանակ ասա գիւթն ընթացար։ Զի յորժամ թողուս զպատուիրանն, և 'ի գիւթս և 'ի յուռութս ապաւինիս, մոռեր կամաք ընդ հնազանդութեամբ սատանայի, և տէր եղև կամաց քոց. որպէս որդի թագաւորի յորժամ կամաք թողու զթագաւորն, և երթայ 'ի լերինս առ աւազակապետ մի, և տայ զինքն 'ի ծառայութիւն նմա, ապաքէն տէր և իշխան է աւազակապետն կենաց և մահու նորա։

Զ. Որդ մեծ մանն աշխարհիս ընդ յուռթիւք և ընդ հրմայիւք եմուտ 'ի հնազանդութիւն սատանայի, և չէ ոք որ իմանայ զչարաչար ամբիշտութիւնս մեր. որ թողեալ զանծ արարիչ, և առ գիւթս և առ օտարութս և առ թոմիչս և առ զահարանս և առ հմայս ընթանան, և հանապազ բարկացուցանեն զարարիչն։ Զ. Ա. արդ առ այս ամենայն զինչ պարտ էր առնել, բայց միայն սգալ և լալ. զի փոքր մանն աշխարհիս հագիւ թէ ապրեսցի. զի առեալ զպատիւ որ ոչն վայել էր՝ մահկանացու մարդոյ մատուցեալ էաք զգիտութիւնն. զայն գիտութիւնն՝ որ առաքինոցն երևէր, որպէս Սաւուղայ վասն իշոյն կորուսելոյ յայտնեաց. վասն զի տղայք էին, և չէր կատարելութիւն գիտութեան առ նոսա։ Զ. Այլ առ մեզ կատարելութիւն էն Հնանթիտ ոգւոց գիտութիւնք. զի ինքն Զ. Դրիսոս եկն աւետարանեաց, գկապանս օրինացն ելոյծ, զշնորհս եմոյծ, զմահ խափանեաց, զյարութիւն խոստացաւ, և զարքայութիւն և զկեանսն յաւիտենից։ Զ. Այս է կատարեալ գիտութիւն, և ոչ գիտ իշոյ կորուսելոյ. զանգիտութիւնն եթարձ, և զայս եմոյծ, զոր ոչ կամի վասն մեր եթէ զմնրմնաւորս ինչ խնդրեսցուք. այլ մեք զհոգևորսն հոգասցուք, և զմնրմնաւորսն 'ի նա ընկիցուք. վասն այսր ծածկեաց 'ի մէնջ զայն գիտութիւն։

Զ. Որդ մի հաւատայք՝ եթէ ոք զոշաքաղութեամբ յոյս և 'ի սրբոց զօրութենէ գիտել ինչ կարծեցուցանիցէ զքեզ. արգելեալ է 'ի մէնջ զայն, զի չէր ինչ մեծ այն քան զշնորհսն զոր ետ մեզ։ Զ. Որդ եթէ ոք հաւատայիք առ ոչ անկանի, աղաչանաք ապաւինի 'ի նշխարս մարտիրոսաց, ընդունի բժշկութիւն ցաւոց, զհալածումն ախտի, և զերումն դիւաց, և զթողութիւն մեղաց։ Զ. Այլ և ծածկեալ մնրգարէութիւնն 'ի յայտնութիւն ժա-

մանաւանդ մարդոյ ոչ է. զի ոչ նշխարք մարտիրոսաց ըզ-
մեզ ուրուք յանդիմանեն, և ակամայ ապաշխարու-
թիւն 'ի վերայ ածեն առանց կամաց առնելոյն. զի ՝ուծ
ոչ երբէք բռնադատէ զմարդ, այլ 'ի կամն ապաստան
առնէ, զի վարձս ընկալցի՝ գործելին։ Այլ ոչ եկեղեցիս
և մատուանս շինեն, զի ոչ երբէք ՝ուծ սովոր է այդպիսի
ինչ գործել, զի մի բարիքս մեր 'ի հարկէ լինիցին. այլ
'ի կամն ապաստան արարին, զի վարձս տացէ առնե-
լեացն։ Դայց այսպիսի շփմունք 'ի դիւաց կեղծեաց լի-
նին՝ զի անվարձ աշխատ և ծաղր արասցեն զմարդիկ։

Այլ զյառաջիկայ ինչ գիտութիւն դևք ոչ երբէք
գիտեն, զի մինն միայն է սրտագէտ՝ արարիչն ամենայ-
նի. իսկ դևքն և դիւթքն սարսաւածք են, և ոչ արարիչ.
և կեանս և մահ և առողջութիւն և հիւանդութիւն և
բժշկութիւն և մեծութիւն և աղքատութիւն իւրոց ա-
ռաւարածոց տալ՝ արարչին միայն վայել է, և ոչ դիւաց և
ոչ դիւթաց. որ և անձանց նոցա ՝ուծ է իշխան և արա-
րիչ։ Այլ զիարդ իշխեն այլոց արարածոց հրամայել՝
որոմ՝ չեն արարիչ. զի արարածք արարչին միայն կան
'ի հնազանդութիւն, որ եղծանել և նորոգել կարէ, և
ոչ դիւաց և դիւթաց, որ և ինքեանց չունին իշխա-
նութիւն։

Այլ զիարդ գիտացեալ եթէ ՝ուծ միայն է արարիչ, ընդէր
ընդ կապանաւք խստոց և հմայից արկանել զանձն, և
յօրահմայս ամբարշտել. և համարիս 'ի նմանեն ինչ
եղծանել և կամ նորոգել խոտոյ, որթոյ, և նիւթոց
կալոյ, հնձանի, և սերմանց, և ամենայն գործոյ որ ան-
ցանէ ընդ ձեռս ձեր։ Այնդէր յօրահմայս և 'ի խտիրս
անկանիս, ազէ տուր ինձ պատասխանի։ Այ՝ մեծաւակար
է շաբաթն և չորեքշաբաթն, զի սոքա անուամբ Այրիա-
տոմի միայն են քրիստոնէայք. և անուն ինչ նորոգել և
եղծանել ոչ կարէ առանց լուսոյ և տօթոյ. և լոյսն և
տօթն յարեգակնէ է. և արեգակնն ոչ եթէ յաւուրս
չորեքշաբաթին և 'ի շաբաթուն այլ ինչ ծագումն է, և
'ի յոյլսն այլ. այլ այս մի ծագումն է, և նոյն հանա-
զատ։ Այ՝ եթէ մի ծագումն է արեգական՝ չորեքշա-
բաթին և ուրբաթին, շաբաթուն և կիւրակէին, ընդ-
դէր 'ի մի ծագմանէն սոքա մեծանեն և նոքա ոչ, տուր
ինձ պատասխանի, ով յիմարդ խտրողադիւթ և ծա-

ռայդ հմայից և հեռացեալ 'ի ընորհացն ՝այ. ոչ ապաքէն ամենայն աւուրքն տեառն են, և 'ի յաւուրս ամենայն զոր բարի գործեմք՝ մերով յօժարութեամբ և կամն ՝այ, և զոր չարն գործեմք՝ մերով չարութեամբ և ներելով ՝այ. և բարւոյն ոմն է կատարիչ, և չարինն մեք եմք իշխան։ Ի՝դդ անուն շաբաթու և չորեքշաբաթու զիմդդ կարէ նորոգել ինչ կամ եղծանել, քանզի և մարթին իսկ ոչ. զի անուն՝ անձն և միտս ոչ ունի, և որ ինչ անձն և միտս ոչ ունի՝ զիմդդ մարթի առնել արարչութիւն։ Ի՝այց միայն սատանայ ապշեցոյց զքեզ ի մնալ զայս. զի զ՝այ արարչութեանն պատիւ առեալ, և անշունչ անուան շաբաթին և չորեքշաբաթի նուիրես, և ընդ կռապաշտսն դատապարտիս։

Ի՝դդ թողեալ զյիմարութիւնդ քո որ 'ի ձեռն խրատրանայ աւուրդ է, զի ոչ ինչ կարես տալ պատասխանի, բայց միայն անօրէն մոլորութիւնդ քո քարշէ զքեզ գործել զայդ. բայց աղէ ցոյց, ընդէ՞ր ամբարշտես և 'ի լուսինդ, և առնես եղծիչ և նորոգիչ զլուսինդ. եթէ յարեգակն ամբարշտեիր, թերևս տայիր ինձ պատասխանի՝ թէ յարեգակն տօթութի՞ է, և կարող է հաստատանել և լիացուցանել, ցամաքեցուցանել և մնացուցանել ըստ հրամանի արարչին. զի հիւթք չորք են որ դարմանեն զարարածս ՝այ՝ հրամանաւն ՝այ, հուր և ջուր և հող և օդ. և 'ի դոցանէ թէ որ պակաս գտանի 'ի խառնուածն, երկիր պտուղ ոչ բերէ. և յայսմ նիւթոյ առլունայ ոչ գտանի։ Ի՝նդէ՞ր ունիս զլուսինդ պատճառս եղծանելոյ և նորոգելոյ. հողն յերկրէ է, հուրն յարեգահնէ, ջուրն յանձրևաց, օդն մ՝ուրկածին. այս են որ դարմանեն զարարածս հրամանաւն ՝այ։ Լուսնոյ զի՞նչ իշխանութիւն է եղծանել կամ նորոգել. զի լուսնոյ ոչ տօթ է և ոչ օդ, ոչ հող է և ոչ ջուր. բայց միայն մեզ 'ի լուսաւորութիւն գիշերոյ ստեղծաւ. և պատի թաղի՝ բերելով զօրինակ կենարարին, և ինքն զինքն ոչ գիտէ՝ եթէ է ինչ և կամ չէ, զի շունչ և կենդանութիւն ոչ գոյ 'ի նմա. բայց շարժի և գնայ իբրև զհուր և զջուր, և կայ մեզ 'ի հարկի և 'ի ծառայութիւն հրամանաւ արարչին. և խոտոյ և սերմանց նա ոչ իշխէ, զի ամենեւին անշունչ է։ Ի՝դդ ո՞րչափ տանջանաց և գեհենի արժանի համարիցիս զայն, որ զանշունչն շնչաւոր կարծե-

ցուցանէ, և զպատիւ և զիշխանութիւն արարչին առնուցու և տացէ սատանայի և աւուրց հմայից, և պաշտէ զարարածս և ոչ զարարիչն։ Յորժամ զիշխանութիւն եղծանելոյ դնիցես աւուրց նշան, և տէր և արարիչ զնոսա կարծեցուցեր, և եղեր գործովքն քովք պաշտօնեայ և երկրպագու լուսնոյն և աւուրց հմայից, և անլուծանելի ածեր 'ի վերայ քո զանէծն որ ասէ՝ Եթէ "Նիծեալ լիցի որ պաշտօն տանիցի և երկիր պագանիցէ արեգական և լուսնի և զօրութեանց երկնից"։ Այս ընդէ՞ր վերաւորիս, ով թշուառական, աներևոյթ նետիս սատանայի, արկանելով 'ի վերայ գործոց քոց հմայս աւուրց և խտիրս. յորմէ ոչ ինչ օգտիս, բայց միայն տուգանս ոգւոյ և առիթ գեհենին։

Իսկ եթէ ասես, եթէ ընդէ՞ր ոչ հաւատացից հմայիցն՝ յորժամ տեսանեմք զամ ինչ եղծեալ 'ի յաւուրս խտրոցն, մի խաբիր, ով մարդ, զի չիք ինչ յարարածս այ աւանց ախտից և ապականութեանց և փոխելոյ. զի անեղծ և անփոփոխելի արարիչն միայն է։ Բայց արարածս որ ընդ ձեռամբ մեր անցանէ՝ ախտ և ապականութիւն և եղծումն և յարդարումն։ Այս եղծումն և յարդարումն 'ի խամբայութենէ անձրևաց լինին, և 'ի տօթոյ արեգական, և ոչ կռուելոյ օդոյ. այլ ոչ եթէ 'ի լուսնոյ, զի ոչ եթէ 'ի լուսնի անձրև է. և ոչ եթէ 'ի տօթութիւն, և ոչ օդ՝ եթէ վնասէր խոտոյ և սերմանց և ամենայն գործոյ՝ զոր խտրես գործել 'ի յաւուրս նորա. բայց միայն լուսատու է արարածոց։ Այս քեզ 'ի լուսնոյն վնաս երբեք ոչ լինի, բայց միայն 'ի տօթոյ արեգական, և 'ի խոնաւութենէ լուսնի։ Զի որպէս 'ի չոր և 'ի ցամաք հոտ ինչ վնասակար ոչ հարկանի. և յորժամ զգիջութի հովոյն արեգակն ջերուցանէ, հոտ և որդունս ծնանի. զի զոր օրինակ և 'ի հանդերձս մարմնոյ յորժամ գիջութիւն և ջերմութիւն և փոշի ոչ է՝ զեռունք ոչ ծնանին, և յորժամ ջերմութիւն մարմնոյն և թացութիւն քրտան և փոշին ընդ միմեանս մնանեն՝ զեռունք հանդերձից յոլով ծնանին, նոյնպէս և փոշի 'ի խոտոյ և 'ի գիջութենէ և տօթոյ աւուրն լինի և 'ի կշռելոյ առ միմեանս հիւթիցն։ Զի շաբաթն և չորեքշաբաթն հիւթս ինչ ոչ ունին, և արարածոց այ ոչ իշխեն, ոչ նորոգել և ոչ եղծանել։

Ի՞նդ ոչ մարդ յիմար և անհանճար, եթէ կամիս ընտրել վասն գործոյ ձեռաց քոց, զիաստնուածս հիւթիցն ընտրեա, զտաթեան և զքրատեան, զիսնատուեան և զցանքատեան, և զաւուրսն գարնանային և աշնանային. և ոչ 'ի շաբաթս ամբարշտել, և 'ի նոսա հանդէն հանարել զերծումն և զանջատումն գործոյն։ Իսկ եթէ ասես զարձեալ, է զի և 'ի խորանացն աւուրց ինչսային որթն և գինի և ամենայն ինչ զոր յաւուրսն գործեալք, ապրգ հանարեաց և լինիցի այդպէս. բայց 'ի միտ առ, մի աւուրց հանարիր՝ եթէ հաքաս իշխեն. զի զաւուրցն ոչ լոս միայն եղեալ մեզ, և զաւուրն գործել 'ի նոսա և չարդ՝ մեր իշխանութիւն է։ Իսկ եթէ 'ի սատանայէ հանարիս զանպականութիւն գործոց քոց, սատանայ առանց քոյոյ կամաց և ոչ թոզացուցանելոյ՝ արարածոց ոչ իշխէ։ Զոր իսկ գիտես եթէ 'ի խորհիցն երանակ ոչ իշխեաց մնանել, բայց եթէ հրամայեաց. և զինչս հաքաս ոչ իշխեաց կորուսանել, բայց եթէ 'ի ոչնչէ առ հրամանն։ Իսկ եթէ առանց մերոյին կամաց իշխէր սատանայ մնաց մերոց, հանձոյ ոչ և ոչ միաւորեալ մեզ տայր լինել, այլ զամենեսեան ընդ մեզոք արկեալ կորուսանէր։ Զայս եթէ այդպէս է, ոչ մնրգարէքն մեզ գարէ լինէին, և ոչ առաքեալքն առաքեալք, և ոչ ապրգարքն ամենայն ապրդարք. զի նոսա այնպէս կամ էր։ Բայց ոչ այդպէս. այլ որ նանցն հնազանդի, նոսա միայն իշխէ։ Զ'ի զայդ գու իսկ գիտաս, զի աստանայ մնրգաառեաց է և ոչ մնրգասէր. և թէ ունէր իշխանութիւն գործոց ձեռաց մերոց խանգարել և կեղծուցանել, վասզաց իսկ կարուսեալ էր՝ ոչ միայն զգործս մեր, այլ և զմեզ իսկ գլխուվին, զի կամք նորա այն իսկ էին. այլ ոչ իշխէ։ Բայց եթէ լինի ապականութիւն գործոց քոց, այդպէս գիտաս. ապարդ զքեզ ոչ 'ի պատակեր իւր, և իշխեսն ամենայն ապրարածոց իւրոց, և զամենայն ինչ հրամանաց քեզ գործել հաւատալոյ և ընդհօր, և պահպանութեանն նշանաս սուրբ խաչին. և դու թողեր զձեմարիսն ոչ, զհաւատս և զիրաչն պահապան, և ապրարեր իշխանս գործոց քոց զշաբաթն՝ զաւուրսն հմայիցն։ Զայս թերլ տայ և ոչ ապականել գործոց քոց բաս հմայիցն քոց, զի սատանայն հաւատացեալս մոռանայ զատապարտիցիս, փոխանակ զի ձեմարտութիւնն

ոչ ընկալար։ Օ՛ի Պաւղոս ասէ վասն Լեւիին և այս-
պիսի անիրաւութեանց. “Յոխանակ, ասէ, զի Ճշմար-
տութեանն ոչ հաւատացին, այլ հաճեցան ընդ անիրա-
ւութեանն, վասն այնորիկ առաքեսցէ նոցա ՚ի ծած ազդե-
ցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա մոլորութեանն,
զի դատապարտեսցին ոչք ոչ հաւատացին Ճշմարտու-
թեանն, այլ հաճեցան ընդ անիրաւութիւնն,,։

Լ՛ըդ ո՞չ զարհուրիս, ով մարդ, որոյ թողեալ զՀ՚ծ ա-
բարիչդ, և սովորեալ մտօք արարածոց պաշտօնս մատու-
ցանես հմայիւքդ։ Ո՞չ լսես գրոյն որ ասէ՝ եթէ “Հ՚մայք
աշխատութիւն և ցաւս ածեն՝ ի վերայ,,. և դարձեալ
մարգարէն ասէ՝ թէ “Լ՚ցաւ իբրև զառաջինն աշխարհս
մեր հմայիւք նման այլազգեաց,,. և Լ՚ռաքեալ ասէ.
“Օ՛աւուրս խտրեք և զամիսս և զժամանակս, երկիւղ
չիմ՚ ՚ի ձէնջ,,։ Լ՚ըդ պարտ է և մեզ երկնչել ՚ի պա-
տուիրանաց, և հաւանել Ճշմարտութեանն. և պիղծ
համարել զնոսա՝ որք խտրանօք և դիւթօքն վարին, և
սուտ երազօք պատրեալ բանդագուշին։ Լ՚ւ ոչ իմա-
նան՝ եթէ յորժամ թողեալ ուրուք զՃշմարիտ Ճանա-
պարհն Ճծպաշտութեան, և այնպիսեացն լսել հաւա-
նի, քաղում անգամ զստութիւնն որպէս Ճշմարտու-
թիւն ցուցանէ ՚ի միտս նորա, զի չարաչար դատապար-
տեսցի. փոխանակ զի Ճշմարտութեանն ոչ հաւատաց,
այլ հաճեցաւ ընդ անիրաւութեանն, որպէս և գրեալ
է յերրորդ թագաւորութեանն. յորժամ մեղաւ Լ՚քա-
աբ՝ ետես Ա՚ստուածն զտէր, և զօրութիւնք երկ-
նից կային յաջմէ և յահեկէ. և ասէ տէր. ո՞վ ելցէ և
պատրեսցէ զԼ՚քաաբ, և ելցէ ՚ի Հ՚ռամաթ Գաղաա-
դու և մեռցի. և սկսան ասել ոմն այսպէս, և ոմն այն-
պէս։ Լ՚ւ ելանէր և եկաց առաջի տեառն և ասէ. ես
երթայց և պատրեցից զնա, և մեռցի։ Լ՚ւ ասէ տէր.
թո՛։ Լ՚ւ ասէ. եղէց ոգի սուտ՚ի մարգարէս նորա, և
ելցէ՚ի Հ՚ռամաթ Գաղաադ՝ և մեռցի։ Լ՚ըդ տէր
ոչ է այն պատրանացն [1] պարտական. բայց թոյլ ետ
պատրանացն լինել, փոխանակ պատրանացն լինել հա-
ւատալոյ նոցա սուրբ մարգարէիցն։

Լ՚ըդ որ հաւատալ սովորի պատրանաց դիւացն, թոյլ

[1] Յորինակին չկայ պատրանաց։

տայ ՝ած պատրել զնա՝ զի դատապարտեսցի, փոխանակ հաւատալոյ նոցա ստութեանն։ Լրդ փախիցուք ՝ի պատրանաց սուտ մարդոց, և ՝ի տեսլենէ երազոց, և ՝ի դիւացոյց գիտից սուտ նշխարաց, և ՝ի հրամանաց խաբող մոլորեալ երազախօս սպասաւորաց նորա, որք աշխատեն զանձինս բազմաց սուտ մարգարէութեամբն իւրեանց, և զպատիւն ՝այ առեալ՝ զոր պարտ էր ՝ի տանն ՝այ առաջի սրբոյ խաչին և սուրբ վկայիցն մատուցանել, զգոլշի անուշահոտ խնկոցն և զպայծառութիւն լուսոյն առեալ առաջի ստութեանն մատուցանեն։ Այվ յինքեանս ընթերցող յամենայն մոլորութեանց, չեղիցեն քեզ բաւական նշխարք մարտիրոսաց՝ որ եկեալ և դադարեալ են առ քեզ, և հանապազ խնդրեն վասն քո. և կամ նշան սրբոյ խաչին՝ որ առ քեզ և ՝ի տան քում հանապազ։ Լինդէր ոչ խնդրես ՝ի նոցանէ զխնդիրն քո. զի ընթանաս ՝ի խնդիր պատիր բանից. մի եթէ ՝ած վասն զի ոչ չոգար՝ առ նոսա՝ բարկանայ քեզ. ոչ ապաքէն ինքնին ասէ. “Լեթէ ոք ասիցէ, ասէ, ՀԵՂ սատ է Քրիստոս կամ անդ, մի՛ հաւատայցէք. զի բազում սուտ Քրիստոքք և սուտ մարգարէք ելիցեն ՝ի յաշխարհ. և մոլորեցուցանեն, ասէ, եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն„։ Լհա եղև իսկ և տեսաք յետ մարգարէիցն սուտ մարգարէք, յետ առաքելոցն սուտ առաքեալք, և յետ մարտիրոսացն ահա այժմ իսկ տեսանեմք սուտ մարտիրոսս խաբել զմարդիկ։ Լու վասն տգիտաց որք ոչ գիտեն զՀոգի զօրութեանն և ՀՀմարաութեան, առաք զՀրամանս զայս ՝ի տեառնէ որ ասէ. “Լեթէ ասեն ՀԵՂ՝ եթէ ահա յանապատի է, մի՛ ելանիցէք. և եթէ ասիցեն՝ եթէ յշտեմարանս է, մի՛ ելանիցէք„։

Լրդ պարտ է պահել զպատուէրն Քրիստոսի, և մի՛ խաբել մեզ ՝ի պատրանաց դիւաց, թէպէտ և սուտ ինչ տանջանօք չարչարիցեն զմեզ. զի լաւ է օրինօք Քրիստոսի չարչարել, քան հրամանաց դիւաց հնազանդել, թէպէտ և նշանս և սքանչելիս առնիցեն. զի սովոր է սատանայ սուտ նշանօք որպէս ՀՀմարիտ ցաստմամբք պատրել զմարդիկ՝ որք ոչ ինչ տեղեակ են աներևոյթ նեռից նորա, զոր և յառաջն եցոյց առ Լրեմիա մարգարէին, առ Լովսէսիս Յանէս, առ Պետրոսիս Լիմոն, և այլք բազումք՝ որք զարբանեկութի սատանայի հար-

կանէին, և սուտ նշանս ցուցանէին, և իշխանք և ժողովուրդք հաւատային՝ մինչև զսուրբ առաքեալսն հալածել, և զՀնչմարիտ քարոզութիւնն Քրիստոսի մոլորութիւն համարել, և բազում նեղութիւն հաւատացելոյն հասուցանել։ Ընդ սուտ մարգարէիցն և սուտ առաքելոցն և սուտ մարտիրոսացն վասն սուտ նշանի մի հաւատար, զի սովոր է սատանայ զայդ առնել. որ 'ի յայնժամ զմոլսեսեանսն և զպաւղոսեանսն զՀոգելոցն և զամենիմատան աշխատեր, ոչչափ ևս առաւել զայլ մարս և զտխմարս։

Ընդ այս ամենայն աներևոյթ հնարս սատանայի զքնչունիցիմք առնել. այլ զգուշանալ պատուիրանացն ՅՀ, և սիրել զնա յամենայն սրտէ և յանձնէ և 'ի զօրութենէ. և անդադար աղօթել 'ի տուէ և 'ի գիշերի։ Զի աղօթք զՀնացն շինուցին, զառիւծսն սանձեցին, զգազանական ձուկնն դադարեցուցին, զծովն հերձին և զժողովուրդն ապրեցուցին։ Եւ պահօք ամրացուցանել զքեզ, զի պահք զէն են առաքինութեան. 'ի ձեռն պահոցն շքեղացան դէմքն Մովսէսի. 'ի ձեռն պահոցն Ելիսնուէ ապրեցաւ, մարգարէն յերկինս վերացաւ։ Եւ մի վասն քո դանդաղ և յիմար մտացդ փոքր համարիր ըզմեծդ անօրէնութիւնս։ Յիշեա վասն զի փոքր կարծեցուցանելոյ Ազամայ զպատուիրանն ՅՀ՝ եւ 'ի դրախտէն. վասն փոքր կարծելոյ Ռամայ զամենի հօրն յայտնեալ՝ անկաւ ընդ անիծիւք և ընդ ծառայութեամբ. վասն փոքր կարծելոյն Եսաւայ զանդրանկութիւնն ընկենուլ՝ տեղի ապաշխարութեան ոչ եգիտ. վասն փոքր կարծելոյ Այէնի զՅՀծ անգէտ համարել սպանմամբ Աբէլի՝ երերումն և տատանումն ընկալաւ. վասն փոքր կարծելոյն Լորիայ և Ղադանայ և Աբիրոնի 'ի պատիւ քահանայութենն մերձենալ՝ կենդանւոյն ընկլան 'ի դժոխս. վասն փոքր համարելոյ զպոռնկութիւնն Օամբրի՝ քսան և երեք հազար արանցն սատակեցան. վասն փոքր համարելոյ երդմանն Սեդեկիայ՝ աւարումն Երուսաղէմի. վասն փոքր համարելոյ Սաուղայ ստել բանին ՅՀ և չսպանանել զԱգագ՝ պատառումն թագաւորութեանն. վասն փոքր համարելոյն Դաւթի ընդ թուով առնել զԻսրայէլ՝ սպանումն եօթանասուն հազարացն. վասն փոքր կարծելոյ Սափիրայ ստելոյն և Անանիայ՝ զդառն

մահ ընկալան. և վասն փոքր կարծելոյ բազմաց զպատուիրանն այ՝ ասա տանջեցան, և անդ տանջանաց ակն ունին։ Այլ արդ պարտ է պահել զպատուիրանս զգրեալս. ոչ յշտեմարանս մտանել, և ոչ յանապատս երանել, և ոչ երկիր պագանել երկիւղիւ օտարին. այլ պահել ըզպատուիրանս նորա, ոչ յաւելուլ և ոչ հատանել։

Զիցե՞ն մեզ բաւական իւրաքանչիւր նշխարք մեր, ընդէ՞ր ելանեմք և խաբիմք 'ի դիւաց. չիցե՞ն մեզ բաւական հոգեկիր մարգարէքն, ընդէ՞ր լսեմք երազոց. չիցե՞ն մեզ բաւական քահանայք այ, ընդէ՞ր երթայցեմք առ հարցուկս մոլորեալս. չիցե՞ն մեզ բաւական օրէնքն բնագիրք՝ յոր ենն լիով կամքն այ, ընդէ՞ր ուսնիցիմք զհրամանս նորատուրս և զթուղթս պատիւս՝ որ թերի և պակաս կարծեցուցանեն զպատգամն հոգելից մարգարէին, զքարոզութիւն սուրբ առաքելոցն և զվարդապետութիւնս սուրբ աւետարանին. և զոր 'ի պատուիրանացն ոչ է հարկաւորել հարկաւորէ, և զինքն յերկնից ցուցանէ, զգրեալս մատամբն այ։ Այլ ոչ լսեմք Պաւղոսի որ ասէ. "Մի՛ խառնվել զձեզ, մի բանիս և մի թղթով, որպէս թէ 'ի մէնջ". Ի միտ առ՝, ով յիմար և չարադիւթ, զի վասն միոյ մերոց Զգամել 'ի դրախտէն. վասն միոյ սպանութեանն տառատանումն Կայէնի. վասն գիջութեան Ղրհեղէնն ոչխարհի. վասն ամբարտաւանութեանն անկումն սատանայի. վասն ամբարշտութեանն շփոթումն լեզուաց. վասն արուագիտութեանն կործանումն Սոդոմայ. վասն սուտ երդմանն աւերումն Յերուսաղէմի. վասն զծնողս արհամարհելոյ անէծք և ծառայութիւն. վասն սուտ վկայելոյ սղոցումն ծերոցն առ Ճուշանաւ. վասն ոչ գոհանալոյ ասատակումն Հերովդէի. վասն խաստասրտութեան ընկղմումն Փարաւոնի. վասն գողութեան քարկոծումն Քարայ. վասն տրտնջման յօձիցն սատակումն. վասն ագռնկութեանն որ անկան 'ի միում աւուր քսան և չորք հազարք։ Զի վասն 'ի սուտ յայծս երթաղոյդ, և վասն անխոտիր 'ի հմայս մերձենալոյդ՝ են 'ի ձեզ, ասէ քարոզն եկեղեցւոյ, բազում հիւանդք և ախտաժէտք. վասն այդորիկ և մահք տարաժամք. վասն այդորիկ և նեղութիւնք բազումք. վասն այդորիկ և անզաւակութիւնք 'ի ծնողաց և կապումն երկանց անղուծանելի. վասն այդորիկ և

լեկու�ն գիւաց. վասն այդորիկ տնանկութիւնք և աղքատութիւն. վասն այդորիկ և երկնային պատուհասք. վասն այդորիկ և անգաստանաց մնութիւնք. վասն այդորիկ և շարժմունք անդադարք. վասն այդորիկ և չյաջողութիւնք անասանաց. վասն այդորիկ և գրկանք է գողոց. վասն այդորիկ և հաւր գերհենին և ազջամուղքն յաւիտենից և տանջանքն միանջենաւորք։

Օ՛ի եթէ զբաժակն ոսկի՝ զոր թագաւորի իսկ մատուցանեմք 'ի սպաս և 'ի սեղան, և դարձեալ զնոյն առեալ՝ և կոյ և ցեղս և ազգս մարդոյ առեալ բերեմք՝ զոր և նոյն իսկ տեսանեմք, մթեթ զնոյն բաժակն միւսանգամ անդրէն 'ի նորուն սեղան իշխէանք մատուցանել. ոչ։ Այլ՝ զի ազգոցն պղծեցաք, և թշնամանեալ բարկանայ և գարշի թագաւորն։ Այլ կամ՝ վասն երդմանց պատուիրանք հրամայեն ասեն։ Այ՝ արդիւք, ասէ, զոր ինչ 'ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն. նոյնպէս և ասեն, վասն զի ոչ գոյր մեծ որ երդնոյր՝ յանձն իւր երդուաւ և ասէ այսպէս. "Յանձն եմ երդուայ՝ ասէ տէր, եթէ օրհնելով օրհնեցից զքեզ"։ Այլ երդնուլ այ յաբաքածս իւր անհնարին է, ամբարշտութիւն է։ Այլ կամ յետ Քրիստոսի գալստեանն գրել մեզ գիր մատամբ այ, և տալ. զի եթէ այդ միւսանգամ մեզ պէտք էին յերկնից, ապա Քրիստոսի գալուստն թերի և անկատարութիւն էր։ Այլ այդպէս. այլ օրէնքն մեզ 'ի յերկրի Եղան հրամանս լիով 'ի ձեռն Մովսէսի և Յիսուսի. և յետ այսորիկ տանջանք և աղքայութիւն։ Բայց կրկին օրէնքս մեզ երկնատուրք գրեալ մատամբն այ այլ ոչ առաքին։ Բայց սատանայ զումանս յաջ խոտորեցուցանէ, և զումանս յահեկ. և զահեակն ամենեքեան իմանամք, վասն զի յայտնի են գործք ձախոյ կողմանն. բայց զաջն ոչ իմանամք, զի ամենայն պատուիրանաց խոտորի։ Այլ վասն այսորիկ առաք զպատուէրս զայս՝ եթէ "Մի՛ խոտորեսցիս 'ի գրեալս պատուիրանացս յայսցանէ յաջ կամ յահեակ"։

Այլ արդ հայեսցուք 'ի պատուիրանս այ, և զգրեալս 'ի նմա արասցուք. և մի՛ մոլորեսցուք իբրև զհեթանոսն 'ի բախտ և Ճակատագիր և 'ի հրամանս։ Օ՛ի զինչ և հրամանքդ տարածին ընդ ամենայն երկիր, և բանդագուշեալք խօսին սուտ, եթէ մարդ՝ ընդ հրամանս

վապի և գործէ։ Եթէ այդպէս է, և ընդ հրամանաւ գործէ մարդ, ապա յայտ է՝ եթէ և դատի ոչ վասն մեղացն, զի զհրամանս նոցա կատարեմք։ Այլ և պատկիմք ոչ վասն արդարութեան. զի ոչ եթէ մեր կամաւ գործեմք զբարին, այլ նորա հարկաւ ակամայ։ Այլ և թագաւորք ոչ պարտին[1] զգողն և զպոռնիկն և զսպանողն սանջել, զի ոչ իւրով կամաւ գործէ զայն, այլ զհրամանս կատարէ։ Այլ թէ որ պիղծ այր սպանանիցէ, կամ նաև սկէսուրս, կամ դրացի զդրացի, կամ ծառայ զտէր, կամ աղախին զտիկին, կամ աշակերտ զվարդապետ թէ նմանիցէ և սպանանիցէ, չարաչարք ոք մեղադրել և կամ պատուհասել, զի զհրամանն կատարէն։ Այլ և զաւազակսն չարչարիմք մեղադրել և հալածել, զի հրամանաւ գան 'ի վերայ որպէս ասեաց։ Այլ ոչ այդպէս. այլ արարածս ընդ հարկաւ և ընդ ծառայութեամբ և ըստ հրամանի տուչ վարին, և ճշմարտ զուկ անգամ յարոգայթ ոչ անկանի առանց հրամանի. բայց միայն զմարդ տէր և 'ի վեր քան զհրամանն ստեղծ։ Զի որպէս ինքն ՝ած ոչ է ընդ հրամանաւ ծառայ՝ այլ ազատ և զինչկամարար նմին, որպէս և զմարդն ըստ իւրում նմանութեան ստեղծ տէր և ազատ և անձնիշխան և զինչկամարար բարւոյ և չարի։ Այլ կամակար մտօք եթէ բարիս գործեմք՝ ալքայութիւն խոստացաւ, եթէ չար՝ զդժոխս։ Կարող և կատարիչ ՝ած բարւոյ, և ընդ մահ մեղաւորին ոչ կամի, բայց զանձնիշխանութեն 'ի մէնջ ոչ բառնայ, քանզի ասէ իսկ՝ եթէ կամեսջիք և լուիջիք ինձ։

1 Յորինակին պարտին։

ՆԱՐԻՆ

ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ԿԱՆՈՆՔ

Արդ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ՝ թէ որ զանգնուկ տգէտ զտխմար, որ ոչ կարէ կարդալ զաւետարանն 'ի բեմի 'ի լուր ժողովրդոյն, և զբոլոր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա. զի զՀանոցն և զուսելոցն զՀամարս մեղաց անձինք իւրեանց տան։ Արդ օրէն է առաւել զգիտունն և զՀասակաւ կատարեալս արժանացուցանել զանձինս, և առաջնորդել ժողովրդեան։ Այսոր որոյ մեծին իսկ Պաւղոսի ձայնարձակ բարբառումն զբոլոր բարձեալ ասեր Տիմոթեայ՝ թէ "Զեռս յուրուք վերայ վաղվաղակի մի դիցես, և մի լիցիս կցորդ մեղաց օտարաց,,. և դարձեալ. "Մի մատաղատունկ, զի մի հպարտացեալ 'ի դատաստան սատանայի անկանիցի,,։ Արդ զի պարտ է քահանային անարատ լինել որպէս այ տնտեսի, վերակացու լինել հաւատարիմ բանիւ վարդապետութեամբ։ Արդ զոր օրինակ Պաւղոս զԱրիստոս դնէ միջնորդ այ և մարդկան, և երաշխաւոր և փրկանս ամենայն աշխարհի, արդ ոչ ապաքէն նոյնօրինակ և քահանային օրէն է ամենայն ունարատութիւն լինել առաջնորդ և փրկանք քաւութեան մեղաց ժողովրդեանն այ։ Արդ եթէ մեծին Մովսէսի ասէ գիր՝ եթէ հեզ և խոնարհ և հանդարտ էր քան զամենայն մարդիկ և ուսեալ զամենայն իմաստութիւն եգիպտացւոց, զի թէ հեզն և հանդարտն և

Digitized by Google

իմաստունն և անարատն 'ի բծոյ՝ հաւատարիմ պատգամաւոր ՝ այ և մտերիմ տեսուչ ժողովրդեանն ոչ կարաց 'ի մեղաց ողջպահել զժողովուրդն, և ապրեցուցանել զնոսա 'ի հարուածոցն այ, և ժառանգեցուցանել նոցա զպարգևական երկիրն, իսկ քահանայք տգէտք և արատաւորք զիմիրդ կարէն ապրեցուցանել զժողովուրդն 'ի մեղաց՝ որք և զանձինսն անգամ չկարեն պահել 'ի մեղաց, թող թէ ժողովրդեանն այ լինել առաջնորդ և երաշխաւոր՝ տանել յարքայութիւն այ։ Գանգի գրեալ է և պատուիրեալ՝ թէ մի յալ խոտորիցիս և մի յահեակ։ Ա՝ սան զրոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ զգուշանալ 'ի ձեռնադրութենէ տգիտաց, և մի կաշառաւք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն, կամ յերիցութիւն, և կամ 'ի սարկաւագութիւն, կամ յայլ աստիճան, որպէս 'ի սուրբ աւետարանին փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն՝ թէ "Զրի առէք, և ձրի տուք ,,։

Digitized by Google

ՅԱՂԱԳՍ ՔԱՌԱՄՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՀՈՑ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ԸՆԴ ՁԱՏԿԱԿԱՆ ՔԱՌԱՍՆԻՆ

Այդ վասն զի պահոց քառասնորդ կոչի օր մի ուրբաթ՝ չարչարանք խաչելութիւնն տեառն, և առիթ կոչման չարչարելոցն յաշխարհիս ունել յանձին զօրինակ չարչարանացն տեառն, առ 'ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն տեառն, և առ 'ի պահպանութիւն անձանց պատուիրանապահացն տեառն, առ 'ի լինելոց չարչարակից խաչելութեանն տեառն, և փառակից յարութեանն, և առիթ կոչման մեղաւորաց յապաշխարութիւն։ Այդ յայսմ քառասներորդի որպէս զի օրէն է զշաբաթն և զկիւրակէն որպէս զուրբաթ և զչորեքշաբաթ պահել զհետ օրինացն առնելոյ[1], և յայնմ քառասներորդի որ կոչի՝ կիւրակէն կոչի որ առաջին և ընկիպքն աւուրց յարութեան և ուրախութեան աշխարհի և աւետիք աղբայութեան, լի ամենայն ուրախութեամբ անձանց պատուիրանապահացն արդարութեան օրէն է զուրբաթն և զչորեքշաբաթին իբրև զկիւրակէն և զշաբաթն ուտել։ Վասն զի զոր օրինակ 'ի զատիկէն մինչև ցվերացումն տեառն կիւրակէ կոչի, այսպէս և 'ի բարեկենդանէն մինչև ցզատիկն ուրբաթ։

Այդ քեզէն զքեզ ած 'ի հաւան, և զուգեա զայս քառասուն քաւութեան, և զայն քառասուն ուրախութեան. կշռեա զքառասուն ընդ քառասնի, և զուրբաթ և զչորեքշաբաթ ընդ շաբաթու և ընդ կիւրակէի, և գտանես հաստարակ. ոչ 'ի սմա յագումն և ուրախութիւն, և ոչ 'ի նմին պահք և տխրութիւնք։ Այս քառասուն առիթ քաւութեան մեղաց տարւոյն, և այն քառասուն յաջորդ ուրախութեանց տարւոյն։ Այդ օրէն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել 'ի

1 Յայլսմ օրին. առնելոյ։

Digitized by Google

բարեկենդանէն մինչև ցզատիկն. քանզի քաւիչ և թողիչ մեղաց տարուոյն կոչի։ Եւ զինի և իւղ, ձու[1], ձուկն, պանիր, կոգի, կաղտի, բաժին, շաձուկ, կաթն, խեր, և ձկանմորէ, զայս բնաւ ամենևին չէ օրէն և ոչ վայել է ճաշակել ամենայն ումեք, մեծի և փոքու, արդարոյ և մեղաւորի։ Զ՝ատ են մեզ այլ կամակքն քառասուն աւուրն, կանեփհատն, կտաւատ, փոխինդ, հատ, սամթաջուր։

Եւ զդ այսու քառասնորդաւ տէրն 'ի լերինն փորձութեան տարաւ յետս զփորձիչն սատանայ, որ է օրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց. մինթէ ՝ի պահել ինչ պիտոյ էր. ո՞չ ապաքէն վասն օրինակի մարդկան առնէր զայն։ Եւ զդ եթէ զհանապազօրն մեռանել ոչ կարեմք ըստ բանին Պաւղոսի, այլ գոնեայ քառասուն աւուրքաս լինել հաղորդ չարչարանացն տեառն Յանասցուք. զ՝ի բաց անկեալ[2] մեղք տարուոյն քառասուն աւուրքաս ընկեսցուք յանձանց։ Եւ՝ չ գիտես զի որ միտեալ մտաք չարչարակից լինին չարչարանացն Եւ՝ Հրիատոսի, նոքա միայն կարեն լինել փառակից յարութեն. քանզի ասէ, թէ ոչ միայն հաւատալ 'ի Եւ՝ Հրիատոս, այլ և վասն անուան նորա չարչարանս ընդունել արժան է։

Եւ զդ այս քառասունք չարչարանք խաչելութեան տեառն, և այն քառասունք յարութեան կենդանութեն տեառն։ Եւ՝ այս քառասունք քացախ և լեղի չարչարանացն տեառն, և այն քառասունք խորիսխ մեղու և ձկան խորովելոյ մասն յարութեանն տեառն։ Եւ՝ այս քառասունք զինուորացն կնքով պահել զգերեզմանն տեառն, և այն քառասուն հրեշտակացն զաւետիսն տալ մարիամանցն զյարութեանն տեառն։ Եւ՝ այս քառասուն միջնորդ ապաշխարութեան, և այն քառասուն երաշխաւոր թողութեան։ Եւ՝ այս քառասուն քաւիչ յանցանաց, և այն քառասուն թողիչ մեղաց։ Եւ՝ այս քառասուն լալոյ և արտասուաց, և այն ցնծութեան և ուրախութեան։ Եւ՝ այս քառասուն սերմանելոյ ցաւովք և տրտմութեամբ, և այն քառասուն ժողովելոյ փառօք և գովութեամբ։

Եւ՝ զդ այս քառասնորդաւ մեծ մարգարէն Եւ՝ովսէս ետ

1 Ցայլում չէք յոս, յորում և գրեալ էր ղէնի խաղի, բան։

2 Ցայլում օրինակի բագանանէալ։

զօրէնս ժողովրդեանն, և այն քառասնորդաւ քաւեաց Մովսէս զյանցանսն Հարոնի և զյանցանս ամենայն ժողովրդեանն։ Այս քառասնորդաւ չոգաւ Յիսուս 'ի լեառն սինէական, առնուլ հրաման 'ի տեառնէ զվերանալոյն իւրոյ յերկինս։ Այսու պահօք ապրեցան երեք մանկունքն 'ի բարձրաբերձ բոցոյ տոչորական հրոյն սատակմանէ։ Այսու պահօք լուծին նինուէացիքն զվճիռ մահուան զտերունական հրամանին, առ 'ի լինելոյ ընդունելական պահք ապաշխարութեան նոցա, և արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա։

Digitized by Google

Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

Սրբոյ և զուգական երրորդութեանն երեք անձինք, մի աստուծութիւն, մի էականութիւն, մի խակութիւն, մի ինքնակամութիւն. մի է թագաւորութիւն, մի է արքայութիւն, մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի է բնութիւն, մի է հաւասարութիւն, մի է արքութիւն, մի է կամք, մի է խորհուրդ, մի է փառք, մի է պատիւ, մի յոյս, մի սէր, մի հաւատ։ Ա՛ստ, հզօր, կարող և 'ի վերս քան զամենայն, անեղ, անանց, անսկիզբն, անվախճան, անկատարած, անհաս, անտես, անքնին, և ոչ իւիք կարօտ, և ոչ իմիք ցանկացող. ամենահայր, ամենասէր, ամենագութ, ամենախնամ, ամենալուր, ամենապարգև, ամենահաս, ամենատես, ամենագէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց։ Որ ակնարկելո

կինս. սակայն և անդ մարդիկ ըստ բնութեան են, և կամ՝ հրեշտակք, այլ ոչ եթէ ՝ծ։ Զոյն օրինակ և Դաւ-նին ՝ոյ եկեալ յերկիր և եղեալ մարդ, և մեռեալ իբրև զմարդ, այլ ըստ էութեանն ՝ծ կոչի, և ոչ մարդ. և ըստ տեսչութեանն ՝ծ մարդացեալ, և ոչ մարդ ՝ծացեալ։ Ա՝արդ յերկինս և յերկրի մի և նոյն ինքն միացեալ միաւորեալ մարմնով և ՝ծութեամբ, 'ի սրբոյ կուսէն ծնեալ կամաւ հօր բան և միտք, և կամաւ հօր 'ի սկզբանէ արար զամենայն, և 'ի վախճանի երևեցաւ մարդկան, տէր և տեսուչ յերկինս և յերկրի։ Որ յառաջ քան զյաւիտեանս և 'ի վախճանի էջ յերկիր վասն կենաց և փրկութեան մարդկան. միջնորդ ՝ոյ, և երաշխաւոր աշխարհի. պատարագ հօր, և փրկութիւն մարդկան. զատիկ աշխարհի, և տօն տիեզերաց. հովիւ մարդկան, և պահապան 'ի թշնամեացն. տուիչ կենաց, և աւետաւոր յարութեան. յաջողիչ կենաց, և առիթ արքայութեանն. խաղաղարար աշխարհի, և լուսատու խաւարելոց. տուիչ կենաց, և բաշխող պարգևաց. փառք արդարոց, և փրկանք մեղաւորաց. կեանք կենդանեաց, և յոյս մեռելոց։ Զմա փառք յաւիտեանս։

ՎԱՍՆ ՍԻՐՈՑ

Աստուած սէր է, ասէ որդին որոտման սիրելի աշակերտն Քրիստոսի Յովհաննէս. և որ կայ 'ի սէրն՝ յաւիտենական է, և ինքն 'ի նմա։ Եւ արդ եղբարք, լուարուք և 'ի միտս առէք զՀառս սիրոյ։ Զի ամենայն որ սիրէ զնա, սիրէ նա և զեղբայր իւր. զի սէրն այ սիրով եղբօրն երևի։ Զի թէ զեղբայրն զոր տեսանէ՝ ոչ սիրէ, զնա զոր ոչն տեսանէ՝ զիարդ կարիցէ սիրել։ Այսուիկ Հանաչեմք եթէ սիրեմք զնա, յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ և ոչ ըստ մարմնոյ։ Զի այլ է սէր հոգւոյն և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասասցուք յիւրում տեղւոջն։ Բայց արդ ամենայն որ սիրէ՝ Հանաչի յայ, և ինքն Հանաչէ զնա. և ամենայն որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար, օտար է յայ, և զչնորհս ածային ոչ կարէ ընդունել։ Ամենայն որ սիրէ զեղբայր իւր 'ի աւրթ սրտէ, բնակարան լինի այ, և նա 'ի նմա բնակէ։ Զի ինքն տէրն սիրեաց զմեզ և առաքեաց զՀոգին Հշմարտութեան բնակել 'ի մեզ։ Զի իմանալի հոգիս մեր ընդ անիմանալի հոգւոյն այ սիրով կապակցի. և որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս և 'ի մէնջ կամի սիրել զմիմեանս։

Տես թէ որչափ համարձակութիւն ունի սէրն առ նա, որպէս թէ նման այ առնէ զմարդն։ Զի ած սիրովն իւրով նման մարդկան եղև, և եցոյց թէ մարդիկ իւրեանց սիրովն նման այ լինելոց են։ Զի ած այնչափ սիրեաց զաշխարհս, մինչև զորդին իւր միածին առաքեաց 'ի փրկութիւն աշխարհի. եթէ մեք սիրեսցուք զմիմեանս որպէս և սիրեաց ած զմեզ, ոչ ինչ է չար որ խափանէ զսէրն մեր։ Ամենայն որ սիրէ, յայտնի է առաջի մարդկան և համարձակ առաջի այ. զի երկիւղ 'ի մեզաց մահու ոչ ունի, այլ սիրովն այ զինեալ կայ, և անահ յամենայն երկիւղական վտանգից։ Որ սէր է, անդ երկիւղ ոչ է. որպէս և Յովհաննէս ասէ. "Երկիւղ ոչ գոյ 'ի սէրն, այլ սէր կատարեալ 'ի բաց մերժէ

զերկիւղ»։ Զի երկիւղ ընդ տանջանաց է, և սէր 'ի համարձակութիւն. և զի երկիւղ հալածի 'ի սիրոյ։ Այս ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին, և ահ կորստեան յաւուր մեծի ահեղ ատենին։ Իսկ սէր անդ երկիւղ առնէ զմարդ յամենայն տանջանաց։ Սէր զայն ասեմ, որ ամենևին հեռի է յերկբայութենէ։ Զի երկբայութիւն և սէր 'ի միասին ոչ բնակէ. և գիտելի է՝ զի սէրն ոչ միայն 'ի կեանսն յաւիտենականս պտղաբերէ զպտուղ խաղաղութեան իւրոյ, այլ և յաշխարհիս յայսմիկ զամենայն թշնամութիւն 'ի բաց հալածէ, զնախանձ և զատելութիւն, զոխակալութիւն և զչարակնութիւն, զչարախօսութիւն և զհայհոյութիւն, զպոռնունջ և զբամբասանս, զկպարտութիւն և զամբաստանութիւն, և մանաւանդ զնայրն ամենայն չարեաց զարծաթասիրութիւն և զագահութիւն։

Արդ որ զսէրն ունի, յայս ամենայն չարեացս 'ի բաց հեռանայ, և յերկնային անքոյթ խաղաղական նաւահանգիստն ժամանէ յամենևին բարին։ Զի՞նչ խաղաղական քան զսէրն՝ ազատ լինել յամենայն խռովութենէ և զաճային հաճոյսն կատարել։ Սէրն բանալի է արքայութեան երկնից և ճանապարհ կենացն յաւիտենից։ Սէրն զմարդիկ որդիս ՀԱՅ առնէ և երկնից արքայութեան ժառանգորդ։ Սէրն զապականացու բնութիւնս անապական գործէ, և զմահկանացուս յանմահութիւնս գերափոխէ։ Սէրն զերկրայինս երկնային առնէ, և ըզհողեղէնս հրեղէն կազմէ։ Այս արդ ո՞վ կարէ պատմել զանչափ մեծութիւն սիրոյն, զի անճառ և անպատում է. ըստ որում և անեղ բնութիւն ՀԱՅՈՒԹԵԱՆ անքննելի է, այսպէս և բնութիւն սիրոյն։ Այս որպէս ՀԱՅ անբաւ է, բայց յամենեսինն մերձ է, և բնակեալ է 'ի հեզս և 'ի խոնարհս և յայնոսիկ՝ որ դողան 'ի բանից նորա, այնպէս և սէրն յամենեսեան մերձ է, որ կամին զնա. և ինքն եկեալ բնակեսցէ 'ի խնդրողս իւր։ Զանազի սէրն սիրէ զսիրելիս իւր, և ատէ ոչ զատելիս իւր։ Այլ խնդրեն զնա, մերձ է 'ի նոսա ՀԱՅԱՊԷՍ. զի ՀԱՅ սէր է և կամեցող սիրոյ 'ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոց։

ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ԱՌ ՀԳՆԱՒՈՐՍՆ

Քանզի գրեալ է և պատուիրեալ թէ մի յաջ խոտորիր և մի յահեակ, արդ զշնչական ախտն աջոյ կոչէ և զմարմնական ախտն կոչէ ահեկի։ Բազումք իսկ որ դատարկութեամբ անցուցին զաւուրս իւրեանց, երկոքեսեանքն վարին, մեղանչեն և ոչ գիտեն. քանզի թշնամին ոչ և մարդկան այսու ախտիւք յաղթեաց հոգեղինին Ադամայ, և սովին ախտիւս յաղթեցաւ 'ի հոգեղինէն Ադամայ. այսու ախտիւս եսպան զերկրաւոր Ադամ, և սովին ախտիւս ապանաւ յերկնաւոր Ադամայն. այսու ախտիւքս իսաբեաց զնախահայրն Ադամ, և սովին ախտիւս խաբեցաւ 'ի նորածնեալ Ադամայն. այսու ախտիւք եկուլ զշնչաւորն Ադամ, և սովին ախտիւքս եթուք ոչծեղինաւն Ադամաւ. այսու ախտիւք ընկեց զԱդամ 'ի դրախտէն, և սովին ախտիւք հեղձաւ և ինքն 'ի ծովուն. այսու ախտիւք յաղթեաց կերոջին Ադամայ 'ի դրախտին, և սովին ախտիւքս յաղթեաց 'ի պահողէն Ադամայ յանապատին. այսու ախտիւքս խաբեաց զոգէտն Ադամ 'ի դրախտին, և սովին ախտիւք խաբեցաւ և ինքն յետոյ 'ի լերինն փորձութեան։ Արդ փորձիչն մարդկան մինչդեռ կամէր զստեղծիչն իբրև զստեղծեալն փորձել՝ ինքն փորձեալ գտաւ որդին կորըսուեան և ժառանգորդ խաւարի։ Արդ քանզի հոգւով ախտիւք անկեալ հոգին չար յերկնից և մարմնով ախտիւք զմարմնաւորն եհան 'ի դրախտէն, վասն այսորիկ հայր ամենայն ախտից և չար ընչաց կոչի հպարտութիւն, և մայր ամենայն ախտից մարմնոյ՝ որկորտութիւն։ Արդ յայսմ ախտիցս ծնանին ամենայն ախտք ընչական և մարմնական. արդ այսու ախտիւքս կռուի ընդ վահականս գաղտնուպէս. այսու ախտիւք սերմանեաց զցայգն քնով, նիւթէ զցայգն երազով և աբկանէ զցերեկն լեզուով։

Արդ այսքիկ են որ կոչի ահեկի. որկորտութիւն, անառակութիւն, շուայտութիւն, արբեցութիւնք, քընածութիւնք, ստախօսութիւն, որսվայնամոլութիւն.

Digitized by Google

վասն այսորիկ ասէ առաքեալ. “Ելերակուր պորտոյ և պորտ կերակրոյ, ՝ՈՒՇ զսա և զնասա խափանեսցէ,,։ Ել սան պտղոկութեան. ցանկութիւն, գիձութիւն, ի գանիրութիւն, ակնատեսութիւն, ակնագնացութիւն, սրագշտութիւն, անասնութիւն, ղրութիւն, յաբրատ տեսութիւն, ծիծաղութիւն, շուայտեցութիւն, շնութիւն, պոռնկութիւն, իգացեղութիւն, արուագիտութիւն։ Ել սան այսորիկ ասէ առաքեալն, թէ “Ի՞մենայն մեղք մարմնոյն արտաքոյ մարմնոյն են. բայց որ պոռնկիցի, յիւր մարմնին մեղանչիցի,,։ Ել սան դատարկութեան. վատ, դատարկ, անյարիր, վեհերոտ, դանդաղկոտ, չգործու, չկեցու, դատարկակեաց, դատարկակեր, անգութ, անսամթ, քնեայ, երազատես, երազագէտ, վատ մարդարէ, տգեղծ 'ի մարտի, անմիտ, անհանձար. վասն այսորիկ պատուիրեաց առաքեալ. “Ել գործէն ոչ՝ կերծիցէ մի,,։ Ել սան նենգութեան. խորամանկութիւն, խաղդախութիւն, չարիմաց, ժանտիմաց, ժանտամիտ, թիւնաւոր, օձաքիմ, խարազիմաց, ամենակեղծ, բիւրակեղծ, բիւրագրիծ, ամենաչար, խոժառամիտ, խոժառադէմ, տրտմող, ուռուցկոտ, դէզաւոր, դեզասիր, դեղխիչ, գոռոզ, խաղմնուս, շինթող, դաշտխաս, բանասարկու, հրաւարուրիչ, որոշիչ, ոխատպահ, քինատան, անհաշտ, ատեցող. վասն այսորիկ ասէ, թէ այս ախտք են և կոչին ահեկի, և վասն սոցա դատապարտիմք։

Ել այս են ալջոյն. ամբարտաւանութիւն, ամբարհաւանութիւն, մեծամիտութիւն, նեղութիւն անգոյս, արհամարհութիւն, չարակամ, խստասիրտ, խստամիտ, խստապարանոց, յամառ, անհաւան, անհնազանդ, խստաբարոյ, խստաբան, խստախօս, չարաբան, չարաբիրտ, բարկացող, սրտմտող, չարացաստումն, վայրապարացաստումն, անժոյժ, եռացկոտ, փքացող, յարձակող, հարկանող, կռուող, արիւնարբու, տրտմող, մինչ ոչ ղիղձուկն և ոչ զփուքն թափել չկարէր յիստակեցուցանել զմիտս իւր։ Ել դարձեալ՝ եթէ ոչ աղաչիցի յումեքէ՝ ուտել ոչ կարէ և ոչ աղօթել, այլ յաղթեալ 'ի ցասմանէն՝ անհաշտ անկանի։ Ել սան այսորիկ բողոքէ մարգարէն և ասէ, “Ի՞արկանայք և մի մեղանչէք,,. և առ առաքեալ, թէ “Ի՞ բեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ. և մի տայք տեղի սատանայի,,. և զարդ-

ձեալ ասէ, թէ «Դարկութիւն մարդոյ զարգարութիւն ոչ գործէ»։ Զ սան հպարտութեան. հպարտ, անձնիշխան, անզգամ, ապարատան, անհաւան, անհնազանդ, ստահակ, ստամբակ, վրիպակ, հեռ, յամառ, վիճող, հակառակող, ընդդիմացող, վատախօս, կագող, թշնամանող, խռովիչ, խազմարար, խանգարիչ, չարաբան, չարաբարբ, չարակամ, չարալուր, չարատես, չարախօս, սուտ, ստապատում, կամակոր, կամապաշտ, կամակատար՝ որ կոչի մոռախտ, անձնատեաց, անձնակորոյս։ Դանդի գրեալ է. «Զի սիրէ զմեզ՝ ատեաց զանձն իւր». և դարձեալ, եթէ հանապազ զաւծ առաջի աչացդ տեսանես՝ ոչ մեղանչես և ոչ գործես զայս ամենայն։ Փառասէր, անձնակամ, անձնասէր, անձնահաճոյ, գաստարկակեաց. և այս ամենայն չարիք մոռեալ բնակէ 'ի մարդն և մերժէ յայ։ Զ որ աղաչեմ վասն այ զամենեսեան պահելով զանձինս 'ի չար ախտէս յայսմանէ. քանզի վասն սոցա բարկանայ ած, որ զայս կրէ յանձն իւր։

Զ սան վարդապետաց։ Զչ գտանի վարդապետ խոնարհ և ոչ աշակերտ հնազանդ. ուսեալն հպարտանայ և տգէտն խոտանայ. չիք ոք որ իրաւամբ վարի, և ոչ ոք որ արդարութեամբ կայ. գիտունն մնափառի և տգէտն փառասիրի. գիտունն չխոնարհի և տգէտն չհնազանդի. ծերն ստատելով հրամայէ և փոքրն սաստկութեամբ պատասխանէ. ծերն զպատիւ խնդրէ և փոքրն զհանգիստ. չիք ոք որ իմանայ և չիք ոք որ ուսանի և առնէ. չիք ոք որ ոգեսէր է և չիք ոք որ անապատասէր է. հրաժարեալք յաշխարհէ և չհրաժարեալք 'ի ստացուածոց. հրաժարեալք 'ի ծնողաց և չհրաժարեալք 'ի ծանօթից. հրաժարեալք 'ի հոգոց և չհրաժարեալք 'ի խորհրդոց. հրաժարեալք 'ի հոգոյ և չհրաժարեալք 'ի մեղաց. հրաժարեալք 'ի լերինս և չհրաժարեալք 'ի հրապարակաց. հրաժարեալք 'ի պահս և չհրաժարեալք յրմպողաց։ Այս արդ բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք։

Զ՝որ զոր օրինակ եկեղեցին կոչեցաւ քահանային, և չէ օրէն նմա այլ կին ունել՝ բայց 'ի միոջէն, զի եթէ աշխարհականին չհրամայէ երկու կանայս ունել՝ այլ մի, 'ի նա յարել, զնա սիրել, նոքաւ կեալ, զի այս է հրա-

Digitized by Google

մանն տեառն, և դարձեալ հոգին ամուսին կոչի, և զեկեղեցին ամուսին կոչէ, արդ նոյն օրինակաւ և վանականին վանքն կոչի, զի զվանքերն եկեղեցւոյն է ծնեալ. քանզի ասէ առաքեալ թէ գլուխ կնոջ՝ այր է, և փառքն կնոջ՝ այրն, և օրէնք կնոջ՝ այրն։ Արդ յորժամ վանաց երէցն գլուխ և փառք և օրէնք վանացն իցէ, 'ի տեղւոջն կացցէ և տեսցէ զժողովուրդ իւր. զի թէ դու որ առաջնորդ ես՝ ոչ կաս 'ի կայի, այլոց զիարդ կարես ասել՝ թէ կաց 'ի կայի, երկիր 'ի տեառնէ և հնազանդէ՛ այս վարդապետաց։ Արդ որք զիւրեանց անձանց զպտուղն չկարեն հաւաստեաւ պահանջել, զիւրեանց անձինս արձակ համարձակս արածեն, զայլոց անձինս նզովիւք հաշեն և մաշեն. ինքեանք երիվարաւ սատանայիւ զհետ տերանց և տիկնաց յածեալ ծփին, և 'ի կրօնաւորաց և 'ի վանականաց իբրև յանարգաց գարշին և խորշին. չկարէ որք երկուց տերանց ծառայել։

Digitized by Google

ՑԱՆԿ

Վասն խոստովանութեան վարուց յանցանաց . . . 13
Վասն ապաշխարութեան 21
Վասն պահոց ախորութեան 30
Վասն ընդունելի և անընդունելի աղօթիւ . . . 38
Յաղագս ողորմութեան տնանկաց 47
Յաղագս պտղոց և պատարագաց 57
Վասն գոհաց և վաշխիւ 63
Յաղագս հիւթութեան աղչատաց 71
Վասն տահանայիւ պէսլութեան 79
Յաղագս բամբասողաց 89
Վասն սիրոյ և մախանաց և նախանձու 97
Վասն բարկացողաց բարուց 102
Վասն ոխապահաց և դինահանաց 108
Վասն սակաւ գողութեան որ ոչ ապաշխարեն . . 114
Վասն չար սովորութեան երդման 118
Վասն արբեցողաց անօրէնութեանց 125
Վասն անօրէն խաղերաց դիւահանաց 131
Վասն ինանողաց 138
Վասն անասնամոլաց 142
Վասն չարչարելոյ զԼեղնամիս այ 149
Վասն ահեղ հարուածոց ֆարիսի 156
Վասն զգուշութեամբ 'ի խորհուրդն մերձենալոյ . . 165
Վասն հիւթութեան վախճանելոյ 174
Ղբ 182
Ղօնդ 184
Յաղագս ալեալաց առատութեան խրատու . . . 187
Յաղագս ալեալաց ախտից 188
Վասն հմայից դիւանահանաց 190
Ղանոնք 207
Յաղագս տառանորդական պահոց 209
Առաքեր երրորդութիւնն 212
Վասն սիրոյ 214
Վասն խրատու առ ճգնաւորան 216

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

THE BORROWER WILL BE CHARGED AN OVERDUE FEE IF THIS BOOK IS NOT RETURNED TO THE LIBRARY ON OR BEFORE THE LAST DATE STAMPED BELOW. NON-RECEIPT OF OVERDUE NOTICES DOES NOT EXEMPT THE BORROWER FROM OVERDUE FEES.

WIDENER
JUN 23 1983
JUN 23 1983
787684

WIDENER
BOOK DUE
JUL 2 1983
774148

MAR 8 1983
767812

Digitized by Google

3 2044 105 353 700

Digitized by Google